ԱՐՓԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ - XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

(ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)



ԵՐԵՎԱՆ 2017

Էլ. փոստ՝ karine@osi.am
102212 947.925 ; 314

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՓԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Դ-103800

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
164

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
164

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 94(479.25):314
ԳՄԴ 63.3(5Հ)+60.7
Բ 121

Հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ.,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Ա. Մելքոնյան

Բաբլումյան Արփինե

Բ 121 Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչությունը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ա. Բաբլումյան. - Եր.: Պատմության ինստիտուտ, 2017, - 283 էջ, + քարտեզ:

Գիրքը նվիրված է Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակի, Հայոց ցեղասպանության պատմության խնդիրներին: Անդրադարձ է կատարվում հայ բնակչության ներգրավվածությանը նահանգի տնտեսական կյանքին, ժողովրդագրական փոփոխությունների միտումներին, մասնավորապես, արտագաղթին դեպի ԱՄՆ: Հեղինակը տարբեր աղբյուրների վերլուծության ու համեմատության միջոցով փորձ է արել 1915 թ. դրությամբ հաշվարկել Խարբերդի նահանգի հայ բնակչության մոտավոր թվաքանակը:

Նախատեսված է պատմաբանների, ցեղասպանագետների, Հայոց ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 94(479.25):314
ԳՄԴ 63.3(5Հ)+60.7

ISBN 978-9939-860-55-8 © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 19

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ–XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 19

ա) Խարբերդի նահանգի վարչական կառուցվածքը 19

բ) Նահանգի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությունը 25

գ) Խարբերդի նահանգի հայ բնակչությունը 1894-1896 թթ. կոտորածների տարիներին 43

դ) Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները 55

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 81

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 81

ա) Խարբերդի գավառ 84

բ) Դերսիմի գավառ 139

գ) Մալաթիայի գավառ 174

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ 205

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 205

ա) Ցեղասպանության իրագործման մեխանիզմները Խարբերդի նահանգում 1915 թ. 205

բ) Խարբերդի նահանգի վերջնական հայաթափումը 1916-1923 թթ. 238

ՎԵՐՋԱԲԱՆ 257

РЕЗЮМЕ 261

SUMMARY 264

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ... 267

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարեր շարունակ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել տարածքի՝ հատկապես Արևմտյան Հայաստանի բնակավայրերի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ ի նպաստ մուսուլման բնակչության: Դեռևս XVI-XVIII դարերի ընթացքում ողջ կայսրության և հատկապես՝ Արևմտյան Հայաստանի տարածքում իրականացվել է հայերի բռնի իսլամացման քաղաքականություն, որի արդյունքում բազմաթիվ բնակավայրեր հայաթափվել էին, մյուսներում էականորեն նվազել էր հայ բնակչության թվաքանակը: Մյուս կողմից՝ կայսրության կիրառած ազգային, սոցիալական, կրոնական խտրականության քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր հայաբնակ տարածքների հայաթափմանն ու հայ բնակչության թվաքանակի նվազմանը: XIX դարի վերջերին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը ժողովրդագրական մեծ փոփոխությունների հանգեցրեցին: Գրեթե նույն ժամանակաշրջանում մեծ չափեր ընդունեց Օսմանյան կայսրությունից, մասնավորապես Խարբերդի նահանգից հայ բնակչության ԱՄՆ սկսած արտագաղթը: XX դարի սկզբին ԱՄՆ արտագաղթը մի փոքր նվազել էր, մինչդեռ 1909 թ. Կիլիկիայի ջարդերից հետո ավելի ու ավելի շատ հայեր որոշեցին ապաստան գտնել այլ երկրներում: Այսպիսով, «եթե XVII դ. հայերը կազմում էին Արմ. Հայաստանի բնակչության 98 %-ը, ապա 1915-1916 թթ. զանգվածային կոտորածի նախօրյակին այդ ցուցանիշները փոխվել էին. հայերի թվաքանակը այժմ հաշվվում էր բնակչության 41 %-ը, մուսուլմաններինը՝ 59 %-ը»[1]:

---

[1] Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Ереван, 1972, стр. 39.

Կ. Պոլսի պատրիարքարանի 1882 թ. վիճակագրության համաձայն, որի տվյալները ներկայացվել էին Բերլինի վեհաժողովին, Խարբերդի նահանգում ապրում էր 270000 հայ[2], իսկ 1890-ականների վերջերին և հատկապես XX դարի սկզբին հայ բնակչության թվաքանակը Խարբերդի նահանգում նկատելիորեն նվազել էր: 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում իրագործվեց Հայոց ցեղասպանությունը. ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգների, այնպես էլ Խարբերդի հայ բնակչությունը տեղահանվեց, զանգվածային կոտորածներ իրականացվեցին ինչպես տեղահանության ճանապարհներին, այնպես էլ նահանգի տարածքում, բռնի իսլամացվեցին տասնյակ հազարավոր հայեր: Արդյունքում, Խարբերդի նահանգը ևս հայաթափվեց. 1923 թ. հետո նահանգի որոշ բնակավայրերում միայն իսլամացած հայեր էին ապրում, որոնց մեծ մասը ժամանակի ընթացքում կորցրեց ինքնությունը:

Չնայած Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հետազոտության արդիականությանը՝ այդ բնագավառը մինչ օրս մնում է ոչ բավարար ուսումնասիրված, ինչը խոչընդոտում է նաև Հայոց ցեղասպանության պատմության ամբողջական, հավաստի ուսումնասիրմանն ու ներկայացմանը: Նման խնդիրներից է՝ ժողովրդագրական փոփոխությունների հարցը Արևմտյան Հայաստանի նահանգներում, ինչպես նաև Օսմանյան կայսրության հայաբնակ մյուս վայրերում: Խնդրի համալիր ուսումնասիրությունը թույլ կտա փաստել, որ Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերը և հատկապես Արևմտյան Հայաստանը հայաթափելու քաղաքականությունն որդեգրված է եղել

---

[2] «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, համար Թ, սեպտեմբեր,էջ 811: Տե՛ս նաև՝ Population Armenienne de la Turquie; Avant la Guerre, Statistiques étables par le Patriarcat Arménien de Constantinople, Paris, 1920, p. 9.

օսմանյան իշխանությունների կողմից դարեր առաջ: Այդ ծրագրի հանգուցալուծումը դարձել է XIX դարի վերջից սկսած հայերի զանգվածային կոտորածների ու ցեղասպանության քաղաքականությունը, որի իրագործման արդյունքում հայաթափ են եղել Արևմտյան Հայաստանն ու կայսրության հայաբնակ բնակավայրերը: Ժողովրդագրական փոփոխությունների վերոնշյալ միտումները օրինաչափ կարելի է համարել Խարբերդի նահանգի հայության համար. նահանգի տարածքում քիչ չէին այն բնակավայրերը, որոնց հայ բնակչությունը կրոնափոխ էր արվել դեռևս դարեր առաջ, մյուս կողմից՝ այս նահանգում համիդյան կոտորածներն ու Հայոց ցեղասպանությունը՝ գործադրման մեխանիզմներով ու մեթոդներով առավել ընդգծված դրսևորվեցին:

Թեմայի ամբողջական ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է նաև հստակեցնել հայ բնակչության թվաքանակը մինչև Մեծ եղեռնը, ինչը մեծ շահարկումների առիթ է հանդիսացել թուրք պատմաբանների համար: Խնդիրը նրանում է, որ Արևմտյան Հայաստանի հայաթափման քաղաքականությանը զուգահեռ թուրքական կառավարությունը արդեն XIX դարի վերջերից նկատելիորեն կեղծում էր հայ բնակչության իրական թվաքանակը՝ այն ավելի նվազ ցույց տալով: Ինչպես իրավացիորեն նշում է պատմաբան Ռ. Թաթոյանը, «1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում հայկական հարցի միջազգայնացմամբ Օսմանյան կայսրության հայ բնակչության վիճակագրությունը դարձավ քաղաքական շահարկումների առարկա»[3]: Ուսումնասիրողներից ոմանք՝ իհարկե, մեծամա-

[3] Թաթոյան Ռ., Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», հ. 5, Երևան, 2002, էջ 123:

սամբ թուրք պատմաբաններ, շարունակելով Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որպես կանոն, ներկայացնում են վիճակագրական այնպիսի տվյալներ, որտեղ թե՛ հայ բնակչության թվաքանակն է նվազեցվում, թե՛ նվազ է ցույց տրվում այս կամ այն պատճառաբանությամբ տարբեր բնակավայրերից տեղահանվածների ու սպանվածների թվաքանակը: Ահա ինչու կարևոր է ճշգրտել հայ բնակչության իրական թվաքանակը կայսրության տարբեր նահանգներում, այս դեպքում՝ Խարբերդի նահանգում: Ներկայացված իրողություններով է պայմանավորված խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության կարևորությունը, արդիականությունն ու համակողմանի հետազոտման անհրաժեշտությունը:

Տարբեր աղբյուրների և ուսումնասիրությունների համալիր վերլուծության ու համադրման միջոցով փորձել ենք հաշվարկել 1915 թ. դրությամբ հայ բնակչության մոտավոր թվաքանակը Խարբերդի նահանգում, ինչպես նաև Հայոց ցեղասպանության տարիներին նահանգի հայության մարդկային կորուստները տոկոսային հարաբերությամբ: Հաշվարկը կատարել ենք տեղահանվածների խմբերի մի քանի օրինակներում գոհերի թվաքանակի միջինը հաշվարկելով:

Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1880-ականներից մինչև 1923 թ. ժամանակահատվածը, երբ արձանագրված ժողովրդագրական փոփոխությունները՝ արտագաղթ, զանգվածային կոտորածներ, ցեղասպանություն, գրեթե ամբողջությամբ փոխեցին Խարբերդի նահանգի ժողովրդագրական պատկերը: 1923 թ. պայմանավորված է նահանգի տարածքում բնակվող քրիստոնյա հայերի վերջին զանգվածային տեղահանությամբ: Միևնույն ժամանակ, աշխատանքն ավելի ամբողջական ու ընդգրկուն դարձնելու նպատակով հիշա-

տակվել են իրադարձություններ, որոնք դուրս են ժամանակագրական նշված սահմաններից:

XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչության ժողովրդագրական փոփոխությունների թեման նախկինում առանձին հետազոտություն չի հանդիսացել: Այդուհանդերձ, որոշ ուսումնասիրողներ անդրադարձել են Խարբերդի նահանգի հայ բնակչության կյանքի տարբեր ոլորտներին: Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք բազմալեզու աղբյուրներ, աղբյուրագիտական նշանակություն ունեցող գրականություն, մամուլ, պատմագիտական ուսումնասիրություններ:

Աշխատանքի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ)[4] և հատկապես Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ)[5] փաստաթղթերը: Օգտագործված փաստաթղթային նյութը հիմնականում բաղկացած է վիճակագրական ցուցակներից, որտեղ արտացոլված է Խարբերդի նահանգի տարբեր գավառների հայ բնակչության թվաքանակը: Սրանք հիմնականում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տարբեր վիճակների առաջնորդների կողմից պատրաստված ցուցակներ են, որ վերաբերում են XIX դարի վերջերին:

Բացառիկ աղբյուրագիտական կարևորություն ունեն ժամանակակիցների, ականատեսների վկայությունները, ուսումնասիրությունները, ճանապարհորդների նոթերը, հուշագրությունները, որոնք Խարբերդի նահանգի հայ բնակչության ժողովրդագրությանը վերաբերող կարևոր փաստագրական նյութ են պա-

---

[4] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 33, 197, 260, 788, 828, 891, ֆ. 447, ց. 1, գ. 21, 27, 39:
[5] ԳԱԹ, Ս. Հայկունու ֆ., թղթ. 69, Թ. Ազատյանի ֆ., 34/III, 37/III, 47/III , Գ. Սրվանձտյանցի ֆ., ց. 1, գ. 82:

ռունակում: Առավել մեծ արժեք են ներկայացնում հայ հեղինակների՝ Գ. վրդ. Սրվանձտյանցի, Ս. Էփրիկյանի, Հ. Զանիկյանի, Պ. Նաթանյանի, Անդրանիկի, Կ. քահանա Պեննեյանի աշխատությունները[6], որոնցում հարուստ պատմական, էթնոժողովրդագրական նյութ կա Խարբերդի հայ բնակչության թվաքանակի, զբաղմունքների վերաբերյալ: Գ. Սրվանձտյանցն իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է Խարբերդի առաջնորդության տարբեր վիճակների մեջ ընդգրկված բնակավայրերի պատմաճարտարապետական հուշարձանների նկարագրությանը, առանձին ցուցակներով առանձնացրել հայության տների քանակը տվյալ բնակավայրերում: Հ. Զանիկյանը նման ուսումնասիրություն է կատարել Ակնի բնակավայրերի վերաբերյալ, խուսել նշված տարածքում հայերի կրոնափոխության ավելի վաղ դեպքերի մասին: Անդրանիկի ուսումնասիրությունը վերաբերում է Դերսիմի գավառի բնակավայրերին: Հեղինակն անդրադարձել է գավառի տեղագրությանը, հայաբնակ հիմնական բնակավայրերի նկարագրությանը, նաև կարևոր տեղեկություններ տվել դերսիմցիների ծագումնաբանության վերաբերյալ: Կ. Պեննեյանի ուսումնասիրությունը նվիրված է Մալաթիայի հայաշատ բնակավայրերի տեղագրությանն ու ազգագրությանը: Այստեղ կարևոր տեղեկություններ կան Մալաթիայի հայության թվաքանակի, զբաղմունքների վերաբերյալ: Նշենք, որ հիշատակված հրատարակությունները վերաբերում են XIX դարի 80-90-ական-

---

[6] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ.Պոլիս, 1884: Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, հ. 2, Վենետիկ, 1907: Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895: Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի, Կ.Պոլիս: Անդրանիկ, Տէրսիմ. Ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիս, 1900: Պէնէեան Կ., Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը եւ Գրիգոր Խանձեանի Մալաթիոյ գաւառաբարբառը:

ներին: Բացառիկ նշանակություն ունի նաև ռուս գեներալ Ա. Կոլյուբակինի աշխատանքը[7], որը ևս հարուստ տեղեկություններ է ներառում Խարբերդի, Չարսանջակի և այլ գավառակների ժողովրդագրության, սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ:

Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակի հաշվարկման տեսանկյունից առանձնահատուկ հրատարակություններ են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրական ցուցակի երկու հրատարակությունները՝ Թեոդիկի[8] և համահեղինակներ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի[9] կողմից: Այս հրատարակությունների ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ պատրիարքարանի ցուցակներում չկան մի շարք բնակավայրերի վերաբերյալ տվյալներ, մյուս բնակավայրերի վերաբերյալ տվյալները թերի են և չեն արտացոլում Խարբերդի նահանգի հայ բնակչության իրական թվաքանակը: Կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունի նաև Բ. Եղիայանի ուսումնասիրությունը[10], որում հեղինակը հրատարակել է Կիլիկիայի կաթողիկոսարանի դիվանում պահվող փաստաթղթեր:

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեն նաև համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության ականատես օտարերկրացիների վկայությունները՝ օրագրերը, տեղեկագրերը, հուշագրությունները: Համիդյան կոտորածների պատմության ուսումնասիրման համար

---

[7] Колюбакинъ А. Материалы для Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, томъ III, часть I, отдель 2-й, Тифлисъ, 1891.

[8] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985:

[9] Ke'vorkian R., Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, 1992.

[10] Եղիայեան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, 1975:

հատկապես մեծ կարևորություն ունեն Է. Բլիսի[11], Ֆ. Գրինի[12], Պ. Շարմետանի[13], Ռ. և Հ. Հարիսների[14], Ջ. Հեփվորթի[15] աշխատանքները, որտեղ կոտորածների ընթացքի ու հետևանքների վերաբերյալ Խարբերդի նահանգին անմիջականորեն առնչվող հսկայական փաստական նյութ կա: Մասնավորապես ամերիկացի միսիոներ, հրապարակախոս Է. Բլիսը "The Independent"-ի, այլ լրատվամիջոցների հրապարակումների, ակնատեսների գրառումների, նամակների հիման վրա տալիս է 1894-1896 թթ. ողջ Օսմանյան կայսրության տարածքում թուրքական կառավարության կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածների պատմությունը, առանձին հատվածում ներկայացնում նաև Խարբերդի նահանգում իրագործված կոտորածների, բռնի կրոնափոխությունների, բնակավայրերի ավերման և ցեղասպանության այլ դրվագների մասին: Համիդյան կոտորածների պատճառներն են վերլուծվում Ֆ. Գրինի աշխատության մեջ, որում հեղինակը մանրամասն նկարագրում է նաև հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը 1890-ականներին, անդրադառնում օտարերկրյա միսիոներական կազմակերպությունների գործունեությանը: Հելեն և Ջ. Ռենդել Հարրիսների՝ Մեծ Բրիտանիայի իրենց ընկերների հետ ունեցած նամակագրությունն է հրատարակված «Նամակներ՝ գրված Հայաստանում վերջին կոտորածների վայրերից» գրքում: Նամակները

---

[11] Bliss Rev. E. Turkey and the Armenian Atrocities, Fresno, Ca., 1982.
[12] Greene F. Armenian Massacres or the Sword of Mohammed, Philadelphia and Chicago,1896.
[13] Charmetant P. F^x, Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades du Constantinople et statistique dressé par des témoins oculaires grégoriens et protestants, Paris.
[14] Harris R. and Harris H., Letters from the Scenes of the recent Massacres in Armenia, London, 1897.
[15] Hepworth G. Through Armenia on Horseback, New York, 1898.

գրված են ինչպես Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, այնպես էլ՝ Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից՝ հատկապես Խարբերդից, Ակնից ու Դիարբեքիրից: Իրենց նամակներում հեղինակները մեջբերել են Օսմանյան կայսրության տարածքում գործունեություն ծավալած և համիդյան կոտորածների ականատես օտարերկրացիների՝ միսիոներներ, դիվանագետներ, զեկույցներից, նամակներից, նոթերից հատվածներ: Գրքում տեղ գտած նամակները արժեքավոր տեղեկություններ են պարունակում հատկապես Խարբերդի նահանգի բնակավայրերում իրագործված կոտորածների ընթացքի, նաև՝ կոտորածներից հետո տվյալ բնակավայրերի՝ մասնավորապես Ակնի, Արաբկիրի, Խարբերդի դաշտի գյուղերի կարիքավորների վիճակի վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության օտարերկրացի ականատես-ժամանակակիցների վկայություններն այս առումով ևս մեծ կարևորություն ունեն: Այս դեպքում օգտվել ենք դիվանագետների, միսիոներների օրագիր-հուշագրություններից, փաստաթղթերից, որոնց հեղինակների գործունեության հիմնական շրջանակը Հայոց ցեղասպանության տարիներին եղել է Խարբերդի նահանգը: Նման աղբյուրներից են Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լ. Դևիսի[16], միսիոներներ Մ. Յակոբսենի[17], Հ. Ռիգզի[18], Թ. Ատկին-

[16] Դեվիս Լ., Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ., թարգմանությունը՝ Գրիգոր Զանիկյանի, Երևան, 2001:

[17] Ճէյքոպսըն-Եագոպսըն Մարիա. Օրագրութիւն 1907-1919. Խարբերդ, Դասնիներէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին Ներսէս Եպս. Բալատիկեան, Հալէպ-Սուրիա, Անթիլիաս, 1979:

[18] Riggs H. Days of tragedy in Armenia: Personal Experience in Harpoot. 1915-1917, USA, 1997.

սոնի[19], Ռ. Փարմելի[20] օրագրերը: Կարևոր են նաև Յ. Լեփսիուսի[21], Յ. Կյունցլերի[22], Ա. Յոհաննսոնի[23] վկայությունները: Լ. Դևիսի «Սպանդի նահանգը» գիրքը Խարբերդի նահանգում տեղի ունեցած իրադարձությունների փաստագրությունն է: Գրքում տեղ է գտել Խարբերդում ամերիկյան հյուպատոսարանի հաշվետվությունը, ինչպես նաև Լ. Դևիսի կողմից՝ ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուին ուղղված որոշ փաստաթղթեր: Լ. Դևիսը նկարագրում է տարբեր խմբերի տեղահանության մանրամասները, պատմում իր տեսածն ու արձանագրածը նահանգի տարածքի խոշոր սպանդավայրերից մեկում՝ Ծովք լճի շրջակայքում: Հյուպատոսն իր պաշտոնավարման ընթացքում խորամուխ է լինում նաև հայերի, թուրքերի, քրդերի կենցաղի ու բարքերի մեջ, կարևորում հայ բնակչության դերը նահանգի սոցիալ-տնտեսական կյանքում: Այս առումով կարևորվում են նաև Մ. Յակոբսենի, Հ. Ռիզգի և մյուս ականատեսների օրագրերն ու հուշագրությունները:

Օգտագործված գրականության մյուս խումբը հրատարակված սարխիվային փաստաթղթերի ժողովածուներն են, որոնք ներառում են տարբեր երկրների արխիվներում պահվող փաստաթղթեր: Նման հրատարակություններից առանձնացնենք Մ.

---

[19] Atkinson T. The German, the turk and the Devil made a triple Alliance, Harpoot diaries, 1908-1917, with a foreword by J.Michel Hagopian, Princeton, New Jersey, 2000.

[20] Parmele R. A Pioneer in the Euphrates Valley, Gomidas Institute, Princeton and London, 2002.

[21] Գաղտնի տեղեկագիր տորթ. Եսհաննէս Լեփսիուսի. Հայաստանի ջարդները, թարգմանեց Միքայել Շամտանճեան, Կ.Պոլիս, 1919:

[22] Künzler J. In the Land of Blood and Tears: Experiencies in Mesopotamia During the World War(1914-1918), Translated from the 1999 German edition, Armenian Cultural Foundation, Arlington, Ma., 2007.

[23] Յոհաննսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Հայոց ցեղ. թանգարան-ինստիտուտ, Երևան, 2008:

Ներսիսյանի, Վ. Միքայելյանի, Ա. Սարաֆյանի խմբագրությամբ հրատարակված ժողովածուները[24]: Փաստաթղթերի ժողովածուներից մեծ նշանակություն ունեն նաև լորդ Ջեյմս Բրայսի կողմից հրատարակված «Կապույտ գիրքը»[25], ամերիկյան «Մերձավոր Արևելքի Նպաստամատույց» կազմակերպության հիմնադիր Ջ. Բարտոնի հրատարակած ժողովածուն[26], փաստաթղթերի այլ ժողովածուներ[27]: «Կապույտ գիրքը» ներառում է հայերի տեղահանության ու կոտորածների վերաբերյալ օտարերկրացի ականատեսների վկայություններ ու հայ վերապրողների հուշեր: Օտարերկրացի ականատեսների թվում էին դիվանագետներ, մարդասիրական կազմակերպությունների աշխատակիցներ, միսիոներներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Դանիայից, Շվեյցարիայից, այլ երկրներից, որոնք իրենց տեղեկագրերում, նամակներում արձանագրել են այն, ինչի

---

[24] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, 1991: Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915-1918 թթ.) ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող՝ Վ.Ա.Միքայելյան, Երևան, 2004: United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Princeton and London, 2004.

[25] Bryce J. and Toynbee A. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Documents presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute Princeton, New Jersey, 2000.

[26] Turkish Atrocities. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, Compiled by James L. Barton, Gomidas Institute, Ann Arbor, Michigan, 1998.

[27] Сборникь дипломатическихь документовь. Реформы вь Армении. 26 ноября 1912 года- 10 мая 1914 года, Петроградь, 1915. Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ Դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006:

ականատեսն են դարձել 1915-1916 թթ. Օսմանյան կայսրության տարբեր բնակավայրերում: Փաստաթղթերը ներկայացված են ըստ նահանգների ու բնակավայրերի:

Աղբյուրագիտական նշանակություն ունեցող գրականության մյուս խումբը Հայոց ցեղասպանությունը վերապրածների հուշագրություններն ու հուշամատյաններն են, որոնք Խարբերդի նահանգի բնակավայրերի դեպքում առավել մեծաքանակ են, քան որևէ այլ բնակավայրի պարագայում: Այս խմբի մեջ կան ինչպես մի վերապրողի, ականատեսի վկայություններ, որ առնչվում են կոնկրետ բնակավայրի պատմությանը[28], այնպես էլ ամբողջական գավառակների ու գավառների վերաբերյալ ուսումնասիրություններ: Վերջին խմբում հուշամատյաններն են, որոնք առնչվում են ամբողջական գավառակների, գավառների հայության կյանքի տարբեր ոլորտներին, ներառում բազմաթիվ

---

[28] Մելիտինեցի Գ., Նախճիրներ (1915-1918), Պոստոն, 1929: The Auction of Souls. The Story of Aurora Mardiganian, the Christian Girl who Survived the Great Massacres, Interpreted by H. L. Gates, London. Մկրտիչեան Ե., Թուրքիոյ գեհենէն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը. Ականատեսի պատմութիւն, 1918, Աղեքսանդրիա: Սեդրակ Ծ., Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին. Խարբերդ, Արաբկիր, Մալաթիա, Քիւրտիստան, Տիգրանակերտ, Տարոն, Սասուն, Բալու եւ Ռդի, Ա հատոր, Լոս Անճէլըս, Քալիֆորնիա, 1975: Կճիկեան (Առաքելեան) Լեւոն. Մօրենիկ եւ իր սեւ տարին, Անթիլիաս-Լիբանան, 1969: Անջրդի եւ շրջակա գիւղերու ճշրագործներու արարքները. 1915-1918, Պոսթոն: Ծերօն Մ., Բարջանճ գիւղ. Համայնապատում (1600-1937), Պոստոն, 1938: Տէրանեան Մարտիրոս, Հիւսէնիկ. Յուշէր եւ յոյզէր, Պոսթոն, 1981: Պօղոսեան Ա., Բազմաշէնի ընդարձակ պատմութիւնը իր հիմնարկութենէն մինչեւ վերջին օրերը, տպ. Պայքար, Պոստոն, 1930: Մխիթարեան Գ. Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն, 1958: Ճաղուեան Յ., Պատմութիւն Ջասիէ կամ Քէօրքէ գիւղին, 1917 յուլիս 10, Ամերիկա, Լօվէլ: ՀՅԹ-Ի, բաժին 8, թղթ.39: Թաշճեան Մարտիրոս. Սեւ յուշեր մղձաւանջային ենթ տարիներու. 1915-1922, Պէյրութ, 1952: Չիթճեան Հ., Մազի չափ մահին մօտ. եղեռնէն վերապրողի յուշեր, Taderon Press, 2004: Խրայեան Կ., Ծովք-Կէօլճիկ, Մարսէյլ, 1927: Zahigian Krikor M., One Page of Armenia's Tragedy: A Story of the years wherein we have seen evil, 1923.

հուշագրություններ, փաստաթղթեր, լուսանկարային նյութ: Այս շարքին են դասվում Վ. Հայկի[29], Մ. Ճիզմեճյանի[30], Ա. Ալպոյաճյանի[31], Ս. Բախտիկյանի[32], Ա. Փոլատյանի[33], Գ. Երևանյանի[34], Հ. Քեչյանի[35], Հ. Գասպարյանի[36] խմբագրությամբ տարբեր երկրներում հրատարակված հուշամատյանները: Դրանցից յուրաքանչյուրը մեծ կարևորություն է ներկայացնում կոնկրետ գավառի կամ գավառակի հայության կյանքի տարբեր ոլորտներ ուսումնասիրելու տեսանկյունից: Վերջիններս հիմնականում վերապրողների հուշագրություններ, Հայրենակցական միությունների գործունեության արդյունքում հավաքագրված տեղեկություններ են, որ կազմված են բարելսղճորեն և ևս ունեն աղբյուրագիտական կարևորություն: Ինչ վերաբերում է այս հրատարակություններում հայության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալներին, ապա դրանք անվերապահորեն չեն ընդունվել մեր կողմից, այլ համեմատության մեջ են դրվել եղած այլ տվյալների հետ:

Օգտվել ենք նաև հայ պատմաբանների՝ տվյալ թեմային առնչվող աշխատություններից, ինչպես օրինակ՝ Ա. Համբարյանի[37], Հ. Ղազարյանի[38], Լ. Վարդանի[39], Վ. Դադրյանի[40], Ռ. Մել-

---

[29] Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959:
[30] Ճիզմէճեան Մ., Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրէզնոյ, 1955:
[31] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961:
[32] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէյրութ, 1934:
նույնի՝ Ոսկեգետակ, Գ հատոր, նուիրուած՝ Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերդի, Մալաթիոյ պատմութեան եւ ազգագրութեան, Պէյրութ, 1948:
[33] Փոլատեան Ա., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:
[34] Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, 1956:
[35] Քեչեան Ա., Ակն եւ ակնցիք, հ. Բ, Փարիզ, 1952:
[36] Գասպարեան Հ., Չմշկածագ եւ իր գիւղերը, 1969:
[37] Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում. 1856-1914, Երևան, 1965:
[38] Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրութ,1968:

քոնյանի[41], Մ. Գրիգորյանի[42], Ե. Խաթանասյանի[43] աշխատությունները են: Գրքում կարևորվել են նաև ոչ հայ պատմաբանների աշխատությունները[44]: Պատմագիտական աշխատանքներից առանձնանում է Ռ. Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայկական Ծոփք-Խարբերդ»[45] գիրքը, որը ներառում է Խարբերդին ու Խարբերդի նահանգի պատմությանը, աշխարհագրությանը, գրականությանն առնչվող բազմաթիվ հոդվածներ: Նշենք, որ սա մեր կողմից առաջադրված խնդիրների համալիր ուսումնասիրության տեսանկյունից պատմագիտական կարևոր արժեք ունեցող գիրք է: Նշված գրքում տեղ գտած հոդվածներից առավելապես կարևորում ենք Ռ. Հյուսնի «Ծոփքի հինգ «ժողովուրդները»», «Ոսկեդաշտ», Ք. Ուոլքերի «Խարբերդը 1915-1916 թթ.», Բ. Մերկերյանի, Վ. Շեմասյանի հոդվածները:

Ուսումնասիրության ընթացքում մեր կողմից կարևորվել են նաև Հայրենակցական միությունների հրատարակած ամսագ-

---

[39] Վարդան Լ., Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի.1915-1923, Տպարան «Ատլաս», Պէյրութ, 1975:

[40] Dadrian V., Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict, New Brunswick and London, 1999.

[41] Մնլյոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, Հեղ. հրատարակություն, 2010:

[42] Krikorian M. Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, 1977.

[43] Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965:

[44] Winter J. America and the Armenian Genocide of 1915, Canbridge, 2003. Walker Ch. Armenia. Survival of a Nation, London, 1982. Hewsen R. Armenia. A Historical Atlas, Chicago and London, 2001.Guenter L. The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, Salt Lake City, 2005, Latimer E. The Last Years of The Nineteenth Century, second edition, Chicago, 1901. Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1970. Birken A. Die Provinyen Osmanischen Reiches, Dr. Ludwig Reichert, Wiesbaden, 1976. Strong W. The Story of The American Board, Boston, 1910.

[45] Armenian Tsopk/ Kharbert, edited by R. Hovannisian, Costa Mesa, California, Mazda Publishers, 2002.

ները, «Ազգ», «Հայրենիք», «Արձագանք», «Արձագանք Փարիզի», «Ոստան», «Ասպարեզ», «Արմյանսկի վեստնիկ», «Արարատ», «Ամենուն տարեցոյց», «Արմենիան ռեվյու», «Արմենիա», «Մուրճ», «Նոր հոսանք», «Նոր կեանք», այլ հանդեսներում և թերթերում[46] հրատարակված նյութերը:

[46] «Նոր Արաբկիր տեղեկատու», «Ազգ», 1907-1908 թթ., Պոսթոն: «Հայրենիք» ամսագիր, թիւ 5, 6, 1966 թ.: «Արձագանք», 28 նոյեմբեր, N. 41, 1882 թ., Թիֆլիս: «Արձագանգ Փարիզի», 1916 թ., 1917 թ., 1921 թ., Փարիզ: «Ոստան», Ա տարի, թիւ 2, 1911: „Армянский Вестникъ", 1917 г.. «Արարատ», 1914, համար Թ, սեպտեմբեր, Ս. Էջմիածին: «Ամենուն տարեցոյց», ԺՁ տարի, 1922: "Armenian review", Summer 1988, vol. 41, no. 2-162, Wo., Ma. "Armenia" A Monthly Magazine, Vol. IV, No. 5, September, 1910. «Մուրճ», N 7-8, 1896, յուլիս-օգոստոս, Թիֆլիս, «Նոր կեանք», թիւ 6, 15 մարտ, 1898; թիւ 8, 15 ապրիլ, 1898, Լոնտոն, «Նոր հոսանք», համար 6, 1913, Թիֆլիս:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

ա) Խարբերդի նահանգի վարչական կառուցվածքը

Խարբերդը, որը գտնվում է պատմական Հայաստանի Ծոփք նահանգի տարածքում, համարվում է «հայ ժողովրդի ամենավաղ ծագման հիմնական տարածքներից մեկը»[47]: Հնուց ի վեր այս տարածքի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը, սակայն դարերի ընթացքում այստեղ ևս տեղի ունեցան բազմաթիվ փոփոխություններ, այդ թվում՝ ժողովրդագրական, սոցիալ - տնտեսական, ազգագրական: Տարածք էին ներթափանցել բազմաթիվ քրդական ցեղախմբեր, մի շարք հայկական բնակավայրերի բնակչությունը դիմել էր արտագաղթի, մի մասն էլ հարկադրաբար ընդունել էր իսլամ:

Ծոփքը կամ Չորրորդ Հայքն ուներ տասը գավառ[48], որոնք նոր շրջանում հիմնականում ընդգրկված էին Խարբերդի, Դիարբեքիրի (Տիգրանակերտ) նահանգների սահմաններում: Ողջ «Ծոփքի սիրտը Խարբերդի դաշտն էր, որը նոր շրջանում արևմտահայերին հայտնի էր Ոսկեդաշտ անունով»[49]: Ոսկեդաշտը գտնվում էր Ծոփքի կենտրոնական մասում՝ Փոքր Ծոփքի ու Մեծ Ծոփքի միջև՝ ընդգրկելով պատմական Անձիտ գավառի տարածքը: Ծոփքի Խորձյան գավառն ընդգրկում էր Դերսիմի մի մասը, Փոքր կամ Ճահունյաց Ծոփքը՝ Չմշկածագի շրջանը[50]:

---

[47] Hovannisian R. Armenian Tsopk / Kharpert, տես՝ Armenian Tsopk / Kharpert, էջ 28:
[48] Հասկոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 232:
[49] Hewsen R. The Five "Peoples" of Tsopk / Sophene, տես՝ Armenian Tsopk / Kharpert, էջ 126-127:
[50] Հասկոբյան Թ., նշվ. աշխ., էջ 232-236:

Փոքր Ծոփքից հարավ-արևելք Մեծ Ծոփքն էր, որի կենտրոնը Նփրկերտն էր: Այս տարածքում էին գտնվում Ամիդ, Արզն, Աբարնե բնակավայրերը, որոնք XIX դարի վերջին մտնում էին Դիարբեքիրի վիլայեթի մեջ: Ծոփքի արևելյան մասում էին Բալահովիտն ու Պաղնատունը: Բալահովիտից հարավ-արևելք ընկած էր Հաշտյանքը՝ Ուլոր կենտրոնով: Այս տարածքը, թերևս, եղել է Ծոփքի թագավորների կալվածքներից[51]: Ծոփքի մյուս գավառներն էին Անգեղտունը, որ գտնվում էր Մեծ Ծոփքից արևելք, Դեգիքն ու Գորեքը: Փաստորեն, Խարբերդի նահանգի տարածքը հիմնականում ընդգրկում էր պատմական Ծոփքի տարածքի մի մասը, մասնավորապես՝ Փոքր Ծոփքը, Անձիտն ու Խորձյանը, ինչպես նաև՝ Փոքր Հայքի հարավային և արևելյան շրջանները:

VI դարում Ծոփքը, Անձիտն ու Հաշտյանքը հիշատակվել են որպես «Ազգաց» նահանգ[52]: Հուստինիանոս կայսեր կողմից արված տարածքային փոփոխությունների արդյունքում Մեծ Ծոփքը, Փոքր Ծոփքը, Անգեղտունը, Անձիտը, Հաշտյանքն ու Բալահովիտը մաս են կազմել Չորրորդ Հայքի: Իր հերթին՝ Մորիկ կայսրը ևս որոշ սահմանային փոփոխությունների ենթարկեց տարածքը. արդյունքում՝ Չորրորդ Հայքի փոխարեն ստեղծվեց, ըստ էության, երկու Չորրորդ Հայք՝ մեկը Մարտիրոսացոլիս՝ Մուֆարդին, մյուսը՝ Դատիմա կենտրոններով[53]: Նշված տարածքներն օսմանյան տիրապետության տակ անցան 1515-1517 թթ. ընթացքում[54]:

---

[51] Hewsen R. The Five "Peoples" of Tsopk /Sophene, էջ 126-127:
[52] Մնսրոպ Գ., Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 19:
[53] Նույն տեղում, էջ 20:
[54] Krikorian M. Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, Routledge and Kegan Paul, London, Henley and Boston, 1977, p. 71.

Օսմանյան կայսրության վարած վարչական քաղաքականությունը հատկապես XIX դարի ընթացքում միտված էր նահանգների տարածքների անընդհատ փոփոխություններին, ինչը նպաստակ ուներ կենտրոնական իշխանությունների համար առավել դյուրին դարձնել կայսրության բոլոր հատվածների կառավարումը: Այդ վարչական վերաձևումների հիմնական պատճառը հայաշատ տարածքներին քրդաբնակ ու թուրքաբնակ տարածքների կցումն էր, ինչի արդյունքում տվյալ տարածքներում հայ բնակչության թվաքանակն առավել նվազ ցույց կտրվեր: Այս քաղաքականությունն իր արտահայտությունն ունեցավ նաև Մամուրեթ ուլ Ազիզ (Խարբերդ) նահանգի կազմավորման մեջ:

XVIII դարի վերջին Օսմանյան կայսրության տարածքն ընդգրկում էր 26 էյալեթ (նահանգ), որոնք բաժանվում էին 163 սանջակների (գավառ) և 1800 կազաների (գավառակ)[55]: Արդեն 1831 թ. կայսրության տարածքում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն ձևավորվել էր 29 նահանգ՝ 179 գավառներով: Պատմական Ծոփքի և Աղձնիքի տարածքները տվյալ ժամանակաշրջանում ընդգրկված էին Դիարբեքիրի էյալեթի սահմաններում: Համաձայն 1846-1847 թթ. սալնամների՝ նույն տարեթվին Դիարբեքիրի նահանգի ամբողջ արևմտյան ընդարձակ հատվածից ձևավորվեց մի նոր վարչամիավոր՝ Խարբերդի (պաշտոնական փաստաթղթերում՝ Խարբութ) էյալեթը, որի կազմում, բուն Խարբերդից բացի ընդգրկվեցին նաև Արղնիի և Սևերակի գավառները, նաև՝ Արաբկիրը Ակնի հետ միասին՝ Սվազի էյալեթից, ինչպես նաև Մալաթիայի, Սամսատի, Կարկառի լիվա-սանջակները՝ Մարաշից[56]: 1860-ական թվականներին Խարբերդը կրկին հիշատակվում է որպես Դիարբեքիրի վի-

---

[55] Ubicini M., Lettres sur la Turquie, Paris, 1853, p. 44.

[56] Հայոց պատմություն, հ. III, Գիրք առաջին, Երևան, 2010, էջ 401:

լայնթի մաս, իսկ արդեն 1878-1880 թթ. կազմավորվեց Մամուրեթ ուլ Ազիզ առանձին նահանգը, որին 1882-83թթ. կցվեց Մալաթիայի սանջակը, իսկ 1888 թ.՝ մինչ այդ առանձին վիլայեթ կազմող Դերսիմը: Այս վերածնումներից հետո Խարբերդի նահանգի տարածքը կազմեց 37800 քառ. կմ[57]: Նահանգին հյուսիսից սահմանակից էին Կարինի (Էրզրում), հյուսիս-արևմուտքից՝ Մեբաստիայի (Սվաս), արևելքից՝ Տիգրանակերտի (Դիարբեքիր), հարավից՝ Հալեպի նահանգները:

Խարբերդի նահանգը բաղկացած էր երեք սանջակներից (գավառ)՝ Խարբերդ, Մալաթիա, Դերսիմ: Պատմական աշխարհագրության մասնագետ Ռ. Հյուսնի կարծիքով նահանգը բաժանված էր 18 կազաների (գավառակ)՝ Խարբերդ-Մեզրե, Արաբկիր, Ակն, Կապան-Մադեն, Մալաթիա, Պեհեսնի, Ադիաման կամ Հյուսնի Մանսուր, Քյախտա, Աղջադաղ, Խոզաթ, Չմշկածագ, Չարսանջակ, Մեծկերտ, Կուզիջան, Օվաճըգ, Բերդակ, Փախ, Կզըլքիլիսե, և ընդգրկում էր 2443 գյուղ[58]: Ռ. Հյուսնը այս մեջբերումը արել է ֆրանսիացի հեղինակ Վիտալ Քինեից, մինչդեռ Ռ. Գևորգյանի ու Փ. Բափուճյանի հրատարակած՝ պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակների համաձայն՝ Խարբերդի գավառում հիշատակվում է նաև Փոթուրկե գավառակը, իսկ Դերսիմի գավառում որպես առանձին գավառակներ բացակայում են Կուզիջան, Բերդակ, Փախ գավառակները, որոնցից վերջին երկուսի տարածքները ընդգրկված էին Դերսիմի գավառակների կազմում, իսկ Կուզիջանը մաս էր կազմում Էրզրումի նահանգի[59]:

---

[57] Hewsen R. Armenia. A Historical Atlas, The University of Chicago Press, Chicago and London, 2001, p. 197.

[58] Hewsen R. Golden Plain: The Historical Geography of Tsopk/ Kharpert, տես՝ Armenian Tsopk/Kharpert, էջ 40:

[59] Մելքոնյան Ա., Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), «Հայաստան», ԳԱԱ հրատարակչություններ, Երևան, 1994, էջ 62:

Խարբերդ կամ Մամուրեթ ուլ Ազիզ գավառը բաժանված էր Խարբերդ, Ակն, Արաբկիր, Կապան-Մադեն, Փոթուրկեն գավառակների, որոնցից վերջին երկուսում կային ընդամենը մի քանի հայաբնակ բնակավայրեր: Մինչդեռ գերմանացի հեղինակ Ա. Բիրքենի կարծիքով, Մամուրեթ ուլ Ազիզ սանջակը 1912 թ. դրությամբ ներառում էր Մեզրե, Հարփութ, Քեբան, Արաբկիր, Էգին, Բերդեկ կազաները[60]: Նշենք, որ Բիրքենի մատնանշած Մեզրե և Հարփութ անուններով առանձին կազաներ չկային, քանի որ Մեզրեն ու Հարփութ անվանված Խարբերդի բնակավայրերը բաժանել առանձին կազաների անիմաստ էր. սրանք գտնվում էին իրար կողք-կողքի, իսկ Բերդակը մաս էր կազմում Դերսիմի գավառի Զարսանջակ գավառակի:

Դերսիմի գավառը ներառում էր Խոզաթ, Օվաճըգ, Մեծկերտ, Կզըլբիլիսե, Զմշկածագ, Զարսանջակ գավառակները: Մալաթիայի գավառն ընդգրկում էր Մալաթիա, Պեհեսնի, նաև մեծամասամբ քրդերով ու թուրքերով բնակեցված՝ Հյուսնի Մանսուր, Ադիաման, Քյախտա գավառակները:

Նշված գավառների ու գավառակների տեղադրությանն ու այդ վայրերում հայ բնակչության թվաքանակին առնչվող խնդիրներին մանրամասն կանդրադառնանք աշխատության երկրորդ գլխում:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության համաձայն նահանգի տարածքում բացի հայերից ապրում էր 102000 թուրք, 95000 քուրդ, 80000 կզլբաշ բնակիչ[61]:

Խարբերդի նահանգի որոշ բնակավայրերում ապրում էին նաև ասորիներ: Հեղինակներից Ս. Բախտիկյանի տվյալներով՝

---

[60] Birken A. Die Provinyen Osmanischen Reiches, Dr. Ludwig Reichert, Wiesbaden, 1976, s. 198.

[61] «Արարատ», 1914, համար Թ, սեպտեմբեր, Ս. Էջմիածին, էջ 811: Տես նաև՝ Population Armenienne de la Turquie, էջ 9:

Խարբերդի ասորիների թաղում ապրում էր 150 տուն՝ 900 ասորի[62]: Ասորիներ ապրում էին նաև Մալաթիա քաղաքում, Ծիրո, Այվոզ, Կարկառ գյուղերում[63], Հյուսնի Մանսուր, Քյախտուս գավառակների գյուղերում: Ընդհանուր առմամբ, նահանգի տարածքում, ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության՝ ապրում էր 5000 ասորի[64]: Ա. Էփրիկյանը գրում է, որ հնուց հայերն ու ասորիները շատ ջերմ ու բարեկամական են եղել իրար հետ, ընկերություն, խնամիություն արել, այցելել միմյանց եկեղեցիներ[65]: Նույն պատկերն էր տիրում նաև մինչև 1915 թ. ընկած ժամանակահատվածում: Հատկանշական էր, որ հատկապես Մալաթիայի գավառի բնակավայրերում հայերն ու ասորիները հաճախում էին ոչ միայն նույն եկեղեցին (հիմնականում ասորիներն էին, որ չունենալով տվյալ բնակավայրում եկեղեցի, այցելում էին հայկական եկեղեցի), նաև հաճախում էին միևնույն դպրոցը:

Նահանգի տարածքում ապրում էին նաև փոքրաթիվ քանակությամբ հույներ: Ըստ թուրքական պաշտոնական վիճակագրության՝ 1911-1912 թթ. Խարբերդի նահանգում հունական համայնքը կազմում էր 971 մարդ[66]: Կարելի է ենթադրել, որ պաշտոնական վիճակագրության մեջ նվազեցված էր ոչ միայն հայ բնակչության, այլ նաև քրիստոնյա մյուս ժողովուրդների՝ տվյալ

---

[62] Բախտիկեան Ս., Ոսկեգնտակ, Գ հատոր, նուիրուած՝ Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերդի, Մալաթիոյ պատմութեան եւ ազգագրութեան, 1948, Տպ. Հայկ-Պապ-Իտրիս, Պէյրութ, էջ 319:

[63] Naayem Rev. J. Shall this Nation Die? Chaldean Rescue, New York, 1921, p. 214.

[64] Արարատ, Էջմիածին, 1914, թիւ Թ, էջ 809: Տե՛ս նաև՝ Խոսրոևա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 60:

[65] Էփրիկեան Ա., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 162:

[66] Hewsen R. Golden Plain, էջ 41:

դեպքում հույների թվաքանակը: Խարբերդի նահանգի տարածքում ապրող հույների թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության մեջ տվյալներ չկան:

բ) Նահանգի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությունը

Նախքան Խարբերդի նահանգի ժողովրդագրական շարժերի վերլուծությանն անդրադառնալը, փորձենք որոշակի պատկերացում ստանալ նահանգի հայ ազգաբնակչության սոցիալ-տնտեսական կացության վերաբերյալ: Նախ խոսենք հայ բնակչության ներգրավվածության մասին նահանգի տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում: Արձանագրենք, որ հայ բնակչության ներդրումը Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում, հատկապես առևտրի ու արհեստների բնագավառներում չափազանց մեծ էր: Հայերը տիրապետում էին գրեթե բոլոր արհեստներին, նահանգի արտաքին ու ներքին առևտրի հիմնական մասը ևս իրականացվում էր նրանց կողմից: Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսը գրում է. «Տարածաշրջանի առևտուրը հիմնականում հայերի ձեռքում էր, դրամատների ավանդների ինֆսուինիինգ տոկոսը նրանց էր պատկանում: Ըստ էության, հայեր էին նաև բոլոր վաճառականները, դրամատների տերերը, բժիշկները, ատամնաբույժները, փաստաբանները, ուսուցիչները, հյուսները, որմնադիրները, բրուտները, թիթեղագործները, հացթուխները, դերձակները, կոշկակարները, կենցաղում խիստ անհրաժեշտ մյուս արհեստավորները»[67]: Փորձենք մասնավորեցնել ու անդրադառնալ Խարբերդի նահանգում հայ բնակչության հիմնական զբաղմունքներին:

---

[67] Դեվիս Լ., Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ., Երևան, 2001, էջ 124:

Խարբերդի նահանգը վերջնական ձևավորումից հետո իր մեջ ներառեց տարբեր բնակլիմայական պայմաններ ունեցող շրջաններ, տարածքներ, որոնք նպաստավոր էին ինչպես երկրագործության, այնպես էլ՝ անասնապահության համար: Սա է պատճառը, որ Խարբերդի նահանգի գավառակներն ունեին զարգացման առանձնահատկություններ, կար, մասնավորապես, շրջան, որտեղ առավել նպաստավոր պայմաններ կային երկրագործության տարբեր ճյուղերի զարգացման համար, ինչպես, օրինակ, Խարբերդի դաշտն էր՝ Խարբերդի գավառակը, Մալաթիայի, Զարսանջակի գավառակները: Նահանգի տարածքում քիչ չէին այն բնակավայրերը, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր կամ՝ եզակի արհեստները: Նման բնակավայրերում հայերը մեծամասնություն չէին կազմում, ինչպես, օրինակ՝ Դերսիմի լեռնային հատվածն էր և Մալաթիայի գավառի որոշ տարածքներ: Ինչ վերաբերում է քաղաքներին ու քաղաքատիպ ավաններին, գյուղաքաղաքներին, ապա դրանցից գրեթե յուրաքանչյուրում կար ստվար կամ նվազ թվով հայ բնակչություն. պատճառն այն է, որ կայսրության ողջ տարածքում, նույնիսկ գրեթե ամբողջությամբ թուրքաբնակ կամ քրդաբնակ տարածքներում հիմնական արհեստներն ու առևտուրը անհնար էր պատկերացնել առանց հայերի գործուն մասնակցության:

Նահանգի տարբեր հատվածներում անասնապահությամբ հիմնականում զբաղվում էին տարածքի քրդերը: Թուրքերը հիմնականում վարում էին նստակյաց կյանք, թեև ոչ արհեստների, ոչ վաճառականության մեջ որևէ առանձնահատուկ տեղ չունեին: Նրանք վարում էին կառավարական, ոստիկանական պաշտոններ, որոշ գյուղաբնակ վայրերում մշակներ էին, արհեստ-

ներից տիրապետում էին մսագործությանը, պայտագործությանը, որոշ վայրերում նաև՝ հացագործությանը:

Խարբերդի դաշտը, թերևս, նահանգի ամենաբարգավաճ տարածքն էր՝ ծածկված պտղատու այգիներով, ցորենի դաշտերով: Այս մասին իրենց նոթերում գրել են բազմաթիվ օտարերկրացի ճանապարհորդներ, ականատեսներ: Ամերիկացի բարոզիչ Է. Բլիսը գրում է, որ «Խարբերդի դաշտը երկար ժամանակ հիշատակվել է որպես Միջին Ասիայի կամ Արևելյան Թուրքիայի ամենաբարգավաճ տարածքներից մեկը»[68]: Այստեղ, ըստ Դերսիմի վերաբերյալ պատմատեղագրական աշխատության հեղինակ Անդրանիկի՝ կային «աելի քան 300 գիւղեր (50-1500 տուներէ բաղկացեալ, որոնց մեծագոյն մասն հայեր են) և բոլորովին երկրագործութեամբ պարապողներ»[69]: Իրավմամբ, այս բնակավայրերում հատկապես զարգացած էր երկրագործությունը. մշակվում էր ցորեն, բամբակ, կտավատ, բազմաթիվ էին այգիները՝ պտղատու բազմազան ծառատեսակներով: Բազմաթիվ գյուղեր իրենց երկրագործական արտադրանքը արտահանում էին այլ բնակավայրեր, այդ թվում՝ այլ նահանգներ: Մասնավորապես, Քեսրիկ գյուղն առևտրական կապեր ուներ ոչ միայն Խարբերդ քաղաքի, այլ նաև Ադանայի, Էրզրումի, Տիգրանակերտի հետ. գյուղից արտահանվում էր ցորեն, բամբակ, բանջարեղեն և այլ մթերքներ[70]:

---

[68] Bliss Rev. E. Turkey and The Armenian Atrocities, Meshag publishing, Frezno, California, 1982, p. 427. Տես նաև՝ Ghazarian V., Armenians in the Ottoman Empire. An Anthology of Transformation 13th-19th Centuries, Mayreni Publishing, Waltham, Massachusetts, 1998, p. 569.

[69] Անդրանիկ, Տէրսիմ. Ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն, Թիֆլիս, 1900, էջ 37:

[70] Վահէ Հ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 882:

Խարբերդի գավառակի գյուղերից շատերն ունեին ընդարձակ հողատարածքներ, որոնց մի մասը հատկացված էր բամբակի մշակմանը: Բամբակագործությունը մեծ տեղ ուներ Խարբերդի գավառի տնտեսական կյանքում: Ըստ Ա. Կոլյուբակինի՝ բամբակի մշակությունը զբաղեցնում էր Խարբերդի դաշտի հողերի 20-30 տոկոսը[71]: Բամբակագործությամբ զբաղվում էին բացառապես հայերը՝ Խարբերդի քաղաքացիները և շրջակայքի գյուղացիները: Երկրագործության այս ճյուղի հետ էր կապված նաև բամբակե գործվածքների պատրաստումը, որը ևս զարգացում էր ապրում այս տարածքում: Խարբերդի դաշտի գյուղերի կանայք երկրագործությունից ազատ ժամանակ զբաղվում էին բամբակե կտորեղենի արտադրանքով[72]:

Խարբերդի գավառակում բազմաթիվ էին նաև թթաստանները, որոնք նպաստում էին մետաքսագործության վերելքին: Այս ասպարեզում գիտության ընձեռած ամենավերջին միջոցներին էին տիրապետում Խարբերդում հայտնի շերամաբույծներ Թևրիզյանները, որոնք այս ոլորտի զարգացումով մեծ ավանդ բերեցին պետությանը[73]: 1904 թ. Մեզրեում կազմակերպված շերամաբուծության մրցույթի հաղթողները ևս հայեր էին[74]: Նշենք նաև, որ երկրագործության հետ կապված արհեստի մյուս ճյուղը, որ զարգացած էր Խարբերդի գավառակում, գինեգործությունն էր, որը Խարբերդի քաղաքացիների հիմնական զբաղմունքն էր[75]:

Մալաթիայի գավառը ևս կարևոր երկրագործական կենտրոն էր, այն ուներ ընդարձակ դաշտեր, այգիներ: Այստեղ մշակ-

---

[71] Колюбакинь А., Материалы для Военно - Статистическаго Обозрения Азиатской Турции, томь III, часть I, отдель 2-й, Тифлись, 1891, стр. 444.
[72] Նույն տեղում, էջ 446:
[73] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 654:
[74] Նույն տեղում:
[75] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 447:

վում էր ցորեն, գարի, մրգեր, ծխախոտ: Սակայն Մալաթիան առավել հայտնի էր իր պտղատու այգիներով՝ բազմազան մրգերով, որոնք թե՛ թարմ վիճակով, թե՛ չորացված, արտահանվում էին հարևան բնակավայրեր: Մալաթիայից արտահանում էին նաև բամբակ, բրինձ, մրգեր, գորգեր և այլ արտադրանք, ներկրվում էր մանիս, գործվածքեղեն, կոշիկ և կենցաղային այլ իրեր[76]:

Խարբերդի նահանգի մյուս երկրագործական կենտրոնը Չարսանջակի գավառակն էր, որի գյուղացիների արտադրանքն արտահանվում էր նահանգի այլ բնակավայրեր՝ Արաբկիր, Ակն, Դերսիմ և այլն: Չարսանջակից արտահանվում էր բամբակ, կաշի, մորթեղեն, հացահատիկ, մրգեր և այլն[77]:

Լինելով հողի հիմնական մշակներն ու երկրագործական արտադրանք տվողը, հայերն ինչպես Խարբերդի դաշտի գյուղերում, այնպես էլ նահանգի մյուս բնակավայրերում, հիմնականում հողագուրկ էին: Անդրանիկը նշում է, որ Չարսանջակի գյուղերում, ուր հայերն ու քրդերը խառն են ապրում, հայերը բոլորը մարապա հողագործներ են, որոնց արդյունքի մեկ հինգերորդը տանում է կառավարությունը որպես տասանորդ, իսկ մնացածի կեսը տանում է հողատերը[78]: Ա. Կոլյուբակինը ևս անդրադառնում է հողազրկության խնդրին: Ըստ նրա՝ հողագուրկ հայերը մեծամասնություն էին կազմում Խարբերդի գավառակի նահիեների մեծամասնությունում: «Հողային սեփականության բաշխման ծայրահեղորեն ոչ ճիշտ դրված խնդիրը, վարձակալման բարձր վճարը, բնակչության խտությունը և բարձր պահանջարկի պայմաններում կենսական անհրաժեշտության մթերքների

---

[76] Բալատիկեան Ս., Ոսկեգնտակ, էջ 418-420:
[77] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 218- 223:
[78] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 134:

համեմատաբար թանկությունը, նաև գյուղացիների չափից ավելի շահագործումը բոլոր ազգությունների հողատերերի՝ հատկապես քաղաքացի վաշխառուների կողմից, գյուղացիների մեծ մասի վիճակը դարձնում են ծանր, իսկ որոշ տեղերում՝ բացարձակապես անտանելի»,- գրում է Կոլյուբակինը[79]: Հեղինակի կարծիքով՝ առավել ծանր էր հայ գյուղացիների վիճակը, որոնք ոչ միայն հողազուրկ էին, այլ նաև ենթարկվում էին վարչական, հարկային ճնշումների. «Հայերը ներկայումս անհրաժեշտ օգնություն չեն ստանում վարչակազմի ներկայացուցիչների ու դատարանի կողմից, քանի որ քրիստոնյաների նկատմամբ կիրառվող կողմնակալ վերաբերմունքը դառնում է կառավարության գործողությունների համակարգի մաս և հաճախ ու նաև առավել ջանասիրաբար է կիրառվում նահանգային իշխանությունների կողմից: Խարբերդում այդ քաղաքականությունն առավել տեսանելի է, քան Հայաստանի ու Քրդստանի բազմաթիվ այլ մասերում, օրինակ, Էրզրումի և Վանի սանջակներում»,- գրում է հեղինակը[80]: Մասնավորապես, Կոլյուբակինը մեջբերում է վիճակագրական տվյալներ, որտեղ արտացոլված է նաև հայ գյուղացիների հողազրկության տոկոսային հարաբերակցությունը մուսուլմանների համեմատ: Միայն Մեզրեի հարթավայրում հողազուրկ էր քրիստոնյա բնակչության 81.6%-ը, մինչդեռ մուսուլման բնակչության՝ 23.7%-ը[81], և սա այն դեպքում, երբ նույն հարթավայրի բնակավայրերում հայերը մեծամասնություն էին կազմում: Հայ գյուղացիների հողազրկության մասին են փաստում նաև այլ հեղինակներ, մասնավորապես, Պ. Նաթանյանը գրում է, որ «հողերուն 3/4 մասը Թրքաց եւ 1/4 մասը Հայոց ձեռքն է.

---

[79] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 336:
[80] Նույն տեղում:
[81] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 336:

կան շատ տեղեր ալ, ուր Հայերը Թուրք պէկերու միշտ մարապայ են»[82], այն դեպքում, երբ նույն Խարբերդի վիճակի թուրքերը ապրում են զեխ կյանքով, սակայն, տգիտության ու մոլեռանդության խավարում:

Առավել ծանր էր Զարսանջակի հայերի վիճակը: Այստեղ կային երկու ազդեցիկ բեկեր՝ Օսմանն ու Իսախը, որոնք իրենց տեր ու տիրական էին համարում այս տարածքի բնակիչների և առավելապես հայերի վրա[83]: Միևնույն ժամանակ, հայերը չէին կարող որևէ ատյանում պաշտպանել իրենց իրավունքները, ներկայացնել իրենց խնդիրը: Ինչպես գրում է Պ. Նաթանյանը, «անթիւ են անիրաւ բանտարկութիւնք, կաշառակերութիւնք, դատի մէջ միշտ իրաւունքը թուրքինն է եւ Հայը զրկեալ շատ տեղ»[84]: Ինչ վերաբերում է հայերի ներկայացվածությանը նման ատյաններում, վարչական կառույցներում, ապա այստեղ ևս հաշվի չէին առնվում նրանց իրավունքները: Ա. Կոլյուբակինի տվյալներով՝ 1880-ականներին հայ մյուդիրներ ունեին 3 նահիներ՝ Իջմն, Բարջանճ, Խուլվանք, թեև հայերը ստվար թիվ էին կազմում նաև այլ բնակավայրերում[85]: Թուրք պաշտոնյաները դատարաններում ևս մեծամասնություն էին կազմում, ուստի բողոքել որևէ տեղ իրենց հողազրկություններից, հողի անհավասար բաշխումից, անկարելի էր:

Սակայն, միանշանակ նշել, որ հայերը միայն մարաբա էին, սխալ է, քանի որ հայ հողատերեր ևս կային: Այս մասին նշում է դեռևս Գարեգին Սրվանձտյանցը: Ըստ նրա՝ «կային Մեզրէ բնակեալ Ակնցի Հայք և քաղաքէն ոմանք, որ բաւական հողերու

---

[82] Նաթանեան Պ., Արեւելք Հայաստանի, Կ.Պոլիս, 1878, էջ 136-137:
[83] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 135:
[84] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 134-135:
[85] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 333:

տէր էին եղած, և մարաքայ ունէին»[86]: Վիճակը Խարբերդի գավառում, ինչպես նաև մշակելի հողատարածքներ ունեցող Զարսանջակում, այլ վայրերում, որոշակիորեն փոխվեց XX դարի սկզբներին, երբ հայերն էլ սկսեցին հողատեր դառնալ, այն դեպքում, երբ նախորդ դարի վերջերին հողերի 3/4-ը թուրքերին էր պատկանում: Նաթանյանը գրում է, որ 30 տարի առաջ հայերն ընդհանրապես հողազուրկ էին, ինչը չի կարելի ասել նրա՝ Խարբերդ այցելության ժամանակահատվածի մասին: Ըստ նրա՝ «թէ քաղաքի եւ թէ գիւղացի հայք բաւական երկրի տէր եղած են, մէկ ութերորդ մասը հայոց կը համարուի այժմ, միշտ վաճառողը թիւրք և գնողը հայք են»[87]: Անդրանիկը գրում է, որ Բերրիում ևս հողատեր հայեր կային, որոնց թիվը կառավարության կողմից նպաստավոր պայմաններ ստեղծելու դեպքում գուցե ավելանար[88]: Իրավիճակի նման փոփոխմանը նպաստեց Խարբերդահայերի արտագաղթն ԱՄՆ, որի արդյունքում այնտեղ աշխատած գումարների մի մասն ուղարկվում էր հայրենիք: Մինչև 1914 թ. բազմաթիվ Խարբերդցիներ դարձան հողատերեր, ինչն իր հերթին նպաստեց ողջ նահանգի տնտեսական կյանքի աշխուժացմանն ու տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը:

Արդեն անդրադարձ է եղել տնտեսության ճյուղերից մի քանիսին՝ մասնավորապես մի շարք արհեստների, որոնք նահանգի հայության զբաղմունքներից էին ու անմիջականորեն կապված էին երկրագործության զարգացման հետ: Այժմ անդրադառնանք արհեստագործության մի քանի այլ ճյուղերի, որոնք ևս հատուկ էին այս տարածքի հայության համար:

---

[86] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Տպագր. Գ. Պաղտասլեան, Կ.Պոլիս, 1884, էջ 80-81:
[87] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 128:
[88] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 133:

Արհեստագործության ու առևտրի կարևորագույն կենտրոնը Խարբերդի նահանգում Խարբերդ ու Մեզրե քաղաքներն էին: Այստեղ գործում էին մի քանի գործարաններ, որոնք եզակի էին ոչ միայն նահանգում, այլ նաև կայսրության տարածքում: Շերամաբուծության զարգացումը հանգեցրեց մետաքսագործության մեծ վերելքին: Հիմնվեցին մետաքսագործության երկու՝ Քյուրքչյանների և Ֆաբրիկատորյանների գործարանները, որոնց արտադրանքը նոր խոսք էր այս ասպարեզում: Առանձնապես մեծ հաջողություն ունեցավ Ֆաբրիկատորյանների գործարանի արտադրանքը, որը 1888 թ. ամենաբարձր գին ուներ կայսրությունում՝ արժանալով բարձր գնահատանքի նաև կառավարության կողմից: Միայն պիտակի վրա գրված «ֆաբրիկատոր» անունը ազատում էր գործարանը հարկերից, տեղափոխման գումարներից: 1888 թ. Գրիգոր Ֆաբրիկատորյանը որդիների հետ իրավեր ստացավ մայրաքաղաք գալու՝ ստանալու «Օսմանիե» մեդալը և նաև սուլթանի օրհնությամբ այցելելու Փարիզում կայսրնալիք ֆրանսիական արվեստի ցուցադրությունը: 1896 թ. Ֆաբրիկատորյանների արտադրանքն ոսկե մեդալի արժանացավ Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսում: 1897-1899 թթ. Ֆաբրիկատորյան եղբայրները եղան Եվրոպայի, ապա՝ ԱՄՆ տեքստիլ արտադրանքի կենտրոններում, որտեղ մասնագիտացան տեքստիլ արտադրության մեխանիկայի գործում: Վերադառնալով Խարբերդ՝ նրանք իրենց հետ բերեցին գործարանի համար անհրաժեշտ ամենանոր տեխնիկան: Այս գործարանը աշխատատեղով էր ապահովում շուրջ 200-300 մարդու[89], ինչն այդ ժամանակների համար աննախադեպ մեծ թիվ էր:

Մետաքսեղենի արտադրության կարևոր կենտրոն էր Արաբկիրը: Առհասարակ, արաբկիրցի հայերը զբաղվում էին գրեթե

---

[89] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 641:

բոլոր արհեստներով, բայց կերպասեղենի արտադրանքն առաջատար էր արհեստների շարքում: Եկամտի հիմնական աղբյուրը հենց կերպասեղենի արտադրանքն էր, մասնավորապես ամեն 100 արաբկիրցուց 50-ը տիրապետում էին այս գործին[90]: Հետաքրքիր մի դիտարկում է արել «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանի» հեղինակ Ս. Էփրիկյանը: Վերջինիս կարծիքով՝ արաբկիրցիների պանդխտության պատճառներից մեկն այն էր, որ ինչպես Օսմանյան կայսրության մյուս քաղաքներ, այնպես էլ Արաբկիր էին սկսել ներմուծվել մեծ քանակությամբ եվրոպական կտորեղեն: Սա քերել էր նրան, որ այս արհեստը, որը քաղաքի հայության հիմնական զբաղմունքն էր, անկում էր ապրել[91]:

Մյուս կարևոր գործարանը, որը գործում էր նահանգի տարածքում, 1870-ականներին Խարբերդ քաղաքի Սինամուտ թաղամասի մոտակա ձորում Բարիկյան եղբայրների հիմնած երկաթաձուլարանն էր, որտեղ երկրագործական գործիքներ էին արտադրվում: Գործարանի արտադրանքը տարածվում էր մյուս գավառներում, ինչը ևս մեծ նվաճում էր այդ ժամանակների համար: Սակայն գործարանը քանիցս փակվեց իշխանությունների կողմից, որոնք մեղադրում էին եղբայրներին զենք արտադրելու մեջ[92]: Ա. Քեչյանը նշում է, որ 1895 թ. Ակնի Կամարակապ գյուղում գործում էր նաև ոգելից խմիչքների գործարան[93]: Արդեն նշել ենք, որ Խարբերդի նահանգում զարգացած էր գինեգործությունը, այն հատկապես Խարբերդի գավառում ուներ իր ավանդույթները: Խարբերդի գինին մեծ համբավ ուներ մյուս նահանգներում:

---

[90] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէյրութ, 1934, էջ 41:
[91] Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 280:
[92] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 644-648:
[93] Քէչեան Ա., Ակն եւ ակնցիք, Փարիզ, 1952, էջ 74:

Խարբերդի գավառում ամբողջությամբ հայերի ձեռքում էր նաև հյուսնությունը, թիթեղագործությունը, կահագործությունը, ոսկերչությունն ու բրուտագործությունը: Խարբերդում արհեստներից զարգացած էր նաև կոշկակարությունը[94]: Խարբերդի գավառակի գյուղերից մեկում՝ Բազմաշենում, հայերը զբաղվում էին նաև ձեթի վաճառքով, գյուղում ստեղծվել էր ձիթհան մեքենա: Բազմաշենում կար նաև ծխախոտի թուղթ կտրելու սարք[95]:

Գրեթե նույն վիճակն էր տիրում և Մալաթիայում, որտեղ արհեստներից զարգացած էին կաշեգործությունը, հյուսնությունը, ներկարարությունը, ոսկերչությունը, դարբնությունը, որմնադրությունը, գինեգործությունը, ձիթագործությունը, այլ արհեստներ, որոնք բոլորը հայերի ձեռքում էին: Թուրքերի հետ հայերը խառը զբաղվում էին նաև երկաթագործությամբ, դերձակությամբ, թիթեղագործությամբ, շերամաբուծությամբ, իսկ մասնավորապես հիմնականում զբաղվում էին թուրքերը:

Նշենք նաև, որ Խարբերդի արհեստագործությանը բնորոշող կարևոր ճյուղերից էր և գորգագործությունը, որտեղ օգտագործվում էր տեղական հումք, իսկ արտադրանքը մեծ հաջողություն ուներ[96]:

Խարբերդի նահանգի առևտրական կյանքը ևս աշխույժ էր հայերի շնորհիվ, որոնք վաճառականությամբ զբաղվում էին երկար տարիներ, կային ձևավորված առևտրական տներ, որոնք մեր ուսումնասիրած ժամանակահատվածում զբաղվում էին նաև բազմաթիվ մթերքների, ապրանքատեսակների թե՛ ներկրմամբ, թե՛ արտահանմամբ: Խարբերդում և Մեզրեում դեռևս XIX դարի վերջերին հաշվվում էին մինչև 200 առավել խոշոր և

---

[94] Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856-1914), Երևան, 1965, էջ 181:
[95] Հայկ վ., նշվ. աշխ., էջ 844-846:
[96] Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 182:

մինչև 400 առևտրական ընկերություններ, որոնցից առաջինները զբաղվում էին մեծածախ առևտրով, ինչպես ներմուծմամբ, այնպես էլ արտահանմամբ, երկրորդ խումբը զբաղվում էր եվրոպական, տեղական ապրանքների մանրածախ առևտրով: Առաջին խմբի ընկերությունների մեջ մինչև 10 տոկոսը կազմում էին թուրքերը, մյուսները պատկանում էին հայերին, երկրորդ խմբի սեփականատերերի մեջ մոտ 20 տոկոսը կազմում էին թուրքեր, մյուսները հայեր էին[97]: Նույն իրավիճակն էր և XX դարի սկզբներին. Լ. Դևիսը դեռևս մինչև տեղահանությունը գրում է, որ «պաշտոնական վիճակագրությամբ վաճառականության եւ առեւտրական գործարքների իննսուն տոկոսը իրականացվում է այն դրամատների միջոցով, որոնք հայերին են պատկանում և, որ առեւտրի ու արդյունաբերության տեսակետից հայերի աքսորի հետեւանքն այն կլինի, որ նահանգը հետ՝ միջնադար կվերադառնա»[98]:

Խարբերդի առևտրական տները գործարքներ էին կատարում Կոստանդնուպոլսի, Հալեպի, Տիգրանակերտի, Սամսունի, Ադանայի, այլ հայտնի առևտրական կենտրոնների ընկերությունների հետ: Մասնավորապես, Հարություն Գազանճյանի առևտրական տունը գործառույթներ ուներ ավելի քան 40 քաղաքների ընկերությունների հետ, այն հիմնականում զբաղվում էր բամբակի, բրդի, աֆիոնի արտահանմամբ[99]: Առհասարակ, Խարբերդը առևտրական հաղորդակցության մեծ ու կարևոր կենտրոն էր: Նահանգի արտաքին առևտրի մեծ մասն Արևմտյան Եվրոպայի երկրների հետ էր վարվում: Համաձայն Խարբերդում ԱՄՆ հյուպատոսարանի նյութերի՝ ներկրման ամենամեծ

---

[97] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 452-453:
[98] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 271-272:
[99] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 639:

ցուցանիշն ուներ Մեծ Բրիտանիան՝ 120000 դոլար, ապա Գերմանիան ու Ավստրիան՝ 90000-ական դոլար, Ֆրանսիան՝ 70000, Բելգիան՝ 56000, Ռուսաստանը՝ 25000, ԱՄՆ-ը՝ 9000 դոլար: Դեպի Ֆրանսիա արտահանվում էր 128000 դոլար արժողությամբ ապրանք, Մեծ Բրիտանիա՝ 60000 դոլարի, ԱՄՆ՝ 15000 դոլարի ապրանք[100]: Հավելենք, որ որոշակի ապրանքների արտահանումն ու ներկրումը չէր վերաբերում միայն Խարբերդ ու Մեզրե քաղաքներին, այլ նաև նահանգի այլ կենտրոններին: Մասնավորապես, Մալաթիայից դեպի Հալեպ, Այնթապ, Եդեսիա, Դիարբեքիր, Եվդոկիա, Սեբաստիա, Կեսարիա, Սամսոն, Պոլիս, նահանգի տարբեր բնակավայրեր, նաև եվրոպական որոշ երկրներ արտահանվում էին բազմաթիվ ապրանքներ՝ հիմնականում գյուղատնտեսական բնույթի, նաև՝ գորգեր, կերպասեղեն, այլ ապրանքներ: Հալեպից, Այնթապից, Մարաշից, Կյուրինից, Շապին Գարահիսարից, Կեսարիայից, Բալուից, Տիգրանակերտից Մալաթիա էր ներմուծվում գործվածքեղեն, որոշ մրգատեսակներ, ինչպիսիք են՝ նուռը, խաղողը, թուզը[101]:

Վաճառականական կարևոր կենտրոն էր Ակնը, որը, զուրկ լինելով վարելահողերից, նպաստավոր պայմաններ չուներ երկրագործության զարգացման համար: Ահա ինչու, ինչպես Արաբկիրը վերածվել էր արհեստագործական կարևոր կենտրոնի, այնպես էլ Ակնը՝ վաճառականական, առևտրական կենտրոնի: Կարևոր է նշել, որ 1890-ականների դրությամբ այստեղ

---

[100] Merguerian B. „Like a Policeman in a Mob": The Establishment of the U.S. Consulate in Kharpert, Turkey, 1901-1905, p. 300. Armenian Perspectives. 10th Anniversary Conference of the Association Internationale des Etudes Armeniaennes, edited by Nicholas Awde, Curzon, Caucasus World.

[101] Պէնէեան Տէր Կարապետ քհնյ., Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը եւ Գրիգոր Խանձեանի Մալաթիոյ գաւառաբարբառը, էջ 79-82:

գործում էր 20 բանկ, 13 առևտրական կազմակերպություն, 3 դրամափոխման կետ[102]: Ակնցիների բարեկեցության մասին հայտնի էր ողջ նահանգում, ինչու չէ, նաև՝ այլ բնակավայրերում, որտեղ բնակություն էին հաստատել Ակնից գաղթած հայերը: Ինչպես Արաբկիրում, այնպես էլ Ակնում դա ակնառու էր հատկապես հայերի տներից, վարած կենցաղից: «Կապույտ գրքի»՝ համիդյան կոտորածներին վերաբերող հատորում տեղ գտած տեղեկագրերից մեկում Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրեր այցելած Ռ. Ֆոնդանան, այցելելով Ակնի, Արաբկիրի գյուղեր, գրում է, որ այստեղ տները «լայնանիստ են ու գեղեցկաշէն», ավելացնում, որ Անջրդի գյուղում (Արաբկիրի գավառակ) «քնացայ օդասուն երկար սենեակի մը մէջ, գոթական պատուհաններով ու գունաւոր փայտէ քանդակագործ ձեղունով մը որ նոյն.իսկ Եւրոպայի մէջ հիացում պիտի պատճառէր»[103]:

Ինչ վերաբերում է Դերսիմի առևտրական անցուդարձին, ապա Անդրանիկը գրում է, որ եթե այստեղ առևտրական ասպարեզում թուրք կամ քուրդ կար, ապա նրանք սոխ ու սխտոր վաճառողներ էին[104]: Մինչդեռ հեղինակի հավաստմամբ՝ «Փերնայ[105] կառավարութեան և զինուորականութեան առևտրական գործերը (հագուստի և ուտեստի կապալառութիւնը) բոլորովին հայերու ձեռքն է, որովհետև Փերնայ մէջ կպակսին ուրիշ ազգէ ձեռնհաս և ընդունակ մարդեր»[106]:

Նշենք նաև, որ Խարբերդի նահանգի հայության շրջանում տարածված մասնագիտություններ էին նաև բժշկությունն ու դե-

---

[102] Hewsen R. Armenia, էջ 197:
[103] «Նոր կեանք», Լոնտոն, թիւ 8, 15 ապրիլ, 1898:
[104] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 132-133:
[105] Խոսքը Զարսանջակի գավառակի կենտրոն Բերրի բաղաքի մասին է:
[106] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 134:

ղագործությունը[107]: Հայերն իրենց մասնակցությունն էին բերում նաև նահանգի հասարակական կյանքում, վարչական աշխատանքներում, դատարաններում: Խարբերդի վարչական խորհրդում հայերն ունեին չորս ներկայացուցիչ, նույնը կարելի է ասել և գավառային, քաղաքային խորհուրդների մասին, որտեղ ևս նրանք մշտապես ունեին իրենց մեկ-երկու ներկայացուցիչներին: Նույնը չի կարելի ասել բուն քաղաքական կառավարման համակարգի մասին. դեռևս 1880-1881 թթ. նահանգի կենտրոնական գավառում ութ տարբեր նահիեների ղեկավարներ ունեին հայ օգնականներ, երկու հայեր էլ ստանձնել էին նահիեների վարչական ղեկավարի պաշտոնը: Ինչ վերաբերում է մյութեսարիֆների ու կայմակամների օգնական հայ պաշտոնյաներին, ապա այդպիսիք չկային: 1900-1908 թթ. ընթացքում մեկական հայ օգնական ունեցան նահանգապետը, Արաբկիրի ու Բերրիի կայմակամները[108]: Հայ դատավորներն ու իրավաբանները ևս որոշ մասնակցություն ունեին նահանգի դատական համակարգի ձևավորման մեջ, մասնավորապես, հայաշատ գավառակներում մեկական հայ դատավոր էր աշխատում առաջին ատյանի դատարաններում:

Նահանգի տնտեսական կյանքում ունեցած հայերի մասնակցությունը չէր կարող չանդրադառնալ իրար հարևանությամբ ապրող հայերի ու մուսուլմանների հարաբերությունների վրա: Հայատյացությունը չէր սահմանափակվում հայ բնակչության նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությամբ, այլ այն իր դրսևորումներն ուներ նաև բնակչության շրջանում: Համիդյան կոտորածները նկան փաստելու, որ հայերի նկատմամբ կար ընդգծված թշնամանք գրեթե բոլոր տարածք-

---

[107] Krikorian M., նշվ. աշխ., էջ 73:
[108] Նույն տեղում, էջ 74:

ներում, քանի որ կոտորածներին անմիջական մասնակցություն բերեցին տվյալ բնակավայրերի մուսուլման բնակիչները: Բողոքական քարոզիչ, պրոֆեսոր Ռ. Հարրիսը գրում է, որ նախքան տագնապների սկիզբը (հեղինակը նկատի ունի համիդյան կոտորածները) Մալաթիայում մուսուլմանների ու քրիստոնյաների հարաբերությունները շատ բարեկամական էին, և որ այստեղ որևէ հեղափոխական քարոզչություն չկար, այդպիսի շարժում չկար Ասիական Թուրքիայի քաղաքների մեծամասնությունում: Սակայն, ըստ հեղինակի, ով 1896 թ. ընթացքում կնոջ հետ եղավ Արևմտյան Հայաստանում, մասնավորապես՝ Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերում, «ֆանատիզմը դյուրին է հրահրել, և մասամբ դրան նպաստեց նաև հայերի աճող բարգավաճությունը»[109]:

Ճանապարհորդ Ջորջ Հեփվորթը, 1897 թ. շրջելով կոտորածների վայրերով, գրում է. «Թուրքը մինչև սրտի խորքը ատում է հային... Թուրքը չափազանց մեծ նախանձով է լցված հայի նկատմամբ, նախանձով՝ հայի ինտելեկտուալ գերազանցության, զարգացման, ձեռներեցության նկատմամբ»[110]: Թերևս հայի ձեռներեցության, բարգավաճության ձգտման նկատմամբ նախանձի արտահայտությունն էր այն ընդգծված դաժանությունը, որ 1915 թ. դրսևորվեց Խարբերդի նահանգի կենտրոնական բնակավայրերում հատկապես ունևոր, բարեկեցիկ կյանքով ապրող հայերի ընտանիքների նկատմամբ: Թուրքերի՝ հայերի նկատմամբ տածած ատելության ու չարության մասին է վկայում դանիացի միսիոներուհի, Հայոց ցեղասպանության ականատես Մարիա Յակոբսենը: Միսիոներուհին իր օրագրում գրում է. «Թուրքերն ատելու-

---

[109] Harris R. and Harris H., Letters from the Scenes of the recent Massacres in Armenia, London, 1897, p. 167.
[110] Hepworth G. Through Armenia on Horseback, New York, 1898, p. 339-340.

թեամբ լեցուած են. նոյնիսկ թուրք մարդ մը, որ արիւնլուայ վիճակի մէջ հիւանդանոց եկաւ, դարմանուելէն յետոյ երբ իրեն հարց տուին թէ հանգիստ էր, ըսաւ. «Պիտի ջանամ, որ շուտով աղէկնամ որպէսզի վերադառնամ եւ օգնեմ կեավուրները սպաննելու եւ անոնց կիները բռնաբարելու»[111]:

Ինչ վերաբերում է հայ-քրդական առնչություններին նախքան 1915 թ., ապա միանշանակ գնահատական տալ դրանց հնարավոր չէ: Այստեղ հարկ է տարբերակել բնակչության երկու խմբերի՝ բուն քուրդ էթնոսի և հաճախ նաև «քուրդ» անվան տակ հիշատակվող ցեղախմբերի: Փաստ է, որ այն բնակավայրերը, որտեղ թուրքական իշխանությունների կողմից ժամանակին խրախուսվել և շարունակվում էր խրախուսվել քրդերի մուտքը և հաստատվելը, ժամանակի ընթացքում հայաթափվել էին. հայերի մի մասն էլ իսլամ էր ընդունել: Եկվոր քրդերի վերաբերմունքը հայերի նկատմամբ գրեթե նույնն էր, ինչ թուրքերինը: Այլ էր տեղաբնակ քրդական ցեղախմբերի վերաբերմունքը հայերի նկատմամբ, որոնց ծագումնաբանությունը պարզելը բարդ խնդիր է: Խոսքն այստեղ նախևառաջ Դերսիմի քրդերի կամ՝ կզըլբաշների մասին է: Վերջիններս առանձին վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ, հյուրընկալվում էին հայերի տներում, լինում նրանց ուխտավայրերում, աղոթատեղիներում: Նմանապես հայերն էլ բարյացակամ էին տրամադրված Դերսիմի քրդերի նկատմամբ: Դրական էր նաև Դերսիմի քրդերի՝ հայկական ճարտարապետական հուշարձանների՝ հատկապես եկեղեցիների, աղոթատեղիների նկատմամբ ունեցած վերաբերմունքը: Հ. Ջանիկյանն այս կապակցությամբ գրում է. «Տէրսիմի ամեն կողմանքն հայկական եկեղեցեաց աւերակօք լի են, որոյ հիմունք և որմունք

---

[111] Ճէյքլպսըն-Եւագոպսըն Մ., Օրագրութիւն 1907-1919. Խարբերդ, Անթիլիաս, 1979, էջ 95:

դեռ կան: Քրդերը այս աւերակ սրբավայրաց վնաս չեն հասցուներ, և կը յարգեն իսկ»[112]: Մեկ այլ հեղինակ՝ Անդրանիկը, խոսում է Խասապայում գտնվող մի խարխուլ եկեղեցու մասին, որի անունով կոչվել էր Կզըլքիլիսե բնակավայրը: Ըստ հեղինակի՝ կառավարությունը փորձել էր եկեղեցու սրբատաշ քարերով զինվորների համար բաղնիք կառուցել, սակայն շրջակայքի քրդերը սպառնացել են ու զենքով արգելել նման քայլը[113]: Քրդական վերոնշյալ ցեղախմբերի ծագումնաբանության որոշ խնդիրների կանդրադառնանք Դերսիմի գավառին վերաբերող հատվածում: Նշենք միայն, որ, ըստ մեզ, այս ցեղախմբերի կազմավորման գործում կարևոր էր նաև հայ տարրի դերը, ինչով և պայմանավորված էր նրանց բարյացակամ վերաբերմունքը հայ բնակչության նկատմամբ: Ցեղասպանության տարիներին բազմաթիվ հայեր ողջ մնացին՝ ապաստանելով Դերսիմի այս ցեղախմբերի մոտ:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ Խարբերդի նահանգը մինչև 1915 թ. ուներ 3 գավառ և 16 գավառակ: Առևտրի, վաճառականության, արհեստների ու երկրագործության ոլորտներում հայերն ունեին առաջնային տեղ ու դեր: Հայ արհեստագործների շնորհիվ նահանգի առումով այս շրջանում մեծ վերելք ապրեցին մի քանի կարևոր արհեստներ, ինչպիսիք էին մետաքսագործությունը, կերպասեղենի արտադրությունը, երկաթագործությունը, հյուսնությունը: Հայ առևտրականների ու վաճառականական տների շնորհիվ մեծացան տեղի երկրագործական ու արհեստագործական արտադրանքի արտահանման չափերը դեպի կայսրության այլ նահանգներ և հատկապես այլ երկրներ: Փաստենք, որ XX դարի սկզբներին նահանգի տարբեր երկրագործական

---

[112] Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 75:
[113] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 143-144:

կենտրոններում որոշակի թվով ավելանում էր հողատեր հայերի թվաքանակը, ինչը չէր կարող չնպաստել երկրագործության վերելքին: Հայերն իրենց մասնակցությունն էին բերում նաև նահանգի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ինչն ավելի նկատելի էր կենտրոնական գավառում:

գ) Խարբերդի նահանգի հայ բնակչությունը 1894-1896 թթ. կոտորածների տարիներին

Օսմանյան կայսրության տարածքում հայ բնակչության նկատմամբ վարվող բռնությունների քաղաքականությունը XIX դարի վերջերին հանգեց զանգվածային կոտորածների: Արևմտյան Հայաստանի նահանգներում և կայսրության մյուս հայաբնակ վայրերում կազմակերպված կոտորածներին զոհ գնաց շուրջ 300000 հայ, շատերը բռնի իսլամացվեցին, ոմանք էլ դիմեցին արտագաղթի: Խարբերդի նահանգն Օսմանյան կայսրության այն տարածքներից էր, որտեղ 1894-1896 թթ. կոտորածներն ու բռնի իսլամացումն առավել լայն ծավալներ ունեցան: Այս մասին են փաստում կոտորածների ականատես դարձած բազմաթիվ օտարերկրացիներ: «Այն դաշտում, որի կենտրոնում Խարբերդն էր, կային ավելի մեծ քանակությամբ ավերված քաղաքներ ու գյուղեր, քան ուրիշ վայրերում... Դեռ երկար ժամանակ մարդիկ ամբողջությամբ կաթվածահար էին: Նրանք ոչ միայն անօգնական էին, այլ նաև՝ հուսահատ»[114],- 1896 թ. սեպտեմբերի 3-ի իր տեղեկագրում գրում է ամերիկացի միսիոներ Գեյթսը: Կոտորածներն ընդգրկել էին նահանգի գրեթե բոլոր բնակավայրերը. հյուպատոսների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ անհնար էր նշել ավերված հայկական

[114] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 198:

բնակավայրերի թիվը[115]: Կարմիր Խաչի կազմակերպության աշխատակիցներից մեկը՝ Ջ. Հաբբելը, 1896 թ. օգոստոսի 1-ին Կլարա Բարտոնին ուղղած տեղեկագրում նշում է, որ Խարբերդը տուժել է առավել, քան որևէ այլ տարածք, և որ իրենք պատրաստվում են այստեղ համակարգված աշխատանք իրականացնել: Թալանի ենթարկված կամ ամբողջությամբ ավերված բնակավայրերի թիվը տեղեկագրում հաշվվում էր շուրջ 200[116]:

Նահանգում կոտորածը սկսեց Զարսանջակի գավառակի Բերդակ գյուղաքաղաքի վրա տեղի ունեցած հարձակումով: Դա, համաձայն մի փաստաթղթի, կատարվեց հին տոմարով 1895 թ. հոկտեմբերի 10-ին[117]: Ընդհանուր առմամբ Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերում կոտորածները կազմակերպվեցին հոկտեմբերի վերջերին և հատկապես նոյեմբեր ամսվա ընթացքում: Ըստ Կոստանդնուպոլսում վեց դեսպանների կազմած տեղեկագրի, այլ փաստաթղթերի, որ հրատարակել է կաթոլիկ հոգևորական Շարմետանը, Արաբկիրում կոտորածները տեղի են ունեցել նոյեմբերի 1-5-ը, սպանվել էր 2800 մարդ: Արաբկիրում հրդեհն ու թալանը շարունակվել է 10 օր: Ամպրկա գյուղում ողջ էր մնացել 3 հոգի, թալանվել էր 60 տուն, Շենիկում ողջ էր մնացել միայն 6 բնակիչ[118]: Ամերիկացի քարոզիչ Է. Բլիսի ներկա-

---

[115] Charmetant P. F^x. Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades du Constantinople et statistique dressé par des témoins oculaires grégoriens et protestants, Paris, p. 22.

[116] Barton C. The Red Cross: A History of this Remarkable International Movement in the Interest of Humanity, J. B. Lyon Company Albany, N., Y., Washington, pp. 337-343.

[117] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, Երևան, 1991, էջ 116:

[118] Charmetant P. F^x., նշվ. աշխ., էջ 23:

յացրած տվյալների համաձայն՝ Արաբկիրում սպանվել էր 4000 քրիստոնյա, հրկիզվել էին քրիստոնյաների 2750 տներ[119]:

Մալաթիայում նոյեմբերի 4 - 9 -ը թուրքերի զոհը դարձան համաձայն որոշ աղբյուրների՝ 3000 հայեր[120]: Ըստ ամերիկացի քարոզիչ Է. Բլիսի՝ Մալաթիայում սպանվել էր 5000 հայ[121]: Մալաթիայում սպանված քրիստոնյաների թվաքանակը, ըստ Ռ. Հարրիսի՝ տատանվում էր 2000-ի և 4000-ի միջև: Ավերվել էին քրիստոնյաների թաղամասի տներից 560-ը[122]:

Նոյեմբերի կեսերին թալանի, ավերածությունների ու զանգվածային սպանությունների ալիքը հասել էր Խարբերդի դաշտի բնակավայրեր: Հարձակումը Հուսեյնիկ գյուղի վրա սկսեց նոյեմբերի 11-ին: Այստեղ սպանվեց 200 հոգի, 200-ը՝ վիրավորվեցին[123]: 1895 թ. նոյեմբերի 18-ին Սուլեյման բեկը քրդական ամբոխով հարձակվեց Քեորբե գյուղի վրա, կոտորեց 400 հոգու, գյուղն ավերվեց[124]: Դատեմում 1800 հայ բնակիչներից 270-ը սպանվեցին: Փրկվեցին նրանք, ովքեր իսլամ ընդունեցին[125]: Կ.Պոլսի վեց դեսպանների կազմած՝ հայկական կոտորածների վերաբերյալ պաշտոնական աղյուսակի համաձայն, որում տրվում է համիդյան կոտորածների վերաբերյալ վիճակագրություն, Խարբերդի շրջակայքի ավելի քան 60 գյուղ ավերվել

---

[119] Bliss Rev. E., Turkish Cruelities upon the Armenian Christians, Monarch Book Company, Chicago, Ill., Philadelphia, Pa., 1896, p. 488.

[120] Walker Ch. Armenia: The Survival of a Nation, London, Croom Helm, 1980, p. 161. տե՛ս նաև՝ Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1970, p. 140.

[121] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 440:

[122] Harris R. and Harris H., նշվ. աշխ. էջ 168:

[123] Greene F. Armenian Massacres or the Sword of Mohammed, Philadelphia and Chicago, 1896, p. 263.

[124] Շապուհեան Յ., Պատմութիւն Քասիէ կամ Քէօրբէ գիւղին, 1917 յուլիս 10, Ամերիկա, Լօվէլ: ՀՅՄ-Ի, բաժին 8, թղ.39, էջ 57:

[125] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 490:

էր, շրջակայքի գյուղերում ու քաղաքում սպանվել էր ավելի քան 500 հոգի, բազմաթիվ քրիստոնյաներ բռնությամբ իսլամ էին ընդունել[126]:

1895 թ. կոտորածից զերծ մնացած եզակի բնակավայրերից էր Ակնը: Սակայն արդեն 1896 թ. սեպտեմբերին Երզնկայից հատուկ զորք բերվեց՝ ավերելու Ակնը: Վերին թաղը, որը զուտ հայաբնակ էր, ավերվեց, շենքերը հրդեհվեցին, Ս. Աստվածածին եկեղեցուց մնացին չորս պատերը[127]: Ակնում հրդեհվեց և վարի թաղը, փրկվողներից շատերը հեռացան բնակավայրից: Մի միսիոների տեղեկության համաձայն՝ Ակնում սպանվածների թիվը հասնում էր մոտ 2000-ի: «2000-ը մեծ տոկոս է կազմում 5000 կամ 6000 քրիստոնյա բնակչության համամասնության մեջ»[128],- նշվում է նույն վկայության մեջ: Սպանվածների այս թիվն է նշված նաև մեկ այլ սկզբնաղբյուրում, որտեղ հիշատակվում է նաև հայերի հրդեհված 980 տների մասին[129]: Ակնի 1896 թ. կոտորածի մասին ամերիկացի միսիոներ Բարնումը գրում է. «Բոլոր վկաների ցուցմունքները հաստատում են, որ կոտորածը կազմակերպված է եղել պաշտոնական շրջանների կողմից, և այն սկսվել է առանց որևէ առիթի»[130]: Կոտորածից հետո Ակն այցելած Ռ. Ֆոնդանա անունով մի օտարերկրացի գրում է, որ «600 ընտանիք, ամուսին, հորմէ ու օրապահիկ հայթայթողէ զրկուած, այժմ նպաստով կապրին ու խռնուած են հրկիզումէն զերծ մնացած 300 տուներուն մէջ»[131]: Տեղեկագրի հեղինակը եզ-

---

[126] Charmetant P. F^x, նշվ. աշխ., էջ 22: Տես նաև՝ The Armenian Genocide. Documentation, vol. 1, München, 1987, s. 173-175.
[127] Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 137:
[128] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 213-214:
[129] Severance G. and D. Against the Gates of Hell, New York. Toronto.Oxford, 2003, p. 253.
[130] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 64:
[131] «Նոր կեանք», Լոնտոն, թիւ 8, 15 ապրիլ, 1898:

բակացնում է, որ պետք է կա՛մ այլ տներ գտնել այս մարդկանց համար, կա՛մ օժանդակել նրանց՝ հաստատվելու այլ բնակավայրերում:

Նշված փաստերից երևում է, որ կոտորածներն ընդգրկել են նահանգի գրեթե բոլոր բնակավայրերը, մեծ ծավալներ ունեցել ոչ միայն քաղաքային, այլ նաև գյուղական վայրերում: Կոտորածից զերծ էին մնացել հատուկենտ բնակավայրեր, մասնավորապես Խարբերդի դաշտի գյուղերից Եղեգին, Սարայը, Վարդաթիլը՝ շնորհիվ քուրդ հովանավորի՝ Զոթիլ Զատեի[132]: 1895-1896 թթ. ջարդեր տեղի չունեցան նաև Զմշկածագ քաղաքում: Այս մասին են հավաստում «Կապույտ գրքի»՝ հայհիդյան կոտորածներին վերաբերող տեղեկագրերը: Դրանցից մեկում նշվում է, որ Զմշկածագի հայերը կոտորածներից զերծ մնացին՝ շնորհիվ Մեմուրու անունով մի ազդեցիկ թուրքի, որը կոտորածների օրերին «իր հրամանին տակ գտնուած քառասուն զապթիէով գիշեր ցերեկ աշխատած էր արգիլելու ոեւ է խռովութիւն քաղքին մէջ, կամ հարձակում՝ քիւրտ ցեղերուն կողմէ, թէ ամէն ժամ պատրաստ էր երթալու ոեւ է գիւղ որուն կը սպառնային Քիւրտերը, եւ թէ տեղացի քրիստոնեաները գլխավորապէս անոր կը պարտէին իրենց կեանքը»[133]: Այնուամենայնիվ, քրդերին այս ընթացքում հաջողվեց սվերել ու թալանել Զմշկածագի որոշ գյուղեր: Առավել մեծ վնասներ կրեցին Միատուն, Մուռնայի, Բասաբուն, Բեդրեթիլ գյուղերը, որոնց հայ բնակիչներն այս ընթացքում ապաստանել էին Զմշկածագ քաղաքում[134]:

Թուրքական կառավարության կողմից Մարզվանից վտարված հոգևորական Զորջ Ֆիլյանը, խոսելով հայհիդյան կոտորած-

---

[132] Տէրանեան Մ., Հիւսէնիկ. Յուշէր եւ յոյզէր, Պոսթոն, 1981, էջ 38:
[133] «Նոր կեանք», Լոնտոն, թիւ 8, 15 ապրիլ, 1898:
[134] Նույն տեղում:

ների մասին, վկայակոչում է մի մահմեդական սպայի խոսքեր, որի համաձայն՝ «Խարբերդում, Սեբաստիայում, Հուսեյնիկում, Մալաթիայում և Արաբկիրում զոհերի մեծ մասը սպանվել էր զինվորների կողմից, իսկ Խարբերդ քաղաքի վերին թաղի գրիգորյանների ու միսիոներների դպրոցները, եկեղեցիներն ու տները հրկիզվել էին թնդանոթների միջոցով»[135], ինչը վկայում է այն մասին, որ այս կոտորածները նախապատրաստված են եղել ու իրագործվել են պետության կողմից՝ զինվորականների մասնակցությամբ: Էդվին Բլիսը, ով առավել կարևոր ու մանրամասն տեղեկություններ է ներկայացնում համիդյան կոտորածների վերաբերյալ, ևս փաստում է կոտորածներին զինվորների մասնակցության մասին. «Պարզ է, որ Հարպուտում (Խարբերդ - հեղ.), Քեսիրիկում, Մալաթիայում, Արաբկիրում զոհերի մեծամասնությունը սպանվել է զինվորների կողմից, նաև թնդանոթների զարկերի են ենթարկվել Հարպուտ քաղաքի վերին թաղում գտնվող միսիոներների ու գրիգորյանների եկեղեցիներն ու դպրոցները»[136]: Դեպքերի մեկ այլ ժամանակակից՝ Էլիզաբեթ Լաթիմերը, խոսելով Խարբերդի մասին, նշում է, որ այստեղ հեղափոխական որևէ ազդեցություն չկար, և ամեն ինչ լավ էր մինչև արևելքից ու հյուսիսից քրդական ավազակախմբերի հայտնվելը: Հեղինակի հավաստմամբ՝ կանոնավոր բանակի թուրք զինվորները չեն մասնակցել կոտորածներին: Այնուամենայնիվ, Լաթիմերը գտնում է, որ զինվորների անգործությունը նրանց մեղավոր է դարձնում կատարվածում, քանի որ որևէ կերպ նրանք չեն կանխել կոտորածները[137]:

---

[135] Filian Rev. G. Armenia and her People or The Story of Armenia by an Armenian, Hartford, Conn., 1896, p. 263.
[136] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 444:
[137] Latimer E. The Last Years of The Nineteenth Century, second edition, Chicago, 1901, p. 172.

Ինչևիցե, մյուս վկայությունները գալիս են փաստելու, որ որոշ բնակավայրերում ջարդերին մասնակցություն են բերել նաև զինվորները, ինչի մասին է վկայում նաև թնդանոթների օգտագործման փաստը: Բերված աղբյուրները ներկայացնում են նաև նահանգի տարածքում սպանվածների, իսլամացածների թվաքանակի վերաբերյալ ընդհանուր տվյալներ: Էդվին Բլիսը ներկայացնում է Խարբերդի նահանգի բնակավայրերի ողջ վնասները: Ըստ Բլիսի՝ միայն 1895 թ. հոկտեմբերի ջարդերից հետո նահանգի բնակավայրերում սպանվել է 24724 մարդ, տվից, ցրտից ու վախից մահացել է 3119-ը, ևս 3860-ը սպանվել կամ մահացել են բնակավայրերից դուրս: Ընդամենը, Խարբերդի նահանգում կոտորածներին զոհ էր գնացել 32801 մարդ, 3750-ը առևանգվել էին, 14844-ը՝ բռնի իսլամացվել[138]: Ներկայացրած տվյալներում Բլիսը չի ներառել 1896 թ.՝ մասնավորապես Ակնի ջարդի զոհերին: Ջ. Ֆիլյանի վկայակոչած թուրք սպայի ներկայացրած փաստաթղթի համաձայն՝ Խարբերդի նահանգում սպանվածների թիվը կազմում էր 39334, վիրավորներինը՝ 8000 հոգի, այրված տների թիվը՝ 28562, կարիքավորներինը՝ 94870 մարդ[139]: Տվյալների համեմատությունը խոսում է այն մասին, որ նահանգի տարածքում համիդյան կոտորածներին զոհ է գնացել շուրջ 40000 հայ: Թուրք սպան չի նշում իսլամացվածների թվաքանակը, որը ևս մեծ թիվ էր կազմում:

Ամերիկացի քարտզիչ Բարնումի՝ Խարբերդից գրած նամակում նշվում է, որ Խարբերդի շրջակա 176 բնակավայրերից ստացված տեղեկության համաձայն՝ քրիստոնյաներին պատկանող 15400 տներից 7054-ը հրկիզվել էին: Հեղինակը կարծում

---

[138] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 445:
[139] Filian Rev. G., նշվ. աշխ. էջ 264:

է, որ իրականությունն ավելի սարսափելի կարող է լինել[140]: Կոտորածների, դրանց ուղեկցող թալանի ընդունած չափերի մասին է փաստում նաև կոտորածներից հետո նահանգի տարածքում եղած կարոտյալների քանակը: 1896 թ. հուլիս-օգոստոս ամիսներին հրատարակված «Մուրճ» հանդեսի համարում հրապարակախոս Ա. Արասխանյանցը նշում է, որ Խարբերդում նպաստի կարիք ունեցողների թիվը հասնում է 100000-ի[141]: Հեղինակը մեջբերում է ականատեսի վկայությունը, այն է՝ «կարիքը ծայրահեղ մեծ է, և այնպիսի քաղաքներում, ինչպէս Մալաթիա, Արաբկեր և Բալու, եթէ դադարեցնեն նպաստ տալը, ժողովուրդը պէտք է քաղցից մեռնի»[142]:

Ստացվում է, որ նահանգի տարածքում ապրող հայ բնակչությունը կոտորածների ընթացքում ոչ միայն մեծ թվով զոհեր էր տվել, այլ ավելին, բնակչության մի կարևոր հատված հայտնվել էր անօթևան վիճակում՝ զրկված գոյության ամենաանհրաժեշտ միջոցներից, սնունդից: Խոսքը նախևառաջ որբացած երեխաների մասին էր: Կոտորածներից հետո տարբեր բնակավայրերում միսիոներները որբանոցներ բացեցին, մասնավորապես Խարբերդում միայն ամերիկացի միսիոներների խնամքի տակ էին շուրջ 1000 երեխաներ[143]:

Բոլոր ականատեսները նշում են, որ համիդյան կոտորածների տարիներին Խարբերդի նահանգում կրոնափոխության դեպքերը զանգվածային բնույթ են կրել: Միսիոներուհի Թերեզա Հանթինգթոն Զիգլերի վկայության համաձայն՝ համիդյան կոտորածների տարիներին շատ մեծ էր քրիստոնյաների վրա՝

---

[140] Filian Rev. G., նշվ. աշխ. էջ 264:
[141] «Մուրճ», Թիֆլիս, 7-8, 1896. յուլիս-օգոստոս:
[142] Նույն տեղում:
[143] Strong W., The Story of The American Board, The Pilgrim Press, Boston, 1910, p. 397.

իրենց կյանքը փրկելու համար մուսուլման դառնալու ճնշումը, ուստի «շատ շատերը միանում էին մարտիրոսների ազնվական բանակին»: Միսիոներուհու վկայությամբ՝ Եփրատի ափին գտնվող մի գյուղում բնակիչներին առաջարկվեց՝ կամ հրաժարվել Քրիստոսից, կամ՝ մեռնել: Բնակիչներից «տաս տղամարդ սպանվեց, 55-ն իրենց կանանց ու երեխաների հետ նետվեցին Եփրատն ու խեղդամահ եղան»[144]: Բռնի իսլամացման դեպքերի մասին է վկայում նաև ամերիկացի միսիոներ Ֆ. Գրինը. «Գյուղերի վրա՝ մուսուլման դառնալու ճնշումը սարսափելի էր: Մեծաթիվ մարդիկ, ովքեր անհապաղ չհրաժարվեցին իրենց քրիստոնեական հավատից, անմիջապես գնդակահարվեցին կամ տանջամահ արվեցին»[145]:

Նրանց, ովքեր կրոնափոխ էին եղել, մահվան սպառնալիքով արգելվում էր խոսել իրենց կրոնափոխության փաստի մասին: 1896 թ. հունվարին Խարբերդի ու Դիարբեքիրի նահանգների տեղական պաշտոնյաները նույնիսկ հրամաններ ուղարկեցին կրոնափոխ եղած գյուղերին՝ պահանջով որևէ բացատրություն չտալ այն մասին, որ նրանք իսլամացվել են բռնի կերպով[146]: Կաթոլիկ եկեղեցու հոգևորական Ֆ. Շարմետանի հրատարակած գրքում հիշատակվում են Խարբերդի դաշտի տասնյակից ավել գյուղերի անուններ՝ Մորենիկ, Աշուան, Հուսեյնիկ, Խոխ, Նեկերեկ, Շենթիլ, Քեորբե, Հարսիկ, Զոր, Ծառուկ, Բազմաշեն, որոնց հայ բնակիչները ստիպված իսլամ են ընդունել: Վերոնշյալ գյուղերի եկեղեցիներն ավերվել ու թալանվել էին[147]: Նույն սկզբնաղբյուրում նշվում են նաև Արաբկիրի գավառակի բնակավայրերի անունները՝ Սաղմկա, Մաշկերտ, Էհենցիք, Վաղշեն,

---

[144] Great need Over The Water, նշվ. աշխ., էջ 70:
[145] Greene F., նշվ. աշխ., էջ 267:
[146] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 494:
[147] Charmetant P. F., նշվ. աշխ., էջ 64 :

Ծապլվար, Քուշնա, Աղին, Վանք, Կոանի, Հացկնի, Ծագ և այլ գյուղեր, որոնց բնակիչները իսլամացվել են, տղամարդիկ՝ թլլ-պատվել[148]:

1890-ականն թթ. ջարդերին բնորոշ էր ոչ միայն կանանց առևանգումն ու մուսուլմաններին կնության տալը, ինչը լայնորեն իրականացվեց Հայոց ցեղասպանության տարիներին, այլ հատկապես տղամարդկանց իսլամացումն ու թլպատումը, ինչը հազվադեպ էր պատահում 1915-1923 թթ., երբ տղամարդկանց ոչնչացմանը գրեթե այլընտրանք չկար: Տղամարդկանց թլպատման դեպքեր արձանագրվեցին ոչ միայն Արաբկիրի[149], այլ նաև Զմշկածագի, Ակնի գյուղերում, մասնավորապես Կարմրիում[150], Զարսանջակում՝ Քերրիում[151]: Ինչ վերաբերում է կանանց ու երեխաների առևանգման դեպքերին, ապա սա հատուկ էր գրեթե բոլոր բնակավայրերին: Ըստ Ռ. Հարրիսի՝ Մալաթիայում «քրդերի ու թուրքերի տներ էին տարվել 600 աղջիկներ ու հարսներ»[152]: Խարբերդի դաշտի Խոյս գյուղից 55 կին ու երեխա էին տարվել թուրքերի տներ ու հարեմներ[153], Հուսեյնիկի 600 կանանց ու աղջիկների հրապարակայնորեն անարգանքի էին ենթարկել, ապա՝ սպանել[154], իսկ «Դատեմում մի հայտնի թուրք կոտորածից մեկ ամիս անց քրիստոնյա կանանց էր վաճառում թուրքերին ու քրդերին՝ նրանց փոխանակելով ձիերի և ավանակների հետ: Նա նաև որոշակի թվով քրիստոնյա կանանց էր պա-

---

[148] Charmetant P. F., նշվ. աշխ., էջ 6:
[149] ԳԱԹ, Ք. Ազատյանի ֆ., 37/III, էջ 6-12:
[150] Charmetant P. F.[x], նշվ. աշխ., էջ 66:
[151] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 441:
[152] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 168:
[153] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 439:
[154] Charmetant P. F., նշվ. աշխ., էջ 64:

հում, ում մեկ գիշերով առաջարկում էր գյուղի տարածքով անցնող յուրաքանչյուր ոստիկանի կամ զինվորի»[155]:

Իսլամ ընդունելու պահանջը խիստ էր դրված նաև կոտորածներից հետո: Ավելին, քրիստոնյաները զգուշացվում էին, որ բոլոր նրանք, ովքեր իսլամ չեն ընդունել, պետք է կոտորվեն[156]: Բազմաթիվ գյուղերում քրիստոնյաները զրկված էին եկեղեցական արարողություններ կատարելու հնարավորությունից: «Խարբերդի շրջանի 28 գյուղերում վերջին տեղեկությունների համաձայն՝ սկսած նոյեմբերի 1-ից 1896 թ. հունվարի 30-ի դրությամբ ոչ մի քրիստոնեական ծիսական արարողություն չէր անցկացվել: Քրիստոնեական ծառայության դադարեցումը քրիստոնյա ժողովրդի մեջ պարզորեն քրիստոնեությունը վերացնելու պահանջի մի մասն էր»[157], - գրում է Էդվին Բլիսը:

Համիդյան կոտորածների ընթացքում մեծ հարված հասցվեց հայկական մշակութային հուշարձաններին՝ նախ և առաջ եկեղեցիներին: Ավելին, ջարդերից հետո դեռ երկար տարիներ ոչ մի քրիստոնեական աղոթատեղի չէր կարող կառուցվել կամ նույնիսկ վերանորոգվել առանց թույլտվության[158], հավաստում է Է. Լաթիմերը: Բլիսը գրում է, որ նույնիսկ «որոշ եկեղեցիներ վերածվեցին մզկիթների, այլ եկեղեցիներ ենթարկվեցին անարգման, սուրբ գրքերը բաժան-բաժան արվեցին»[159]: Մասնավորապես Խարբերդի՝ 1895 թ. սեպտեմբերի կոտորածի վերաբերյալ մի փաստաթղթում նշվում է, որ հրդեհվել և քանդվել են Ս. Կարապետ, Ս. Ստեփանոս եկեղեցիները, բողոքականների տաճարը, 200 ընտանիք մահվան սպառնալիքի տակ իսլամ են

---

[155] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 490:
[156] Նույն տեղում, էջ 495:
[157] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 495:
[158] Latimer E., նշվ. աշխ., էջ 173:
[159] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 444:

ընդունել: Ընդհանուր առմամբ ավերվել էին Խարբերդ քաղաքի 7 եկեղեցիներից 4-ը: Իջմե գյուղի եկեղեցին վերածվել էր մզկիթի, ավերվել էր գյուղի բողոքականների տաճարը: «Իջմէ գիւղից 40 հայտնի նշանաւոր հայերի բռնադատել են իսլամ ընդունելու ու երբ նոքա չեն ընդունիլ մէկ մէկ դուրս են քերուիլ մի շեյխի հրամանով ու գլխատուիլ եկեղեցու շեմքի վրայ»[160]: Ակնի Ս. Աստվածածին եկեղեցուց մնացին չորս պատերը, եկեղեցին վերածվեց զորանոցի[161]: Ակնի գյուղերում կողոպտվել ու ավերվել էին Ս. Փրկիչ վանքը, Լիճք, Նարվեր գյուղերի եկեղեցիները[162]: Նահանգի մյուս բնակավայրերում ևս նմանատիպ փաստերը բազմաթիվ էին:

Համիդյան կոտորածների օրերին վտանգավոր վիճակում էին հայտնվել նաև ամերիկացի միսիոներները: Տուժեցին նրանցից մի քանիսի տները, որոնք հրդեհվեցին, իսկ միսիոներներն ապաստանեցին Եփրատ քոլեջի շենքում: Է. Լաթիմերը, խոսելով այս փաստի մասին, գրում է, որ կարելի է ենթադրել, որ պլանավորված էր այրել միսիոներների շենքերը և նրանց ընդհանրապես հեռացնել, թեև նախապես պաշտոնյաները երաշխավորել էին ապահովել միսիոներների ու նրանց շինությունների անվտանգությունը[163]: 1895 թ. ջարդից մնծապես տուժեց Եփրատ քոլեջը, որի վրա թնդանոթից կրակ բացվեց: Քոլեջի շենքերի մի մասը հրդեհվեց[164]:

---

[160] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան, Լենոյի ֆ., գործ 158, էջ 16-17, թ. 8-9:
[161] Ջէչեան Ա., նշվ. աշխ., էջ 137:
[162] ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան, Լենոյի ֆ., գործ 158, էջ 16-17, թ. 8-9:
[163] Latimer E., նշվ. աշխ., էջ 172:
[164] Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 118:

Թեև իսլամացման դեպքերը նահանգի տարածքում բազմաթիվ էին, և այդ դեպքերի վերաբերյալ վկայությունները ևս քիչ չեն, չենք կարող կրոնափոխ եղած հայերի կոնկրետ թիվ նշել: Կրոնափոխ եղած հայերի՝ Բլիսի ներկայացրած թիվը՝ 14844, միակ ընդհանուր տվյալն է նահանգի համար, այլ ընդհանուր տվյալներ չունենք, բացի այդ, խնդիրը նաև նրանում է, որ կրոնափոխ եղած բազմաթիվ հայեր կոտորածներից որոշ ժամանակ անց վերադարձան քրիստոնեությանը, վերականգնեցին ավերված եկեղեցիները, որոշ վայրերում կառուցեցին նոր աղոթատեղիներ: Ընդունենք, որ կոտորածների տարիներին Խարբերդի նահանգում իսլամացվել է շուրջ 15000 հայ, որոնց մեծամասնությունը մինչև 1897-1898 թթ. վերադարձել էր քրիստոնեությանը: Ցավոք, չենք կարող հստակեցնել այն հայերի թվաքանակը, ովքեր համիդյան կոտորածների ընթացքում իսլամացվեցին և հետագայում չվերադարձան քրիստոնեությանը:

Կոտորածներից հետո, գրում է Հարրիսը, մարդկանց մեջ դեռ երկար ժամանակ արթուն էր տագնապի ու վախի զգացումը[165], ինչը նպաստում էր, որ ջարդերից փրկված, իրենց բնակավայրեր վերադարձած հայերից շատերը գաղթեն այլ բնակավայրեր՝ նաև երկրից դուրս: Փաստ էր, որ համիդյան կոտորածներից հետո աճեց Արևմտյան Հայաստանից, նախ և առաջ՝ Խարբերդի նահանգից արտագաղթը:

դ) Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները

Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել տարածքի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ ի նպաստ թուրք և քուրդ էթնիկ

---

[165] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 168:

տարրի: Այս նպատակով դեռևս XVI-XVIII դարերի ընթացքում կայսրության ողջ տարածքում իրականացվել է հայերի բռնի իսլամացման քաղաքականություն: Խարբերդի նահանգի տարածքում ընդգրկված բազմաթիվ բնակավայրերի (Արաբկիրի, Ակնի, Չարսանջակի, Մշկածագի գավառակների, Մալաթիայի գավառի) հայ բնակչության դեռևս նախորդ դարերում սկսած իսլամացման քաղաքականությունը շարունակվեց նաև XIX դարի ընթացքում: Մյուս կողմից, կայսրության կիրառած ազգային, սոցիալական, կրոնական խտրականության քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր երբեմնի հայաբնակ տարածքների հայաթափմանը: XIX դարի վերջերին ժողովրդագրական մեծ փոփոխությունների հանգեցրին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը:

Խարբերդի նահանգը, ինչպես արդեն նշվել է, վերջնականորեն ձևավորվեց 1888 թ., երբ նահանգին կցվեց նաև Դերսիմի գավառը: Սահմանային վերաձևումներից հետո նահանգի ժողովրդագրական պատկերը մեծ փոփոխություններ կրեց. զուտ հայաբնակ բազմաթիվ գյուղերից բացի նահանգի ենթակայության տակ հայտնվեցին նաև քրդաբնակ ու թուրքաբնակ հարյուրավոր գյուղեր: Վերջիններիս մի ստվար մասը՝ Ակնի, Արաբկիրի, Մշկածագի, Չարսանջակի գավառակների, Մալաթիայի բազմաթիվ գյուղեր նախկինում բնակեցված էին եղել հայերով, որոնք նախորդ հարյուրամյակների ընթացքում իսլամացվել էին կամ գաղթել այլ բնակավայրեր: Ողջ նահանգում բացառություն կարելի է համարել Խարբերդի գավառակի գյուղերը, որոնցից շատերը մինչև XX դարի սկզբները առանձնանում էին որպես զուտ հայաբնակ գյուղեր: Խարբերդի դաշտի 360 գյուղերից 107-ը, ըստ Պ. Նաթանյանի, որի տվյալները կարող ենք հավաստի համա-

րել, հայաբնակ էին, որից 62-ը՝ զուտ հայաբնակ, իսկ 45-ում հայերը խառն ապրում էին թուրքերի հետ[166]:

Այլ էր վիճակը Խարբերդի գավառի մյուս գավառակներում՝ Ակնում և Արաբկիրում: Զանիկյանը նշում է, որ «ԺԷ և ԺԸ-րդ դարուց մէջ քաղաքիս (Ակն- հնդինակ) հայերէն բազում անձինք կրօնափոխ եղած են. ինչպէս կան ցարդ թուրք տուներ որոց ազգանունք հայերէն են»[167]: Նույնը կարելի է փաստել նաև Ակնի գյուղերի վերաբերյալ: Զանիկյանը այս առթիվ գրում է. «Կաշօյի գիւղացւոց կրօնափոխութիւնն 160-170 տարուան դէպք մը է: Հաբեղնոց, Ագրակ, Բակեր, Պզմրշէն, Ապրանք, Վեց փարագիւղի Ագրակ, Միջին գեղ, Վան-գեղ և Փշատիի Ուռեկ, Ավարիկ, Արտոս, Հեղտար, Բօշայի, Կաղրտան, Մերկևիլ և այլն հայանուն գիւղերուն մէջ այժմ ոչոք կայ ի Հայոց»[168]: Իսկապես, վերոնշյալ գյուղերը XIX դարի վերջի տվյալներով այլևս հայաբնակ չէին. XIX դարի վերջերին Ակնի գավառակի շուրջ հինգ տասնյակ գյուղերից թուրքերի հետ խառը հայեր էին ապրում Ակն քաղաքում և Ապուշեխ, Կամարկապ, Կարուշլա, Նարվեր, Լիճք, Բինկա, Ջորակ, Մուշեղկա, Վանք ու Շրգու գյուղերում, որոնցից վերջին 4-ում հիմնականում հայ կաթոլիկներ էին ապրում[169]: Արաբկիրի գավառակի գյուղերը ևս հիմնականում հայկական անվանումներ ունեին, օրինակ՝ Աշոտկա, Թարխանիկ, Բաղնիք, Դավթի, Մատուռկա, Փուլ, Բագուսի, Սոսիկ և այլն, սակայն դրանք ևս այլևս թուրքաբնակ էին[170]: XIX դարի վերջերին Արաբկիրի բազմաթիվ գյուղերից հայաբնակ էին շուրջ 15-ը:

---

[166] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 129:
[167] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 14:
[168] Նույն տեղում:
[169] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 82-83:
[170] Բախտիկեան Ս., Ոսկեգնտակ, էջ181:

Նշենք, որ այս բոլոր դեպքերում խոսքը կրոնափոխության կամ հայաբնակ բնակավայրերի հայաթափման ավելի վաղ դեպքերի մասին է: Ռուս հեղինակ, զինվորական Ա. Կոլյուբակինը սա համարում է անցյալի իրողություն: Ըստ նրա՝ «հայերի անցումը մուսուլմանության ոչ միայն ամբողջ գյուղերի կամ խմբերի այլ նաև առանձին անհատների, այժմ արդեն բացառիկ երևույթ է և հանդիսանում է այս երկրի քիչ թե շատ հեռավոր անցյալի դրվագ, բայց փաստ, որ կասկածի տեղիք չի տալիս: Բնակչության մեջ պահպանվել են ծայրահեղ ճնշման տակ ինչպես առանձին քիչ թե շատ հայտնի ընտանիքների, այնպես էլ ամբողջ գյուղերի՝ իսլամի անցնելու վերաբերյալ հիշողություններ, ինչի մասին են վկայում նաև բազմաթիվ հատուկ անունները՝ գյուղերի, հայտնի ընտանիքների անուններ, որ անկասկած հայկական ծագում ունեն: Այսպես, օրինակ, Բաղնիք գյուղը ժամանակին կիսով չափ հայաբնակ էր, այժմ այն զուտ թուրքաբնակ է (հայ բնակչության մի մասը անցել է իսլամի, մյուսները բարձրացել են լեռները): Նույնը հայտնի է նաև նույն նահիեի մի քանի այլ գյուղերի, Շեյխ Օմար նահիեի 4-5 գյուղերի մասին»[171]: 1884 թ. մայիսի 29-ով թվագրված մի նամակում խոսվում է Աղինում պատահած կրոնափոխության դեպքի մասին[172]: Կոլյուբակինը խոսում է մեկ այլ հետաքրքիր փաստի՝ քրդերի թուրքացման դեպքերի մասին, ինչը, ըստ նրա, մեծ չափերի էր հասնում: Սա հիմնականում հետևանք էր քրդերի՝ քաղաքային կյանքի անցման, ինչպես նաև զինվորագրման[173]:

---

[171] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 350-351:
[172] ԳԱԹ, Գ. Սրվանձտյանցի ֆ., ց. 1, նյ. 82, թ. 2:
[173] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 351:

XIX դարի վերջերին ինչպես Ակնի ու Արաբկիրի բազմաթիվ բնակավայրերում, այնպես էլ Դերսիմի քրդաբնակ շատ գյուղերում պահպանվել էին հայկական եկեղեցիների ավերակներ, իսկ հին ու նոր գերեզմանների վրա փորագրված էին խաչեր, որոնք ևս վկայում էին այդ բնակավայրերի նախկինում հայաբնակ լինելու մասին: Այս գյուղերի հայ բնակիչները ժամանակին կամ հեռացել էին ու բնակություն հաստատել այլ վայրերում, կամ՝ իսլամացվել:

Դերսիմի Զմշկածագ գավառակում քիչ էին զուտ հայաբնակ բնակավայրերը և բազմաթիվ էին այն գյուղերը, որտեղ ապրում էր փոքրաթիվ հայություն: Զմշկածագի առաջնորդության 29 հայաբնակ գյուղերում, Կապան Մադենն ավանում ու Զմշկածագ քաղաքում, ըստ Սրվանձտյանցի՝ հայ բնակչությունը կազմում էր 935 տուն[174], որից 280 տունը՝ Զմշկածագում, 100-ը՝ Կապան Մադենում: Վերջինս հետո միացվեց Խարբերդի գավառին: Մի քանի գյուղերում ապրում էր 20-40, մյուսներում՝ 1-10 տուն հայ: Նախկինում մի քանի հարյուր տուն հայ բնակիչ ունեցող Զմշկածագի Ագարակ գյուղում 1870-ականներին ապրում էր 9 տուն հայ[175]: Նմանապես Բրաստիք, Թակե, Ջնձոր, Մանկուճակ, Աշգանի, Խաչտուն, Ագրակ, Զմշկածագի ենթակայության մի շարք այլ գյուղերից յուրաքանչյուրում նույն 70-ականներին ապրում էին մի քանի տուն հայեր: Հետաքրքիր է, որ այստեղ ևս քիչ չէին հայկական անուններով բնակավայրերը, որոնց բնակչությունը ենթադրվում է՝ հայկական ծագում է ունեցել, հետո՝ ընդունել իսլամ: Զանիկյանը հիշատակում է նման գյուղեր. «Աղուանիս գիւղի բնակչաց համար, որ ամբողջովին քուրդ են՝ կըսուի, թէ հայէն դարձած են, բայց ազգային սովորութիւնքն պահած են, և

---

[174] Սրուանձտեանց Գ. վ., Թորոս աղբար, էջ 117-118:
[175] Նույն տեղում:

եթէ ստոյգ է՝ համակիր են իրենց նախնեաց կրօնին»[176]: Գ. Սրվանձտյանցը հիշատակում է այս մարդկանց ինչ-ինչ սովորություններ, որոնք ևս վկայում են նրանց հայկական ծագման մասին: Հեղինակն առանձնացնում է Ս. Թորոս գյուղախմբի բնակիչ թուրքերին, որոնցից շատերը հասել են պաշտոնների և բարեկիրթ են ու ազնիվ: Շուրջ 20 գյուղերից բաղկացած Ս. Թորոս գյուղախմբում XIX դարի կեսերին հայեր չկային, թեև այս դեպքում ևս դեռևս հնչում էին բնակավայրերի զուտ հայերեն ծագում ունեցող անվանումները, ինչպես օրինակ՝ Կծու, Դրնիկ, Վանք, Վարդենիք են:

Նույն վիճակն էր և Մալաթիայի գավառում: Նախկինում, եթե Մալաթիայի գավառում 50 հայի դիմաց կար 1 մուսուլման, ապա արդեն XIX դարի վերջում 150 գյուղերից քչերն էին հայաբնակ:

Նման իրավիճակի պատճառը նաև վերոնշյալ բնակավայրերից հայերի մեծ հոսքն էր ավելի խոշոր ու բարենպաստ պայմաններ ունեցող բնակավայրեր: Նախ, գյուղական վայրերից տարբեր ժամանակներում միշտ էլ նկատվել է շարժ դեպի գավառակի կենտրոնական քաղաքներ, ավաններ: Սրա մասին են վկայում նման բնակավայրերում ավելի մեծ թվով հայ բնակչության կենտրոնացված լինելու փաստերը, այն դեպքում, երբ հարակից գյուղերն արագորեն հայաթափվում էին: Նման միտումը հատկապես ակտիվացավ համիդյան կոտորածներից հետո, որոնց արդյունքում ոչ միայն նվազեց հայ բնակչության թվաքանակը, այլ ծայր առան բնակչության նոր տեղաշարժեր: Արդեն XX դարի սկզբներին շատ բնակավայրեր ունեին բնակչության այլ կազմ, քան նախկինում:

---

[176] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 75:

1895 թ. ջարդերից հետո հայաթափվեցին Զմշկածագի մի շարք հայաբնակ գյուղեր: Միատուն գյուղի 80 տուն հայությունը ջարդից հետո ապաստանեց Զմշկածագ քաղաքում, ուր մնաց երկու տարի, որից հետո գյուղ վերադարձան 25 տունը, մյուսները բնակություն հաստատեցին այլ վայրերում: 1898 թ. գյուղ վերադարձածների մի մասն էլ գաղթեց. Միատունում մնաց 12 տուն հայություն[177]: Մի քանի տարվա ընթացքում, փաստորեն, գյուղի հայ բնակչությունը նվազեց 85 %-ով: Այսպես, Զմշկածագի մյուս գյուղերից (Սիսնա, Մորշխան, Բազաբոն, Պրեխի, Մուռնայի, Պարտիզակ, Թումա Մեզրե են) ևս հեռացան ջարդերից փրկված հայերը. նրանք ապաստանեցին քաղաքում և շրջակա մեծ գյուղերում, և երկար ժամանակ հրաժարվում էին վերադառնալ իրենց բնակավայրերը:

Ջարդերից հետո առավել մեծ թվով գյուղեր հայաթափվեցին Մալաթիայի գավառում: Երբեմնի զուտ հայաբնակ Զրմխտի գյուղը, որը 1895 թ. ուներ 25 տուն հայ բնակիչ, գրեթե ամբողջությամբ հայաթափվեց: Նույն 1895 թ. գյուղի հայերն անցան Մալաթիա[178], ջարդից հետո գյուղ վերադարձան քչերը: Խաչատուր վարդապետ Տեր Ղազարյանի տվյալներով՝ նույն ճակատագրին արժանացավ նաև Օրտուզի (Հորտեոզ) գյուղը: XIX դարի վերջում որպես հայաբնակ հիշատակվող Մալաթիայի գավառին կցված շատ գյուղեր XX դարի սկզբին արդեն հիշատակվում էին որպես հիմնականում թուրքաբնակ կամ քրդաբնակ: Քիչ չեն նաև այն գյուղերը, որոնք հիշատակում է միայն մեկ հեղինակ: Սրանք հիմնականում այն գյուղերն են, որ հայաթափվել էին XIX դարի վերջերին և որտեղ, լավագույն դեպքում, մնացել էր 1 - 5 տուն հայ:

---

[177] Գասպարեան Հ., Զմշկածագ եւ իր գիւղերը, 1969, էջ 382:
[178] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 467:

Գաղթի մյուս ուղղությունը տարիներ շարունակ եղել է Կ. Պոլիսը, ուր միայն XIX դարի ընթացքում «գաղթող ակնեցի և գիւղացի ազգայինք հաւանորէն քանի մը հարիւր տուն և գուցէ աւելի են»[179]: Ընդհանուր առմամբ, Կ. Պոլիս գաղթած հայության մեջ ակնցիները մեծ թիվ էին կազմում: Ակնցիները բացի Պոլսից, տարիներ շարունակ գաղթում էին նաև Խարբերդ-Մեզրե, ուր ևս, ինչպես Կ. Պոլսում, նրանք բարձր դիրքեր էին զբաղեցնում. Մեզրեում հաստատված եկվորների մեծ մասն ակնցի էր՝ մեծամասամբ մեծահարուստներ: Ակնցիների գաղթի պատճառները տարբեր էին. նախևառաջ գաղթին մեծապես նպաստում էր սակավահողությունը, ինչպես նաև ապրուստի ավելի լավ պայմանների փնտրտուքը:

Սակավահողության, տնտեսվարման անհավասար պայմաններում, երբ հայերն ունեին սեփական գոյությունը պահելու սահմանափակ հնարավորություններ, արտագաղթը թվում էր միակ ելքը ստեղծված իրավիճակից: Միայն Խարբերդի գավառակում հողազուրկ էր հայ գյուղացիության 74.1 %-ը, մինչդեռ թուրքերի՝ 23.2 %-ը[180]: Շատ գյուղաբնակ հայեր հաստատվում էին քաղաքներում, որտեղ փորձում էին գտնել թե՛ ապրուստի միջոցներ, թե՛ կյանքի անվտանգության երաշխիքներ: Այս միտումը նկատվում էր նույն Ակնի գյուղերում, որոնցից ևս տարեցտարի շարժ էր նկատվում ինչպես նահանգից դուրս գտնվող բնակավայրեր, այնպես էլ՝ դեպի Ակն քաղաք: Ջանիկյանը այս առթիվ գրում է. «Կը կարծուի թէ մօտակայ գիւղացիք աւելի կը գաղթեն քան զքաղաքացիս, և գաղթողաց մեծագոյն մասն վարի թաղէն են: Ապուչեխի և Կամարակապի հայք քիչ թէ շատ կը

---

[179] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 16:
[180] Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

պակսին, բայց քաղաքիս Հայոց թիւն գրեթէ նոյնն է»[181]: Հեղինակը նկատի չի առնում այն փաստը, որ հայերի մի մասը գյուղերից տեղափոխվում էր նախ մոտակա քաղաք, և մյուս մասն՝ ավելի հեռավոր բնակավայրեր, ուստի քաղաքից հեռացողների պակասը լրացվում էր քաղաքում հաստատվողների հաշվին, իսկ գյուղերի հայ բնակչությունը միայն նվազում էր: XIX դարի վերջերին Ակնի ամենահայաշատ Կամարակապ գյուղն ուներ 150 տուն հայ բնակիչ, այն դեպքում, երբ դեռևս XIX դարի կեսերին այստեղ ապրում էր 200 տնից ավել հայություն. նրանց մի մասը տարիների ընթացքում անցել էր Պոլիս, Ամասիա, այլ վայրեր[182]: Նույնքան էլ պակասել էր Ակնի մյուս մեծ գյուղի՝ Ապուչեխի հայությունը: Այստեղի բնակիչները տեղափոխվել էին Խարբերդ, Մարզվան և այլ բնակավայրեր. դարավերջին այստեղ ապրում էր շուրջ 200 տուն հայություն[183]:

Զմշկածագում ևս հողագործությունը զարգացած չէր, քանի որ տարածքն անջրդի էր: Սա էր պատճառը, որ հայ գյուղացիներից շատերը դիմում էին պանդխտության: Զմշկածագցիներից ոմանք զբաղվում էին արհեստագործությամբ, ոմանք էլ զանազան պաշտոններ էին գբաղեցնում՝ այդ թվում՝ գրագրի, թարգմանի, ծախսարարի:

1880-ականներից Խարբերդի նահանգի հայերի արտագաղթի հիմնական ուղղությունը դարձավ ԱՄՆ-ը: Հայերն ԱՄՆ սկսել էին գաղթել դեռ 1830-ականներից, բայց դրանք հատուկենտ մարդիկ էին, իսկ 1870-ականներից նրանց թիվը սկսեց աճել: Այս շրջանում ԱՄՆ-ում հաստատված հայերը հիմնականում կրթված, առաջադեմ մարդիկ էին, որոնք գալիս էին ուսու-

---

[181] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 16:
[182] Նույն տեղում, էջ 48:
[183] Նույն տեղում, էջ 45:

մը շարունակելու կամ արհեստների, առևտրի մեջ հմտանալու համար. որոշ հայեր էլ քաղաքական ապաստան էին գտնում այստեղ[184]: ԱՄՆ հայերի արտագաղթի պատճառների մասին խոսելիս նշենք ևս մեկը: Նախ, արձանագրենք, որ ԱՄՆ հայերի հոսքը սկսեց Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում ծավալած գործունեության հետ: Այս առաքելության հիմնական և ամենամեծ կայաններից մեկը հիմնվել էր հենց Խարբերդում: 1853 թ. ամերիկյան առաքելությունը փոքր կայան էր բացել նաև Արաբկիրում[185]:

Խարբերդում հաստատված առաջին ամերիկացի միսիոները պատվելի Դանմորն էր, ով, կնոջ հետ հաստատվելով Խարբերդում, 1855 թ. հիմնադրեց բողոքական դպրոց[186]: Վերջինիս կարծիքով՝ Խարբերդը կայսրության ամենախոստումնալից միսիոներական դաշտն էր[187]: Ամերիկյան առաքելությունը չորս աստվածաբանական ճեմարան հիմնեց թուրքական առաքելություններից յուրաքանչյուրի համար. Մարզվանում՝ արևմտաթուրքական առաքելության, Խարբերդում՝ արևելաթուրքական, Մարաշում՝ կենտրոնական Թուրքիայի առաքելությունների համար: Չորրորդ ճեմարանը, որը Մարդինում էր, պետք է ապահովեր հարավ - արևմտյան շրջանը, որտեղ արաբախոս բնակչություն կար[188]: Խարբերդի աստվածաբանական ճեմարանը բացվեց 1859 թ., իսկ արդեն 1878 թ. հիմնվեց «Արմենիա» քոլեջը, որը 1888 թ. վերանվանվեց «Եփրատ քոլեջ»: Եփրատ քոլեջն առաջին արական շրջանավարտը տվեց 1880 թ., երեք տարի անց քո-

---

[184] Malcom V., The Armenians in America, Boston, 1919, p. 60-61.
[185] Hewsen R. Armenia. A Historical Atlas, p. 197.
[186] Great need Over The Water, նշվ. աշխ., էջ 51:
[187] Յիշատակարան Եփրատ գոլէճի, Պոսթըն, 1947, էջ 37:
[188] Richter J., նշվ. աշխ., էջ 125-126:

լեջն ունեցավ նաև իգական շրջանավարտ[189]: Քոլեջի հիմնադիրն ու առաջին նախագահն էր ամերիկյան միսիոներական առաքելության աշխատակից վերապատվելի Քրոգբի Հուիլը[190]: Քոլեջն ուներ 6 մեծ, 14 փոքր շենքեր, որոնցից 2 մեծ շենքեր աղջիկների համար[191]: 1902 թ. քոլեջի տարբեր բաժիններում սովորում էր 1100 աշակերտ[192]: Հետագա տարիներին քոլեջը ղեկավարել են ամերիկացի միսիոներներ Հենրի Ռիգգն ու Ջեյմս Բարտոնը: Վերջինս, որպես միսիոներ, Խարբերդ էր եկել 1885 թ.: Հետագայում Բարտոնը դարձավ Օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան կոմիտեի քարտուղարը Կ. Պոլսում[193]: 1913-1914 թթ. Եփրատ քոլեջի վարչական ժողովի նախագահն էր բժիշկ Հենրի Ատկինսոնը, քարտուղարը՝ Մերի Ռիգգը:

Հատկանշական է, որ թեև ամերիկյան կայանի հիմնական աշխատանքը կենտրոնացած էր երկու քաղաքներում, այնուամենայնիվ, միսիոներների գործունեությունը չէր սահմանափակվում քաղաքներով, այլ ընդգրկում էր նաև գյուղական բնակավայրերը: Միսիոներական աշխատանքի մի մեծ բաժին կատարում էին կին միսիոներները, ովքեր շրջելով Խարբերդի դաշտի տասնյակ գյուղերով, հավաքներ, դասընթացներ էին կազմակերպում կանանց համար: Բողոքական քարոզիչ Ջ. Գրինը նշում է, որ 1877 թ. Խարբերդի դաշտի բնակավայրերում գործում էր 22 ավետարանական եկեղեցի՝ 30 քարոզիչներով և 1332 անդամներով: Վերոնշյալ տարածքում, ըստ հեղինակի՝ 6913 արձա-

---

[189] Great need Over The Water, նշվ. աշխ., էջ 63:
[190] Յիշատակարան Եփրատ գոլէճի, էջ 118:
[191] Նույն տեղում, էջ 119:
[192] Greene Rev. J., նշվ. աշխ., էջ 221:
[193] Peterson M., "Starving Armenians". America and the Armenian Genocide, 1915-1930 and After. Charlottesville and London, 2004, p. 51.

նագրված բողոքական եկեղեցու հետևորդ կար[194]: Արդեն 1898 թ. տարեկան հաշվետվության համաձայն՝ Խարբերդում գործում էին առաքելության 63 դպրոցներ՝ 4000 աշակերտներով[195]: Հենց այս դպրոցների, Եփրատ քոլեջի շրջանավարտների շրջանում էր, որ միսիոներների կատարած աշխատանքը մեծ խանդավառություն առաջ բերեց ու նպաստեց դեպի ազատության ու արդարության երկիր՝ ԱՄՆ արտագաղթին: Իր հերթին այս արտագաղթն ազդեց Խարբերդում բողոքական համայնքի թվաքանակի վրա: Ամերիկյան եկեղեցիների բողոքական համայնքը և հատկապես միսիոներական դպրոցների աշակերտները ԱՄՆ արտագաղթի պատճառով ամեն տարի 25-30 տոկոսով պակասում էին[196],- փաստում է Վ. Մալքոմը, որն առանձին ուսումնասիրությամբ անդրադարձել է այս խնդրին:

Միսիոներների շահերը կոնգրեսին ստիպեցին երկու հյուպատոսություններ բացել Էրզրումում և Խարբերդում: Ուիլյամ Դադլի Հանթերը Խարբերդում ԱՄՆ հյուպատոս նշանակվեց: Սակայն Օսմանյան կառավարությունը հրաժարվեց ճանաչել այս երկու հյուպատոսությունները: Նրանք միայն ճանապարհորդեցին կայսրության տարածքով մինչև որ 1895 թ. կոտորածների պատճառով վտանգավոր իրավիճակ ստեղծվեց երկրում, և նորանշանակ հյուպատոսները հետ ուղարկվեցին հայրենիք[197]: Խարբերդ եկած ամերիկյան առաջին հյուպատոսը Թոմաս Նորտոնն էր, որը հյուպատոս էր նշանակվել դեռևս 1900 թ. հունիսին, բայց Օսմանյան կառավարությունը հյուպատոսությունը ճանաչեց միայն 1901 թ. հոկտեմբերին[198]: 1905 թ. սեպտեմբեր - 1908

---

[194] Greene Rev. J., նշվ. աշխ., էջ 219:
[195] Merguerian B., The View from the United States Consulate, p. 275.
[196] Malcom V., նշվ. աշխ., էջ 76:
[197] Merguerian B., „Like a Policeman in a Mob", p. 296.
[198] Merguerian B., The View from the United States Consulate, p. 280.

թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում Խարբերդի ամերիկյան հյուպատոսն էր Էվան Յանգը, 1908 թ. հոկտեմբեր - 1914 թ. մայիս ընթացքում՝ Վիլամ Մաստերսոնը, 1914 թ. մայիսից - 1917 թ. ապրիլը՝ Լեսլի Դևիսը[199]:

Միսիոներների մյուս խումբը, որ դեռևս 19-րդ դարի վերջերից գործունեություն էր ծավալել Խարբերդում, Գերմանիայից էր: Գերմանացի միսիոներները դեռևս 1897 թ. Մեզրեում երկու մեծ շենք գնեցին: 1902 թ. նրանք արդեն որբանոցի 5 շենքեր էին կառուցել՝ 700 երեխաների համար[200]: Խարբերդում գերմանական առաքելության ղեկավարը Էմանն էր, որի գործունեության վերաբերյալ գրականության մեջ հակասական գնահատականներ կան: Էմանին ուղղված մեղադրանքը կայանում էր նրանում, որ 1915 թ. սկզբներին նա, այցելելով Հուսեյնիկ, Բազմաշեն, Քեոբրե և այլ գյուղեր, հայությանը կոչ էր արել հանձնել զենքերը: Նույն կերպ Էմանը վարվել էր նաև քաղաքում[201]: Իսկ երբ սկսեց տեղահանությունը, ինչպես գրում էին ժամանակակիցները. «Էման, ինչպէս բոլոր գերմաններն ու եվրոպացիք կը հաւատային եւ կը ջանային հաւատացնել թէ Ուրֆայի շոգենկառքի գծին շուրջ հաստատելու կը տանին հայերը»[202]: Մյուս կողմից, անհնար է ուրանալ գերմանական առաքելության ու մասնավորապես Էմանի դերը հայ որբերի խնամքի ու դաստիարակության գործում: Վերջինիս ղեկավարությամբ էին գործում տղաների Էբենեզեր, աղջիկների Փանուէլ, Մարանաթա, Եղիմ և դանիացիների հիմնած Էմմաուս որբանոցները, որտեղ խնամվում էին շուրջ 1000 որբեր: 1922 թ. Էմմաուսի որբերի խնամքը

---

199 Merguerian B., The View from the United States Consulate, էջ 284:
200 Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 455:
201 Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 439-440:
202 Ժամկոչեան Բ., Խարբերդի եղեռնը, Յուշամատեան մեծ եղեռնի. 1915-1965, Պէյրութ, 1965, էջ 386:

վերցրել էր Ամերիկյան Նպաստամատույցը, որի շնորհիվ Էմմաուսի որբերը տեղափոխվեցին Լիբանան՝ Զուք գյուղ[203]:

XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին Խարբերդում փոքր կայան ունեին նաև ֆրանսիական Կապուցինները և Անարատ հղության կաթոլիկ հայ քույրերը[204]: Կապուցինյան միաբանության հիմնադիրը Ապոնա Անջելոն էր, որը 1867 թ. Խարբերդում հիմնեց մատուռ, ապա՝ դպրոց: Վերջինս 1894 թ. վերածվեց քոլեջի[205]: 1905-1914 թթ. ֆրանսիական քոլեջն ուներ 350 երկսեռ աշակերտ, ընդհանուր առմամբ, Խարբերդի, Մեզրեի, Հուսեյնիկի ֆրանսիական վարժարաններում սովորում էին 750 աշակերտներ[206]: Վերոնշյալ միաբանությունները ճյուղեր ունեին նաև Մալաթիայում, որտեղ ևս գործում էին Կապուցին միսիոներներ ու Անարատ հղության կաթոլիկ հայ քույրեր[207]:

Խարբերդում կաթոլիկ միաբանության գործունեությունը հիմնականում ուղղված էր նշյալ դպրոցների գոյության պահպանմանը՝ նույնիսկ որևէ կերպ չձգտելով ավելացնել այդտեղ սովորողների քանակը: Հստակեցնենք, որ կաթոլիկ միաբանությունների գործունեությունը Խարբերդում և, ընդհանրապես, Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերում չուներ այն ծավալները, ինչ ունեին ամերիկյան ու գերմանական առաքելությունները: Սրա հիմնական պատճառը, թերևս այն էր, որ կաթոլիկ առաքելությունների նյութական վիճակն անբարենպաստ էր, նրանք գրեթե աջակցություն չունեին դրսից: Ա. Կոյյուբակինը նշում է, որ «տիրապետելով շատ սուղ միջոցների, միսիոներ-

---

[203] Ժամկոչեան Բ., Պատմութիւն Մամուրէթ իւլ Ազիզի գերման որբանոցներու, Պէյրութ, 1973, էջ 161-165:
[204] Hewsen R. Armenia. p.197.
[205] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 409:
[206] Նույն տեղում, էջ 421:
[207] Hewsen R. Armenia, էջ 197:

ները նախ և առաջ մտածում էին իրենց հարմարությունների մասին և ավելի քիչ գումար տրամադրում առաքելություններին կից բացված փոքր դպրոցներին, որից հետո այլևս գումար չէր մնում գյուղացիներին օգնելու համար»[208]: Միևնույն ժամանակ փաստենք, որ Կապուցինյան միաբանությունը[209], որն իր բաժանմունքն ուներ նաև Խարբերդում, Մեզրեում մի ապանձին թաղամաս էր գբաղեցնում՝ 3 մեծ և մի քանի փոքր շենքերով ու մեծ այգիով:

Միսիոներների կատարած աշխատանքը դրական արձագանքներ գտավ բնակչության շրջանում. սա նաև նշանակում էր վստահություն, համակրանք այն երկրի նկատմամբ, որը ներկայացնում էին նրանք: XIX դարի կեսերից ամերիկացի միսիոներները մի քանի տասնյակ երկսեռ դպրոցներ բացեցին Խարբերդում, Մալաթիայում, Ակնում, Արաբկիրում, բազմաթիվ գյուղերում: Ամերիկյան միսիոներների հիմնադրած Եփրատ քոլեջը դարձավ ժամանակի լավագույն կրթօջախներից մեկը: Մասնավորապես, պատմաբան Է. Կոստանդյանը նշում է, որ «միսիոներների մուտքը Խարբերդ կատարվեց այնպիսի մի ժամանակ, երբ ժողովրդի մոտ 90 %-ը գտնվում էր համակ անգրագիտության մեջ, երբ գոյություն չունեին ազգային եկեղեցական-ծխական դպրոցներ»[210]: Կրթական, մշակութային գարթոնքը, որ նկատվեց Խարբերդի նահանգում, ևս նպաստեց արտագաղթին: Արտագաղթողների մեծ մասը հենց քոլեջների, դպրոցների

---

[208] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 347:

[209] Միաբանության կատարած աշխատանքներում հատկապես մեծ դեր էին խաղում հայր Ռաֆայելը և եղբայր Ֆերդինանդը: Վերջինիս ջանքերով Մեզրեում հիմնվեց առաջին օդերևութաբանական կայանը, կազմվեց 25-30 հոգուց բաղկացած առաջին նվագախումբը: Տե՛ս՝ Վահէ Հ., նշվ. աշխ., էջ 415:

[210] Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-բաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, 2005, էջ 54:

շրջանավարտներ էին, որոնք ԱՄՆ-ում էին փնտրում ազատության, իրավահավասարության, պաշտպանվածության այն մթնոլորտը, ինչի մասին լսել էին իրենց ուսուցիչներից, ամերիկացի միսիոներներից և ինչը չկար հայրենիքում: Հատկանշական է, որ արտագաղթում էին նախ և առաջ բողոքական եկեղեցու հետևորդ դարձած արևմտահայերը: Օրինակ, «Խարբերդի եկեղեցին մի տարի ուներ 3107 հետևորդ, հաջորդ տարի՝ 2413. մյուսները գնացել էին Ամերիկա»[211]:

Արտագաղթի մյուս հզոր ազդակն արդեն ԱՄՆ-ում հաստատված հայերի նամակներն էին, որոնցում նրանք խոսում էին Նոր Աշխարհի հրաշալիքների ու ամերիկացի ժողովրդի ազնվահոգության մասին: Նշենք, որ եթե սկզբնական շրջանում ԱՄՆ եկած հայերը հիմնականում կրթված, առաջադեմ մարդիկ էին, որ գալիս էին ուսումը շարունակելու կամ արհեստների, առևտրի մեջ հմտանալու համար, ոմանք՝ քաղաքական ապաստան ստանալու, ապա հետագայում, արտագաղթողների մի ստվար մասն արդեն ԱՄՆ էր գալիս աշխատանք գտնելու համար: Նրանք սկզբնական շրջանում հիմնականում Խարբերդի դաշտի գյուղերից էին, Խարբերդ ու Մեզրե քաղաքներից, սակայն արտագաղթի ալիքը տարածվեց նաև նահանգի այլ գավառներում ու բնակավայրերում: Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերից ԱՄՆ մեկնած հայրենակիցների ջանքերով XIX դարի 90-ականներին ԱՄՆ տարբեր քաղաքներում հիմնվեցին միություններ՝ Հուսեյնիկի, Քեսիրիկի, Մորենիկի, Հողեի Լուսավորչական ու Բողոքական, Դատեմի, Բարջանճի, Բազմաշենի, Հազարիի, Եղեգիի, Արաբկիրի, Մուռիի Ուսումնասիրաց ընկերություններ-

[211] Malcom V., նշվ. աշխ., էջ 77:

ը[212] և այլն, որոնց հիմնումը փաստում էր այդ բնակավայրերից ԱՄՆ արտագաղթածների մասին: Այս միությունների անվանումների մեջ հնչում էին նույնիսկ Զմշկածագի բազմաթիվ բնակավայրերի անունները, ինչպես օրինակ՝ Հազարի, Կարմրի, Մամսա, Մուռնա, Երից Ագրակ, Միատուն, Մորշխան, Սիսնա, Պարտիզակ, Խարասար, Օձգեղ, Պողոս, Թումա Մեզրե, Բազաբոն, Հաղթուկ, Տեզգե և այլն[213]: Մեծ Եղեռնից հետո արդեն այս կազմակերպությունները վերածվեցին Հայրենակցական, Վերաշինաց միությունների:

1894-1896 թթ. և հետագա տարիներին շեշտակիորեն աճեց Օսմանյան կայսրությունից ԱՄՆ մեկնողների թվաքանակը, ընդորում ջարդերից հետո հայրենիքից մեկնողների մեջ արդեն քիչ չէին ընտանիքներով տեղափոխվողները: Միայն 1896 թ. Օսմանյան կայսրությունից ԱՄՆ եկավ 4139 մարդ, հաջորդ տարի՝ 4732, 1898 թ.՝ 4275[214]: Այսուհետ արդեն արտագաղթի հիմնական պատճառը հայերի զանգվածային կոտորածներն էին, նոր ջարդերի վախը:

1895 թ. ջարդից հետո ծայր առավ գաղթն Արաբկիրից դեպի Խարբերդ, Մալաթիա, Սեբաստիա, Երզնկա, նաև արտագաղթը՝ Եգիպտոս, Պոլիս, Իզմիր, Հալեպ: Նուբարյան Մատենադարանի Ա. Անտոնյանի ֆոնդում պահվող մի փաստաթղթի համաձայն՝ 1895 թ. կոտորածներից հետո շուրջ 4000 հայեր գաղթել էին Արաբկիրից ԱՄՆ և Եգիպտոս[215]: Փոլատյանի վկայությամբ՝ եթե ջարդից առաջ Արաբկիրն ուներ 3000 տուն հայութ-

---

[212] Ամերիկահայ Տարեցույցը, կազմող՝ Մուշեղ եպիսկոպոս, Ա տարի, 1912, Պոստոն,էջ 176-183:
[213] Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 368-369:
[214] Malcom V., նշվ. աշխ., էջ 65:
[215] Kevorkian R. The Armenian Genocide, A Complete History, London, New York, 2011, p. 403.

յուն, ապա հետո՝ հազիվ 2000 տուն[216]: 1880-ականներից սկսեց մալաթիացիների գաղթն արտասահման, մասնավորապես ԱՄՆ: Մինչև 1912 թ. մալաթիացի շուրջ 3500 երիտասարդ մեկնել էր արտասահման[217]:

Զարդերից տուժած քրիստոնյա բնակչության համար արտագաղթի դիմելու մյուս պատճառը հարկերի գանձումն էր: Պաշտոնյաները, այժմ մեծ եռանդով հարկեր էին գանձում՝ կանգ չառնելով ոչնչի առջև: Սա այն դեպքում, երբ շատերն ընդհանրապես հողատարածքներ չունեին, հետևաբար՝ նաև բերք չունեին: Տուրքերը խստությամբ գանձելու մասին է հավաստում նաև «Կապույտ գրքի» տեղեկագրերից մեկի հեղինակ Ռ. Ֆոնդանան[218]: Տուրքերի գանձումը կոտորածներից մեծապես տուժած, գրեթե ամբողջությամբ թալանի ենթարկված հայկական գյուղերից տարօրինակ ու անընդունելի էր նաև օտարերկրյա հյուպատոսների համար, որոնցից ոմանք դիմում էին կուսակալներին՝ խնդրելով հետաձգել տուրքերի գանձումը: Սակայն սա ոչ միշտ էր օգնում հայ բնակչությանը. մասնավորապես, Զմշկածագի Մամսա գյուղի հայերից, որոնց 31 տները հիմնահատակ թալանվել էին, պահանջվում էր վճարել 12000 ղուրուշ: Այն բանից հետո, երբ այս գյուղի հայությունը վճարեց 8000 ղուրուշ, գյուղի երևելիները դիմեցին կայմակամին՝ խնդրելով հետաձգել մնացյալ պարտքի գանձումը[219]: Հարկահավաքը պատասխանը հուսադրող չէր, խնդիրը կարգավորվեց միայն հյուպատոսի՝ կուսակալին դիմելուց հետո: Նման զիջումները, իհարկե, շատ չէին, ուստի շատերը ստեղծված վիճակից միակ ելքը տեսնում էին արտագաղթի մեջ:

---

[216] Փոլատեան Ա., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նյու Յորք, 1969, էջ 675:
[217] Մելիտինեցի Գ., Նախճիրներ 1915-1918, Պոստոն, 1929, էջ 74:
[218] «Նոր կեանք», Լոնտոն թիւ 8, 15 ապրիլ, 1898:
[219] «Նոր կեանք», թիւ 6, 15 մարտ, 1898:

Արտագաղթի մասին խոսելիս պատկերն ամբողջական չի ստացվի, եթե չանդրադառնանք արտագաղթի հետևանքներին: XIX դարավերջին քիչ չէին այն արևմտահայերը, որոնք հաստատվելով օտար երկրներում, ձեռնամուխ էին եղել սեփական գործի, առևտրի ծավալմանը: Բազմաթիվ էին այնպիսիք, ովքեր ողջ տարին աշխատելով այլ բնակավայրերում, ապահովում էին իրենց ընտանիքների տանելի կյանքը ծննդավայրում: Բազմաթիվ խարբերդցիներ ԱՄՆ-ում աշխատող հարազատների ուղարկած գումարներով արդեն XX դարի սկզբներին կարողացան մեծ քանակությամբ հողեր գնել ու դառնալ խոշոր հողատերեր: Այսպիսով, եթե XIX դարի վերջին քառորդում նահանգի հողերի 3/4-ը պատկանում էր թուրք աղաներին, ապա XX դարի սկզբներին ավելի ու ավելի շատ հայեր դարձան ունևոր սեփականատերեր: Օրինակ, 1890-1912 թթ. աշխատելով ԱՄՆ-ում, Զարսանջակի Հոշե գյուղից Զուռնաճյան եղբայրները կարողացան գումար հավաքել և Բերրիի Հյուսնի բեկից գնել Հոշեի բոլոր բարեբեր հողերը, այն դեպքում, երբ տարիներ շարունակ գյուղի բոլոր հողերը պատկանում էին Բերրիի թուրք աղաներին[220]: Առավել մեծ փոփոխություններ գրանցվեցին Խարբերդի դաշտի գյուղերում, որովհետև այս բնակավայրերից էր նկատվել հայերի առավել մեծ հոսքն ԱՄՆ: Ավելին, որոշ հայեր, որ մինչ այդ աշխատել էին ԱՄՆ-ում, տիրապետել նորանոր արհեստների, վերադառնալով հայրենիք, իրենց ծննդավայրերում հիմնեցին սեփական արհեստանոցներ ու գործարաններ: Սա իր դրական հետևանքներն ունեցավ Խարբերդի նահանգի տնտեսության զարգացման վրա: ԱՄՆ գաղթած հայերն ամեն կերպ աջակցում էին ամերիկյան առաքելության աշխատանքներին, նրանցից մեկը՝ Ասլան Սահակյանը, 15000 դոլարի նվիրատվություն

---

[220] Երեմյան Գ., Պատմութիւն Զարսանճագի հայոց, Պեյրութ, 1956, էջ 243:

կատարեց կրթական համակարգը զարգացնելու համար, մեկ ուրիշը գումար հատկացրեց Դիարբեքիրում հիվանդանոց կառուցելու համար, որոշները նվիրատվություններ արեցին՝ վճարելու Խարբերդի Եփրատ քոլեջի պրոֆեսորի աշխատավարձը, գումար հատկացրեցին Եփրատ քոլեջի սպորտդահլիճի համար, Արաբկիրում աղջիկների դպրոց կառուցելու համար[221]: Ոմանք ամերիկյան ապրանքների խանութներ էին բացում հայրենիքում, նրանց ջանքերի շնորհիվ ամերիկյան ապրանքների՝ հատկապես բամբակե ապրանքների, մետաղե իրերի են գերազանցությունը դառնում էր հայտնի[222]:

Արտագաղթի մյուս կարևոր հետևանքը ժողովրդագրական էր՝ արտագաղթն անմիջականորեն ազդեց հայերի թվաքանակի վրա: Աղբյուրների վկայությամբ՝ ԱՄՆ արտագաղթողների մեջ խարբերդցիների թվաքանակը բավական մեծ էր: Խարբերդահայերի մի ստվար զանգված արդեն XIX դարի 80-ականների կեսերից աշխատում էր ԱՄՆ-ի Ուորստր քաղաքում: 1888 թ. այստեղ հայերը հաշվվում էին շուրջ 400 հոգի՝ մեծ մասը Խարբերդի նահանգից: Ուորստրը երբեմն անվանվում էր «Փոքրիկ Խարբերդ»[223]: 1891 թ. հրատարակված Ուորստրի բառարանում նշվում է, որ այստեղ ապրում է 700 հայ[224]: Եթե հաշվի առնենք, որ նախորդ տարիներին այստեղ բնակություն հաստատած հայերի շուրջ 80 %-ը Խարբերդի նահանգից էին, ապա պետք է ենթադրել, որ այս աճը տեղի էր ունեցել հենց նրանց հաշվին. երեք տարիների ընթացքում նրանց թիվը միայն մի բնակավայրում

---

[221] Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, 1970, p. 159. Տե՛ս նաև՝ Strong W., նշվ. աշխ., էջ 406:
[222] Merguerian B., The View from the United States Consulate, Armenian Tsopk Kharpert, edited by Richard Hovannisian, Costa Mesa, 2002, p. 291.
[223] Deranian H.Worcester is America, Worcester, Ma.,1998, p. 43.
[224] Նույն տեղում, էջ 41:

ուճեց գրեթե կրկնակի անգամ: Եվ սա միայն մի բնակավայրի օրինակով, մինչդեռ XIX դարի վերջերին հայեր էին ապրում նաև ԱՄՆ-ի Նյու-Յորք, Նյու Ջերսի, Բոստոն, Ֆիլադելֆիա քաղաքներում: Թ. Պ. Խնկյանի պատրաստած վիճակագրության համաձայն՝ 1908-1910 թթ. դրությամբ Ֆրեզնոյում հաստատված շուրջ 2326 հայերի մեջ 21 ընտանիք՝ 87 անձ ԱՄՆ էր եկել Արաբկիրից ու գյուղերից, 132 ընտանիք՝ 676 անձ՝ Խարբերդից ու նրա հարակից 24 գյուղերից, 3 ընտանիք՝ 17 անձով՝ Մալաթիայից, 9 ընտանիք՝ 45 անձով՝ Զարսանջակի 4 գյուղերից[225]: Մասաչուսեթսում ամենավաղ հաստատված հայերի մեծ մասը ևս ծագումով Խարբերդի նահանգից էին[226]:

Հայաշատ քաղաքների, գյուղերի համար արտագաղթողների այս թիվը, թվում է, էական ազդեցություն չէր կարող թողնել հայության ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա, բայց երբ արձանագրում ենք, որ հեռացողների գերակշիռ մասը երիտասարդներ էին, առավել ևս, որ հեռանում էին նաև փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրերից, ապա պարզ է, որ նրանց հեռանալը զգալի պետք է լիներ նույնիսկ հայաշատ քաղաքների, գյուղերի հայության համար: Ավելին, մի քանի տասնյակ տուն հայություն ունեցող գյուղի համար սա ուներ իր արդեն աղետալի հետևանքները: 1895 թ. Թլկատին գյուղից ԱՄՆ-ում էին 300 երիտասարդներ[227]: Խարբերդի դաշտի Քեորբե գյուղից մինչև 1915 թ. ԱՄՆ էին գաղթել շուրջ 100 անձինք[228], ինչը կազմում էր գյուղի հայ բնակչության շուրջ 15 %-ը: Շուրջ 1200 հայ բնակիչ ունեցող Խուլագյուղից 1876-1895 թթ. ԱՄՆ էր գաղթել 80-

---

[225] Ամերիկահայ Տարեցոյց, Ա տարի, 1912, էջ 62:
[226] The Armenians in Massachusetts, The Armenian Historical Society, Boston, 1937, p. 28.
[227] Ճիզմէճեան Մ., Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրէզնոյ, 1955, էջ 198:
[228] Շաւղուհեան Յ., ՀՅԹԻ, բաժին 8, թղ. 39, էջ 83, 145-189:

100 մարդ[229]: 1915 թ. Զմշկածագի Հազարի գյուղից 66 հոգի պանդուխտներ էին[230]: Նման օրինակները բազմաթիվ են:

ԱՄՆ արտագաղթի այս ծավալներն աննկատ չէին մնում Խարբերդում ԱՄՆ հյուպատոսարանի, տարբեր միսիոներական կազմակերպությունների անդամների աչքից, որոնք ևս արձանագրում էին արտագաղթի բացասական հետևանքները: Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Նորտոնը զեկույցներից մեկում գրում էր, որ Խարբերդից ու հարակից գյուղերից ոչ պակաս քան 200 ընտանիք կամ շուրջ 1000 մարդ, որ կազմում էր ԱՄՆ-ի հայության մեկ տասներորդ մասը, նպատակ ունի Ամերիկա մեկնել: Մեկ ամիս անց նա զեկուցում է, որ Նահանգային խորհուրդը որոշում է ընդունել մերժել այդ էմիգրանտներին: Մերժումը բացատրվում էր նրանով, որ արտագաղթը «լրջորեն վնասում է» նահանգի բնակչությանը[231]: 1899 թ. միսիոներուհի Թերեզա Հանթինգթոն Զիգլերը մորը գրած նամակներից մեկում ցավով է խոսում Խարբերդից արտագաղթողների մասին: Նա գրում է. «մենք կրթում ենք երիտասարդներին քոլեջի շրջանառության ողջ կամ կեսի ընթացքում, իսկ նրանք թողնում են մեզ և մեկնում Ամերիկա, որտեղ նրանք իրենց ապահով են զգում և կարողանում դրամ վաստակել»[232]: Միսիոներուհու դիտարկումը շատ տեղին էր, քանի որ, իրավամբ, արտագաղթողների հիմնական մասն ակնկալում էր ԱՄՆ-ում նախ և առաջ ունենալ անվտանգ ու բարեկեցիկ կյանք: Մեկ այլ նամակում միսիոներուհին գրում է արտագաղթի ահագնացող տեմպերի մասին. «Մենք լսել ենք, որ 400 կամ 500 հայ ընտանիքներ այս ամառ եթե տեղերն ստանան, ինչն այդքանի համար գրեթե անհնար է, կմեկնեն Ամերի-

---

229 Թումաճանեան Յ., տե՛ս Վահէ Հ., նշվ. աշխ., էջ 860:
230 Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 188:
231 Merguerian B., „Like a Policeman in a Mob", p. 302.
232 Great need Over The Water, նշվ. աշխ., էջ 138:

կա», - գրում է Թերեզան 1900 թ.[233]: Ամերիկացի քարոզիչ Ջ. Գրինի վկայությամբ, «վերջին պատերազմների ու շատ հայերի՝ Ամերիկա արտագաղթի պատճառով, նկատելիորեն նվազել էր Եփրատ քոլեջի աշակերտների թիվը՝ 1914 թ. կազմելով ընդամենը 611 հոգի[234]:

1899-1907 թթ. ընթացքում հայերի՝ ԱՄՆ արտագաղթի դադար եղավ: Այս ընթացքում թուրքական կառավարությունն արգելեց հայերի արտագաղթը, ավելին, որոշակի ճնշումներ կիրառեց արտագաղթելու պատրաստ անձանց, և նրանց նկատմամբ, ովքեր նոր էին վերադարձել ԱՄՆ-ից: Այսպես, «Ազգ» թերթի թղթակից հեղինակ Արտավազդը «Խարբերդապատում» խորագրի տակ գրում է, որ հրաման է արձակվել այն մասին, որ պետությանը պետք է անցնի այն անձանց ունեցվածքը, որոնց զավակները իրենց մոտ չեն: Ավելին՝ բանտարկվում, ապա հետ՝ ԱՄՆ են ուղարկվում Ամերիկայից եկածները: Հեղինակը նշում է, որ արդեն 50 հոգու ուղարկել են, ևս 18 հոգու բանտարկել են և մոտ օրերը պետք է հետ ուղարկեն[235]: Այս մարդկանց նկատմամբ բռնությունները հասնում են նրան, որ «կառավարութիւնը կը կանչէ երբեմնի Ամերիկահայը, բազուկներուն վրայ կտոր մը խնաւպ կը կապէ ու մասնաւոր մեքենայով մը կապին վրայ կանցնէ ղուրզուշունը ու կը սեղմէ՝ որպեսզի ժողովուրդը գիտնայ թէ այդ մարդը երթալիք է»[236]: Այսպես դրոշմվել էին և պետք է արտաքսվեին երկրից մի շարք խուլագյուղցիներ, բազմաշենցիներ, դատեմցիներ և այլ բնակավայրերի հայեր: Արդեն մեկ ամիս անց, Արտավազդը նույն թերթում գրում է, որ վերոնշյալ դրոշմված անձինք այլևս չեն հեռացվելու երկրից: Սակայն հեղինակը

---

[233] Great need Over The Water, նշվ. աշխ., էջ 172:
[234] Greene Rev. J. Leaving The Levant, Boston, New York, Chicago, 1916, p. 222.
[235] «Ազգ», Պոսթոն, յուլիս 13, 1907 թ., էջ 2:
[236] Նույն տեղում:

ավելացնում է, որ անթիվ են կամովին գաղթել ցանկացողները, որոնք արդեն «սկսած են իրենց կիներէն ու զաւակներէն առաջ՝ մինակ հասուն աղջիկներին տանիլ»[237]:

1908 թ. նոր կառավարությունը ճանապարհորդելու ազատություն տվեց և արտագաղթը վերսկսեց[238]: 1910 թ. արտագաղթողների թիվը հասավ 5508-ի, 1914 թ.՝ 7785-ի[239]:

Արտագաղթի ծավալներն այնքան ահագնացող էին, որ մասնավորապես դաշնակցական գործիչ Ս. Ակնունին 1910-1911 թթ. ընթացքում շրջեց ԱՄՆ գրեթե բոլոր հայկական համայնքներում՝ քարոզելով վերադառնալ հայրենիք, քանի որ «ամբողջ գյուղեր դատարկվում էին, բազմաթիվ վիլայեթների բնակչություն մնացել էր առանց տղամարդկանց: Ըստ Ակնունու ձևակերպման՝ «մնռնող գյուղերում» միայն ծերեր ու կանայք էին մնացել[240]: Հայրենիք վերադառնալու քարոզչությունը շարունակվեց 1911 թ. հետո ևս: Չնայած այս բոլոր ջանքերին՝ ԱՄՆ Արտագաղթի գլխավոր հանձնակատարի բերած վիճակագրության համաձայն՝ շատ քիչ հայեր վերադարձան հայրենիք, միայն 1911 թ. վերադարձողների թիվը 1910 թ. 447-ի փոխարեն աճեց՝ կազմելով 902, իսկ 1912 թ. կազմեց 670 հոգի[241]: Ավելին, վերադարձողների մեջ շատ էին բանվորները, տարիքավորները, բայց քիչ՝ բժիշկները, ինժեներները, որոշակի մասնագիտություն ունեցողները:

«Շուշան Ծուփաց» ձեռագիր հանդեսի 1912 թ. թիվ 2-ում բերված վիճակագրության համաձայն՝ 1900-1910 թթ. Խարբերդից

---

[237] «Ազգ», Պոսթոն, 31 օգոստոս, 1907 թ., էջ 2:
[238] The Armenians in Massachusetts, p. 28.
[239] Նույն տեղում:
[240] Mirak R. Torn Between Two Lands: Armenians in America, 1890 to World War I, Ca. 1983, p. 264.
[241] Mirak R., նշվ. աշխ., էջ 265:

Ամերիկա էր գաղթել 23719 մարդ[242]: Միայն 1913 թ. ընթացքում ԱՄՆ գաղթած 9355 հայերից ավելի քան 1300-ը մեկնել էր Խարբերդից[243]: Պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների համաձայն Խարբերդի նահանգից արտագաղթել էր 29410 հայ[244]:

Ամփոփելով ասվածը՝ փաստենք, որ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի բազմաթիվ բնակավայրերից հայ բնակչության արտահոսք էր նկատվում դեպի ավելի ապահով, կենտրոնական բնակավայրեր: Մյուս կողմից, XIX դարի վերջերից ակտիվացավ հայության արտագաղթն ԱՄՆ: Արտագաղթի պատճառներն էին սոցիալական անապահով վիճակը, սակավահողությունը, իսկ 1890-ականների կեսերից արդեն՝ համիդյան կոտորածները, դրանցից հետո տիրող վիճակը, շարունակվող բռնի կրոնափոխության քաղաքականությունը: Արտագաղթի կարևոր պատճառ էր նաև միսիոներական կազմակերպությունների Խարբերդում ծավալած գործունեությունը: Արձանագրենք, որ անուրանալի է օտարերկրացի միսիոներների դերը հայ բնակչությանը լուսավորելու, կրթական գործին զարկ տալու գործում: Այնուամենայնիվ, ինչպես իրավամբ փաստում է պատմաբան Է. Կոստանդյանը, միսիոներների «հիմնական առաքելությունը մնում էր պատրաստել բողոքական պատվելիներ՝ հոգևոր առաջնորդներ, իրենց դավանանքը տարածելու համար»[245]: Սրա վառ ապացույցը Եփրատ քոլեջի վարչական ժողովի ընդունած կանոնադրությունն էր, որի համաձայն՝ ուսուցչական մարմնին հրահանգվում էր քոլեջ ընդու-

---

[242] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 422:
[243] Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ նահանգների հայ գաղութի պատմությունը, Երևան, 2000, էջ 33:
[244] Ke'vorkian R., Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, 1992, p. 59.
[245] Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 55:

նել միայն այն դիմորդներին, ովքեր քրիստոնյա առաջնորդ լինելու ընդունակություն կցուցաբերեն: Ավելին, քոլեջի գլխավոր նպատակ էր սահմանվում «ամէն ճիւղին մէջ ուշիմ Քրիստոնեայ առաջնորդներ»-ի պատրաստումը[246]:

Արտագաղթի հետևանքով որոշ դրական փոփոխություններ եղան հայերի սոցիալ-տնտեսական կյանքում, աշխուժացավ նահանգի տնտեսական կյանքը, մյուս կողմից, արտագաղթի հետևանքով հայաթափ եղան փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող մի շարք բնակավայրեր, նվազեց մյուս բնակավայրերի հայ բնակիչների թվաքանակը:

[246] Յայտագիր Եփրատ Գոլէճի եւ իւր ճիւղերուն. 1919-1914, Խարբերդ, 1914, էջ 4:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Հայ բնակչության թվաքանակի խնդիրը, թերևս XIX դարի վերջերի և XX դարի սկզբների Արևմտյան Հայաստանի նահանգներին առնչվող հիմնախնդիրների մեջ ամենաբարդն է, քանի որ առավել հավաստի ու ամբողջական տվյալները բացակայում են: Խոսքը վերաբերում է ոչ միայն պաշտոնական տվյալներին, այլ նաև հայկական աղբյուրներին, որոնց ներկայացրած տվյալները հիմնականում վերաբերում են կենտրոնական բնակավայրերին՝ անտեսելով գյուղական փոքր բնակավայրերում ապրող հայությանը: Ինչ վերաբերում է պաշտոնական թուրքական տվյալներին, ապա դրանք միտում ունեն առավելապես նվազ ցույց տալ հայ բնակչության թիվը, հետևաբար մանրամասն չեն ներկայացնում հայ բնակչության թվաքանակը տարբեր գավառներում ու գավառակներում:

Օսմանյան կայսրության բնակչության համընդհանուր մարդահամար անց է կացվել 1831 թ., որը խիստ անհաջող փորձ էր. այստեղ Արևմտյան Հայաստանի մեծ մասի և Կիլիկիայի վերաբերյալ տվյալներ կամ գրեթե չկան, կամ էլ դրանք թերի են հաշվառված: 1844 թ. եվրոպացի մասնագետների մասնակցությամբ անցկացվեց մի նոր մարդահամար, որի տվյալներով կայսրության տարածքում ապրում էր 35350000 մարդ, այդ թվում՝ 2400000 հայ, որից 400000-ը՝ եվրոպական հատվածում, 2000000-ը՝ ասիական[247]: Սակայն հեղինակավոր մասնագետների վկայությամբ, 1844 թ. մարդահամարի տվյալները ևս չեն համարվում ստույգ և ամբողջական, քանի որ թուրք պաշտոնյաները այդ

---

[247] Саркисян Е., նշվ. աշխ., էջ 24-25:

տվյալները հավաքելիս տեղում դրանք չեն ճշգրտել և իրենց պարտականություններին անփութորեն են վերաբերվել:

Առանձին նահանգների հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալները արդեն վերաբերում են 19-րդ դարի վերջերին: Այսպես, 1890 թ. Թուրքիայի Արդարադատության նախարարության վիճակագրության համաձայն, Խարբերդի նահանգում հաշվվում էր 80611 հայ, 543 հույն, 2 հրեա, 300194 մուսուլման բնակիչ[248]: 1894-1895 թթ. նահանգային տարեգրքի համաձայն՝ Խարբերդի նահանգի հայ բնակիչների թվաքանակը հաշվվում էր 75416 մարդ, որից՝ 52407-ն ապրում էր Խարբերդի գավառում, 9933-ը՝ Մալաթիայում, 13076-ը՝ Խոզաթում[249]: 1914 թ. դրությամբ՝ օսմանյան պաշտոնական տվյալների համաձայն Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակը հաշվվում էր 87864 մարդ[250]: Պարզ է, որ այս տվյալները որևէ կապ չունեն իրականության հետ:

Անդրադառնանք հայ բնակչության թվաքանակն արտացոլող այլ աղբյուրներին: 1890 թ. վերաբերող տվյալ է ներկայացված անգլիացի ճանապարհորդ Լինչի աշխատության մեջ, որի համաձայն Խարբերդի գավառում հաշվվում էր՝ 85,000, Դերսիմի գավառում՝ 8,000 հայ բնակիչ[251]: Ինչպես նշում է հեղինակը, Խարբերդի վիճակագրությունը նրա համար պատրաստել է Դիարբեքիրում Անգլիայի հյուպատոս Բոյաջյանը, իսկ Դերսիմի վիճակագրությունը կազմված է տարբեր աղբյուրների հիման վրա: Մալաթիայի վերաբերյալ հեղինակը որևէ տվյալ չի ներկայացնում:

---

[248] Сборникь дипломатическихь документовь. Реформы вь Армении. 26 ноября 1912 года- 10 мая 1914 года, Петроградь, 1915, стр. 281.

[249] Krikorian M., նշվ. աշխ., էջ 71:

[250] Gurun K. The Myth of Innocence exposed, London. Nicosia. Istanbul, 1985, p. 98.

[251] Lynch H. Armenia.Travels and Studies, vol. 2 The Turkish provinces. N.Y., 1988, p. 413.

Ինչ վերաբերում է հայոց պատրիարքարանի տվյալներին, ապա դրանք ևս հակասական են: 1881 թ. Կ. Պոլսում ավստրիական դեսպանին՝ հայոց պատրիարքի տրամադրած տվյալների համաձայն՝ նոր վարչատարածքային սահմաններում, երբ նահանգից անջատվել էին Բալուն և Արղանայի գավառները, նահանգն ուներ 91114 թուրք, 78250 քուրդ, 107059 հայ բնակիչ, այդ թվում՝ առաքելական հայեր՝ 105256, կաթոլիկ՝ 284, բողոքական՝ 1519[252]: Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, պատրիարքարանի ներկայացրած 1882 թ. վիճակագրության համաձայն, Խարբերդի նահանգում ապրում էր 270000 հայ:

Կ.Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանի կողմից 1910 թ. հրատարակված «Հայոց եկեղեցի» ուսումնասիրությանը կցված վիճակագրական տվյալների համաձայն նահանգի հայ բնակչության ընդհանուր թվաքանակը 153200 էր, որից առաքելական՝ 142000, կաթոլիկ՝ 4500, բողոքական՝ 6700: Ըստ թեմական վիճակների՝ այն բաշխվում էր հետևյալ կերպ. Խարբերդի գավառ՝ 92700, Դերսիմի գավառ՝ 28500, Մալաթիայի գավառ՝ 32000[253]:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից 1912 թ. կազմված վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում ապրում էր 168000 հայ, 102000 թուրք, 75000 նստակյաց և 20000 թափառական քուրդ, 80000 զգլբաշ, 5000 ասորի բնակիչ[254]: Պատրիարքարանի նշված տվյալի մեջ ներառված չէր Մալաթիայի հարավային հատվածի հայ բնակչության թվաքանակը: Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Ապահովաց

---

252 Сборникъ дипломатическихъ документовъ, стр. 280-281.
253 Օրմանյան Մ.,Հայոց եկեղեցի, Կ. Պոլիս, 1910, էջ 262-268:
254«Արարատ», Էջմիածին, 1914, թիւ Թ, էջ 808-809:
տե՛ս նաև՝ Population Armenienne de la Turquie; Avant la Guerre, Statistiques étables par le Patriarcat Arménien de Constantinople, Paris, Impriemerie H : Turabian, 1920, p. 11.

հանձնաժողովի կողմից պատրաստված վիճակագրական ցուցակի տվյալների համաձայն՝ նահանգի հայ բնակչությունը կազմում էր 204000, որն ըստ գավառների բաշխվում էր հետևյալ կերպ. Խարբերդի գավառ՝ 128000, Մալաթիայի գավառ՝ 36000, Դերսիմի գավառ՝ 40000[255]: Պատրիարքարանի արդեն 1913-1914 թթ. վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում բնակվող հայերի թվաքանակը նշվում է 124289, որից Խարբերդի գավառում՝ 68877, Մալաթիայի գավառում՝ 38705, Դերսիմի գավառում՝ 16707 հայ[256]: 1913-1914 թթ. վիճակագրության 2 ցուցակների քննությունը ցույց է տալիս, որ Խարբերդի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակները թերի են և չեն ներկայացնում նահանգի հայ բնակչության իրական թվաքանակը: Մեկ այլ վիճակագրության համաձայն, որը տարբեր վիճակագրությունների, մասնավորապես Կիլիկիայի կաթողիկոսարանի դիվանի նյութերի համադրությամբ կազմել է Բ. Եղիայանը, Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակը հաշվվում էր 200150 հոգի[257]:

Գրքի այս մասում փորձել ենք առանձին ուսումնասիրության միջոցով, համադրելով տարբեր աղբյուրների տվյալներ, ըստ գավառների ու գավառակների տալ Խարբերդի նահանգում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեր դիտարկումներն ու հաշվումները:

ա) Խարբերդի գավառ

1) Խարբերդ գավառակ: Խարբերդի գավառը նահանգի գավառներից ամենահայաշատն էր, այն իր հերթին բաժանվում էր

---

[255] Թեոդիկ, «Ամենուն տարեցոյց», ԺԶ տարի, 1922, էջ 261:
[256] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[257] Եղիանան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 891:

Խարբերդ, Ակն, Արաբկիր, Կապան-Մադեն, Փոթուրկ գավառակների: Նախ անդրադառնանք Խարբերդի գավառակի հայության թվաքանակի խնդրին:

Խարբերդի գավառակն ընդգրկում էր Խարբերդի դաշտը, որն ինչպես XIX դարի վերջերին, այնպես էլ XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի գավառների շարքում առանձնանում էր հայաշատ բնակավայրերի քանակով: Թեև XIX դարի կեսերից սկսած և դարավերջին լայն թափ առած արտագաղթը, ջարդերը, բռնի իսլամացումն իրենց հետևանքներն ունեցան հայ բնակչության թվաքանակի, աճի վրա, «Ոսկեդաշտ» անվանված Խարբերդի հարթավայրի բազմաթիվ գյուղեր XX դարի սկզբին շարունակում էին զուտ հայաբնակ բնակավայրեր մնալ:

Ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերի, այնպես էլ Խարբերդի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները բազմազան են, հաճախ՝ նույնիսկ խիստ տարբեր միևնույն բնակավայրի վերաբերյալ: Ի մի բերենք գավառակի հայության թվաքանակի վերաբերյալ եղած ընդհանուր տվյալները՝ ներառելով նաև դեռևս XIX դարի վերջերի վերաբերյալ եղած տվյալները:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում պահպանվել է 1878 թ. ապրիլի 27-ով թվագրված Խարբերդի նահանգի վիճակագրությը, որի համաձայն Խարբերդի գավառակի երկու քաղաքներում և շուրջ 60 գյուղերում հաշվվում էր 42766 հայ[258]:

XIX դարի վերջին վերաբերող աղբյուրներից է Գ. Սրվանձտյանցի «Թորոս Աղբար» աշխատությունը, որտեղ հեղինակը Խարբերդի առաջնորդության ենթակա 61 գյուղերի ու Մեզրե

---

[258] ԳԱԹ, Թ. Ագատյանի ֆ., 44/ III:

քաղաքի հայ բնակչությունը հաշվում է 5250 տուն[259]: Նշենք, որ այս տեղեկությունը վերաբերում է 1880-1882 թթ., երբ հեղինակը շրջել է վերոնշյալ բնակավայրերում ու տեղեկություններ հավաքել: Մեկ այլ տեղ Գ. Սրվանձտյանցը Խարբերդի հովտի հայության թվաքանակը տալիս է 35676 շունչ[260]: Եթե համադրենք երկու տվյալները, կստացվի, որ հեղինակը գավառակի յուրաքանչյուր հայ տան շնչերի թիվը հասցնում է մինչև 7-ի, ինչը Խարբերդի գավառակի զուտ հայաբնակ և բարգավաճ գյուղերի համար նույնիսկ փոքր թիվ է: Պատվելի Էդվին Բլիսի վկայությամբ՝ տան անդամների թիվը Խարբերդում տատանվում էր 5-30, ըստ նրա, այս դեպքում հավանական միջինը կարելի է համարել 8-10 շունչը[261]: Հայ ընտանիքների բազմանդամ լինելու փաստն անվիճելի է, ինչը չի կարելի ասել թուրքերի ու քրդերի վերաբերյալ: Այստեղ կարևոր է գյուղական բնակչությանը քաղաքաբնակներից առանձնացնելը: Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը նշում է, որ «Թուրքիայում հայերի համար բազմանդամ ընտանիքը հողը չմասնատելու միջոց և անձնական ու գույքային անվտանգություն ապահովող եզակի հնարավորություններից էր: Ուստի քաղաքներում, որտեղ ազգային և սոցիալական ճնշումը համեմատաբար թույլ էր, բազմանդամ ընտանիքներ ունենալու ձգտումը մեծ չէր»[262]: Ա. Մելքոնյանն ավելացնում է, որ «եթե գյուղաբնակ հայ ընտանիքների անդամաթիվը համարենք 8-ը, ապա թուրքերինը պետք է լինի 6 կամ առավելագույնը՝ 7, իսկ քրդերինը՝ ավելի պակաս»[263]: Ինչ վերաբերում է քաղաքաբնակներին, ապա

---

[259] Սրուանձտեանց Գ. վ., Թորոս Աղբար, էջ 103-104:
[260] Սրվանձտյանց Գ. Վ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 455:
[261] Bliss. Rev. E., նշվ. աշխ., էջ 436:
[262] Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 110:
[263] Նույն տեղում, էջ 112:

այստեղ տան անդամների թիվն ավելի փոքր էր, ուստի որպես միջին ընդունենք 6-ը:

«Բնաշխարհիկ բառարանում» Ս. Էփրիկյանը հիշատակում է Խարբերդի վիճակին ենթակա 61 գյուղեր, Խարբերդ ու Մեզրե քաղաքները՝ ընդհանուր առմամբ 40210 հայությամբ[264]: Այստեղ հեղինակի բերած տվյալները հիմնականում համընկնում են Սրվանձտյանցի բերած թվերին, թեև դրանք ներկայացվում են որպես 1903-1904 թթ. տվյալներ:

Ի տարբերություն վերոնշյալ երկու աղբյուրների, Բալուի վիճակի առաջնորդական տեղապահ Պ. Նաթանյանի տվյալների համաձայն՝ Խարբերդի դաշտի գյուղերում 1878 թ. ապրում էր 55065 հայ, որոնց թիվը քաղաքում ապրող հայերի հետ կազմում էր 60000[265]: Հեղինակը նշում է, որ իր տվյալները հավաքված են խնամքով ու ճշգրտությամբ:

Այս շրջանին վերաբերող աղբյուրներից առանձնանում է Էրզրումում ռուսական հյուպատոս Ա. Կոլյուբակինի աշխատությունը, որի մի ամբողջ հատորը նվիրված է Խարբերդի գավառին: Ի թիվս այլ նյութերի ներկայացված են հեղինակի կողմից խնամքով հավաքագրված գավառի բնակչության էթնիկ կազմին վերաբերող վիճակագրական նյութեր: Կոլյուբակինը շեշտել է թուրքական պաշտոնական տվյալների ոչ բավարար և ոչ ճշգրիտ լինելու փաստը, ուստի փորձել է համադրել թուրքական պաշտոնական տվյալները (ներկայացված են 1884 թ. թուրքական մարդահամարի գավառի 19 նահիեներին վերաբերող տվյալները) իրենց կողմից հավաքագրված տվյալների հետ, որոնք վերաբերում են 1885-1887 թթ.: Կոլյուբակինը մեջբերում է Խարբերդի գավառակի հայ բնակչության քանակը, ըստ իրենց

---

[264] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. 2, էջ 163:
[265] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 129:

հաշվարկների, այն է՝ հայ առաքելականներ՝ 8482 տուն, որը կազմում է գավառակի բնակչության 35.9 տոկոսը, հայ բողոքականներ՝ 717 տուն (3 տոկոս), հայ կաթոլիկներ՝ 180 տուն (0.7 տոկոս), ընդամենը՝ 9379 տուն, 39.6 տոկոս քրիստոնյա: Հարկ է նշել, որ Կոլյուբակինը հայ առաքելականների թվաքանակի մեջ է ներառել նաև ասորիներին, որոնք կազմում էին 50 տուն: Հեղինակը հայ կաթոլիկների մեջ հաշվել է նաև սիրիացի կաթոլիկներին և այլ սեմիտների՝ այս կազայում մշտաբնակներին՝ 5-10 տուն: Քրիստոնյա բնակիչների մեջ Ա. Կոլյուբակինը չի հաշվարկել ամերիկացի միսիոներներին, որոնցից ոմանք համարվում էին կազայում մշտական բնակիչներ[266]: Եթե տան անդամների թիվը երկու քաղաքներում և գավառակի գյուղերում միջինը ընդունենք 7, Կոլյուբակինի տվյալներով գավառակում ապրում էր ավելի քան 60000 հայ: Ինչ վերաբերում է ասորիներին, ապա նրանք Խարբերդում մեծ թիվ չէին կազմում՝ ընդամենը 100 տուն՝ 750 բնակիչներով[267]: Խարբերդում ասորիները հայերեն էին խոսում: Ժամանակին հայերը նրանց էին հանձնել քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցին, որի շրջակայքում էր տարածված ասորիների թաղը: Ասորիներ ապրում էին նաև Մեզրեում, Շիրո, Բաշաղակ, այլ գյուղերում: Ասորիների հիմնական զբաղմունքը կտավագործությունն էր: Վ. Հայկի տվյալներով՝ քաղաքում նրանք կազմում էին մոտ 800 հոգի[268]:

Խարբերդի գավառակում, ըստ Կոլյուբակինի, ապրում էր նաև 6836 տուն, 28.9 տոկոս թուրք, 5914 տուն, 25.2 տոկոս քուրդ, 1369 տուն, 5.8 տոկոս կզլբաշ, ընդամենը՝ 14119 տուն, 59.9 տո-

---

[266] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 297:
[267] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 131:
[268] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 508:

կոս մահմեդական, նաև՝ 80 տուն հրեաներ, մոտ 100 տուն գնչուներ[269]:

Բերված տվյալներից երևում է, որ հայերը գավառակում մեծամասնություն էին կազմում, թեև որպես մուսուլման հաշվվողներն ավելին էին քան շուրջ 39 տոկոս կազմող հայերը: Այս տվյալների ամփոփումը ցույց է տալիս, որ հայության ամենափոքր թվաքանակը նշում է Սրվանձտյանցը, նրան մոտ, բայց մի փոքր ավել թիվ է հաշվվում 1878 թ. վիճակացույցում, ապա Նաթանյանի ու Կոլյուբակինի տվյալներն են, որ իրար շատ մոտ են:

Տարբեր են նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1908-1914 թթ. արված վիճակագրությունների տվյալները: Մաղաքիա արք. Օրմանյանի «Հայոց եկեղեցի» ուսումնասիրությանը կցված վիճակագրական տվյալների համաձայն՝ Խարբերդ, կապան Մաղեն, Փոթուրկե գավառակներում ապրում էր 61000 հայ[270]: Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուում ընդգրկված է գերմանացի միսիոներ Յ. Լեփսիուսի տվյալներով 1915 թ. տեղահանված կամ սպանված հայերի թիվն արտացոլող աղյուսակ, որի համաձայն՝ մասնավորապես Խարբերդի գավառակում ապրում էր 51000 հայ[271]: Պատրիարքարանի 1912 թ. տվյալն է արտացոլված Ապահովաց հանձնաժողովի կողմից Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ պատրաստված վիճակագրական ցուցակում, համաձայն որի՝ Խարբերդի գավառակում ապրում էր 65000 հայ[272]: Առավել մանրամասն՝ ըստ նահանգների, սանջակների, գյուղ առ գյուղ տրվում է պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրությունը,

---

[269] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 297-298:
[270] Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 267:
[271] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 472-473:
[272] «Ամենուն տարեցույց», էջ 261:

որի համաձայն Խարբերդի գավառակում ապրում էր ընդամենը 39788 հայ[273]:

Տարօրինակն այն է, որ իրարից այդպես տարբերվում են պատրիարքարանի 1912 թ. և 1913-1914 թթ. տվյալները: Պատրիարքարանի նախորդ տարիների ցուցակները տալիս են հայ ազգաբնակչության ավելի մեծ թվաքանակ, քան 1913-1914 թթ. ցուցակը, իսկ տվյալ ժամանակահատվածում հնարավոր չէր, որ հայ բնակչությունը նվազեր: Ավելին, 1908 թ. հետո Խարբերդի դաշտի գրեթե բոլոր բնակավայրերում նկատվում էր տնտեսական աճ, արտագաղթողներից շատերը վերադառնում էին հայրենիք, ներդրումներ կատարում, դառնում հողատերեր: Պատրիարքարանի ներկայացրած վերջին տվյալը չի համապատասխանում նաև մյուս աղբյուրների ներկայացրած տվյալներին: Ինչպես նույն ժամանակաշրջանին վերաբերող, այնպես էլ ավելի վաղ շրջանի առնչվող տեղեկությունների հետ այս տվյալների համեմատությունը ցույց է տալիս դրանց շատ դեպքերում թերի կամ արհեստականորեն պակասեցված լինելու փաստը: Գավառակի հայության թվաքանակին վերաբերող ընդհանուր տվյալներից առավելագույնը ներկայացված է Բ. Եղիայանի արդեն հիշատակված աշխատության մեջ: Հեղինակը, համադրելով տարբեր վիճակագրական տվյալներ, ներկայացնում է հայ բնակչության թվաքանակն ըստ իր հաշվարկների՝ մասնավորապես Խարբերդի գավառակում հաշվելով 73750 հայ[274]: Վերոնշյալ տվյալներն ամփոփված են աղյուսակ 1-ում:

---

[273] Ke'vorkian R, Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[274] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:

Աղյուսակ 1. Խարբերդ գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ընդհանուր տվյալներ

Ա. Նաթանյան, 1878 թ.	1878թ. վիճակագրց	Գ. Սրվանձտյանց 1880-1882 թթ.	Ա. Կոյուրքանի, 1885-1887 թթ.	Ս. Լիդիկյան, 1903-1904 թթ.	Մ. Օրմանյան	Յ. Ենիխուս, 1914 թ.	պատրիարք., 1912թ.	Ռ. Գաղդան, Ղ. Փարուհյան	Հ. Եղիսյան, 1914 թ.
60000	42766	35676	9459 տ.[275], 52025 շ.[276]	40210	61000	51000	65000	39788	73750

Անդրադառնանք այն աղբյուրներին, որոնք ավելի մանրամասն տվյալներ են ներկայացնում յուրաքանչյուր բնակավայրի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Վերլուծությունն ավելի ամբողջական ու ճշգրիտ կլինի, եթե համադրենք դեռևս XIX դարի վերջերի մեր ունեցած աղբյուրները արդեն XX դարասկզբի տվյալների հետ: Իսկ սա հնարավոր է այն դեպքում, երբ հստակեցնենք տվյալ գավառում, գավառակում եղած հայաբնակ բնակավայրերի թիվն ու դրանցում ապրող հայ ընտանիքների քանակը: Այս առումով կարևորվում են գրեթե բոլոր աղբյուրները, ինչպես պաշտոնական, այնպես էլ տարբեր հուշագրություններն ու հուշամատյանները, տարբեր կազմակերպությունների ու անհատների կազմած վիճակագրությունները: Թեև ուսումնասիրությունը կատարել ենք ոչ ըստ նահիենների, նշենք, որ Խարբերդի գավառակը 1880-ականների սկզբներին ուներ 20 նահիե, այդ թվում՝ Խարբերդ և Մեզրե քաղաքների տարածքը, Խոշ, Խոխ, Հաբուսի, Իջմե, Մուլլաքյոյ, Բարջանճ, Խուլափանք, Բաղնիք, Կյուլլի, Կյուրեք, Կար-օղլու, Ճեյխ-Օմար, Գեմե-

[275] Տուն:
[276] Ծուխ:

ջի, Թարթունլի, Հայրենքի կամ Իզոդլու, Աբու Թագիր, Խալ, Միրիդի, Ալփավուտ[277]:

Անդրադառնանք Խարբերդ, Մեզրե քաղաքների, Խարբերդի դաշտի գյուղերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալներին: Խարբերդի դաշտում, ըստ Նաթանյանի՝ կար 360 գյուղ, որոնցից հայեր ապրում էին 107 գյուղերում, ընդ որում՝ 62 գյուղերը զուտ հայաբնակ էին, 45-ում հայերը խառն ապրում էին մահմեդականների հետ[278]: XX դարի սկզբներին Խարբերդի դաշտի ավելի քան 300 գյուղերից հայեր ապրում էին ոչ ավել, քան 70 գյուղերում: Մասնավորապես, Մ. Ճիզմեճյանի կարծիքով՝ Խարբերդն ուներ 360 գյուղ ու ավան, որից հայաբնակ էր 65-ը. 15-ը՝ Խուզ Օվայում, 50-ը՝ Ուլ Օվայում[279]: Խարբերդի գավառակում, ըստ պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. տվյալների հաշվվում էր ընդամենը 57 հայաբնակ բնակավայր:

Նախ անդրադառնանք Խարբերդ ու Մեզրե քաղաքների հայերի թվաքանակի վերաբերյալ եղած հիշատակություններին:

Խարբերդը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից էր: Այս բնակավայրի մասին խոսելով՝ հույն պատմիչ Ստրաբոնը հիշատակում է Կարկաթիակերտ քաղաքը: Բյուզանդացիներն այն անվանել են Խարպոտն, արաբները՝ Խարբերդ, ասորիները՝ Քորդբերդ: Ըստ Էփրիկյանի՝ թերևս քաղաքի անվան ստուգաբանությունն է՝ Խար անունով բնակավայրի բերդ[280]: Մինչև XIX դարի 70-ական թթ. Խարբերդն էր տարածքի ամենախոշոր կենտրոնը, սակայն 1869 թ. ի վեր Մեզրեն դարձավ Մամուրեթ ուլ Ազիզ կուսակալության կենտրոնը, այստեղ

---

[277] Колюбакинь А., նշվ. աշխ., էջ 273-279:
[278] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 129:
[279] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 46:
[280] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 160:

կառուցվեցին կառավարական շենքեր, զորանոց, տարիների ընթացքում աճեց Մեզրեի բնակչությունը: Մեզրեի բնակիչների մեջ առանձնանում էին հատկապես ակնցի հայերը, որոնք մեծամասամբ ունեոր ընտանիքներից էին[281]: Բալուի վիճակի առաջնորդական տեղապահ Պ. Նաթանյանը գրում է, որ Մեզրեում 1878 թ. դրությամբ հայերը մեծամասնություն էին կազմում, նրանք գրեթե բոլորը ապրում էին բարեկեցիկ կյանքով[282]: Նշված հեղինակը, որը 1878 թ. անձամբ է շրջել Խարբերդի շատ բնակավայրերով, գրում է, որ Խարբերդ քաղաքը վերոնշյալ ժամանակահատվածում ուներ 705 տուն՝ 4935 հայ բնակիչ[283]: Ա. Կոլյուբակինը, որի տեղեկությունները վերաբերում են 1880-ականներին, երկու քաղաքների հայությանը հաշվում էր 3130 տուն[284]: Նրա կարծիքով տան շնչերի թիվը ողջ Ասիական Թուրքիայում հիմնականում կազմում էր 5 հոգի, երբեմն հասնում 6-7-ի, հազվադեպ՝ ավելի բարձր, ուստի հեղինակը ճիշտ է համարում տան շնչերի համար միջինը վերցնել 5.5-ը[285]: Եթե նրա տվյալներով հաշվենք շնչերի թիվը այս երկու քաղաքներում, ստացվում է, որ այստեղ 1880-ականների վերջերին ապրում էր 17215 հայ:

Ս. Էփրիկյանի տվյալների համաձայն՝ Խարբերդ քաղաքում ապրում էր 800 տուն հայ՝ 4422 շունչ, 150 տուն՝ ասորի, քաղաքի բնակչության մյուս մասը թուրք էր[286], Մեզրեն ուներ 1658 հայ բնակիչ[287]: Եթե Նաթանյանը յուրաքանչյուր տանը հաշվում է 7

---

281 Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, էջ 85:
282 Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 140:
283 Նույն տեղում, էջ 122:
284 Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 282:
285 Նույն տեղում, էջ 290:
286 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 161-163:
287 Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 161-163:

շունչ, ապա Էփրիկյանի տվյալների համաձայն՝ ստացվում է, որ մեկ տանը հաշվվում էր 5-6 շունչ:

Եթե ի մի բերենք վերոնշյալ տվյալները, կստացվի, որ 1880-1890-ական թթ. վերաբերող Խարբերդի ու Մեզրեի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալներից ամենամեծը ներկայացնում է Ա. Կոյուբակինը՝ 17215, ամենափոքրը՝ Ս. Էփրիկյանն ու նաև՝ Գ. Սրվանձտյանցը, որոնց ներկայացրած տվյալները երկու քաղաքների համար կազմում են շուրջ 6000-7000 հոգի:

1914 թ. դրությամբ Թեոդիկը Մեզրեում հաշվում է 4630, Խարբերդում՝ 4300 հայ[288]: Թեև Թեոդիկը ևս ներկայացնում է պատրիարքարանի տվյալները, այնուամենայնիվ, նրա և Ռ. Գևորգյանի ու Փ. Փաբուճյանի ներկայացրած տվյալների մեջ որոշ անհամապատասխանություններ կան: Մասնավորապես, Մեզրե քաղաքի հայության թվաքանակը համահեղինակները տալիս են 4580 անձ՝ 683 տուն, Խարբերդինը՝ 4248 անձ՝ 714 տուն[289]: Դեռևս դարավերջին վերաբերող տվյալների հետ համեմատությունը պարզ է դարձնում պատրիարքարանի՝ երկու քաղաքների համար ներկայացված տվյալների անկատարությունը: Ակնառու է, որ 1914 թ. դրությամբ անհամեմատ շատ հայեր էին ապրում նահանգի այս երկու կենտրոնական քաղաքներում: Քաղաքների հայ բնակչության աճին էին հանգեցրել ինչպես կո-

---

[288] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985, St. Vartan Press, էջ 218: Հարկ է նշել, որ թյուրիմացաբար, աշխատության վերջում տեղ գտած աղյուսակում Խարբերդ քաղաքի դիմաց նշված է 8930 անձ, մինչդեռ աշխատության Խարբերդ քաղաքին նվիրված հատվածում քաղաքի հայ բնակիչների քանակը հաշվվում է 4300: 8930 թիվը հանրագումարն էր երկու քաղաքներում բնակվող հայերի:
[289] Ke´vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 360:

տորածները, այնպես էլ և դարասկզբից քաղաքների տնտեսական վերելքը:

Երկու քաղաքների հայության թվաքանակի ավելի իրատեսական տվյալներ են ներկայացված այլ աղբյուրներում: Մասնավորապես, Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լ. Դևիսի կարծիքով երկու քաղաքներում ապրում էր նվազագույնը 3000 տուն կամ՝ 15-18000 հայ[290]: Վահե Հայկի կազմած հուշամատյանում Պետրոս Տեփոյանը, խոսելով Խարբերդ քաղաքի մասին, նշում է, որ այն ուներ 18000 - 20000 բնակիչ, որից հայեր էին մոտ 10000-ը: Նույն գրքում Մեզրեի մասին ասվում է, որ այն ուներ 16000 բնակիչ, կեսը՝ հայ, կեսը՝ թուրք[291]:

Մեկ այլ հեղինակի՝ Ս. Ծոցիկյանի տվյալներով 1914 թ. Խարբերդի ու Մեզրեի բնակչությունը հասնում էր 50000-ի, այդ թվում՝ թուրքեր, հայեր, հայախոս ասորիներ, հույներ, քրդեր, նաև փոքրաթիվ եվրոպացիներ ու ամերիկացիներ[292]: Հայերի թվաքանակն այս երկու քաղաքներում, Ս. Ծոցիկյանի տվյալների համաձայն, հասնում էր 20000-ի[293]: Փաստորեն, վերոնշյալ տվյալների համաձայն՝ երկու քաղաքներում 1915 թ. առաջ ապրում էր 15-20 հազար հայ բնակիչ: Այս ժամանակաշրջանին վերաբերող հայ բնակիչների ամենամեծ թվաքանակը տրված է 1924 թ. Հալեպում Համալսարբերդցիական միության Սիրիայի մասնաճյուղի կազմած վիճակագրության մեջ, որի համաձայն Մեզրեում 1915 թ. առաջ կար 20000, Խարբերդում՝ 15000 հայ[294]: Այստեղ հեղինակը ինչ-որ տեղ ուռճացրել է հայերի քանակը, մյուս կողմից պատրիարքարանի տվյալներն են խիստ նվազ

---

[290] Դեվիս Լ., նշվ. աշխ., էջ 265
[291] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 41- 42:
[292] Ծոցիկեան Ս., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 257:
[293] Նույն տեղում, էջ 260:
[294] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:

ցույց տալիս հայերի թվաքանակն այս երկու քաղաքներում: Խնդիրը նրանում է, որ պատրիարքարանի տվյալները հավանաբար շրջանցել են հայ կաթոլիկներին ու բողոքականներին, որոնց թիվը երկու քաղաքներում փոքր չէր: Հիշենք Ա. Կոլյուբակինի տվյալները, որ վերաբերում են 1885-1887 թթ. գավառակում Կոլյուբակինը հաշվում է 717 տուն հայ բողոքականներ և 180 տուն հայ կաթոլիկներ: Հայ կաթոլիկների ու բողոքականների թիվը 30 տարիների ընթացքում պետք է որ աճեր, նույնիսկ այն դեպքում, եթե ենթադրենք, որ արտագաղթողների մի մասը կազմում էին հենց բողոքականները, իսկ նրանք հիմնականում կենտրոնացած էին քաղաքներում, որտեղ եկեղեցիներ ու ժողովարաններ, դպրոցներ ու քոլեջներ ունեին: Այս բնակավայրերի հատմամբ, թերևս ընդունելի են նույն Կոլյուբակինի տվյալները, որոնց որոշակի աճի դեպքում կստանանք շուրջ 20000 հայ բնակիչ:

Այժմ անդրադարձ կատարենք գավառակի այն գյուղերի հայության թվական տվյալներին, որոնք հիշատակվել են տարբեր աղբյուրներում, ժամանակակիցների հուշերում:

Հուսեյնիկը գավառակի հայաշատ գյուղերից էր: Այն գտնվում էր երկու քաղաքների միջակա տարածքում՝ Խարբերդից հարավ: Հիմնադրվել է հավանաբար մ. թ. ա. V դարում: Ժամանակի ընթացքում այստեղ էին հաստատվել Վանից, Բալուից, Դերսիմից, այլ վայրերից եկած հայեր: 1845 թ. ի վեր Հուսեյնիկում հաստատվեցին Զարսանջակի կողմերից եկած հայեր[295]: Հուսեյնիկը հարուստ էր պտղատու այգիներով. հայերը զբաղվում էին այգեգործությամբ, արհեստներով, առևտրապահությամբ: Գյուղի թուրքերը հիմնականում այգեպաններ էին, կային և մոտ տասնյակի չափ հողատեր բեյեր: Արհեստներից զարգացած էր մոմագործությունը, կտավագործությունը: Նա-

[295] Հայկ Վ., նշվ. աշխ., 735:

հանգներում միակն էր Բարիկյան եղբայրների Հուսեյնիկում հիմնած երկաթաձուլարանը, որը սակայն երկար չգործեց. կառավարությունը, մեղադրելով եղբայրներին զենք արտադրելու մեջ, փակեց գործարանը, եղբայրները տեղափոխվեցին ԱՄՆ: Արհեստներից տարածված էր նաև անագագործությունը: Հուսեյնիկն ուներ եկեղեցի, աղջիկների ու տղաների համար դպրոցներ, այդ թվում և՝ ավետարանականների կողմից հիմնված:

1878 թ. վիճակագրությամբ Հուսեյնիկի բնակչության թվաքանակը հաշվվում է 3092, որից հայ՝ 2460 շունչ[296]: «Մասիս»-ի 1880 թ. սեպտեմբերի 30-ի, թ. 2748, թղթակցության մեջ խոսվում էր կառավարության սալնամեներում հայերի թիվը կրճատելու մասին, այն դեպքում, երբ միայն քաղաքում հաշվվում էր 5500 հայ, իսկ Հուսեյնիկում, որի նման Խարբերդի գավառակում կար ևս 15 գյուղ՝ 5000 հայ[297]: Հուսեյնիկին նվիրված գրքում հեղինակ Մ. Տերանյանը նշում է, որ 1895 թ. առաջ գյուղն ուներ 5000 բնակիչ, որից 3500-ը հայեր էին[298]: Վ. Հայկի հուշամատյանում ներկայացված հուսեյնիկցի Բ. Նուրիկյանի տվյալներով՝ գյուղն ուներ 4000 հայ բնակիչ[299]: Մեկ այլ աղբյուր հայության թվաքանակը գյուղում 1914 թ. դրությամբ նշում է 4500[300]: Հալեպում կազմված վիճակագրության համաձայն ևս 1914 թ. գյուղն ուներ 4500 հայ բնակիչ[301]: Այս դեպքում պատրիարքարանի տվյալներն ավել են՝ 750 տուն՝ 6090 շունչ[302]: Թեոդիկի բերած թվերի տարբերությունն աննշան է՝ 6100: 1914 թ. դրությամբ

---

[296] ԳԱԹ, Թ. Ագատյանի ֆ., 44/ III:
[297] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 301:
[298] Տերանեան Մ., նշվ. աշխ., էջ 8:
[299] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 733:
[300] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 788, թ. 22:
[301] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:
[302] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 362:

գյուղի հայ բնակչության համար առավել իրատեսական թիվ է պատրիարքարանի թիվը, որն անցնում էր 6000-ից, քանի որ այլ հիշատակություններ ևս կան, որտեղ մասնավորապես նշվում էր, որ տեղահանված հուսեյնիկցիների թիվն անցնում էր 6000-ից: Այս դեպքում շնչերի ու տների թիվն էլ է համընկնում՝ հաշվվելով տանը միջինը 8 շունչ:

Մեզրեին շատ մոտ, քաղաքից հարավ - արևելք էր տեղակայված Մորենիկը: Տեսակետ կա, որ Մորենիկի հիմնադիրները ներկարարությամբ զբաղվող (մոռ-ներկ) ատրիներ են եղել: 1878 թ. վիճակագրությամբ Մորենիկի բնակչության թվաքանակը հաշվվում է 832 անձ, որից 811-ը՝ հայ[303]: Գ. Սրվանձտյանցը գյուղի տների քանակը տալիս է 97[304], Էփրիկյանը նշում է շնչերի քանակը՝ 818[305]: Մորենիկցի Լ. Կճիկյանի տեղեկությունների համաձայն՝ 1915 թ. սկզբներին գյուղն ուներ 115 տուն բնակչություն, որից թուրք էին միայն 3 տունը, հայերը կազմում էին 600 շունչ[306]: Պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրության տվյալներով գյուղն ուներ 127 տուն՝ 660 շունչ հայ բնակիչ[307]: Մինչդեռ Հալեպում կազմված վիճակագրությունը հայ բնակիչների քանակը տալիս է 1500[308]: Եթե պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալները ընդունենք որպես հավաստի տեղեկություն, կստացվի, որ գյուղի հայ բնակչությունը ոչ թե աճել էր կամ մնացել նույնը, այլ նվազել, ինչն անհնար էր այդ տարիներին, երբ Խարբերդի դաշտի բոլոր գյուղերում որոշակի

---

[303] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III, 12:
[304] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 103:
[305] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[306] Կճիկեան-Առաքելեան Լ., Մօրենիկ եւ իր սեւ տարին, Տպարան կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 17:
[307] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 367:
[308] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:

տնտեսական աշխուժություն էր տիրում: Ուստի, հարկ է նշել, որ գյուղը ջարդերից առաջ պետք է ունենար առնվազն 1000 հայ բնակիչ: Ինչպես այս, այնպես էլ հիմնականում մյուս գյուղերի դեպքում առավել ընդունելի ենք համարում պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրության տված հայ տների և ոչ շնչերի քանակը: Տների քանակը բազմապատկելով տան անդամների քանակով, ինչպես նշել ենք, գյուղերի համար միջինը հաշվում ենք 8-ը, ստանում ենք տվյալ բնակավայրի հայության առավել հավանական թվաքանակը: Մորենիկի դեպքում հայերի թվաքանակը լինում է 1016:

Մորենիկին շատ մոտ էր Քեսրիկը, որը Խարբերդի դաշտի հայաշատ ու բարգավաճ գյուղերից էր, ուներ ընդարձակ մշակելի հողատարածքներ: 1878 թ. վիճակացույցում գյուղի բնակչությունը տրված է 3281, որից հայ էին 2511-ը, մյուսները՝ թուրք[309]: Գ. Սրվանձտյանցը գյուղի հայ բնակչության տների քանակը հաշվում է 314[310], 1888-1890 թթ. սալնամենների համաձայն՝ Քեսրիկն ուներ 512 տուն բնակիչ[311]: Էփրիկյանը դարասկզբի համար գյուղի հայերի թվաքանակը նշում է 2345 շունչ[312]: Վ. Հայկի կազմած հուշամատյանի Քեսրիկին հատկացված մասում նշվում է, որ 1914 թ. դրությամբ գյուղն ուներ արդեն 400 տուն բնակիչ, որից հայ էին 300-ից ավելին[313]: Պատրիարքարանի տվյալները հետևյալն են՝ 380 տուն, 2280 շունչ[314]: Համախարբերդցիական միության տվյալներով 1915 թ. առաջ Քեսրիկում ապրում էր

---

[309] ԳԱԹ, Թ. Ագայանի ֆ., 44/ III:
[310] Սրուանձտնանց Գ., Թորոս Աղբար, էջ 103:
[311] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 72:
[312] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[313] Վահէ Հ., նշվ. աշխ., էջ 880:
[314] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 367:

4600 հայ[315]: Այս գյուղի օրինակը ևս խոսում է պատրիարքարանի տվյալների՝ իրականությունից հեռու լինելու փաստի մասին. եթե ընդունենք, որ պատրիարքարանի ցուցակում տների քանակը ճիշտ է՝ 380, ապա ստացվում է, որ շնչերի քանակը հաշվվում է 6 յուրաքանչյուր տան համար, իսկ դա հայաշատ գյուղական բնակավայրի ավանդական ընտանիքի համար փոքր թիվ է: Մյուս տվյալները ևս խոսում են այն մասին, որ գյուղն ունեցել է ավելի քան 3000 հայ բնակիչ: Կրկին ընդունենք որպես ճշմարտացի պատրիարքարանի ներկայացրած տների քանակը, այն բազմապատկենք 8-ով, ստանում ենք՝ 3040 հայ բնակիչ:

Բարջանճը Խարբերդի գավառակի հայաբնակ գյուղերից էր, այն երկու քաղաքներից հարավ էր ընկած, հարևանությամբ Երդմնեկ, Թլկատին գյուղերն էին: Գ. Սրվանձտյանցի վիճակագրության համաձայն՝ 1879-1880 թթ. գյուղն ուներ 220 տուն, Էփրիկյանի տվյալներով՝ 1267 հայ բնակիչ[316]: 1878 թ. ապրիլի 27-ով թվագրված Խարբերդի դաշտի գյուղերի վիճակացույցի համաձայն Բարջանճում ապրում էր 2325 մարդ, որից 1319-ը հայեր էին[317]: Պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների համաձայն՝ Բարջանճ գյուղում ապրում էր 180 տուն՝ 681 հայ[318]: Այստեղ մեծ անհամապատասխանություն կա յուրաքանչյուր տան շնչերի քանակի միջև. յուրաքանչյուր տանը հաշվարկվում է մինչև 4 անձ, ինչը նման գյուղի համար չափազանց փոքր թիվ է: Համախարբերդցիական Միության Սիրիայի շրջանի կենտրոնական վարչության կողմից 1924 թ. Հալեպում կազմված վիճակագրության համաձայն՝ Բարջանճում տնդարհանությունից

---

[315] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:
[316] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[317] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III:
[318] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 369:

առաջ կար 1000 հայ բնակիչ[319]: Նույն գրքի Բարջանճին նվիրված հատվածում գյուղի հայ տների թիվը նշվում է 200[320]: Բարջանճի հուշամատյանում 1890-1915 թթ. հիշատակված 200 տների հայ բնակչությունը հաշվվում է 2000 հոգի[321]: Փաստորեն, բոլոր աղբյուրների տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ տների քանակի առումով դրանք իրար մոտ թվեր են ներկայացնում, հետևաբար եզրակացնում ենք, որ գյուղը 1915 թ. առաջ վստահաբար ուներ ոչ պակաս, քան 180 տուն հայություն: Ինչ վերաբերում է շնչերի քանակին, ապա այս գյուղի ընտանիքները նահապետական էին, 1890-ականներին հողագործների ընտանիքներում շնչերի քանակը տատանվում էր 10-70, արհեստավորներինը՝ 5-10-ի միջակայքում[322]: Ընդունելով պատրիարքարանի տված տների քանակը և յուրաքանչյուր տան շնչերի քանակը հաշվելով 8, կստանանք, որ 1915 թ. առաջ գյուղն ուներ շուրջ 1440 հայ բնակիչ:

Բազմաշենը գտնվում էր Խարբերդ ու Մեզրե քաղաքներից հարավ-արևմուտք: 1878 թ. վիճակագույցի համաձայն գյուղն ուներ 1721 հայ բնակիչ[323]: Սրվանձտյանցը հայ տների քանակը հաշվում է 210, Էփրիկյանը շնչերի քանակը՝ 1582: Բազմաշենին նվիրված ընդարձակ հուշամատյանում հիշատակվում է գյուղից տեղահանվածների թիվը՝ 6000 հոգի[324]: Պատրիարքարանի տվյալների համաձայն՝ գյուղն ուներ 320 տուն հայություն՝ 1450 շնչով[325]: Այս դեպքում ևս շնչերի թիվը չափազանց փոքր է՝ միջի-

---

[319] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:
[320] Նույն տեղում, էջ 893:
[321] Dzeron M., Village of Parchanj: General history /1600-1937/, Fresno, 2002, p. 22.
[322] Նույն տեղում, էջ 100:
[323] ԳԱԹ, Թ. Ագաթոնի ֆ., 44/ III:
[324] Պողոսեան Ա., Բազմաշէնի ընդարձակ պատմութիւնը իր հիմնարկութենէն մինչեւ վերջին օրերը, տպ. Պայքար, Պոստոն, 1930, էջ 209:
[325] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 371:

նը 4.53: Ավելին, տների քանակի մեջ էլ մեծ անհամապատասխանություն կա Վահե Հայկի բերած տվյալների հետ, որը զուտ հայաբնակ այս գյուղի տների ու շնչերի թիվը համապատասխանաբար տալիս է՝ 460-500 և 3500[326]: Մինչդեռ սա այս գյուղի համար բերված տվյալներից առավել մեծը չէ. Հալեպի 1924 թ. վիճակագրությունը հայերի թվաքանակը հաշվում է 4700 հոգի[327]: Այս դեպքում առավել ընդունելի են Վահե Հայկի տվյալները, հետևաբար, Բազմաշենում 1914 թ. դրությամբ ապրում էր ոչ պակաս քան 3500 հայ բնակիչ:

Խարբերդի գավառակի հայաշատ գյուղերից էր նաև Հաբուսին, որն ընկած էր Խարբերդ քաղաքից հյուսիս: Հաբուսին թեև զուտ հայաբնակ էր, նրա հողերի 50 տոկոսը թուրք աղաներին էր պատկանում, բնակիչները զբաղվում էին հողագործությամբ ու արհեստներով[328]: 1890-ականների վերջի տվյալներով գյուղի հայ բնակչության թվաքանակը հասնում էր 3000-ի[329]: Պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1913-1914 թթ. այստեղ ապրում էր 180 տուն՝ 1200 հայ[330]: Այս տվյալները գրեթե չեն տարբերվում Սրվանձտյանցի ու Էփրիկյանի տվյալներից, այն է, համապատասխանաբար՝ 180 տուն[331] և 1100 շունչ[332]: Ա. Տոնիկյանը բերում է 1914 թ. համար այս տվյալից բավական տարբեր թիվ՝ 300 տուն՝ 4500 շունչ[333]: Այս տվյալի համաձայն յուրաքանչյուր ընտանիք բաղկացած էր 15 շնչից: Մեկ այլ աղբյուրի համաձայն

---

[326] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 837:
[327] Նույն տեղում, էջ 1490:
[328] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 936-937:
[329] Ghazarian V., A Village Remembered: The Armenians of Habousi, Waltham, MA, 1997, p. 11.
[330] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 368:
[331] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 104:
[332] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[333] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 937:

մինչև 1915 թ. Հաբուսին ուներ 250-300 ընտանիք: Հեղինակն ավելացնում է, որ Հաբուսիի «ընտանիքները նահապետական էին, կը բաղկանային 25-30 անդամներէ՝ իրենց տան նահապետով»[334]: Մյուս կողմից, ակնհայտ է պատրիարքարանի տվյալների անհամապատասխանությունը մյուս աղբյուրների տվյալների հետ: Հալեպում կազմված վիճակագրության համաձայն՝ գյուղն ուներ 3000 հայ բնակիչ[335], ինչն, ըստ մեզ, իրականությանն առավել մոտ տվյալն է:

Քեորբեն ևս հայաշատ և զուտ հայաբնակ գյուղերից էր: Գյուղացիները հիմնականում զբաղվում էին հողագործությամբ: Բնակավայրը գտնվում էր Խարբերդից հյուսիս-արևմուտք: Հուշամատյանների թվում առանձնահատուկ է «Պատմութիւն Քօսփէ կամ Քէօրբէ գիւղին» անտիպ աշխատանքը, որի հեղինակ քեորբեցի Հ. Ճապուհյանը հուշագրության վերջում կցել է գյուղի ընտանիքների ցանկը՝ անուն առ անուն նշելով յուրաքանչյուր տան անդամներին: Հեղինակը Քեորբեի հայ բնակչության թիվը հաշվում է 127 տուն՝ 731 շունչ[336]: Նույն հուշագրության մեկ այլ մասում նշվում է, որ գյուղն ունեցել է 170-180 տուն զուտ հայկական բնակչություն՝ 4682 անձերով[337]: Իրարից չափազանց տարբերվող տվյալներ են, ուստի դժվար է հակվել դրանցից մեկին կամ մյուսին: Ինչ վերաբերում է դեռևս XIX դարավերջի տվյալներին, ապա, 1878 թ. վիճակագրությունում գյուղը հիշատակվում է որպես զուտ հայաբնակ, 1255 շունչ բնակիչ ունեցող բնակավայր[338]: Գ. Արվանձտյանցը գյուղի հայ տների քանակը նշում է

---

[334] Անթոյենան Ս., Ինքնակերտումի ճամբով, «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2006, էջ 7:
[335] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:
[336] Ճապուհեան Յ., նշվ. աշխ., էջ 145-189:
[337] Նույն տեղում, էջ 47-48:
[338] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III:

175[339], Ս. Էփրիկյանի մոտ գյուղի հայությունը հաշվվում է 1055 շունչ[340]: Եթե ընդունենք, որ 1878 թ. տվյալը մոտ է իրականությունը, նույն տրամաբանությամբ հավանական է թվում նաև Էփրիկյանի՝ դարավերջի համար տրված տվյալը, ինչը 20 տարիների ընթացքում պակասել էր: Այս տվյալների համեմատ 731 շունչ բնակչությունը 1915 թ. դրությամբ չափազանց պակաս է թվում: Ավելին, պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներով Քեորքեն ուներ ընդամենը 102 տուն, 570 շունչ հայ բնակիչ[341], Համախարբերդցիական միության Հալեպում կազմած ցուցակի համաձայն՝ 1000 հայ բնակիչ[342]: Վահե Հայկի հուշամատյանի Քեորքեին նվիրված հատվածում հեղինակը ենթադրում է, որ չնայած կոտորածներին ու գյուղից արձանագրված արտագաղթին, Քեորքեի հայությունը վերջին տարիներին պետք է աճեր և կազմեր շուրջ 1500-1800 անձ[343]: Հաշվի առնելով հայության թվաքանակի փոփոխման բոլոր միտումները, որ արձանագրվեցին 1880-1910 թթ., գյուղի հայերի մոտավոր առավել հավանական քանակը 1915 թ. դրությամբ, պետք է գոնե կազմեր նույնքան, որքան դարավերջին էր՝ շուրջ 1000 շունչ[344]:

Հայկական հնագույն բնակատեղի էր Դատեմը, որը գտնվում էր Խարբերդից հարավ, հարևանությամբ Երդմենկ, Թլկատին գյուղերն էին: 1878 թ. վիճակագույցի համաձայն՝ գյուղն ուներ 1450 հայ, 46 թուրք բնակիչ[345]: Էփրիկյանի տվյալներով գյուղն ուներ 200 տուն՝ 1452 շունչ հայ բնակիչ[346]: Համա-

---

339 Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 104:
340 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
341 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 372;
342 Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:
343 Նույն տեղում, էջ 943:
344 1914 թ. վերաբերող տվյալների միջինը ևս կազմում է շուրջ 1000 անձ:
345 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III:
346 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:

ձայն Կ. Պոլսում տպագրվող «Ժամանակ» թերթի հաղորդագրության՝ 1884 թ. Դատեմն ուներ 200 տուն հայ բնակիչ, 1913թ.՝ 300 տուն բնակիչ, որից 7-8 տունը՝ թուրք[347]: 1915 թ. տվյալներով Դատեմն ուներ ավելի քան 300 տուն՝ մոտ 2000 բնակիչներով, որից թուրք էին միայն 9 տունը՝ 35 հոգին[348]: Նույն գրքի մեկ այլ հատվածում Դատեմի բնակչության թիվը հաշվվում է 3000[349]: Նույն 300 տուն՝ 3000 շունչ թիվն է հիշատակում նաև Վահե Հայկը գյուղի բնակչության ընդհանուր քանակի վերաբերյալ, որից միայն 15 տունն էր թուրք[350]: Տարօրինակ է, բայց Հալեպի վիճակագրությունը Դատեմի հայության քանակը տալիս է 1320 շունչ[351]: Գրեթե նույն՝ 1300 շունչն է հիշատակված պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակում[352]: Միանշանակ է, որ գյուղի բնակչությունը, ինչպես Խարբերդի դաշտի հայաշատ մյուս գյուղերի հայությունը, չնայած արդեն իսկ քննարկված ժողովրդագրական փոփոխությունների միտումներին, չէր կորցրել միանշանակ մնար նույնը, ինչ շուրջ 30 տարի առաջ էր: Գյուղը շատ մնասներ ունեցավ կոտորածներից, առկա էր արտագաղթ դեպի ԱՄՆ, բայց XIX դարասկզբին գյուղը վերականգնվեց, այն շարունակում էր մնալ որպես զուտ հայաբնակ գյուղ, ուստի անխուսափելի էր նաև բնակչության աճը: Հետևաբար կարելի է ենթադրել, որ 1915 թ. դրությամբ գյուղի հայերի թվաքանակի վերաբերյալ ավելի հավատի է Գ. Մխիթարյանի բերած տվյալը: Ընդունելով գյուղի հայերի տների քանակը 275՝

---

[347] Մխիթարեան Գ., Մեր գիւղը Դատեմ, Պոսթրն, 1958, էջ 17:
[348] Նույն տեղում, էջ 100:
[349] Մխիթարեան Գ., Մեր գիւղը Դատեմ, էջ 171:
[350] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 908:
[351] Նույն տեղում, էջ 1490:
[352] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 371:

այն բազմապատկենք շնչերի քանակով, ինչը ընդունում ենք 8, Դատեմի հայերի թվաքանակը կստանանք 2200:

Խուլագյուղը զուտ հայաբնակ գյուղ էր, այստեղ էր հայտնի ուխտավայր Խուլավանքը: Այս բնակավայրն ու վանքը գտնվում էին Խարբերդից ու Մեզրեից արևմուտք՝ Բազամաշեն, Սուրսուրի գյուղերի հարևանությամբ: 1878 թ. վիճակագույցի համաձայն գյուղն ուներ 1302 հայ բնակիչ[353]: Սրվանձտյանցը գյուղի հայ տների քանակը տալիս է 200[354], Էփրիկյանը շնչերի քանակը՝ 1346[355]: Պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներով՝ գյուղն ուներ 220 տուն՝ 1278 շունչ հայություն[356]: Վահե Հայկի հուշամատյանում տեղ գտած Հ. Թումաճանյանի նյութի համաձայն՝ Խուլագյուղն ուներ մոտ 250 տուն, 1200-ից ավել բնակիչ[357]: Համախարբերդցիական միության տվյալներով՝ տեղահանությունից առաջ գյուղն ուներ 1800 հայ բնակիչ[358]: Մեր կարծիքով՝ պատրիարքարանի տվյալը, տների քանակի դարավերջի տվյալների հետ համեմատ, մոտ է իրականությանը, պարզապես շնչերի քանակն է փոքր ցույց տրված: Շնչերի քանակը 8 հաշվելով՝ ստանում ենք 1760 շունչ, ինչը մոտ է նաև Հալեպի վիճակագրության տվյալին և առավել իրատեսական է:

Թլկատին կամ Խույլու գյուղը ևս դաշտի հայաբնակ գյուղերից էր: Այն գտնվում էր Խարբերդից հարավ, Դատեմ գյուղի հարևանությամբ: Գյուղում հնուց ի վեր պահպանվել էին հորեր, որոնց մի մասը նախատեսված էր ցորեն ամբարելու համար: Թլկատինի հայերը հիմնականում զբաղվում էին արհեստներով (հյուսնություն, որմնադրություն, այլ արհեստներ) և այգեգոր-

---

[353] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III:
[354] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 104:
[355] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[356] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 369:
[357] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 855:
[358] Նույն տեղում, էջ 1490:

ծությամբ: Գյուղում գործում էին լուսավորչականների, բողոքականների ու կաթոլիկների դպրոցներ: 1878 թ. վիճակագրության համաձայն՝ Թլկատինն ուներ 2011 հայ, 39 թուրք բնակիչ[359]: Գյուղի հայ տների քանակը Սրվանձտյանցը տալիս է 279[360], շնչերի քանակը Էփրիկյանը հաշվում է 2066[361]: Վ. Հայկի հուշամատյանում հրատարակված նյութի համաձայն՝ 1895 թ. առաջ գյուղն ուներ 300 տուն, 2000 շունչ հայ բնակիչ, նաև 15 տուն թուրք[362]: Հայոց ցեղասպանությունը վերապրած թլկատինցի Գրիգոր Եղոյանն իր հուշագրության մեջ նշում է, որ գյուղն ուներ 300 տուն բնակիչ, որից թուրք էին 10 տունը, իսկ հայերի շնչերի թվաքանակը, ըստ վերապրածի կազմում էր 2000-ից ավել[363]: Պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներով՝ գյուղն ուներ 240 տուն, 1201 շունչ հայ, նաև 118 թուրք բնակիչ[364]: Համախարբերդցիական միության տվյալներով՝ տեղահանությունից առաջ գյուղն ուներ 3000 հայ բնակիչ[365]: Այս տվյալների մեջ շնչերի քանակով ամենահավանականը, թերևս, Վ.Հայկի տվյալն է՝ 2000 շունչ, սակայն տների քանակը չի համապատասխանում շնչերի քանակին՝ միջինը 6.6: Տների քանակով առավել հավանական է պատրիարքարանի տվյալը՝ 240 տուն: Շնչերի քանակը միջինը հաշվելով 8՝ կստանանք այս գյուղում հայերի թվաքանակն արտացոլող իրականությանն ավելի մոտ տվյալ՝ 1920:

---

[359] ԳԱԹ, Թ. Ագատյանի ֆ., 44/ III:
[360] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 104:
[361] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[362] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 794:
[363] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, էջ 322:
[364] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 369:
[365] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1490:

Խարբերդի դաշտի մյուս գյուղերի վերաբերյալ տվյալներն այսքան բազմազան ու շատ չեն, ուստի այդ գյուղերի վերաբերյալ եղած տվյալները ներկայացնում ենք միայն աղյուսակի միջոցով: Այս գյուղերի վերաբերյալ առավել հարուստ տեղեկություններ կան Վ. Հայկի կազմած հուշամատյանում: Օգտվել ենք նաև պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներից: Ավելի վաղ՝ 19-րդ դարավերջի վերաբերյալ տվյալներ կան արդեն իսկ հիշատակված Սրվանձտյանցի և Էփրիկյանի աշխատանքներում: Վերջին այունյակում փորձենք տալ բերված տվյալների ամենահավանական միջինը, ներկայացնելով 1914-1915 թթ. դրությամբ հայ բնակչության թվաքանակը այդ բնակավայրերում: Հայերի թվաքանակն Ախոռ, Աղ Մեզիրե, Արոսիկ, Արփավուտ, Գայլու, Գեղվանք, Գոմք, Գոնագ Ալմազ, Եղեգի, Երդմնեկ, Թլանցիկ, Խառուկ, Ծովք, Կարմրի, Հարսեկ, Հնձոր, Մուռե, Շամուշի, Շենթիլ, Զորգեղ, Սարը Գամիշ, Վարդաթիլ, Վերին Մեզրե, Մունզուր Օղլու բնակավայրերի դեպքում հաշվել ենք նույն տրամաբանությամբ՝ հիմք ընդունելով պատրիարքարանի ներկայացրած տների թիվը՝ պարզապես շնչերի թվաքանակը հաշվելով յուրաքանչյուր տան համար 8 և ոչ դրանից պակաս: Սա թերևս ամենաճիշտ մոտեցումն է, քանի որ աղբյուրները երբեմն խիստ հակասական տվյալներ են ներկայացնում:

Ինչ վերաբերում է պատրիարքարանի տվյալներին, ապա մի քանի գյուղերի օրինակից պարզ է դառնում, որ տների քանակը շատ հաճախ ավել է ներկայացված մյուս աղբյուրներից, սակայն շնչերի քանակն անհամեմատ պակաս է: Այստեղ մի քանի պատճառ կարող է լինել. նախ, հայտնի է, որ հայերը հաճախ իրենք էին պակասեցնում իրենց տան անդամների թվաքանակը, խուսափելով ավել հարկեր վճարելուց, բացի այդ Կ. Պոլսի պատրիարքարանի վիճակացույցերը կազմվում էին ծխերի, թեմերի միջոցով, որտեղ գրանցվում էին Հայ առաքելական եկեղեցու

հետևորդները և ոչ հայ կաթոլիկներն ու բողոքականները, որոնց թվաքանակը տվյալ ժամանակահատվածում և տվյալ տարածքներում փոքրաթիվ չէր: Ավելին, պատրիարքարանի տվյալները շրջանցել են մի շարք գյուղեր, որտեղ դեռևս դարավերջին հայ բնակչությունն աննշան թվաքանակ էր կազմում, սակայն դարասկզբին և նույն 1915 թ. դրությամբ այս գյուղերում դեռևս հայեր կային: Ուստի այդ գյուղերի համար ընդունել ենք այս կամ այն աղբյուրում արձանագրված տվյալը՝ հաշվի առնելով նաև ժամանակի ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները: Եղած բոլոր տվյալներն ամփոփված են աղյուսակներում, ուստի չենք անդրադառնա նրանցից յուրաքանչյուրին: Նշենք միայն մի քանի առանձնահատկություններ, որ նկատել ենք աղբյուրների համեմատությունից:

Աղնձիքը Թեոդիկի մոտ հիշատակվում է Աղնսի տառադարձությամբ, նույն կերպ է արձանագրված գյուղի անվանումը նաև 1878 թ. վիճակագրությունում: Տների քանակն ընդունենք 70, ստացվում է գյուղն ուներ 560 հայ բնակիչ:

Այվոսը ընկած էր Խարբերդից հյուսիս: Բնակավայրի հայերի թվաքանակը Թեոդիկը նշում է 28 տուն, Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը՝ 250 շունչ: Ընդունել ենք վերջին տվյալը: Զարդարիչ գյուղի վերաբերյալ տվյալները ևս քիչ են. պատրիարքարանի տվյալը՝ 120 շունչ, Թեոդիկի ներկայացրած տների քանակի հետ համեմատելով, ստացվում է տան շնչերի քանակը 9.2: Ավելին, Վ. Հայկի տվյալներով գյուղի հայերի թվաքանակը 150 էր, տների թիվը՝ 40: Այս դեպքում ևս հավանական համարենք պատրիարքարանի տվյալը, որը երկու այլ տվյալների միջինն է կազմում:

Վերի Ճեյլս Հաճի գյուղն, ըստ Վահե Հայկի՝ ուներ 100 տուն բնակիչ, կեսը՝ հայ, կեսը՝ թուրք: 1850-ականներին ձևավորվել էր

Վարի Ծեյխ Հաճին, որը 1915 թ. ուներ 50 տուն հայ բնակիչ[366]: Երկու գյուղերում հայերի տների քանակը, ըստ Վահե Հայկի ստացվում է 100: Ծեյխ Հաճիի հայերը, ինչպես մյուս գյուղերի դեպքում, զբաղվում էին արհեստներով, այգեգործությամբ, նաև արտադրում էին բարձր որակի և ամենաշատ քանակությամբ մեղրը Խարբերդում: Այս գյուղի դեպքում, թերևս պատրիարքարանի տրամադրած շնչերի թվաքանակը ևս մոտ է իրականությանը: Այսպես, Հողե, Սարայ գյուղերի դեպքում ևս ընդունել ենք պատրիարքարանի ցուցակում նշված հայերի շնչերի թվաքանակը:

Թեոդիկի տվյալներով Այու Պաղի գյուղում հայություն չկար, քանի որ նա նշել է գյուղը առանց հայերի տների քանակի, սակայն փաստ է, որ պատրիարքարանի ցուցակներից կարող էին վրիպել գյուղեր, որոնք ունեին աննշան թվով հայություն, թերևս սա այդ դեպքերից է, ընդունենք այս դեպքում Վ. Հայկի տվյալը՝ 20-25 տուն, 200 շունչ:

Թեոդիկի մոտ՝ Էլեմիշ, Ռ. Գևորգյանի և Վ. Հայկի ցուցակներում՝ Էլեմլիկ տառադարձությամբ նշված գյուղը, թերևս Գ. Սրվանձտյանցի ու Ս. Էփրիկյանի հիշատակած Ալամիշիկ գյուղն է, որի հայության թվաքանակը, պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների համաձայն՝ կազմում էր 13 տուն՝ 8 շնչով միջինը հաշվելով՝ 104:

Գառնակերտ գյուղի վերաբերյալ խիստ տարբեր են պատրիարքարանի 1913 թ. վերաբերյալ եղած երկու ցուցակները: Երկու տվյալներից առավել հավանականը Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած տվյալն է, որը նույնությամբ կրկնվում է Վ. Հայկի մոտ՝ 25 տուն: Շնչերի քանակը 8 հաշվելով՝ ստանում ենք 200 հայ բնակիչ:

---

[366] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 963:

Պահպանված տվյալներն առավելագույնս իրար չեն համապատասխանում Իջմն գյուղի դեպքում: Ըստ Վ. Հայկի՝ Իջմեն 1860-ականներին ուներ 250-300 հայ ընտանիք՝ 3000 շնչով և 200 տուն թուրք բնակիչ: Այդ շրջանում Իջմնից անջատվել էր Վարի Իջմեն՝ 20-25 տուն՝ կեսը հայ, կեսը՝ թուրք բնակիչներով[367]: Մ. Ճիզմեճյանը ևս գրում է, որ գյուղն ուներ 500 տուն՝ կեսը հայ, կեսը՝ թուրք բնակիչ[368]: XIX դարավերջին գյուղն ունեցել է 1000-ից ավել հայ բնակիչ, մինչդեռ 1914 թ. պատրիարքարանի տվյալների համաձայն՝ այս գյուղում ապրում էր ընդամենը 60 տուն՝ 589 շունչ հայ: Թերևս այս թվի մեջ ներառված է միայն գյուղերից մեկում ապրող հայությունը: Այնուամենայնիվ, այս գյուղի հայության թվաքանակի մերաբերյալ մեր ունեցած ամենահիրատեսական տվյալը Հալեպի Համախարբերդցիական միության տվյալն է, որն էլ որպես հիմք ենք ընդունում:

Խոխ գյուղը բաժանված էր երկու մասի՝ Վարի և Վերի Խոխ: Վարի Խոխը, որի բնակիչները մի քանի սերունդ առաջ դուրս էին եկել գյուղից և հիմնել նոր բնակավայր, ուներ 10-15 տուն բնակիչ: Գյուղն ուներ այգիներ, մշակելի ընդարձակ հողեր: Ըստ Մարգարիտ Երեմյանի, Խոխ գյուղի բնակչության թիվը հասնում էր 2500՝ հայ և թուրք,[369] հեղինակն ի նկատի ունի բուն՝ Վերին Խոխը: Աղյուսակում տվյալները ներկայացրել ենք միասին, քանի որ Վարի Խոխի բնակչությունը մեծ չէր: Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ եթե 1880-ականներին գյուղն ուներ շուրջ 1000 հայ բնակիչ, ապա, պատրիարքարանի տվյալների համաձայն՝ 1914 թ. գյուղի հայ բնակչության քանակը նվազել էր շուրջ երեք անգամ, ինչն անհավանական է, մանավանդ, որ Վ. Հայկի հուշամատյանի Խոխի հատվածում նշված բնակ-

---

[367] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 886:
[368] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 83:
[369] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 926:

չության թիվը այլ բան է ասում: 1880-ականների տվյալներով՝ գյուղի հայ և թուրք բնակչության համամասնությունը նույնն էր՝ կեսը հայ, կեսը՝ թուրք: Ընդունենք անգամ, որ 1914 թ. այդ համամասնությունը փոխվել էր հօգուտ թուրքերի: Ստացվում է, որ գյուղն ուներ շուրջ 1000 հայ բնակիչ: Այստեղ միջին թիվը պատրիարքարանի ու Վ. Հայկի տվյալների միջև Հալեպի Համախարբերդցիական միության կազմած վիճակագրի թիվն է՝ 800, որն էլ ընդունենք որպես առավել հավանական:

Թեոդիկը, ինչպես մի քանի այլ գյուղերի, այնպես էլ Կանավիկի հայերի թվաքանակը չի նշում, նման կերպ պատրիարքարանի ցուցակներում շրջանցվել են Խարբերդի դաշտի մի քանի գյուղեր, որոնց հայությունը մեծ թիվ չէր կազմում՝ հասնելով մինչև երկու տասնյակ տան՝ շուրջ 200 շնչի: Կանավիկի դեպքում ճիշտ ենք համարում հայերի թվաքանակը հաշվել շուրջ 100 անձ, ինչպես նշված է Վ. Հայկի մոտ: Մեկ այլ գյուղի՝ Եէնիճեի դեպքում հայ բնակչության թվաքանակը հաշվենք ևս 100 անձ:

Սուրսուրիի դեպքում իրավիճակն ավելի բարդ է. չի համընկնում նույնիսկ Թեոդիկի ու Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի ներկայացրած տների քանակը՝ 210 և 170: Մենք ընդունենք Թեոդիկի տվյալը. շնչերի քանակը հաշվենք 8, բնակչության թվաքանակը կկազմի 1680: Թեև սա էլ մեծ թիվ չէ, քանի որ կա Համախարբերդցիական միության տվյալը՝ 3000: Հնագրակ, Ղուրբեթ Մեզրե, Չախլի, Չոթալի, Վժան գյուղերի դեպքում ևս ընդունում ենք Թեոդիկի ներկայացրած տների քանակը:

Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակում որպես Խարբերդի գավառակի գյուղ է հիշատակվում նաև Իզոլին, որի տեղադրությունը Ռ. Գևորգյանը, կարծում ենք, սխալ է մատնանշել քարտեզում: Մեր կարծիքով՝ Իզոլին գտնվում էր

Մալաթիայի գավառի սահմանին: Այս բնակավայրը մենք ևս ներառել ենք Խարբերդի գավառակի բնակավայրերի ցանկում:

Համագումարի բերելով բոլոր տվյալները՝ ստանում ենք Խարբերդի գավառակի հայության թվաքանակը 1914 թ. դրությամբ, այն է՝ 63225 (տես՝ աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Խարբերդ գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բարաք-	1878 թ. վիճ.[370]	Գ. Սրուանձտյանց	Ս. Էփրիկյան[371], 2.	Թեոդիկ, տ.[372]	Ռ. Գեորգյան, Գ. Փարուճյան[373]	Հանսարարդ. միություն[374]	Վ. Հայկ[375]	մեր հաշվարկները
Ախոր	261 շ.	36 տ.	90 տ.[376]/ 242 շ.	25	25 տ. / 165 շ.	200 շ.	-	200 շ.
Աղնձիք	451	60	60 / 401	70	70 / 450	700	75 տ. / 400 շ.	560
Աղ Մեզիրե	-	-	-	-	21 / 125	200	-	168
Այվոս	1001	120	1200 շ.[377]	28	250 շ.	-	-	250
Այու Դաղի	21	3	20 շ.[378]	-	-	-	20-25 տ.	200
Արոսիկ	-	40[379]	330 շ.	26	26 /140	-	30 /150	208
Արփավուտ	611	70	600 շ.	52	52 / 343	500	45-50 տ.	416
Գազմաշեն	1721	210	1582 շ.	320	320 / 1450	4700	3500 շ.	3500
Գարջանճ	1319	220	1267 շ.	180	180 / 681	1000	200 տ.	1440
Գայլու	201	30	188 շ.	27	27 / 156	-	-	216

[370] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 44/ III:
[371] Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 163:
[372] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 547-548:
[373] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 362-373:
[374] Հայկ վ., նշվ. աշխ., էջ 1490-1491:
[375] Նույն տեղում, էջ 837-977:
[376] Էփրիկեան, նշվ. աշխ., Ա, էջ 72:
[377] Նույն տեղում, էջ 146:
[378] Էփրիկեան, նշվ. աշխ., Ա, էջ 146:
[379] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, էջ 103:

Դառնակներտ	301	32	281 2.	150	25/95	-	25-30 տ.	200
Դնովանք	301	38	292 2.	26	108 2.	250	-	208
Դոմբ	1111	190	1011 2.	100	110 /663	700	-	880
Դոնաց Ավաց	243	34	50 / 240	22	22 /149	-	50 տ.	176
Դաստմ	1450	200	200 / 1452	225	225 /1300	1320	275 / 3000	2200
Եէնիճե	101	16	16 / 94	-	-	-	20 տ.	100
Եղեգի	1019	126	140 / 982	253	253 /1610	800	180 /1800	2024
Երդմնեկ	516	60	498 2.	70	70 /365	450	90 տ.	560
Զարդարիչ	211	30	188 2.	13	120 2.	-	40 /150	120
Էլեմլիգ	115	18	30 /110	13	13 /86	-	30 տ.	104
Թլանցիկ	111	17	17 / 101	5	5 /20	-	20 տ.	40
Իգոյի	-	-	-	-	13 / 45	-	-	104
Իջմն	1121	160	200 / 1004	60	60 / 589	1200	-	1200
Խարբերդ	-	-	800 / 4422	4300 2.	714 / 4248	15000	-	20000
Մեզրն		246	1658 2.	4630 2.	683 / 4580	20000	-	
Խոխ	1002	155	155 / 888	45	300 2.	800	1000 2.	800
Խուլազյուղ	1302	200	1340 2.	1290 2.	220 / 1278	1800	250 / 1200	1760
Թղկատին	2011	260	2066 2.	240	240 / 1201	3000	300 / 2000	1920
Ծառուկ	179	25	25 / 168	19	19 / 131	-		152
Ծուկ-կլեոլցյուք	517	60	60 / 496	93	93 / 500	800	100 տ.	744
Կանամիկ	133	20	20 / 130	-	-	-	25 / 100	100
Կարմրի	651	90	90 / 610	85	85 / 533	500	100 տ.	680
Հաբուսի	1221	180	1100 2.	180	180 / 1200	3000	300 / 4500	3000
Հարսանկ	211	37	200 2.	32	32 / 192	100	-	256
Հին Ագարակ	239	42	229 2.	40	228 2.	225	-	320
Հնձոր	-	-	-	25	25 / 130	150	-	200
Հողն	1186	178	1046 2.	190	190 / 1540	1800	300 տ.	1540
Հուսեյնիկ	2460	418	2826 2.	5100 2.	750 / 6090	4500	4000 2.	5100
Ղարբեթ	49	6	6 / 43	4	20 2.		10 տ.	32

Մեզրն								
Մորենիկ	311	97	318 շ.	127	127 / 660	1500	-	1016
ՄուսզուրՕղլու	511	79	499 շ.	40	40 / 250	250	-	320
Մուռն	301	57	285 շ.	31	31 / 200	200	55 / 275	248
Ղասմուշի, Ղնմսի	321	48	303 շ.	40	40 / 235	300	40 / 200	320
Ղոյիս Հաճի	603	80	655 շ.	72	72 / 590	450	100 տ.	590
Ղնթիլ	771	108	711 շ.	45	45 / 245	400	-	360
Ղայսրլի	-	-	-	14	17 շ.	-	-	112
Ղոթալի	261	40	250 շ.	25	-	-	-	200
Ղոր գնդ	381	-	-	-	25 /160	250	50 տ.	200
Սարայ	90	14	81 շ.	16	16 /149	-	-	149
Սարը Գամիշ	535	80	525 շ.	58	58 / 346	-	-	464
Սուրսուրի	1362	173	1058 շ.	210	170 / 1100	3000	170 /1100	1680
Վարդաթիլ	521	61	510 շ.	70	70 / 360	800	65 տ.	560
Վերի Մեզրն	-	14	114 շ.	30	30 / 197	150	26 տ.	240
Վժան	-	-	-	6	5 / 30			48
Քեորքն	1255	175	1055 շ.	102	102 / 570	1000	1500-1800 շ.	1000
Քեսրիկ	3281	314	2345 շ.	2295 շ.	380 / 2280	4600	300 տ.	3040
Ընդամենը	34351 շ.	4967	38514 շ.	3504 տ. 18615 շ.	38470 շ.	76595 շ.		53225 շ.

2) Կապան Մադեն, Փոթուրկն գավառակներ: Կապան Մադենը Խարբերդի գավառի գավառակներից էր: Սրվանձտյանցը գրում է, որ «Կապան-Մատէն շատ նշանաւոր եղած է, իբր երեսուն տարի յառաջ մէծ կուսակալ կը նստէր հոն, որոյ ենթակայ էր Դերսիմն, Խարբերդն և Տիգրանակերտն՝ իրենց գաւառներով»:[380] Կապան Մադենը հայտնի էր արծաթի հանքավայրերով, որոնք տարիների ընթացքում վերածվել էին ավերակների: Սրվանձտյանցի տեղեկությունների համաձայն՝ 1880-ականներին Կապան Մադենը արդեն սակավամարդ էր, հույներն ընդ-

[380] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, էջ 66:

հանրապես հեռացել էին, հայերից մնացել էին 100 տուն[381]: Հայերն այստեղ ունեին Ս. Աստվածածին եկեղեցի, բնակիչները հիմնականում հանքագործներ էին:

Թեև այս գավառակն աչքի չէր ընկնում հայաշատ բնակավայրերով, որոշ տվյալների համաձայն այն ուներ շուրջ 200 գյուղ[382]: 1914 թ. դրությամբ հայաբնակ բնակավայրերը, ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալների՝ երեքն էին, որտեղ, ընդհանուր առմամբ, հաշվվում էր 789 հայ բնակիչ[383]: Պատրիարքարանի ցուցակում Կապան Մադեն կենտրոնում հաշվվում էր 53 տուն՝ 265 շունչ առաքելական և 24 ուղղափառ հայ բնակիչ[384]: Ս. Ծոցիկյանի ներկայացրած տվյալների համաձայն՝ Կապան Մադենի 2500 բնակչից հայ էին 400-ը[385]: Վ. Հայկի հուշամատյանում նշվում է, որ տարագրությունից առաջ Կապան Մադենն ուներ 250 տուն թուրք, քուրդ, հայ և հույն բնակիչ, որից 60 տունը՝ հայ, 15 տունը՝ հույն[386]: Սա առավել հավանական տվյալն է. Կապան Մադեն բնակավայրում հաշվում ենք 360 հայ բնակիչ:

Կապան Մադենի հայաբնակ գյուղերն էին Արգավանն ու Աշվանը: Արգավան գյուղի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիշատակություն կա միայն պատրիարքարանի՝ ցուցակում: Այս գյուղի համար ընդունենք վերոնշյալ աղբյուրի ներկայացրած թիվը՝ 80 տուն, բազմապատկենք այն 8-ով, ստանում ենք 640: Աշվան գյուղը նշված է նաև Թեոդիկի ցուցակում, սակայն հայերի թվաքանակը չի նշվում: Աշվանում, բացի 100 շունչ

---

381 Սրուանձտնանց Գ., Թորոս Աղբար, էջ 68:
382 Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 38:
383 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
384 Նույն տեղում, էջ 373:
385 Ծոցիկեան Ս,. նշվ. աշխ., էջ 502:
386 Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 660:

հաշվվող հայերից, պատրիարքարանի ցուցակի համաձայն՝ ապրում էր նաև 120 ասորի, 400 թուրք, 100 քուրդ[387]: Աշվանի դեպքում ընդունենք վերոնշյալ թիվը: Այս բնակավայրերի և նաև Կապան Մադեն քաղաքի հայ բնակիչների թվաքանակն արտացոլող աղբյուրների տվյալներն ամփոփել ենք աղյուսակում (տե՛ս աղյուսակ 3): Ընդհանուր առմամբ, այս գավառակում ապրող հայերի թիվը ստացվում է շուրջ 1100:

Աղյուսակ 3. Կապան Մադեն գավառակի հայ բնակչության թվաքանակը

	Գ. Մրվանձտյանց	Ս. Էփրիկյան	Թեոդիկ	Ռ. Գևորգյան, Պ. Փաբուճյան[388]	Վ. Հայկ	մեր հաշվարկները
Կապան Մադեն	100 տ.	50 տ.[389]	53տ.	289 շ.	6	360 շ.
Արգովան	-	-	-	80 տ. / 400 շ.	-	640
Աշվան	58 տ.	600 շ.	-	100 շ.	-	100
Ընդամենը				789 շ.		1100 շ.

Փոթուրկեն ներկայացված է Պատրիարքարանի՝ Ռ. Գևորգյանի և Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակում որպես Խարբերդի գավառի առանձին գավառակ՝ մեկ հայաբնակ՝ Վարդենիկ բնակավայրով: Խարբերդի գավառակի գյուղերից մեկը՝ Երդմնենկը, Վ. Հայկի հրատարակած հուշամատյանում տեղ գտած քարտեզներից մեկում նշված է որպես Երդմնենկ-Վարդենիկ[390]: Հարկ է նշել, որ սա այլ բնակավայր է. Փոթուրկեն գավա-

[387] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 375:
[388] Նույն տեղում, էջ 374-375:
[389] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 278:
[390] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 702:

ռակը գտնվում էր Խարբերդից հյուսիս, Ակնի գավառակից դեպի հարավ-արևելք, Դերսիմի գավառի Զմշկածագ գավառակի հարևանությամբ: Ինչպես նշեցինք, գավառակն ուներ հայաբնակ մեկ բնակավայր, այլ բնակավայրերի մասին հիշատակություն չունենք: Բնակավայրը հիշատակված է նաև Թեոդիկի հրատարակած ցուցակում, սակայն այստեղ չկա հայ բնակչության թվաքանակն արտացոլող տվյալ: Պատրիարքարանի ցուցակի համաձայն՝ Վարդենիկը հիշատակվում է նաև Բաշ անվանումով, 1913-1914 թթ. դրությամբ այստեղ կենտրոնացած էր գավառակի 679 հայ բնակիչների մեծ մասը, որտեղ նաև եկեղեցի ու դպրոց կար[391]: Գյուղը հիշատակված է նաև Էփրիկյանի մոտ, որի համաձայն՝ 1900-ականներին այն ուներ 35 առաքելական հայ, 110 թուրք բնակիչ[392]: Սրվանձտյանցի տվյալներով Վարդենիկն ուներ 7 տուն հայ բնակիչ[393], եկեղեցի չուներ: Կարծում ենք, նման սակավաթիվ հայություն ունեցող բնակավայրում դժվար թե 1880-1913 թթ. եկեղեցի կառուցվեր, հավանաբար եկեղեցի եղել էր գյուղում, սակայն կիսավեր վիճակում և այն վերանորոգվել ու գործել էր միայն Սրվանձտյանցի այցելությանը հաջորդած ժամանակահատվածում, ինչը հատուկ էր այս շրջանին, նամանավանդ որ համիդյան կոտորածների ժամանակ ավերված, հրդեհված կամ պարզապես վնասներ ունեցած բազմաթիվ հայկական եկեղեցիներ բնակչության ջանքերով վերանորոգվեցին ու վերաբացվեցին 1898-1914 թթ. ընթացքում: Եղած տվյալները համեմատելիս, մյուս բնակավայրերի համեմատ հայ բնակչության տեսանելի աճ ենք նկատում այս գյուղում, ինչը թերևս կապված էր ավելի փոքր բնակչություն ունեցող բնակա-

---

[391] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 377:
[392] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 163:
[393] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, էջ 103:

վայրերի հայ բնակչության կենտրոնացմամբ մեկ բնակավայրում: Տվյալ դեպքում հայ բնակչության աճ գրանցվել էր ի հաշիվ հարակից բնակավայրերի հայության, որոնք կենտրոնացել էին մի բնակավայրում՝ ապահովության, անվտանգության ազդակներից ելնելով, քանի որ շրջակայքում այլ հայաբնակ բնակավայր այլևս չկար:

Գավառակի հայ բնակչության վերաբերյալ այլ տվյալներ չունենք, ուստի ընդունենք պատրիարքարանի վերոնշյալ տվյալը՝ 679 հայ բնակիչ:

3) Ակն գավառակ: Ակն գավառակը ընկած էր Արաբկիրից հյուսիս, Խարբերդից՝ հյուսիս-արևմուտք: Արևելքում Ակնին սահմանակից էր Խարբերդի գավառի Փոթուրկն գավառակը, հյուսիսում՝ Էրզրումի նահանգն էր, արևմուտքում՝ Մեբաստիայի նահանգը:

1873 թ. լույս տեսած աշխարհագրության դասագրքում Ակնի վերաբերյալ նշված է. «Եփրատի վերայ շինուած ատենով անուանի քաղաք էր. բայց հիմայ ինկած է: Ասօր բնակիչները ըստ մեծի մասին Հայ են՝ հին Ակնի քաղաքէն եկած»[394]: Իրավամբ, Ակնի հայությունը հաստատվել է Ակնում տարբեր ժամանակներում և տարբեր վայրերից, այդ թվում՝ Վանից, Էրզրումից, Քղիից, Բալուից, Խարբերդից, Ուրֆայից, Մաղենից, Արաբկիրից, Տիվրիկից, Զառայից, Մեբաստիայից, Թոքաթից և այլ վայրերից[395]: Այս շրջանը գտնվում էր բարեխառն կլիմայական գոտում, ուներ առողջարար, լեռնային օդ և առատ բուսականություն: Ակնը հարուստ էր հատկապես պտղատու ծառատեսակներով ու խաղողի այգիներով, թեև մշակելի տարածքները

---

[394] Ասլանեան Խ. Ա., Նոր աշխարհագրութիւն ի պէտս Ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, 1873, էջ 239:
[395] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 15:

խիստ սահմանափակ էին: Ըստ Էփրիկյանի, սա էր նաև այն պատճառներից մեկը, որ ակնցիներին ստիպում էր գաղթել այլ բնակավայրեր: Հեղինակը մասնավորապես գրում է. «Ընդհանրապէս Ակնցիք, գիւղաբնակներն անգամ, քաղաքացւոյ կեանք կը վարեն, երկրագործութիւնը գրեթէ բոլորովին մէջերնէն մերցած է, արդէն մշակութեան յարմար հողեր ալ կը պակսին: Այս պատճառաւ թէ գիւղացիք և թէ քաղաքացիք կը դիմեն յօտարութեան, անդ վաստակելու և ի հայրենիս վայելելու»[396]: Արտագաղթը Ակնի հայ բնակչության թվաքանակի փոփոխության հիմնական պատճառն էր, որն արձանագրվել է տվյալ բնակավայրի դեպքում տարիներ շարունակ և աճել էր համիդյան կոտորածներից հետո: 1913-1914 թթ. դրությամբ, ըստ պատրիարքարանի՝ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակի՝ Ակնի գավառակից արտագաղթողների թիվը կազմում էր 7724: Սա մեծ թիվ է 16741 հայ բնակիչ[397] ունեցող գավառակի համար: Ակնից արտագաղթը եղել էր և շարունակվում էր ուսումնասիրվող ժամանակահատվածում, բայց, մեր կարծիքով, արտագաղթողների թիվը չէր կարող այդքան մեծ լիներ:

Ակնի գավառակն ուներ 7 նահիե՝ Սալահլի, Իլիճ, Ապանոս, Աղին, Մերաճիք, Այնեսի-Աչիքլի, Ապուչեխ[398]: Ըստ Փոլատյանի՝ գավառակն ընդգրկում էր 102 գյուղ: Զանիկյանը նշում է Ակնի գյուղերի անունները, այն է՝ դեպի արևմուտք՝ «Սանտուխ, Նարվեր, Զալթու, Ապրանք, Տիլլու, Աղրլ, Պրգմրծէն, Սաղը Զիչէկ, դեպի հարաւ՝ Բակեր, Ապուչեխ, Կամրկապ, Կարուշլա, Արկու, Հաբեղնոց, Հաբեղնոցի Ագրակ, Քինտիր, Եփրատի ձախակողմում՝ Վանք, Ծրգու, Ծրգուի Ագրակ, Միջին գեղ, Վան

[396] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 82:
[397] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[398] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 38:

գեղ, Աղրիկ, Սալահլու, Կաշո, Ձորակ, Մուշեղկա, Փետղան, Կենճեկի, Ուռեկ, Յաղուպլու, Ավերակ, Լիճք, Սանախսի, Աթմա, Բաղշտաշ, Բաղչա, Ջոփլեր, Թավուխ, Խատա, Հոտար, Բոշայի, Կաղրան, Գոմսկան, Փաշաղի, Ռապատ, Արտոս, Մերկևիլ»[399]: Նշենք, որ նշված միայն հատուկենտ գյուղերում էր, որտեղ XX դարի սկզբին հայեր էին ապրում:

Արդեն իսկ ուսումնասիրության առաջին գլխում խոսել ենք Ակնի հայության՝ մինչև XIX դարի 80-ականները ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած կրոնափոխման դեպքերի մասին, ուստի արձանագրենք հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ այն տվյալները, որոնք անմիջականորեն վերաբերում են XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին:

Նախ, անդրադառնանք Ակն քաղաքի վերաբերյալ եղած հիշատակություններին: Խոսելով Ակնի մասին՝ թուրք պատմագիր Էվլիա Չելեբին նշում է, որ «քաղաքը Սուլեյման խանի աշխարհագրով մտնում է Սվազի էյալեթի մեջ»[400]: Մամուրեթ ուլ Ազիզ նահանգի կազմավորումից հետո Ակնը դարձավ Խարբերդի նահանգի անբաժան մասը: Այն նահանգի առանցքային բնակավայրերից էր՝ իր պատմությամբ ու հայի ինքնատիպ տեսակով: Կարմիր Խաչի կազմակերպության աշխատակիցներից Ջ. Հաբբելը 1896 թ. գրում է, որ Ակնը տարօրինակ կերպով գեղեցիկ քաղաք է[401]: Ակնցին տարբերվում էր իր քաղաքային կենցաղով, գեղեցիկ տներ ունենալու սովորույթով, ինչը նաև այն պատճառներից մեկն էր, որ ստիպում էր ակնցուն գաղթել ու փնտրել

---

[399] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 34:
[400] Չելեբի Է., Թուրքական աղբյուրներ, Գ. թարգմանությունը բնագրից Ա.Խ. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 157:
[401] Barton C., նշվ. աշխ., էջ 343:

ապրուստի ավելի լավ պայմաններ, քան կար ու ստեղծել էր նա իր ծննդավայրում:

Այժմ բերենք մի քանի վիճակագրական տվյալներ, որ առնչվում են քաղաքաբնակ ակնցիների քանակին, ապա նաև անդրադառնանք հայաբնակ գյուղերին: 1878 թ. ապրիլի 8-ին Ակնի առաջնորդական տեղապահ Տեր Հարություն քահանա Երնջյանի կողմից պատրիարքին ուղղված գրավոր վիճակագրության համաձայն Ակն քաղաքն ուներ 5240 հայ և 4432 թուրք բնակիչ[402]: 1878 թ. վերաբերող մեկ այլ վիճակագրության համաձայն՝ Ակնում ապրում էր 2000 տուն՝ 10000 բնակիչ, որի կեսից ավելին հայեր էին, մյուսները՝ թուրքեր[403]: 1880 թ. Ակնի վիճակի աշխարհագրում քաղաքի հայության քանակը նշված է 5442[404], ինչը նախորդ տվյալների համեմատ մի փոքր աճել էր, որը տրամաբանական է: 19-րդ դարի վերջերին Ակն քաղաքի հայության թվաքանակի մասին Ս. Ծոցիկյանի բերած տվյալը գերազանցում է վերոնշյալ երկու աղբյուրների տեղեկությունները: Ըստ հեղինակի՝ Ակն քաղաքում ապրում էր շուրջ 20000 մարդ, որից 10000-ը հայեր էին[405]: Անգլիացի պրոֆեսոր Ռ. Հարրիսը նամակներից մեկում մեջբերում է Ակնի միսիոներներից մեկից ստացված տեղեկագիրը, որտեղ ասվում էր, որ 1896 թ. դրությամբ Ակն քաղաքն ունեցել է 1000 տուն հայ և նույնքան թուրք բնակիչ[406]: Պատրիարքարանի՝ Թեոդիկի հրատարակած ցուցակում քաղաքի հայությունը հաշվվում է 7800 անձ[407], մյուս ցուցակի համաձայն՝ 7720, ինչը ստանում ենք, երբ աշխա-

---

[402] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/III, թ. 3:
[403] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 32:
[404] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 82-83:
[405] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 11:
[406] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 209:
[407] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:

տության նախաբանում Ակնի կուզայի համար հաշվվող 16741 թվից հանում ենք գյուղերի հայության համար բերված տվյալները, քանի որ քաղաքի համար նման տվյալ նշված չէ: Ակնում, ըստ Բ. Եղիայանի կազմած վիճակագրության՝ 1914 թ. կար 7 հայաբնակ բնակավայր, 12 եկեղեցի, 16100 հայ բնակիչ[408]: Տարօրինակ է, բայց գրեթե բոլոր բնակավայրերի, գավառակների ու գավառների համար ավելի մեծ թվեր ներկայացնող այս ցուցակում Ակնի գավառակի համար գրեթե նույն թիվն է տրված, նույնիսկ ավելի փոքր, քան պատրիարքարանի ցուցակները: Խնդիրը նրանում է, որ Եղիայանը Աղինի նահիեն իր գյուղերով վերագրել է ոչ թե Ակնի գավառակին, ինչպես վարչական բաժանումն էր թելադրում, այլ Արաբկիրի գավառակին, ինչը թելադրում էր եկեղեցական թեմերի բաժանումը: Թերևս այդ պատճառով է նաև, որ վերոնշյալ գյուղախումբն Արաբկիրի վիճակի մեջ է ներկայացրել նաև Թեոդիկը: Այլ տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս պարզել Ակն քաղաքի հայերի իրական թվաքանակը, քանի որ պատրիարքարանի նշած շնչերի թիվը գրեթե միշտ ավելի նվազ է, քան իրականում էր, ինչի ապացույցն այլ աղբյուրներում տեղ գտած տվյալներն են: Ինչևիցե, այս դեպքում միայն կարող ենք ենթադրել, որ հայերի թվաքանակն ավելին էր, քան 7720-7800-ը, սակայն այլ տվյալների բացակայության պատճառով հարկադրված ենք ընդունել այս թվաքանակը:

Այժմ անդրադառնանք գավառակի հայաբնակ գյուղերին, որոնք 10-ն էին: Ակնի բնակավայրերի հայության մասին խոսելիս չպետք է մոռանանք, որ այստեղ կային գյուղեր, որոնց հայ բնակիչները բողոքականներ էին կամ կաթոլիկներ: Ակնի բողոքա-

---

[408] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:

կանները 1890-ականներին 25 տուն էին[409]: Հայ կաթոլիկներն ապրում էին Ակնի Վանք, Ջորակ, Ծրգու, Մուշեղկա գյուղերում:

Վերոնշյալ գյուղերը, ինչպես Ակնի գավառակի մյուս բոլոր գյուղերը, XIX դարի սկզբներին ունեցել են ստվար հայություն, սակայն տարիների ընթացքում արտագաղթի, շարունակվող բռնի իսլամացման քաղաքականության, իսկ դարավերջին՝ արդեն զանգվածային կոտորածների հետևանքով այս բնակավայրերի հայության թիվը շեշտակիորեն նվազել էր: Զաքիկյանը, խոսելով Վանք գյուղի մասին, նշում է, որ այն իր նկարագրած շրջանում՝ 1890-ականների սկզբներին, ուներ ընդամենը 40 տուն հայ կաթոլիկ բնակիչ, 5-10 տուն թուրք, մինչդեռ, ըստ նրա՝ «դեռ 25-30 տարի առաջ իբր 80 տուն բնակիչ ունէր, բայց երկիցս հրկիզմամբ՝ 10-20 տուններէ զատ բոլորն այրած և յետոյ վերստին շինուած է»[410]: Նույնը, թերևս, տեղի է ունեցել գավառակի մյուս գյուղերում: Գավառակի հայաբնակ գյուղերից 1915 թ. դրությամբ զուտ հայաբնակ էր, թերևս, միայն Բերկան, մյուսներում հայերի հետ խառը թուրքեր էին ապրում: Նշենք սակայն, որ այս բոլոր գյուղերում ապրող թուրքերը թվաքանակով զիջում էին հայերին: Սա խոսում է այն մասին, որ այս բնակավայրերը նախկինում զուտ հայաբնակ են եղել և միայն XIX դարի ընթացքում է, որ այս գյուղերում հաստատվել են նաև թուրք բնակիչներ:

Ակնի ամենամեծ գյուղն Ապուշեխն էր: Այն ընկած էր Ակնից հարավ: Գյուղը հիմնադրած հայերը գաղթել էին Վասպուրականից: Նրանցից շատերը սերում էին ազնվական տոհմերից: Ապուշեխը բնակիչների կենցաղով, տների շքեղությամբ ու ճաշակով չէր զիջում Ակնին, գուցե ինչ-որ առումով նույնիսկ գերազանցում էր: Այս բնակավայրի հայության հիմնական արհեստը

---

[409] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 43:
[410] Նույն տեղում, էջ 57:

նրբաթել կերպասեղենի արտադրությունն էր[411]: Ապուչեխից ևս շատերն էին մեկնում արտագնա աշխատանքի: Հիմնական ուղությունը Կ. Պոլիսն էր: Այս պատճառով էր, որ Պոլսի ամիրաների մեջ առաջատար դեր ու նշանակություն ունեին Ապուչեխից սերողները: 1878 թ. վիճակագրության համաձայն, որը կազմել էր Ակնի Առաջնորդական տեղապահ Տեր Հարություն քահանա Երեցյանը, գյուղն ուներ 1074 հայ բնակիչ[412]: 1880 թ. վիճակագրության համաձայն՝ գյուղն ուներ 1066 առաքելական հայ բնակիչ[413]: Նալթանյանի տվյալներով Ապուչեխը 1890-ականներին ուներ 400 տուն՝ կեսը հայ, կեսը՝ թուրք բնակիչ[414]: Պատրիարքարանի՝ Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն՝ 1913-1914 թթ. դրությամբ գյուղն ուներ 950 հայ բնակիչ[415], մյուս ցուցակով՝ 320 տուն՝ 1920 հայ բնակիչ[416]: Վերջին տվյալի համաձայն ստացվում է, որ յուրաքանչյուր տան անդամների թիվը հաշվվում է 6, ինչը նախորդ գյուղական բնակավայրերի դեպքում նկատել ենք փոքր թիվ ընտանիքի անդամների համար: Այս գյուղի դեպքում ևս հաշվարկը կատարենք՝ յուրաքանչյուր տան անդամների թվի միջինն ընդունելով 8. տների թիվն ընդունենք 320, ինչպես պատրիարքարանի ցուցակում է, ստանում ենք՝ 2560: Դժվար է ասել, թե Թեոդիկի ցուցակում նշված թիվն ինչու է այդչափ տարբեր պատրիարքարանի մյուս ցուցակից:

Ակնի մյուս մեծ գյուղը Կամարակապն էր, որը գտնվում էր Ակն քաղաքից հարավ-արևելք: Բնակիչները հիմնականում

---

[411] Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 61:
[412] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/III, թ. 3:
[200] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 83:
[414] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 45:
[415] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[416] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

գաղթել էին Վասպուրականից, Դերսիմից, Զարսանջակից[417]: Այս գյուղին ևս հատուկ էին գեղեցիկ, մեծ տները: Ակնի ու հարակից գյուղերի նման այս գյուղից ևս շատերն արտագաղթել էին Կ. Պոլիս, որտեղ հաստատվելով ձեռք էին բերել հասութաբեր կալվածքներ: Մեծահարուստ գյուղացիներն ամեն կերպ աջակցում էին գյուղի դպրոցին ու եկեղեցուն: 1878 թ. վիճակագրության համաձայն՝ գյուղն ուներ 764 հայ բնակիչ[418], 1880 թ.՝ 1133[419]: Կամարակապում 1890-ականներին կար 150 տուն հայ, 30 տուն թուրք բնակիչ[420]: Թեոդիկը գյուղի հայ տների թիվը հաշվում է 100[421], պատրիարքարանի մյուս ցուցակում՝ 215՝ 1260 շունչ[422]: Այս գյուղի դեպքում տների թիվն ընդունելով 215՝ հաշվարկը կատարենք վերոնշյալ տրամաբանությամբ, ստանում ենք՝ 1720:

Կամարակապի հարևանությամբ էր Կարուշլա գյուղը, որի բնակիչները ևս, ինչպես ապուչենցիներն ու կամարակապցիները, իրենց համարում էին ազնվական ընտանիքի սերունդներ: Գյուղն ուներ եկեղեցի ու դպրոց: Ըստ Զանիկյանի, գյուղն ուներ 40 տուն հայ, 20 տուն թուրք բնակիչ[423]: Թեոդիկը տալիս է 50 տուն[424], Ռ. Գևորգյանը՝ 50 տուն՝ 256 շունչ[425]: Այս և մյուս 7 գյուղերի համար՝ Կարուշլա, Լիճք, Ընկա, Նարվեր, Մուշեղկա, Շրգու, Վանք, տան անդամների թիվը հաշվենք 8 և հաշվարկը կատարենք՝ հիմնվելով պատրիարքարանի ցուցակներում նշված տների քանակի վրա: Ընկա գյուղի դեպքում տարբեր-

---

[417] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 47:
[418] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/III, թ. 3:
[419] Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 83:
[420] Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 74:
[421] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[422] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:
[423] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 50:
[424] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[425] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

վում են Թեոդիկի ու պատրիարքարանի մյուս ցուցակում նշված թվերը: Մենք հիմք ենք վերցնում Ռ. Գևորգյանի նշած տների քանակը: Զորակ, Մուշեղկա, Ծրգու, Վանք գյուղերի դեպքում Թեոդիկն ընդհանրապես որևէ տվյալ չի ներկայացրել, թեև նշել է դրանք որպես Ակնին ենթակա գյուղեր: Սրա պատճառը թերևս նրանում է, որ այս գյուղերի հայությունը կաթոլիկ էր, ահա ինչու Թեոդիկը շրջանցել էր նրանց: Ուստի, այս բնակավայրերի դեպքում ևս հիմք ընդունենք Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած տվյալները, որտեղ ներկայացված է միայն շնչերի քանակը: Տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ Ակն գավառակում, բացառությամբ Զորակ և Վանք գյուղերի, հայ բնակչությունը 1878-1880 թթ. համեմատ աճել էր: Ինչ վերաբերում է Զորակ ու Վանք գյուղերին, ապա, ինչպես նշեցինք, այստեղի հայությունը կաթոլիկ էր: Թերևս այս պատճառով է, որ պատրիարքարանի տվյալներում կարող էր և չարձանագրվեր բնակչության աճը, առավել ևս, որ չի նշվում տների քանակը, ինչը թույլ կտար հաշվարկ կատարել տան անդամների թվով, ինչպես մյուս բնակավայրերի դեպքում ենք վարվել, այլ ոչ թե ընդունել պատրիարքարանի տված շնչերի քանակը:

Փաստորեն, 1915 թ. դրությամբ Ակն գավառակի հայաբնակ բնակավայրերից հիշատակվում են քաղաքն ու 10 գյուղերը, որտեղ ապրող հայերի քանակը, համաձայն մեր հաշվարկների՝ կազմում էր 15888 շունչ (տես՝ աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ակն գավառակի հայ բնակչության թվաքանակը

	1878թ. վիճակագր.[426]	1880թ վիճ.[427]	Հ. Ճանիկյան[428]	Թեոդիկ[429]	Ռ. Գողգան, Պ. Փաբուճյան[430]	մեր հաշվարկները
Ակն	5240 շ.	5442 շ.	-	7800 շ.	7720 շ.	7800 շ.
Ապուչեխ	1074	1066	-	950 շ.	320 տ. / 1920 շ.	2560
Կամարակապ	764	1133	-	100 տ.	215 / 1260	1720
Կարուշլա	168	204	-	50 տ.	50 / 256	400
Նարվեր	174	191	25 տ.	38 տ.	38 / 207	304
Լիճք	492	507	70	80 տ.	80 / 526	640
Բենկա	904	874	-	140 տ.	220 / 1170	1760
Ջորակ	170	170	10	-	70 շ.	70
Մուշենկա	124	62	15	-	164 շ.	164
Շրգու	138	138	30	-	320 շ.	320
Վանք	180 շ.	180	40	-	150 շ.	150
Ընդամենը	9428 շ.	9967 շ.		8750 շ. և 408 տ.	13763 շ.	15888 շ.

4) Արաբկիր գավառակ: Արաբկիրի գավառակը սահմանակից էր հյուսիսում՝ Ակնի, հարավում՝ Կապան Մադենի գավառակներին: Արաբկիրից արևելք Դերսիմի գավառի Զմշկածագ գավառակն էր, դեպի արևմուտք՝ Մեբաստիայի նահանգը: Գավառակի կենտրոնը Արաբկիր քաղաքն էր, որն, ըստ աղբյուրների, բնակեցվել է XIX դարի սկզբներին: Արաբկիրի կազան ուներ 68 գյուղ, հայերը, ըստ Ռ. Հյուսենի՝ կազմում էին բնակչության մեկ յոթերորդ մասը[431]: Գավառակի մեկ տասնյակից ավել բնակավայրեր հայաբնակ էին:

---

[426] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/III, թ. 3:
[427] Քեչեան Ա., նշվ. աշխ., հ. Բ, էջ 34:
[428] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 51-60:
[429] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[430] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:
[431] Hewsen R., Armenia. A Historical Atlas, p. 197.

Արաբկիրի գավառակում, ըստ պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. տվյալների՝ հաշվվում էր 10880 հայ բնակիչ, ընդամենը 5 հայաբնակ բնակավայր, 9 եկեղեցի, 14 դպրոց, 2590 արտագնա աշխատանքի մեկնած անձ[432]: Մինչդեռ, դեռևս 1895 թ. դրությամբ, ըստ բողոքական պատվելի Էդվին Բլիսսի, Արաբկիրն ուներ 18000 հայ և 30000 թուրք բնակչություն[433]: Խնդիրն այն է, որ, ինչպես նշել ենք, եթե Թեոդիկն Աղինի նահիթեն ու նրան ենթակա մի քանի հայաբնակ գյուղեր թվել է Արաբկիրի մասում, ապա պատրիարքարանի մյուս ցուցակում այս նահիթեն նշվում է Ակնի գավառակում: Ուստի Գևորգյանի ցուցակի համաձայն Արաբկիրն ուներ ավելի փոքր թվով հայություն, քան Ակնի գավառակը: Մենք նպատակահարմար ենք համարել այս գյուղախմբին անդրադառնալ Արաբկիրի ենթաբաժնում: Աղբյուրների մեծամասնությունը ևս այս բնակավայրերն իրավամբ ներկայացրել են Արաբկիրի հետ, ինչը և՛ տրամաբանական էր, և՛ ավելի դյուրին էր դարձնում ուսումնասիրությունը: Համաձայն Բ. Եղիայանի՝ 1914 թ. Արաբկիրն ուներ 16 հայաբնակ բնակավայր, 20 եկեղեցի, 28750 հայ բնակիչ[434]: Սա այս շրջանին վերաբերող Արաբկիրում հայության ամենամեծ ընդհանուր թիվը ներկայացնող աղբյուրն է: Փորձենք հստակեցնել ի վերջո Արաբկիրի գավառակի՝ ներառյալ Աղինի գյուղախմբի, հայաբնակ բնակավայրերի թիվն ու հայ բնակչության թվաքանակն այդ բնակավայրերում:

Նախ անդրադարձ կատարենք Արաբկիր քաղաքի, ապա մյուս բնակավայրերի վերաբերյալ եղած վիճակագրական տվյալներին: Արաբկիրի հայությունը թողել էր նախկին բնակավայրը XIX դարի սկզբներին ու հաստատվել նոր քաղաքում: Հին

---

[432] Kc'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[433] Bliss Rev. E, նշվ. աշխ., էջ 488:
[434] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:

քաղաքը հայերը կոչում էին Անդի քաղաք, թուրքերը՝ Էսքիշեհիր: Նոր քաղաքը կառուցված էր երեք ձորերի միջև, ուներ 10-ից ավել թաղեր: Թեև քաղաքը մեծ տարածք էր զբաղեցնում, չուներ մեծ թվով բնակչություն: Քաղաքում գործում էին Կենտրոնական վարժարան և չորս թաղային դպրոցներ, ավետարանական ու կաթոլիկ վարժարաններ, տարրական դպրոցներ[435]: Մ. Դավիթ-Բեկը, որն Արաբկիրի գավառաբարբառի վերաբերյալ ուսումնասիրության հեղինակ է, նշում է մի փաստ, որը, թերևս, բացառիկ է ողջ նահանգի համար, այն է՝ Արաբկիրի համար զարմանալի չէր «հայ դպրոցներու մէջ մահմետական երեխաներ կամ պատանիներ տեսնել», ավելին, ըստ հեղինակի, «Արաբկիրի մահմետականներու մեծամասնութիւնը հայերեն կը խօսի»[436]:

Հավելենք նաև, որ Արաբկիրը նահանգի և առհասարակ Արևմտյան Հայաստանի այն քաղաքներից էր, որոնց հայ բնակիչներն առանձնանում էին իրենց քաղաքային կենցաղով: Ամերիկացի քարոզիչ Էդվին Բլիսսը նշում է, որ Արաբկիրը համարվում էր տարածքի ամենաբարգավաճ քաղաքներից[437]: Էփրիկյանն այս առիթով գրում է, որ Արաբկիրի հայերի տների «ներքին կահ կարասիքն ևս աւելի բարեվայելուչ և յարդարուն են, քան Հայաստանի ներքին քաղաքաց, և այդ ամենը արդիւնք են պանդխտութեան՝ որ իւր բազմադիմի վնասներովն հանդերձ, քաղաքակրթութեան ճաշակն զարգացնելու յատկութիւն ևս ունի»[438]:

«Արևելք» թերթի 1885 թ. դեկտեմբերի 20-ի թիվ 591 համարում նշվում է, որ Արաբկիր քաղաքն ուներ 2000 տնից ավել հայ

---

[435] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 94:
[436] Դավիթ-Բեկ Մ., Արաբկիրի գավարաբարբառ. Ձայնաբանական եւ քերականական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1919, էջ 11:
[437] Bliss Rev. E., նշվ. աշխ., էջ 434:
[438] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 280:

բնակիչ[439]: 1890-ականներին անցկացված վիճակագրության համաձայն՝ Արաբկիր քաղաքում ապրում էր 20000 մարդ, որից 11000-ը՝ մուսուլման, 9000-ը՝ հայ, այդ թվում՝ 8565-ը՝ առաքելական, 200-ը՝ կաթոլիկ, 235-ը՝ բողոքական[440]: Արաբկիրի բնակչությունը տեղահանությունից առաջ, ըստ Ծոցիկյանի, արվարձանի՝ Անդիի քաղաքի հետ կազմում էր 20000՝ հիմնականում թուրքեր, հայեր, աննշան թվով՝ հույներ: Ծոցիկյանի տվյալներով՝ հայերի թվաքանակն Արաբկիրում հասնում էր 6000-ի, նրանք ունեին 7 եկեղեցի, որից չորսը՝ առաքելական, այն է, Ս. Աստվածածին, Ս. Հակոբ, Ս. Գևորգ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, մյուսները՝ կաթոլիկ ու ավետարանական[441]: Սփյուռքահայ հեղինակ Սեդրակ Ճահենը նշում է, որ XX դարի սկզբներին Արաբկիր քաղաքը «կ'ընդգրկեր 6000 կենսունակ հայութիւն, իսկ գաւառը՝ 20000»[442]: Պատրիարքարանի ցուցակները հետևյալ պատկերն են ներկայացնում՝ Թեոդիկ՝ 2000 տուն՝ 9500 անձ[443], մյուս ցուցակը՝ 1300 տուն՝ 9523 շունչ[444]: Անձերի թիվը գրեթե նույնն է տրված, ինչը չի կարելի ասել տների քանակի մասին: Ընդունենք Թեոդիկի տվյալը՝ 2000 տուն, տան անդամների թիվը հաշվելով 6, ստանում ենք 12000: Հավելենք, որ արաբկիրցի Գալուստ Գալուստյանն իր վկայության մեջ նշում է, որ Արաբկիրն ուներ 25000 բնակիչ, որից 15000-ը հայեր էին[445]:

---

[439] Բախտիկեան Ս., Ոսկեզնտակ, էջ 20:
[440] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը. էջ 22:
[441] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 93:
[442] Ճահեն Ս., Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին Խարբերդ, Արաբկիր, Մալաթիա, Քիւրտիստան, Տիգրանակերտ, Տարոն, Սասուն, Բալու եւ Բղի, Ա հատոր, Լօս Անճէլըս, 1975, էջ 28:
[443] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[444] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 375:
[445] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, էջ 308:

Արաբկիրի հայաբնակ գյուղերը (բացի Աղինի գյուղերը), ինն էին: Քաղաքից հյուսիս գտնվում էր Շեփիկ գյուղը, որ գավառակի հայաշատ բնակավայրերից էր: Բնակիչները զբաղվում էին հողագործությամբ, գյուղն ուներ ինչպես վարելահողեր, այնպես և ընդարձակ այգիներ ու պարտեզներ: Հայ բնակչության թվաքանակն արտացոլող տվյալներն այս գյուղի դեպքում գրեթե համահունչ են: Ս. Պաղտասարյանն իր հուշերում նշում է, որ մինչև պատերազմը Շեփիկն ուներ 120 տուն՝ 550 անձ բնակիչ[446]: Մինաս Ուզունյանի վկայությամբ ևս մինչև եղեռնը Շեփիկն ուներ 550 հայ բնակիչ[447]: Ըստ Արաբկիրի հուշամատյանի կազմող Ս. Բախտիկյանի՝ Շեփիկում կար 120 տուն հայ բնակիչ[448]: Ա. Փոլատյանի կազմած Արաբկիրին նվիրված հուշամատյանում հեղինակներից Ս. Միքայելյանը նշում է, որ Շեփիկն ուներ 100 ընտանիք բնակիչ՝ 600 շնչով[449]: Պատրիարքարանի տվյալները հետևյալն են՝ Թեոդիկի մոտ՝ 96 տուն՝ 470 շունչ[450], մյուս ցուցակում՝ 96 տուն՝ 468 անձ[451]: Տվյալ բնակավայրի դեպքում, թեև մի քանի հեղինակ նշում են բնակչության նույն քանակը, ինչպես մյուս գավառակների բնակավայրերի մեծ մասի դեպքում, հաշվարկը կատարում ենք տան անդամների միջին ընտրված թիվը՝ 8, բազմապատկելով պատրիարքարանի տված տների թվով, ստացվում է՝ 768: Այս միջին թիվն Արաբկիրի գավառակի տների համար ևս ընդունելի է, քանի որ հենց Շեփիկի դեպքում նույն գյուղացի, ցեղասպանության վերապրող Ս. Միքայելյանը նշում

---

[446] ՀԱԱ, ֆ. 447 ց. 1, գ. 21, թ. 19-22:
[447] Նույն տեղում, գ. 42, թ. 90:
[448] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 130:
[449] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 103:
[450] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[451] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 376:

է, որ Շնփիկում «մինչեւ 15-20 հոգիէ բաղկացած ընտանիքներ կային»[452]:

Արաբկիրից հյուսիս-արևելք էր Անջրդի գյուղը: Հարակից բնակավայրերի համեմատ՝ այս գյուղը ջրարբի չէր: Գյուղի հայությունը զբաղված էր հողագործությամբ, արհեստներով: Ըստ Բախտիկյանի՝ այն ուներ 300 տուն բնակիչ, որից 120 տունը թուրքեր էին[453]: Երկու այլ աղբյուրներ նշում են բնակչության՝ 300 տուն, և մասնավորապես, հայ բնակչության նույն քանակը՝ 180 տուն[454]: Փոլատյանի՝ Արաբկիրին նվիրված հուշամատյանում հեղինակ Ռ. Թազվորյանը նշում է, որ Անջրդին ուներ 1000 հայ բնակիչ[455]: Պատրիարքարանի տվյալներն են՝ Թեոդիկի մոտ՝ 118 տուն[456], Ռ. Գևորգյանի մոտ՝ 118 տուն, 510 շունչ[457]: 180 տունը ընդունելով որպես հիմք՝ այն բազմապատկենք տան անդամների թվով՝ 8, ստանում ենք 1915 թ. դրությամբ Անջրդիի բնակչության թիվը՝ 1440:

Ամպրկան Արաբկիրին մոտ գտնվող գյուղերից էր, գտնվում էր քաղաքից հարավ: Ըստ Էփրիկյանի՝ գյուղն ուներ 100 տուն բնակիչ՝ կեսը հայ, կեսը՝ թուրք[458]: Թեոդիկի ցուցակով այս գյուղն ուներ 56 տուն, Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի մոտ՝ 56 տուն, 250 շունչ հայ բնակիչ[459]: Այստեղ ևս հաշվարկը կատարում ենք յուրաքանչյուր տան անդամների թիվն ընդունելով 8: Գյուղի հայության թիվը ստացվում է 448:

---

[452] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 106:
[453] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 151:
[454] Անջրդի եւ շրջակա գիւղերու ոճրագործներու արարքները.1915-1918, Երեւան Տպարան, Պոսթոն, էջ 8: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 447, ց. 1, գ. 39, թ. 1:
[455] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 85:
[456] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[457] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 376:
[458] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 139:
[459] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 376:

Արաբկիր քաղաքից արևելք էր ընկած գավառակի գեղեցիկ գյուղերից մեկը՝ Մաշկերտը, որը 1895 թ. ջարդից առաջ շեն ու հարուստ գյուղ էր: Գյուղի տները չէին տարբերվում քաղաքի տներից, հիմնականում երկհարկանի էին, նույնիսկ՝ եռահարկ: Ըստ Բախտիկյանի՝ Մաշկերտն ունեցել է 600 տուն բնակիչ[460]: 1895 թ. հետո բնակավայրը կորցրել էր իր շքեղությունը: Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն՝ Մաշկերտն ուներ 67 տուն[461], պատրիարքարանի մյուս ցուցակով՝ 67 տուն՝ 496 հայ բնակիչ[462]: Գյուղի հայության թվաքանակը հաշվում ենք 536:

Արաբկիրի գյուղերից ամենահարուստը Ծագն էր: Այն գտնվում էր Արաբկիրից արևելք, զուտ հայաբնակ գյուղ էր, հարուստ էր մշակելի ընդարձակ հողատարածքներով, ուներ նաև այգիներ ու անտառներ: Ըստ Բախտիկյանի՝ գյուղն ուներ 500-550 հայ բնակիչ[463]: Փոլատյանի կազմած՝ Արաբկիրին նվիրված հուշամատյանում հեղինակներից Ս. Փողհարյանը նշում է, որ Ծագ գյուղն ուներ 100 հայ ընտանիք[464], Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն՝ 82 տուն[465], մյուս ցուցակով՝ 82 տուն, 687 հայ բնակիչ[466]: Այս բնակավայրի դեպքում պատրիարքարանի ներկայացրած տների ու տան անդամների հարաբերակցությունը կազմում է 8.3, ինչը խոսում է այս տվյալի թերևս իրական լինելու մասին, ուստի մենք ևս ընդունենք այն:

Արաբկիրի մյուս զուտ հայաբնակ գյուղը Սաղմկան էր: Այն ևս հարուստ էր բազմատեսակ պտղատու այգիներով, ուներ մշակելի վարելահողեր: Այս գյուղն ըստ Բախտիկյանի ուներ 35

---

460 Բախտիկեան Ս., Ոսկեգնտակ, էջ 215-226:
461 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
462 Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:
463 Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 134:
464 Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 111:
465 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
466 Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

տուն բնակիչ[467]: Մեկ այլ աղբյուրի համաձայն այն ուներ 40 տուն բնակիչ[468]: Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն՝ գյուղն ուներ 36 տուն[469], մյուս ցուցակով՝ 36 տուն, 279 շունչ հայ բնակիչ[470]: Գյուղի հայության թվաքանակը հաշվում ենք 288 անձ:

Արաբկիրի հայաբնակ գյուղերից էր նաև Խոռոչը, որը գտնվում էր Արաբկիրից արևելք, Ծագ, Մաշկերտ գյուղերի հարևանությամբ: Ըստ Էփրիկյանի՝ գյուղն ունեցել է 98 հայ բնակիչ[471]: Թեոդիկի ցուցակի համաձայն՝ այն ուներ 20 տուն[472], Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակի համաձայն՝ 20 տուն՝ 115 հայ բնակիչ[473]: Հայ բնակիչների թիվը Խոռոչ գյուղում հաշվում ենք 160:

Խոռոչից հարավ ընկած էին Էհնեցիք ու Ծապլվար գյուղերը: Առաջինն, ըստ Թեոդիկի, ուներ 26 տուն[474], ըստ մյուս ցուցակի՝ 26 տուն, 231 հայ բնակիչ[475]: Գյուղի հայության թիվն ընդունում ենք 231: Ինչ վերաբերում է Ծապլվարին, ապա այս գյուղն Էփրիկյանի տվյալներով ուներ 3 տուն հայ բնակիչ[476]: Թեոդիկը հայության թիվ չի նշում այս գյուղում: Ըստ պատրիարքարանի մյուս ցուցակի՝ գյուղն ուներ 16 հայ բնակիչ[477], ինչն էլ ընդունենք, քանի որ այլ տվյալ չկա:

Այժմ անդրադառնանք Աղինի գյուղախմբին: Վերջինս մտնում էր Արաբկիրի վիճակի մեջ, սակայն վարչականորեն

---

467 Բալստիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 147:
468 «Նոր Արաբկիր տեղեկատու», յունիս 1943, թիւ 22, էջ 4:
469 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
470 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:
471 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, գիրք Ա, էջ 279:
472 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
473 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ380:
474 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
475 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:
476 Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. 1, էջ 100:
477 Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

միացվել էր Ակնի գավառակին: Բանն այն է, որ Աղինը գտնվում էր Արաբկիրի մոտակայքում, մինչդեռ Ակնից հեռու էր կրկնակի անգամ: Ըստ էության, գավառի ընդհանուր հաշվարկի մեջ բնակչության քանակը չի տարբերվում, ուստի անդրադառնանք այս նահիթի գյուղերին Արաբկիրի գավառակի ենթաբաժնում, ինչը թեև օսմանյան վարչական բաժանմանը համահունչ չէր, սակայն ավելի տրամաբանական էր ու դյուրին ուսումնասիրության համար:

Աղինի գյուղախումբը բաղկացած էր 55 բնակավայրերից: Խոսելով Աղինի հայության մասին՝ Ջանիկյանը նշում է, որ «Աղինու գիւղացիք բաւական հող և երկրագործութիւն ունին, սակայն անոնցմէ ևս պանդխտութեան գնացողներ պակաս չեն, մանաւանդ հայերը որք Ակնայ և գաւառին հայոց չափ ի Պոլիս, նաև Բերիա և այլուր պանդխտութեան կերթան»[478]: Մեկ այլ հեղինակ՝ Բախտիկյանը, նշում է, որ Աղինը, որ նույն վաղավերն էր, ուներ 20 գյուղ: Այս գյուղաքաղաքի բնակչության կենը, ըստ հեղինակի, հայեր էին, ինչը կազմում էր շուրջ 800 շունչ[479]: Փոլատյանի կազմած՝ Արաբկիրին նվիրված հուշամատյանում հեղինակներից Բ. Մատենճյանի կարծիքով՝ Աղինը երբեք 800 հայ չի ունեցել, ըստ նրա, «հայերու առաւելագոյն թիւը 450 էն աւելի չէ եղած»[480]: Անդրադառնալով դարավերջի վերաբերյալ եղած տվյալներին՝ արձանագրենք, որ, ըստ Էփրիկյանի, գյուղաքաղաքն ուներ 200 տուն հայ և 300 տուն թուրք բնակիչ[481]: Նույն տվյալն է հրատարակվել նաև «Նոր Արաբկիր տեղեկատու» հանդեսում[482]: Թեոդիկը, որը Աղինը հիշատակել է Արաբկիրի գավառակի բնակավայրերի հետ, հայության թվաքանակը ներ-

---

[478] Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 33-34:
[479] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 153:
[480] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 101:
[481] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. 1, էջ 100:
[482] «Նոր Արաբկիր տեղեկատու», յունիս 1943:

կայացնում է 52 տուն[483], մյուս ցուցակում նշվում է, որ բնակավայրն ուներ 52 տուն՝ 319 հայ բնակիչ[484]: Ա. Փոլատյանի մոտ Աղինի ենթակա գյուղերի բնակչության թվաքանակն արտացոլող մեկ այլ վիճակագրական ցուցակի համաձայն Աղինը ուներ 420 հայ, 7970 թուրք, 10 քուրդ բնակիչ[485]: Ցավոք, այս վիճակագրության ոչ կազմողն է նշված, ոչ էլ այն տարեթիվը, որին առնչվում է այն: Միայն կարելի է ենթադրել, որ այս վիճակագրությունը վերաբերում է XX դարի սկզբներին և այստեղ ներկայացված թվերը առավել ընդունելի են: Ըստ մեզ՝ Աղինի հայության համար տրված 420 շունչը հայերի հենց այն քանակն էր, որ 1915 թ. դրությամբ ապրում էր գյուղաքաղաքում: Գրեթե նույն թիվն ենք ստանում, երբ պատրիարքարանի ցուցակում տրված տների թիվը բազմապատկում ենք տան անդամների թվով՝ 8-ով, ստացվում է 416: Այդ ցուցակում ներառված են Աղինի ենթակա 20 գյուղեր, որոնցից հայաբնակ էին 5-ը՝ Վաղշեն, Վանք, Կռանի, Հասկնի, Քուշնա: Թեոդիկը այս բնակավայրերը հիշատակել է որպես Արաբկիրին ենթակա գյուղեր: Այս գյուղերի համար տան անդամների թիվը հաշվարկենք 8-ի հարաբերակցությամբ՝ որպես հիմք ընդունելով պատրիարքարանի ներկայացրած տների քանակը:

Ընդհանուր առմամբ, Արաբկիրի գավառակում, ներառյալ Աղինի նահիին, հաշվում ենք հայաբնակ 16 բնակավայր, որոնցից զուտ հայաբնակ էին միայն Ծեփիկը, Քուշնան, Ծագն ու Սաղմկան, մյուսներում հայերն ապրում էին խառը թուրքերի հետ: Գավառակում 1915 թ. դրությամբ, ըստ մեր հաշվարկների՝ ապրում էր 18382 հայ բնակիչ (տես՝ աղյուսակ 5):

---

[483] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[484] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 378:
[485] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 97:

Աղյուսակ 5. Արաբկիրի գավառակի հայ բնակչության թվաքանակը

	թվականի	Ղ. Գեղեցկան, Ղ. Փոքրիկյան	Ս. Ավետիսյան	Ա. Փալատյան	մեզ հասած տվյալներ
Արաբկիր	2000 տ. / 9500 շ.	1300 տ. / 9523 շ.	-	-	12000 շ.
Ադին	52 / 320	52 / 319	800 շ.	420 շ.	416
Վաղշնն	56 տ.	56 / 276	-	490	448
Թուշնա	-	68 / 397	150 տ.[486]	210	544
Կոռանի	16	16 / 92	20 տ.[487]	103	128
Հասկնի	14	14 / 70	25 տ.[488]	115	112
Վանք	20	20 / 129	-	-	160
Խոռոչ	20	20 / 115	21 տ.[489]	-	160
Մաշկերտ	67	67 / 496	-	-	536
Սաղմկա	36	36 / 279	35 տ.	-	288
Անջրդի	118	118 / 510	180 տ.	1000 շ.	1440
Ին/Ծաղ	82	82 / 687	500-550 շ.	100 տ.	687
Ծաղկվար	-	16 շ.	-	5-10 տ.[490]	16
Ծնփիկ	96 / 470	96 / 468	120 տ.	100 տ. / 600 շ.	768
Ամարկա	56	56 / 250	-	-	448
Էինենգիր	26	26 / 231	-	-	231
Ընդամենը	2659 տ.	13858 շ.			18382 շ.

Այսպիսով, ամփոփելով ասվածը, նշենք, որ Խարբերդի գավառակի հայաբնակ բնակավայրերի ցուցակում ընդգրկել ենք 2 քաղաք և 54 գյուղ, Կապան Մադենի գավառակում՝ 1 քաղաք, 2 գյուղ, Փոթուրկեռում՝ 1 գյուղ, Ակնում՝ 1 քաղաք և 10 գյուղ, Արաբկիրում՝ 1 քաղաք և 15 գյուղ: Համաձայն մեր հաշվարկների՝ XX դարի սկզբին Խարբերդի գավառում ապրում էր 99274 հայ բնակիչ (տես՝ աղյուսակ 6): Նշենք, որ ստացված տվյալները

---

[486] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 149:
[487] Նույն տեղում, էջ 137:
[488] Նույն տեղում, էջ 138:
[489] Նույն տեղում:
[490] Փալատեան Ա., նշվ. աշխ., էջ 111:

գրեթե համընկնում են Մ. Օրմանյանի հրատարակած պատրիարքարանի տվյալների հետ, որոնց համաձայն՝ գավառում, ընդհանուր առմամբ, հաշվվում էր 92700 հայ բնակիչ:

Աղյուսակ 6. Խարբերդի գավառի հայ բնակչության թվաքանակը 1915 թ. դրությամբ՝ ըստ մեր հաշվարկների.

Խարբերդ գավառակ	63225 շ.
Կլապան-Մադեն գավառակ	1100 շ.
Փոքուրկեն գավառակ	679 շ.
Ակն գավառակ	15888 շ.
Արաբկիր գավառակ	18382 շ.
Ընդամենը	99274 շ.

բ) Դերսիմի գավառ

Խարբերդի նահանգի գավառներից էր Դերսիմը, որը նախկինում առանձին վիլայեթ էր հանդիսանում: Խարբերդի նահանգի ձևավորումից հետո օսմանյան իշխանություններին պարզ էր, որ իրենց հիմնական նպատակը՝ ստեղծել նահանգներ, որոնցում հայ բնակչությունը մեծամասնություն չունենա, չէր իրականացել, ուստի իրականացրին նոր սահմանային փոփոխություններ: 1888 թ. որպես առանձին սանջակ Դերսիմը կցվեց Մամուրեթ ուլ Ազիզ նահանգին: Սա կանխապես մտածված քայլ էր, քանի որ նահանգի առումով հայերն այլևս մեծամասնություն չէին կազմում:

Դերսիմի աշխարհագրական դիրքի, յուրահատկությունների, բնակչության կազմի վերաբերյալ կարևոր ուսումնասիրություն է կատարել Անդրանիկը: Վերջինս անդրադառնում է նախ Դերսիմի բնակլիմայական պայմաններին: Ըստ հեղինակի՝ Դերսիմը, մասնավորապես Դաշտային Դերսիմը, հանդիսանում էր «բուսականութեան կողմանէ Հայաստանի ամենահարուստ

մասնրէն մէկը»[491]: Հայաբնակ էր հատկապես այս մասը, որն ընդգրկում էր Զարսանջակը, Խոզաթն ու Զմշկածագը: Լեռնային Դերսիմն ամբողջությամբ ծածկված էր անտառներով՝ այդ թվում և բերքատու ծառատեսակներով: Դերսիմն ուներ նաև կարևոր ու հարուստ հանքատեղիներ, այդ թվում՝ ոսկու, բոյակի, նավթի, աղի, ևն: Դերսիմի լեռնային մասը գրեթե ամբողջովին քրդաբնակ էր:

Դեռևս XVII-XVIII դարերում Դերսիմն ունեցել է ստվար թվով հայ բնակչություն: Հ. Գասպարյանը, որ բնիկ դերսիմցի էր, տալով Դերսիմի պատմաազգագրական հատմառոտ նկարագրությունը, եզրակացնում է, որ «Դերսիմի բարձրավանդակում մի ժամանակ գերակշռելիս են եղել հայերը»[492]: Դերսիմ անվան ստուգաբանությունը, ըստ Հ. Գասպարյանի՝ կապված է ավանդության հետ, որի համաձայն՝ այս բարձրավանդակում մի ժամանակ եղել է Տեր Սիմոն անունով առաջնորդ: Վերջինիս անունն է, որ դարերի ընթացքում աղավաղվել ու դարձել է Դերսիմ[493]: Աղբյուրները նշում են, որ Դերսիմում շատ էին կիսակործան, կիսավեր եկեղեցիներն ու վանքերը, գերեզմանները. ինչը ևս խոսում է այն փաստի օգտին, որ այս տարածքներում դարեր շարունակ հայեր են ապրել:

XVIII դարի կեսերից Դերսիմ են թափանցել եկվոր քրդերը, որոնք աստիճանաբար գավթել են հայերին պատկանող հողատարածքները՝ արտաքսելով վերջիններիս: Ահա ինչու, օսմանյան իշխանությունները խրախուսում էին եկվոր քրդերի մուտքը և հաստատվելը հայաբնակ բնակավայրերում: Եկվոր քրդերի հաստատված բնակավայրերը հայաթափվում էին, բնակչության մի

---

[491] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 116:
[492] Գասպարյան Հ., Դերսիմ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1979, N 2, էջ 198:
[493] Գասպարեան Հ., Զմշկածագ եւ իր գիւղերը, 1969, էջ 451:

մասն էլ կրոնավոխ էր արվում: Նշենք, որ Դերսիմի քրդերի ծագումնաբանության հարցը բավական բարդ է, նրանց դժվար է վերագրել այս կամ այն էթնիկ խմբին: Անդրանիկը գրում է, որ «տէրսիմցիներու ծագումը կնճռուտ հարց մը է, որուն դրական պատասխան տալը գրէթէ անկարելի է, որովհետև Տէրսիմի մէջ այժմ կգտնուին 25 և ալ աւելի զանազան ցեղեր, որոնց ցեղային անուններէն կարող ենք հետևցնել, որ դրբա ոչ օսմանցի են, ոչ պարսիկ, ոչ քուրդ, ոչ հայ, ոչ պարթև, ոչ մար, և ոչ ալ չգիտեմ ինչ, այլ ամենու խառնուրդն են, ինչպէս և իրենց լեզուն ու կրօնը»[494]: Նույնքան բարդ է և դերսիմցիների կրոնական պատկանելիության հարցը, քանի որ նրանց դավանանքը իր մեջ ներառում էր տարրեր թե՛ քրիստոնեության, թե՛ իսլամի ծիսակարգերից: 1882 թ. լույս տեսած թերթերից մեկում խոսվում է հայ-քրդական առնչությունների մասին. «Քիւրդեր ոմանք շատ անգամ Հայոց վանքեր ուխտագնացութեան կերթան իրենց հիւանդներով, զոհ կանեն, կերդուին հայոց վանքերու և սրբոց վրայ, որևիցէ հայկական տօնախմբութիւն կայծակեն, քրդաց մի մաս իր որդւոց թլփատութեան ատեն անպատճառ իւր մտերիմ հայէն մէկ իրեն քրիվայ (կնքահայր) կընտրէ: Այս նմանութիւններ բոլորովին ապացոյց են քրդաց ծագմամբ հայ լինելուն, և նոցա ոմանց մահմետական լինելուն պատճառ միայն զէնք և երկիր ձեռքէ չգցելն է»[495]:

Անդրանիկը նշում է, որ «ամբողջ Տէրսիմի մէջ ապրում էին իբր 200000, քիչ աւելի կամ պակաս, ոչ մուսուլման քրդեր՝ առանձին-առանձին ցեղերու բաժնուած, որոնց առհասարակ

---

[494] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 169:
[495] Փափազեանց Վ., Թէ ինչու համար Տաճկահայաստանցի գիւղացին ստիպուած է գաղթել, «Արձագանք», Թիֆլիս, 28 նոյեմբեր, N 41, էջ 642-645:

Ղզլբաշ անունը կուտան, որ կընշանակէ կարմրագլուխ»[496]: Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Ն. Տաղավարյանի բերած տվյալների համաձայն՝ միայն Դերսիմում և Մալաթիայում կզլբաշների թիվը հասնում էր 300000-ի[497]: Վերջիններս բնակվում էին բացի Լեռնային Դերսիմից, Լեռնալանջային և Դաշտային Դերսիմի 100-ից ավելի հայ-կզլբաշ խառը գյուղերում[498]: Կզլբաշներու թվաքանակի մերաբերյալ Հ. Շահպազյանը բերելով տարբեր տվյալներ, եզրակացնում է, որ «իբր հաւանական միջին թիւ առնելու է անգլիական հիւպատոս Թէյլրի ցոյց տուած քանակը՝ որ է 110000»[499]:

Ուսումնասիրողների մի մասը հակված է նրան, որ կզլբաշները հայկական ծագում ունեին: Գ. Երևանյանը կարծում է, որ «Տէրսիմի մէջ բնակող Ալէվի կամ Գըզըլպաշ կոչուած ժողովուրդը, քուրդ անուան տակ ծածկուած՝ արիւնով, հաւատքով, նահապետական սովորութիւններով մնացած հայեր են»[500]: Խոսելով դերսիմցիների մասին, մեկ այլ հեղինակ՝ Պ. Նաթանյանը, նշում է, որ թերևս, սրանք սերել են հայերից, քանզի «իրենց մէջ գործածուած անուանց եւ մականունանց շատը հայ անուններ են, մանավանդ կանանց անունները, օրինակի համար՝ Մարիամ, Սրբուկ, Մարգրիտ»[501]: Մասնավորապես, հիշատակություն կա, որ հայտնի շեյխերի ու բեկերի անուններում և ազգանուններում ևս հաճախ հանդիպում էին հայկական անուններ ու

---

496 Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 157:
497 Հարությունյան Վ., Հայ հետազոտողները ալևիների մասին, «Մերձավոր Արևելք» հոդվածների ժողովածու, N VII, Երևան, 2011, էջ 170:
498 Գարագաշյան Վ., Դերսիմը եւ հայերը, «Երկիր», 1 օգոստոս, 2008:
499 Շահպազեան Յ., Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 128:
500 Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 83:
501 Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 110:

անվանումներ[502]: Դերսիմցի քրդերի իսկ վկայությամբ՝ Զմշկածաձի բազմաթիվ գյուղերի սեյիտներն ու շեյխերը շառավիղներն են եղել այդ վայրերի երբեմնի հայ եկեղեցականության[503]: Այս խնդրին է անդրադառնում նաև հեղինակներից Հ. Շահպազյանը, որը, մասնավորապես գրում է. «Դերսիմի Քիւրդերը կը կոչուին Զազա, ունին լեզուական ուրոյն բարբառ. Տօրոսի շղթաներու վրայ եղածները կանուանուին Աւշար: Աւշար ցեղի մէջ աւանդութիւն կայ, որ իրենք սերած են Արշակունիներէ. Մալաթիոյ, և Տէրսիմի շրջաններու բնակուած քիւրդերու ցեղերէն մէկը կը կոչուի Խաչօվալի, որ կրօնական առումն ունենալով Խաչեան կը բացատրուի»[504]:

Դերսիմի քրդերի ծագման վերաբերյալ Ա. Ալպոյաճյանը գրում է. «Ոմանք կը կարծեն անոնց կարգ մը քրիստոնէական սովորութիւններուն եւ աւանդութիւններուն վրայ հիմնուած, թէ Հայերու հետ կապ ունին եւ իսլամացած Հայեր են, բայց աւելի հաւանական է կարծել թէ անոնք եկուորներ են որ եկած բնիկ ժողովուրդին՝ հայոց խառնուած են եւ տիրապետող եղած են: Իսկ բնիկ տարրը անոնց մէջ ձուլուած է պահելով հին հաւատքին եւ սրբատեղիներուն յարգանքը»[505]:

Այս ցեղերի մեջ հայկական տարրի առկայության փաստը, թերևս անժխտելի է, ինչը երևում էր վերջիններիս կենցաղից, սովորույթներից, հավատքից, որում պահպանվել էին քրիստոնեության շատ տարրեր: Առավել հստակ է Միրագյան ցեղախմբի ծագման հարցը: Որևէ տարակարծություն չկա, որ Մի-

---

502 "Армянский Вестникъ", 1917, 4, стр. 15.

503 Աճէմեան Խորէն քհնյ., Զմշկածագը եւ իր գիւղը, «Հայրենիք» ամսագիր, Ըստոն, 1966, թիւ 6, յունիս, էջ 25:

504 Շահպազեան Յ., նշվ. աշխ., էջ 124-125:

505 Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 459:

ռագյանները հայեր էին, քանի որ նրանք անաղարտ պահում էին ազգային ու կրոնական ավանդույթները: Միրագյանների ծեսերի մասին խոսելիս Անդրանիկը գրում է, որ նրանք հայ քահանա էին բերում այլ վայրերից, խոստովանվում ու հաղորդվում, օրհնում տունը[506]:

Միրագյանների թվաքանակն, ըստ Անդրանիկի՝ հասնում էր 7000-ի[507]: Գ. Երևանյանի կարծիքով՝ այս տվյալը վերաբերում էր 1800-ականներին[508]: Միրագյանները, ըստ Երևանյանի, 1880-ականներից սկսել էին թուլանալ: Ի վերջո նրանց մի մասը թողնում է ծննդավայրը և հաստատվում Զարսանջակում: Երևանյանը գրում է, որ բազմաթիվ Միրագյաններ հաստատվել են Թուրուշմեկ, Կյոք Թեփե, Խոզնգեղ, Խոնեկ, Կուզուլճուք, Պալշեր, Շորտան և մի քանի այլ գյուղերում[509]: Այն փաստը, որ Զարսանջակ տեղափոխված Միրագյանները հեշտությամբ ինտեգրվել են հայերի կյանքին, կրկին խոսում է այն մասին, որ նրանք որևէ կերպ չեն տարբերվել տեղի հայ բնակչությունից: Գ. Հալաջյանի տվյալներով 1909-1914 թթ. դրությամբ Միրագյաններ ապրում էին Խոզաթի Հավլորի, Թորուտ, Կզլքիլիսեի Կարմիր բերդ, Խնձորի, Սբլիս, Հայտարան, Ձորբերան, Միրավան, Օվանընգի Հաղաջուր, Բարդի, Ակունք, Տանձիկ, Մեծկերտի Խոզնգեղ գյուղերում[510]: Նրանց թվաքանակի վերաբերյալ Գ. Հալաջյանի բերած տվյալները ներառել ենք տվյալ գավառակների հայության թվաքանակի մեջ:

---

[506] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 185:
[507] Նույն տեղում, էջ 177:
[508] Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 97:
[509] Նույն տեղում, էջ 103:
[510] Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 5, Երևան, 1973, էջ 40-42, 53-54, 71, 73-76:

Նշենք նաև, որ Դերսիմում կային բնակավայրեր, որտեղ հայերը քրդախոս էին և միևնույն ժամանակ խոսում էին հայերենի խիստ խրթին բարբառային ձևով: Նման բնակավայրերից էին Օվաճըգի Աշուրան (Աշուրենկ), Լերթիկ, Կորնգա, Կզըլքիլիսեի Թաքսինե, Տեր Օվան, Խոզաթի Իգոլի և այլ բնակավայրեր: Գ. Հալաջյանի հավաստմամբ Դերսիմում բնակվող քրդախոս հայերն անաղարտ պահում էին թե՛ իրենց ազգային դիմագիծը, թե՛ կրոնական պատկանելիությունը[511]:

Ի տարբերություն Գ. Հալաջյանի՝ մեկ այլ ուսումնասիրող՝ Հ. Գասպարյանը, Դերսիմի բազմաթիվ բնակավայրեր հիշատակում է որպես քրդաբնակ: Խոսքն, օրինակ, Սորփիան (Սուրբ Օհան), Սաղման, Ահրիման, Երկան Ընկուզ, Դաշտակ, Աղզունիկ, Զամբեղ, Սագետիկ, Խնձորի, Ագրակ, Պռաստիկ, Խաչտուն, Աղբաձոր, Բաբդի, Լերթիկ[512] և այլ գյուղերի մասին է: Վերոնշյալ բնակավայրերի հայության թվաքանակը կքննարկենք համապատասխան գավառակների բնակավայրերին անդրադառնալիս:

1912 թ. դրությամբ Դերսիմի գավառը ներառում էր Խոզաթ, Օվաճըգ, Մեծկերտ, Կըզլ Քիլիսե (Նազիմիե), Զմշկածագ, Զարսանջակ գավառակները: Անդրադառնանք այդ գավառակների հայկական բնակավայրերի վերաբերյալ եղած հիշատակություններին, հստակեցնենք հայաբնակ բնակավայրերի թիվն ու հայ բնակչության թվաքանակն այդ գավառակներում և ողջ Դերսիմի գավառում: Նշենք, որ պատրիարքարանի ցուցակների անկատարությունն առավել ընդգծված է Դերսիմի գավառի բնակավայրերի ու հայ բնակչության թվաքանակի դեպքում, քա-

---

[511] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 45, 51, 53, 54, 71-71:
[512] Գասպարյան Հ., Դերսիմ, էջ 196:

նի որ այս ցուցակներում բացակայում են բազմաթիվ բնակավայրեր, որոնք նշված ժամանակաշրջանում հայաբնակ են եղել:

1) Խոզաթ, Մեծկերտ, Կրգլ Քիլիսե գավառակներ: Խոզաթ գավառակը գտնվում էր գավառի կենտրոնական հատվածում, արևմուտքից Խոզաթին սահմանակից էր Զմշկածագի գավառակը, արևելքից՝ Մեծկերտի գավառակը, հարավում՝ Զարսանջակը: Խոզաթը 1881 թ. դրությամբ Դերսիմի վիլայեթի կենտրոնական սանջակն էր, 1888 թ. այն որպես Դերսիմի սանջակ մաս կազմեց Մամուրեթ ուլ Ազիզ նահանգի[513]: Պատրիարքարանի ցուցակի համաձայն՝ 1913-1914 թթ. դրությամբ գավառակն ուներ 16 հայաբնակ բնակավայր, 18 եկեղեցի, 11 վանք, 5 դպրոց, ընդհանուր առմամբ՝ 2299 հայ բնակիչ[514], որից, ըստ Թեոդիկի հրատարակած ցուցակի՝ գավառակի կենտրոն հանդիսացող Խոզաթ բնակավայրը՝ 60 տուն[515], ըստ Ռ. Գևորգյանի ու Պ. փաբուճյանի հրատարակած ցուցակի՝ 60 տուն՝ 350 շունչ հայ բնակիչ[516]: Սա այն դեպքում, երբ Անդրանիկի տվյալներով XIX դարի վերջերին Խոզաթն ուներ 1500 տուն բնակիչ, որոնց մեծ մասը հայեր էին[517]: Ավելին, բնիկ դերսիմցի Գ. Հալաջյանի վկայության համաձայն՝ Խոզաթն ուներ 864 տուն՝ 8640 շունչ հայ, 324 տուն՝ 1944 շունչ քուրդ բնակչություն[518]: Անդրանիկի և Գ. Հալաջյանի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք շատ մոտ են իրար: Ուստի որպես հիմք ընդունենք նույն Հալաջյանի մատնանշած թվաքանակը՝ 864 տուն. տան անդամների քանակը հաշվելով 6, ինչպես քաղաքի դեպքում ենք ընդունում, ստանում ենք 5184:

---

[513] Birken A., նշվ. աշխ., էջ 199:
[514] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[515] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան, էջ 549:
[516] Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 382:
[517] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 146:
[518] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 33: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 260, թ. 38-39:

Գավառակի տարածքում Թեոդիկն առանձնացնում է 11, պատրիարքարանի մյուս ցուցակում հիշատակված է 16 հայաբնակ գյուղ: Մասնավորապես Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի մոտ որպես առանձին բնակավայրեր են նշվում Հալվորի ու Հալվորիվանք գյուղերը, մինչդեռ այս երկու բնակավայրերը Թեոդիկը տալիս է մեկ անվան տակ՝ Հալվորիկ. հայերի քանակը երկու աղբյուրներն էլ նույնն են մատնանշում, Թեոդիկը՝ գումարային առումով, մյուս աղբյուրը՝ առանձին-առանձին: Համահեղինակների (Ռ. Գ. և Պ. Փ.) հրատարակած ցուցակի համաձայն՝ Խոզաթի գավառակին են վերագրվում Հաղթուկ, Ագրակ, Տեղքե, Բենդրեթիլ գյուղերը, որոնք Թեոդիկը նշել է որպես Չմշկածագին ենթակա գյուղեր: Այս գյուղերը մենք թվարկում ենք Չմշկածագի գավառակի սահմաններում, քանի որ դրանց տեղադրությունն ավելի մոտ էր Չմշկածագին, քան Խոզաթին: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ համահեղինակներն այս գյուղերի տեղադրությունը չեն նշում քարտեզի վրա: Պատրիարքարանի ցուցակներում որպես Խոզաթի գավառակի բնակավայր հիշատակվում է նաև Սորփիանը, սակայն մենք այն ընդգրկել ենք Զարսանջակի գավառակում: Բացի պատրիարքարանի ցուցակներում Խոզաթի գավառակի տարածքում ընդգրկված վերոնշյալ բնակավայրերը, Գ. Հալաջյանը Խոզաթի շրջանում հիշատակում է նաև Բուլանխ, Թաթան, Թորուտ, Մամեգի, Կյուզուք, Տերե Արիան, Իզոլի գյուղերը: Գ. Հալաջյանի տվյալների համաձայն՝ Խոզաթում հիշատակվող այս վերջին գյուղի հայերը տեղափոխվել ու հիմնադրել են նույնանուն բնակավայր Մալաթիայի տարածքում: Նախկին բնակավայրում Գ. Հալաջյանի համաձայն ապրում էր 28 տուն՝ 280 շունչ հայ[519]: Հալաջյանը նաև հիշատակում է Արսենիկ բնակավայրը, որը, կարծում ենք, նույն Աղզունիքն է: Հա-

[519] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 42:

լաջյանը Ընճղակ բնակավայրը հիշատակել է Մեծկերտում, սակայն մենք այն ընդգրկել ենք Խոզաթի տարածքում: Խոզաթի գավառակի, ինչպես Դերսիմի մյուս գավառակների բնակավայրերի դեպքում, հայ բնակչության թվաքանակը հաշվարկելիս հիմք ենք ընդունել Հալաջյանի մատնանշած տների քանակը, տան անդամների թիվը հաշվել 8, այլ ոչ 10, ինչպես հիմնականում հաշվարկել է Հալաջյանը:

Խոզաթի գավառակում ընդգրկված գյուղերից գրեթե բոլորը հիշատակված են Սրվանձտյանցի ու Էփրիկյանի մոտ: Այդ աղբյուրների համաձայն՝ գյուղերը բոլորն էլ ունեցել են եկեղեցիներ, շատերը նախկինում հայաշատ են եղել: Նշենք, որ հիմնականում այս գյուղերի վերաբերյալ Էփրիկյանի բերած տվյալների աղբյուրը Սրվանձտյանցն է, ուստի դրանք չենք մեջբերում: Խոզաթում, ընդհանուր առմամբ, հաշվում ենք 9928 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Խոզաթ գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, քաղաք	Գ. Սրվանձտյանց[520]	Պ. Նաթանյան[521]	Թեոդիկ[522]	Ռ. Գեորգյան, Պ. Փաբուճյան[523]	Գ. Երևանյան[524]	Գ. Հալաջյան[525]	մեր հաշվարկները
Աղգունիք-Արսենիկ	7 տ.	-	15 տ.	15 տ. / 65 շ.	18 տ.	23 տ. / 230 շ.	184 շ.

[520] Սրուանձտնանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 151:
[521] Նաթաննան Պ., նշվ. աշխ., էջ 105-106:
[522] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 549:
[523] Ke'vorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 382:
[524] Երեւաննան Գ., նշվ. աշխ., էջ 207-220:
[525] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 32-43:

Բուլանխ	-	-	-	-	-	15 / 150	120
Դ-աշտակ	6	-	20	135 շ.	8	30 / 300	240
Երկայն-Ընկույզ	10	5 / 35 շ.	5	30 շ.	3	12 / 96	96
Համբեղ	10	5 / 62 շ.	10	10 / 81	10	38 / 304	304
Ընճղակ	28	-	40	40 / 240	28	35 / 280	280
Թուլթան	-	-	-	-	-	30 / 300	240
Թորուտ	-	-	-	-	-	65 / 650	520
Իզոլի	-	-	-	-	-	28 / 280	224
Խոզաթ	19	-	60	60 / 350	-	864 / 8640	5184
Կյուզուք	-	-	-	-	-	90 / 900	720
Հալվորի	-	-	-	5 / 32	7	60 / 600	480
Հալվորիվանք	7	5 / 78	20	15 / 78	-		
Հավշաքար	-	-	40	40 / 260	30	36 / 288	288
Մամնզի	-	-	-	-	-	56 / 560	448
Սագնտիկ	8	-	10	10 / 66	8	-	80
Սին-Շեն	7	-	10	10 / 55	7	35 / 350	280
Տերն Արիան	-	-	-	-	-	25 / 250	200
Փայեկ	12	-	5	35 շ.	12	-	40
Ընդամենը	114 տ.		235 տ.	1427 շ.	131 տ.	1442 տ.	9928 շ.

Մենկերտի գավառակը գտնվում էր Զարսանջակից հյուսիս: Մենկերտից հյուսիս Կըզըլ Քիլիսե գավառակն էր, արևմուտք՝ Խոզաթի գավառակը: 1881 թ. դրությամբ Մենկերտը Դերսիմի վիլայեթի սանջակներից էր[526], 1888 թ. դարձավ Դերսիմի սանջակի գավառակ՝ Մամուրեթ ուլ Ազիզ վիլայեթի կազմում: Երկրամասը լեռնային էր, մշակելի տարածքները՝ ոչ շատ, երկրա-

[526] Birken A., նշվ. աշխ., էջ 199:

գործությամբ զբաղվում էին միայն հայերը: Հայ բնակչությունը զբաղվում էր նաև արհեստագործությամբ, առևտրով: Մեծկերտի գավառակում քիչ չէին եկեղեցիները, թեև դրանցից ոչ բոլորն էին գործում: Կրթական առումով վիճակն անմխիթար էր, կային հատուկենտ, այն էլ նախակրթարանների մակարդակի հաստատություններ:

Ըստ Հալաջյանի՝ Մեծկերտի շրջանում ապրում էր 829 տուն՝ 6632 շունչ հայ, 2320 տուն՝ 11600 շունչ քուրդ[527]: Սա գավառակում ապրող հայ բնակչության թվաքանակն արտացոլող առավել մեծ թիվն է, ամենափոքրը ներկայացված է պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակներում: Համաձայն պատրիարքարանի ցուցակի՝ գավառակում կար 9 հայաբնակ բնակավայր, 14 եկեղեցի, 22 վանք, 1835 հայ բնակիչ[528]: Ինչպես արդեն նշել ենք, Դերսիմի բնակավայրերի համար տրված պատրիարքարանի տվյալները հայ բնակչության թվաքանակը չափազանց նվազ են ցույց տալիս: Այս գավառակի դեպքում նույնպես առավել արժանահավատ են թվում Գ. Հալաջյանի տվյալները:

Գավառակի կենտրոնը Մեծկերտ քաղաքն էր, որն, ըստ Թեոդիկի, ուներ 150 տուն[529], ըստ հրատարակված մյուս ցուցակի՝ 150 տուն, 1200 հայ բնակիչ[530]: Մինչդեռ ըստ Անդրանիկի՝ 1893-1894 թթ. դրությամբ Մեծկերտն ուներ 700-800 տուն բնակիչ, որի մեծ մասը հայեր էին[531], որոնք զբաղվում էին «կառավարութեան գործերով և խանութպանութեամբ»: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Մեծկերտն ուներ 600 տուն, 6000 շունչ հայ բնակիչ[532]:

---

[527] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 88: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 891, թ. 36:
[528] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[529] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան, էջ 550:
[530] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 383:
[531] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 145:
[532] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 828, թ. 2:

Ըստ Հալաջյանի՝ Մեծկերտն ուներ 486 տուն՝ 3888 հայ բնակիչ, 430 տուն՝ 2150 շունչ քուրդ բնակիչ[533]: Կարծում ենք, որ գավառակի այս կենտրոնական բնակավայրի հայությունը, որը դարավերջին կազմել է, ըստ Անդրանիկի, նվազագույնը 400 տուն, չէր կարող մինչև 1914 թ. նվազել մինչև 150 տան: Հայ բնակչության նվազում մյուս՝ փոքրաթիվ հայություն ունեցող գյուղական բնակավայրերում հնարավոր էր, և նման փաստերը բազմաթիվ են, սակայն, երբ խոսքը քաղաքների ու գյուղաքաղաքների մասին է, որտեղ կենտրոնացած էր շրջակայքի հայ բնակչության հիմնական մասը, նման կարգի քանակային փոփոխությունը գրեթե անհնար էր: Ավելին, երբ համեմատում ենք դարավերջի տվյալները XX դարի սկզբների տվյալների հետ, նկատելիորեն նվազել էր հայության թվաքանակը գավառակի գյուղերում, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ քաղաքում նվազման նման միտում չէր կարող լիներ կամ գոնե եղած արտահոսքը կլրացվեր գյուղերից քաղաքում հաստատվողների հաշվին: Ուստի ընդունենք Հալաջյանի տվյալը՝ 486 տուն. տան անդամների թիվը հաշվելով 6՝ ստանում ենք 2916:

Թեոդիկը բացի քաղաքը Մեծկերտի շրջանում թվարկում է ևս 12 բնակավայր, որոնցից 8-ը համընկնում են պատրիաքարանի մյուս ցուցակի հետ: Այդ բնակավայրերն են՝ Լազվան, Խոզնգեղ, Շորտան, Տամութաղ, Տանապրուն, Տիլան օղլի, Փալս, Զուգուր: Թեոդիկը նաև նշում է Թուրուշմակ, Գարմսի, Հազեզ, Մարխո գյուղերը, սակայն հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ որևէ տվյալ չի ներկայացնում: Գարմսիի ու Հազեզի վերաբերյալ տվյալներ ունի նաև Գ. Սրվանձտյանցը: Պայմանականորեն ընդունենք, որ այս երկու գյուղերում XX դարի սկզբին ապրում էին 5-ական տուն հայ բնակիչներ: Բացա-

---

[533] Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, էջ 88: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 260, թ. 38-39:

ությամբ Զուգուր գյուղի, որի վերաբերյալ տվյալ կա միայն պատրիարքարանի ցուցակներում, մյուս բնակավայրերի համար ընդունենք Հալաջյանի տվյալները: Հավելենք, որ Մեծկերտի գավառակում ընդգրկել ենք նաև Պեկթաշ, Ահրիման, Սեղանք, Էսրիք, Յուսուֆան, Ծիլք, Սնտամ բնակավայրերը, որոնց վերաբերյալ տվյալներ կան միայն Հալաջյանի մոտ:

Հետաքրքիր փաստ ենք արձանագրում, երբ վերլուծում ենք Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի ներկայացրած ցուցակը կոնկրետ այս գավառակի բնակավայրերի համար: Եթե հաշվարկում ենք տների ու տան անդամների հարաբերակցությունը, ստացվում է, որ ի տարբերություն մյուս գավառակների, այս դեպքում յուրաքանչյուր տանը հաշվվում էր ոչ պակաս քան 8 անդամ: Սա այս ցուցակի համար աննախադեպ երևույթ էր, քանի որ նույնիսկ Խարբերդի դաշտի զուտ հայաբնակ գյուղերի դեպքում պատրիարքարանի ցուցակներում հաճախ տան անդամների թվի միջինը հաշվվում էր 5-6 և հազվադեպ՝ 8: Այս միտումը պատահական չի կարելի համարել, քանի որ Մեծկերտի, հատկապես Զարսանջակի ու Զմշկածագի բնակավայրերում հայկական ընտանիքներն ավելի բազմանդամ էին, քան մյուս գավառներում:

Մեկ այլ փաստ արձանագրենք. պատրիարքարանի ցուցակում Զուգուր անվամբ նշված բնակավայրի անվան կողքին Թեոդիկը նշել է նաև Կըզըլ Քիլիսե անվանումը: Վերջին անվամբ, ըստ Ռ. Գևորգյանի, Դերսիմի գավառում առանձնացված էր առանձին գավառակ՝ աննշան թվով հայ բնակչությամբ: Այս բնակավայրերն իրար մոտ են տեղադրված եղել, թերևս այդ պատճառով է Թեոդիկը նույնացրել երկու բնակավայրերը: Ինչ վերաբերում է Ռ. Գևորգյանին, ապա նա տալիս է Մեծկերտի Զուգուր գյուղի համար 50 հայ բնակիչ, Կըզըլ Քիլիսե գավառակի կենտրոնը հանդիսացող նույնանուն բնակավայրի համար՝ 89

հայ բնակիչ[534]: Ըստ Անդրանիկի՝ 1900 թ. դրությամբ Կզըլ Քիլիսե գյուղն ուներ 250-300 տուն բնակիչ, որից հայեր էին 20-25 տունը, այն էլ բնիկներ չէին, այլ հայեր, որ գաղթել էին Խարբերդից, Բալուից, Քղիից, Երզնկայից և այլ վայրերից[535]: Գ. Հալաջյանի համաձայն՝ Կզըլ Քիլիսեն ուներ 45 տուն, 450 շունչ հայ բնակիչ[536]: Այս տվյալներն իրարից խիստ տարբեր են: Ընդունենք, որ այս բնակավայրում ապրում էր նույնքան տուն հայ բնակիչ, որքան արձանագրել է Հալաջյանը: Սակայն Հալաջյանը շնչերի քանակը հաշվել է 10, մենք հաշվարկելով 8, ստանում ենք 360: Ա. Փոլատյանը գրում է, որ Կզըլ Քիլիսեին ենթակա էր 15 գյուղ[537], բայց պատրիարքարանի ցուցակով գավառակում հիշատակվում է միայն մեկ բնակավայր: Ինչ վերաբերում է գավառակի այլ հայաբնակ բնակավայրերին, ապա տվյալներ կան միայն Գ. Հալաջյանի մոտ: Վերջինս այս գավառակում հիշատակում է Թաքսինե, Խնձորի, Հազս, Արմ. Հազս, Հայտերան, Ձորբերան, Մանկունք, Միրավան, Սբլիս, Տեր Օվան, Հերտիֆ, Քարնձոր, Կարմիր քերդ, Ճանճիկե, Հայտարան, Հազս բնակավայրերը: Ընդ որում, Հալաջյանը տվյալներ է տալիս երեք տարբեր Հազսերի ու երկու Հայդարաննների վերաբերյալ[538]: Հալաջյանն այս գավառակի մեջ է ընդգրկում նաև Խոզնգեղ ու Փախ գյուղերը, որոնք մենք ընդգրկել ենք Մեծկերտի գավառակում, ինչպես տրված է պատրիարքարանի ցուցակներում: Նշված հեղինակը Կզըլ Քիլիսեի տարածքում է հիշատակում Հերտիֆ գյուղը, սակայն նշում է, որ այն գտնվել է Քղիի վարչական շրջանի մեջ, ուստի այն չենք ներառում ներքոհիշյալ ցուցակում: Հալաջ-

---

[534] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 382-383:
[535] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ142-143:
[536] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 260, թ. 38-39:
[537] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 38:
[538] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 68-76:

յանը նշում է, որ վերոնշյալ գյուղերից Թաքսինում և Տեր Օվանում ապրում էին քրդախոս հայեր: Հավանաբար, սա է պատճառը, որ պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակներում այս գավառակի բնակավայրերը նշված չեն. թերևս այս գյուղերի հայությունը համարվել է ոչ քրիստոնյա: Այս գավառակի դեպքում ևս Հալաջյանի կողմից բերված տվյալները համարում ենք ճշմարտացի. ընդունենք նրա տված տների քանակը՝ տան անդամների թվաքանակը հաշվելով 8:

Այսպիսով, 1915 թ. դրությամբ Խոզաթի գավառակում, ըստ մեր հաշվարկների, ապրում էր 9928, Մեծկերտի գավառակում՝ 7398 (տե՛ս աղյուսակ 8), Կզըլ Քիլիսե գավառակում՝ 8976 հայ բնակիչ (տե՛ս հավելված, աղյուսակ 9): Այս գավառակների դեպքում հիմնականում ընդունել ենք Գ. Հալաջյանի տվյալները, իսկ Կզըլ Քիլիսե գավառակի դեպքում տվյալներ կան միայն Գ. Հալաջյանի մոտ:

Աղյուսակ 8. Մեծկերտ գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բնակավայր	Գ. Սրուանձտյանց[539]	Անդրանիկ[540]	Թեոդիկ[541]	Ռ. Գևորգյան, Պ. Փաբուջյան[542]	Գ. Երևանյան	Գ. Հալաջյան[543]	մեր հաշվարկները
Ահրիման	-	-	-	-	-	30 տ. / 240 շ.	240 շ.
Գարմսի	4 տ.	-	-	-	-	-	40
Էսրիկ	-	-	-	-	-	25 / 200	200
Թուրուշման	4	200 շ.	-	-	25 տ.	36 / 288	288

[539] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 151:
[540] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 130-131:
[541] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 550:
[542] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 383:
[543] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 85-88:

Լազվան	12	120	8 տ.	83 շ.	10	20 / 160	160
Խոզնկեն	5	200	5	50 շ.	25	68 / 680	544
Ծիլք	-	-	-	-	-	20 / 160	160
Հազնգ	3	-	-	-	-	-	40
Մարխո	6	-	-	-	10	12 / 96	96
Մենկերու	80	-	150	150 տ. / 1200 շ.	100	486 / 3888	2916
Յուտուֆան	-	-	-	-	-	30 / 240	240
Ծորտան	25	80	15	15 / 150	20	30 / 240	240
Չուգուր	4	-	10	50 շ.	-		50
Պնկթաշ	-	-	-	-	-	20 / 160	160
Սեղանք	-	-	-	-	-	65 / 520	520
Սուտամ	-	-	-	-	-	25 / 200	200
Տամութաղ	25	120	15	15 / 155	25	32 / 256	256
Տանապտուն	15	120	5	5 / 70	15	25 / 200	200
Տիլան-Օղլի	10	32	-	5 շ.	10	16 / 128	128
Փսխ	4	-	8	8 / 72	4	90 / 900	720
Ընդամենը	197 տ.		216 տ.	1835 շ.	244 տ.	1030 տ. / 8556 շ.	7398 շ.

Աղյուսակ 9. Կզլ քիլիսե գավառակի հայ բնակչության թվաքանակը

Ռնակավայր	Գ. Հալաջյան[544]	մեր հաշվարկները
Արմ. Հազս	60 տ. / 600 շ.	480 շ.
Թաքսինե	40 / 400	320
Խնծորի	120 / 1200	960
Կյարմիր բերդ	30 / 300	240
Հազու	20 / 200	160
Հազս	22 / 220	176
Հայտերան	135 / 1350	1080
Հայտարան	175 / 1750	1400
Ձորքերան	70 / 700	560
Կզլ Քիլիսե	45 / 450	360
Ճանճիկե	25 / 250	200
Մանկունք	15 / 150	120
Միրավան	180 / 1800	1440
Սբլիս	80 / 800	640
Տեր Օվան	75 / 750	600
Բարնծոր	30 / 300	240
Ընդամենը	1122 / 11220	8976 շ.

[544] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 68-76:

2) Զարսանջակ գավառակ: Զարսանջակը Դերսիմի գավառի ամենամեծ ու հայաշատ գավառակն էր, որն առանձնանում էր նաև հայաբնակ բնակավայրերի քանակով: Գավառակը գտնվում էր Մեծկերտից հարավ, Զմշկածագից ու Խոզաթից արևելք, դեպի հարավ այն սահմանակից էր Խարբերդի գավառի Խարբերդ գավառակին: Զարսանջակի հայ բնակչության զբաղմունքների, սոցիալական վիճակի ու բնակչության թվի վերաբերյալ կարևոր տեղեկություններ ենք քաղում Ա. Կոլյուբակինի աշխատությունից: Ըստ Ա. Կոլյուբակինի՝ Զարսանջակի գավառակի հարավ - արևմտյան մասում գյուղաբնակ ու քաղաքացի հայերը միասին կազմում էին բնակչության մեծամասնությունը՝ 55-60 %-ը, իսկ հյուսիս - արևելյան՝ առավել բնակեցված մասում հայեր գրեթե չկային: Ըստ Կոլյուբակինի՝ այս «աշխատասեր երկրագործ բնակչության մեծ քանակը Զարսանջակի բնակչության ընդհանուր քանակի մեջ ինքնին խոսում է այս շրջանի նշանակալի արտադրողականության մասին»[545]:

1872-1873 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքին կից Ազգային կենտրոնական վարչության հրատարակած գավառական վիճակագրության մեջ տեղ գտած Զարսանջակի առաջնորդարանի մասին մի արձանագրության համաձայն՝ Զարսանջակի 60 գյուղերում ապրում էր 1254 տուն հայ, 998 տուն թուրք ու քուրդ բնակչություն[546], այսինքն բնակչության 56 %-ը հայեր էին: Ըստ Նաթանյանի՝ 1878 թ. դրությամբ «Տէրսիմ ու Զարսանճագ ի մի հաշուելով հարիւր քառասուն հազար բնակիչ ունի, որոնց հարիւր հազարը Քիւրտ, տասը հազարը Թուրք, եւ երեսուն հազարը Հայ են»[547]: Նաթանյանը նշում է, որ Զարսանջակի գավա-

---

[545] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 213.
[546] Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 173:
[547] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 109:

ռակում կար 77 հայաբնակ գյուղ, սակայն ինքը տեղեկություններ ունի միայն 63 գյուղերի վերաբերյալ: Հիշատակված 63 գյուղերից զուտ հայաբնակ էին 14-ը, մյուսներում հայերը խառն ապրում էին քրդերի ու թուրքերի հետ[548]: Վերոնշյալ 63 գյուղերում Նաթանյանը հաշվում էր 1592 տուն՝ 13293 հայ[549]: Ըստ 1894 թ. մարդահամարի տվյալների՝ Զարսանջակի բնակիչների 2973 տնից 1769-ը կամ 60 %-ը հայեր էին[550]: Գ. Սրվանձտյանցը ևս անդրադառնում է Զարսանջակի հայ բնակչության թվաքանակին, թվարկում 1878 թ. դրությամբ հայաբնակ 48 բնակավայր՝ հաշվելով այդ բնակավայրերում 1212 տուն հայ բնակիչ[551]: Խնդիրն այն է, որ որոշ հեղինակներ Զարսանջակին են վերագրում նաև Մեծկերտն ու Խոզաթը, քանի որ վերջիններս եղել են Զարսանջակի առաջնորդության թեմեր: Գ. Սրվանձտյանցի՝ մեր մատնանշած տվյալում չենք հաշվել Մեծկերտն ու Խոզաթը, այլ միայն Բերրի, Բերդակ քաղաքներն ու դրանց հարակից գյուղական բնակավայրերը: Նախկինում Բերրին, Մեծկերտն ու Խոզաթը Սաղմանի հետ միասին կազմել են նաև վարչական մի միավորություն: Այն կոչվել է Զարսանջակ, որ նշանակում է չորս գավառ: Զարսանջակը որպես վարչական միավոր, չի պահպանել իր գոյությունը, բաժանվել է առանձին վարչական շրջանների: Նրա անունը ինչպես տեսնում ենք Քինեի մոտ, դարձել է նրա մասերից մեկի՝ Բերրի անունը[552]: Ինչ վերաբերում է հայկական եկեղեցու կազմակերպությանը, ապա այն մինչև Առաջին համաշխարհային պատերազմը հիմնականում մնացել է անփոփոխ: Դրա հետևանքով էլ Զարսանջակ հասկացությունը

---

[548] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 107:
[549] Նույն տեղում, էջ 105-107:
[550] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 33, թ. 86:
[551] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 149-150:
[552] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 33, թ. 85:

հայկական պատմաազգագրական գրականության մեջ պահպանել է իր նախկին անունը: Զարսանջակը մենք դիտարկում ենք որպես առանձին գավառակ, որն ըստ պատրիարքարանի 1913-1914 թթ.՝ ցուցակի, ուներ 43 հայաբնակ բնակավայր, 51 եկեղեցի, 15 վանք, 23 դպրոց, 7940 հայ բնակիչ, գավառակից արտագաղթողների թիվը հաշվվում էր 791 անձ[553]: Կոլյուբակինը գրում է, որ Բերրիում իրենց վստահեցրել են, որ Զարսանջակը բաժանված չէ նահիեների կամ մյուդիրլիքների, սակայն իրենց չի հաջողվել ստուգել այդ փաստի իսկությունը: Ողջ կազայում, ըստ նրա, կար 2 քաղաքատիպ ավան՝ Բերրի ու Բերդակ, և 106 գյուղ, որոնցում հաշվվում էր 3036 տուն և 17350 շունչ բնակիչ[554]: Ըստ Կոլյուբակինի, Զարսանջակում զուտ հայաբնակ էր 9 գյուղ, 31 բնակավայրերում հայերը խառն ապրում էին թուրքերի ու քրդերի հետ, 68 գյուղեր քրդաբնակ էին[555]: Մեկ ուրիշ փաստաթղթում ևս խոսվում է Զարսանջակի 60 գյուղերի մասին: Ըստ այդմ՝ 1895 թ. դրությամբ այս բնակավայրերում ապրում էր 20172 բնակիչ, որից 14152-ը հայեր էին[556]: Ամերիկացի բողոքական քարոզիչ պատվելի Բլիսի կազմած վիճակագրության համաձայն՝ Բերրին ուներ 70 գյուղ՝ 20000 քրիստոնյա բնակչությամբ[557]: Այստեղ հեղինակը Բերրի ասելով նկատի ունի, թերևս, ողջ Զարսանջակը: Ինչ վերաբերում է քրիստոնյա ասվածին, ապա հարկ է նշել, որ Զարսանջակում հույներ ու ասորիներ չէին ապրում, ուստի հեղինակը նկատի է ունեցել հենց հայ բնակչությանը: Զարսանջակի հայության գերակշիռ մասը առաքելական եկեղեցու հետևորդ էր, բացառությամբ 45 տուն բողո-

---

[553] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[554] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 210:
[555] Նույն տեղում, էջ 214:
[556] ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 891, թ. 47:
[557] Bliss Rev. E, նշվ. աշխ., էջ 441:

քականների և 5 տուն կաթոլիկների՝ Բերրի, Բերդակ բնակավայրերում և 3 գյուղերում[558]: Նրանց թիվը 1915 թ. դրությամբ պետք է որ աճած լիներ: Զարսանջակի վերաբերյալ շատ կարևոր աղբյուր է Գ. Երևանյանի կազմած հուշամատյանը, որտեղ հեղինակը անդրադառնում է Զարսանջակի գյուղերին, տալիս վիճակագրական տվյալներ 1915 թ. դրությամբ այդ բնակավայրերում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Ըստ Երևանյանի՝ 1915 թ. Զարսանջակում ապրում էր նվազագույնը 30468 հայ բնակիչ[559]: Սակայն մենք չենք ուղղորդվում նշված թվաքանակով, որի մեջ ներառված են նաև հարևան գավառակների գյուղերից շատերը, որոնց վերաբերյալ տվյալները մենք ամփոփել ենք այլ գավառակների աղյուսակներում: Վերլուծենք հայ բնակչության թվաքանակն արտացոլող այլ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ՝ նախ անդրադառնալով քաղաքներին:

Զարսանջակի ամենամեծ քաղաքն ու կենտրոնը Բերրին էր: Քաղաքն ուներ 6 թաղամաս, որից հինգը զուտ հայաբնակ էին: Հայերի հիմնական զբաղմունքներից էր այգեգործությունը. քաղաքը ծածկված էր պտղատու այգիներով, թթաստաններով, ուներ գեղեցիկ համայնապատկեր: Բերրիի բնակչությունը, ըստ Կոլյուբակինի կազմած վիճակագրության՝ 1880-ականներին կազմում էր 360 տուն հայ, այդ թվում՝ 15 տուն բողոքական, 3 տուն կաթոլիկ, 60 տուն թուրք, 40 տուն քուրդ, ընդամենը՝ 460 տուն, 2760 շունչ բնակիչ[560]: Նույն ժամանակաշրջանին է վերաբերում և Սրվանձտյանցի տվյալը՝ 318 տուն[561]: Անդրանիկը

---

[558] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 213:
[559] Երևանեան Գ., նշվ. աշխ., էջ 173:
[560] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 224:
[561] Սրուանձտեանց Գ. վ., Թորոս Աղբար, էջ 149:

1900 թ. դրությամբ Բերրիում հաշվում էր 600 տուն հայ բնակիչ՝ լուսավորչական ու բողոքական[562]: XX դարի սկզբներին, համաձայն մի աղբյուրի՝ քաղաքն ուներ 800 տուն բնակիչ, որից 700-ը՝ հայ[563]: Նույն տվյալն է ներկայացնում նաև Երևանյանը՝ 800 տուն բնակիչ, որից մոտ 100 տունը՝ թուրք, մյուսները՝ հայ[564]: Գ. Հալաջյանի համաձայն՝ Բերրին ուներ 675 տուն՝ 5400 հայ բնակիչ[565]: Պատրիարքարանի տվյալներն են՝ 310 տուն, 1763 հայ բնակիչ[566]: Այս գավառակում պատրիարքարանի ներկայացրած տվյալներից սա առավել անհավանականն է, քանի որ այն որևէ կերպ համեմատության եզր չունի այլ աղբյուրների տվյալների հետ: Բնակչության աճը 1880-ականների համեմատ լիովին տրամաբանական էր, քանի որ տարիների ընթացքում շրջակա բնակավայրերի հայերը ևս գաղթել էին ու հաստատվել այս բնակավայրում, որը տարածքի ամենամեծ քաղաքային բնակավայրն էր և որի մասին, Անդրանիկի վկայությամբ, բնակիչներն ասում էին, որ այստեղ «կեանքի ապահովութիւն կայ»[567]: Փաստորեն, բացի պատրիարքարանի տվյալները, մյուս երեք աղբյուրների հավաստմամբ՝ Բերրին ուներ 675-700 տուն հայ, ընդունենք Հալաջյանի տվյալը, բազմապատկենք տան անդամների թվով ինչպես քաղաքում՝ 6-ով, ստանում ենք 4050:

Զարսանջակի մյուս քաղաքը Բերդակն էր, որն իր ենթակայության շրջանում ուներ 30 գյուղ[568]: Ըստ Անդրանիկի՝ հնում գոյություն էր ունեցել Հին Բերդակը, որի բնակիչները ժամանակի

---

562 Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 133:
563 ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 197, թ. 9:
564 Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 150:
565 Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 99:
566 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 383:
567 Անդրանիկ, նշվ. աշխ., էջն 34:
568 ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 891, թ. 43:

ընթացքում, չդիմանալով հալածանքներին, հեռացել էին լեռների ստորոտներ՝ հիմնելով նոր բնակավայր՝ Նոր Բերդակ: Բերդակի հայերը հիմնականում այստեղ էին հաստատվել, ըստ Անդրանիկի, Խարբերդի գյուղերից: Նրանք փոքրամասնություն էին կազմում, բայց իրենց ձեռքում էր տեղի արհեստներն ու առևտուրը[569]: Բերդակի տների շուրջբոլորը պտղատու այգիներ էին ու պարտեզներ: Ա. Կոլյուբակինի վիճակագրության համաձայն՝ Բերդակն ուներ 145 տուն հայ, որից 12 տունը՝ բողոքական, և 80 տուն թուրք և քուրդ բնակիչ[570]: Ըստ պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. դրությամբ քաղաքն ուներ 45 տուն՝ 265 հայ բնակիչ, ըստ Թեոդիկի՝ 65 տուն հայ բնակիչ: Ընդունենք Հալաջյանի տվյալի՝ 320 տուն[571]: Տան անդամների թիվն ընդունենք 6, ստանում ենք 1920:

Զարսանջակի գյուղերը հիմնականում 15-50 տուն հայ բնակչություն ունեցող բնակավայրեր էին: Բերրիից արևելք էին ընկած Հոշեն, Բաղնիք, Խուշին, Թիլ, այլ գյուղեր: Գեղեցիկ բնապատկերներով, լավ տեղադրությամբ էր առանձնանում Հոշեն, որ զուտ հայաբնակ գյուղ էր: Բերրիից արևմուտք գտնվում էին Իսմայիլցիք, Կորճան, Կզըլճուք գյուղերը: Բերրիից հյուսիս ընկած էին Զորակ, Գոտառիճ, Ուրց, Պասուն գյուղերը: Այս գյուղերում ևս հայերը զբաղվում էին հողագործությամբ, մշակում ցորեն, բամբակ, պտղատու ծառատեսակներ:

Բերդակից հյուսիս ընկած էին Մերճիմեք, Վասկերտ, Խռնեկ, Բաշաղակ, Ծամցիք, Հավսիկ, Ղարափուղար, այլ գյուղեր: Հատկանշական է, որ Զարսանջակի գրեթե բոլոր գյուղերում կային հայկական եկեղեցիներ: Տարածքի բնակավայրերում շատ էին

---

[569] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 137:
[570] Колюбакинъ А., նշվ. աշխ., էջ 226:
[571] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 94:

նաև ուխտատեղիներն ու մատուռները, հին բնակավայրերի ամրակներն ու հնագիտական կարևորություն ունեցող բնակատեղիները:

Հիմնական օրինաչափությունը, որ կիրառել ենք նաև այս գավառակի հայ բնակիչների թվաքանակը հաշվարկելիս, դա յուրաքանչյուր տան անդամների թվի միջինը հաշվարկել 8, թեև այս գավառակի դեպքում սա նույնիսկ փոքր թիվ է համարվում: Անդրանիկը մեջբերում է 1893-1894 թթ. կազմված վիճակագրություն, որի տեղեկությունները հեղինակի հավաստմամբ ստույգ են: Անդրանիկը նշում է, որ Զարսանջակի հայերի տները բազմանդամ են՝ 3-17, մասնավորապես, ըստ Անդրանիկի, Կզլճուք գյուղում հայ ընտանիք կա, որն ունի 100 անդամ: Սակայն հեղինակը հայ ընտանիքների անդամների թվի միջինը ևս հաշվում է 8, որը, ըստ նրա՝ «հայ տան համար քիչ է ու շատ չէ»: Ի տարբերություն հայերի՝ քրդերի ընտանիքները բազմանդամ չէին, սրանց համար միջինը Անդրանիկը համարում է 5-ը[572]: Մեկ այլ հեղինակ՝ Գ. Երևանյանը, Զարսանջակին նվիրված հուշամատյանում Զարսանջակի հայ բնակչության համար յուրաքանչյուր տան անդամների թիվը հաշվում է 12, ինչը, ըստ հեղինակի, միանգամայն ընդունելի էր այս տեղանքի համար, որտեղ ընտանիքները կազմված էին 20-40, մինչև 100 անդամներից[573]: Ինչ վերաբերում է հայ տների թվին, ապա այս դեպքում, թեև Երևանյանը տվյալներ է ներկայացնում Զարսանջակի, Մեծկերտի, Խոզաթի գրեթե բոլոր հայաբնակ բնակավայրերի համար, այնուամենայնիվ, որոշ բացառություններով, որպես հիմք ընդունել ենք Հալաջյանի տվյալները: Բերդակի ու Բերրի դեպքում տների քանակը բազմապատկել ենք 6-ով, մյուս բնակավայրերի դեպքում՝

---

[572] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 131-132:
[573] Երևանեան Գ., նշվ. աշխ., էջ 173:

8-ով: Այդ բնակավայրերն են՝ Աղ Մեզրե, Այվաթլը, Բաղնիք, Բասու, Թուրուշմեկ, Գոտռառիճ, Կզլճուք, Զերին, Թանց, Թիլ, Թիլ Վերին, Իսմայիլցիք, Լամք, Լուսատառիճ, Վերի Խաճար, Վարի Խաճար, Խոնիկ, Խտրեսիկ, Խուշին, Կոտոսան, Կյոք Թեփե, Կորճան, Հավսիկ Վերի, Հավսիկ Վարի, Հոշե, Ձորակ, Ղայաչին, Ղարաբուղնար, Մաստան, Մարկիկ, Մերճիմեք, Նոր գյուղ, Շեն, Պալշեր, Բաշաղակ, Սաղման, Սառեկ, Սմաղ, Սորփիան, Սվճոդ, Վահնա, Վասկերտ, Ուռիկ, Ուրց: Բացի վերոնշյալ բնակավայրերը, Հալաջյանը հիշատակում է նաև Քյուրեքեն, Զյումպիլ, Աշխենիկ, Թուրուշմեկ, Սառեկ գյուղերը, որոնց մասին վկայություն չկա պատրիարքարանի ցուցակներում: Գավառակի տարածքում կան նաև գյուղեր, որոնց վերաբերյալ Հալաջյանը տվյալ չի տալիս: Այս դեպքում ընդունել ենք պատրիարքարանի տվյալը. այդ բնակավայրերն են՝ Գալաճգ, Խուշճի Մեզրե, Պենկի Մեզրե, Տանձ, Փաշավանք Մեզրե: Սեյիտլի գյուղի վերաբերյալ տվյալ հիշատակում է Գ. Երևանյանը, ընդունել ենք նրա տվյալը: Նշենք նաև, որ Հալաջյանը Զարսանջակում է հիշատակել Երկան, Հավշաբար գյուղերը, որոնք մենք ընդգրկել ենք Խոզաթի գավառակում, Ուլու գալե բնակավայրը՝ Զմշկածագում:

Սրվանձտյանցի տվյալներով, նշված բնակավայրերում 1880-ականներին, ընդհանուր առմամբ, ապրում էր 1194 տուն, Նաթանյանի տվյալներով գրեթե նույն ժամանակահատվածում՝ 10691 հայ: Պատրիարքարանի՝ ցուցակի համաձայն նշված տարածքում ապրում էր 7735, ուսումնասիրող Գ. Երևանյանի տվյալներով՝ 1714 տուն հայ. հիշեցնենք, որ հեղինակի կարծիքով Զարսանջակի հայ տների անդամների թիվը պետք է հաշվել 12, ստացվում է, որ Երևանյանի կարծիքով նշված բնակավայրերում ընդհանուր առմամբ ապրում էր ավելի քան 20000 հայ բնակիչ:

Այսպիսով, գավառակում ընդգրկել ենք 57 բնակավայր, որտեղ հայ բնակչության թվաքանակը 1915 թ. դրությամբ, ըստ մեր հաշվումների, կազմում էր 18081մարդ (տե՛ս աղյուսակ 10): Ընդհանուր առմամբ, թվարկված բնակավայրերում XIX դարի վերջի համեմատ հայ բնակչությունը որոշակի թվով աճել էր:

Աղյուսակ 10. Զարսանջակ գավառակի հայ բնակչության թվաքանակ

գյուղ. բնակ.	Գ. Սրուանձտ.[574]	Անդրանիկ[575]	Պ. Նաթանյան[576]	Թեոդիկ[577]	Ռ. Կիորգան, Պ. Փաբուճյան[578]	Գ. Երևանյան[579]	Գ. Հալաջյան[580]	մեր հաշվարկները
Աղ Մեզրե	30 տ.	-	-	21 տ.	-	30 տ.	36 տ. / 288 տ.	288 շ.
Այվաթլը	9	120 շ.	10 տ. / 100 շ.	11	11 տ. / 72 շ.	15	18 / 144	144
Աշխենիկ	-	-	-	-	-	-	25 / 200	200
Բաղնիք	13	120	12 / 84	12	12 / 93	-	20 / 160	160
Բաշաղակ	89	800	70 / 800	75	497 շ.	100	125 / 1000	1000
Բասու	25	168	25 / 250	30	30 / 240	25	32 / 256	256
Ընդակ	60	240	60 / 420	65	45 / 265	50	320 / 2560	1920
Ընդակի Թիլ	40	-	-	27	108 շ.	40	-	216
Ընդի	318	600 տ.	400 / 3200	1800 շ.	310 / 1763	700	675 / 5400	4050
Գալաճրգ	4	-	-	6	56 շ.	-	-	56
Գուռաթճ	27	176	30 / 305	33	300 շ.	27	35 / 280	280
Ջնին	-	-	-	4	22 շ.	-	10 / 80	80
Ջումալիլ	-	-	-	-	-	-	16 /128	128
Թանց	24	112	-	32	-	25	30 / 240	240

[574] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 149-150:
[575] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 130-131:
[576] Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 105-106:
[577] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան, էջ 549:
[578] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 383-385:
[579] Երևանեան Գ., նշվ. աշխ., էջ 178-220:
[580] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 88-100:

Թիլ	-	200	35 / 245	5	5 / 60	16	52 / 416	416
Թիլ Վերին	8	-	8 / 82	5	-	-	20 / 160	160
Թուրուշմեկ	-	-	-	-	-	-	28 / 224	224
Իսմայիլցիք	25	320	40 / 352	38	312 շ.	40	50 / 400	400
Լամբ	5	128	10 / 85	5	62 շ.	16	20 / 160	160
Լուսաստանիչ	24	160	15 /105	19	19 / 174	20 / 224 շ.	30 / 240	240
Խաճեղ Վերի	6	80	10 / 70	6	6 / 46	10	16 / 128	128
Խաճեղ. Վարի	4	200	8 / 56	7	7 / 71	25	35 / 280	280
Խոնիկ	15	160	25 / 203	13	74 շ.	15	20 / 160	160
Խորոնիկ	22	200	25 / 175	12	12 / 112	40	52 / 416	416
Խուշճի-Մեզրե	6	-	6 / 61	5	5 / 61	6	-	61
Խուշին	20	160	24 / 253	25	25 / 177	20	25 / 200	200
Կզոլճոր	20	160	20 / 205	15	232 շ.	20	28 / 224	224
Կոտոսան	17	120	20 / 165	-	-	15	22 / 176	176
Կնոր- Բենի	40	480	38 / 295	25	200 շ.	60	65 / 520	520
Կորճան	12	120	15 / 120	24	24 / 130	15	20 / 160	160
Հավսիլ Վարի	15	120	25 / 210	15	15 / 125	15	22 / 176	176
Հավսիլ Վերի	14	144	20 / 175	14	7 / 61	18	25 / 200	200
Հոշն	25	80	20 / 221	29	29 / 238	28	30 / 240	240
Ջորակ	13	136	15 / 142	17	17 / 130	17	20 / 160	160
Ղայայոն	10	208	15 / 153	8	8 / 88 շ.	26	35 / 280	280
Ղարաբուղնար	8	64	-	-	-	17	20 / 160	160
Մաստան	25	-	20 / 142	30	207 շ.	37	45 / 360	360
Մարկիկ	12	-	20 / 140	4	4 / 20 շ.	10	15 / 120	120
Մերգիլեք	9	256	10 / 70	-	-	9	20 / 160	160
Նոր-Գյուղ	12	120	40 / 280	35	35 / 122	12	20 / 160	160
Շենցիք	8	80	10 / 83	-	2 / 31	7	12 / 96	96
Պալաքեր	30	120	30 / 210	20	20 / 166	25	35 / 280	280
Պեկի Մեզրե	-	-	8 / 60	-	-	3		24
Սաղման	4	-	10 / 70	-	30 շ.	10	18 / 144	144
Սառնկ	-	-	12 / 85	-	-	-	10 / 80	80
Սնյիտլի	4	-	4 / 35	-	-	4	-	32
Սմաղ	10	80	18 / 128	-	-	12	15 / 120	120
Սորդիան	22	160	-	-	24 / 181	20	45 / 360	360
Սլճոդ	36	240	30 / 250	53	53 / 333	35	46 / 368	368
Վանենա	8	-	-	5	5 / 40	10	16 / 128	128
Վանկիրտ	35	400	50 / 350	20	20 / 102	35	60 / 480	480
Տանձ	-	112	-	-	32 / 282	-	-	282

Ուռնկ	10	128	-	15	15 / 122	16	25 / 200	200
Ուրց	21	144	25 / 256	22	22 / 195	18	25 / 200	200
Փաշավանք Մնգրն	-	-	-	21	135 շ.	-	-	168
Գիուրնքնն	-	-	-	-	-	-	20 / 160	160
Ընդամենը	1194 տ.	6816 շ.+ 600 տ.	10691 շ.	1800 շ. + 828 տ.	7735 շ.	1714 տ.	2404 տ. / 19232 շ.	18081 շ.

3) Զմշկածագ, Օլածրգ գավառակներ: Զմշկածագը[581] Դերսիմի գավառի մյուս հայաշատ գավառակն էր: Այն ընկած էր Դերսիմի բարձրավանդակի հարավ - արևմտյան մասում Զարսանջակից արևմուտք, Խոզաթից հարավ: Գավառակն արևմուտքից սահմանակից էր Արաբկիրի, Ակնի գավառակներին: Զարսանջակի հողային տարածքը բաժանվում էր երեք գոտիների՝ դաշտային, նախալեռնային, որ զբաղեցնում էր ընդհանուր տարածքի գրեթե կեսը և լեռնային: Զմշկածագի գյուղերի հայ բնակչությունը որոշակի կորուստներ ունեցավ համիդյան կոտորածների հետևանքով: Երբեմնի զուտ հայաբնակ գյուղերում բնակություն հաստատեցին քրդեր ու թուրքեր, նկատելիորեն նվազեց հայ բնակչության թվաքանակը:

Միատուն գյուղը զուտ հայաբնակ էր և մինչև 1895 թ. ուներ մի քանի հարյուր տուն հայ. 1895 թ. գյուղը հրդեհվեց, գյուղացիներից շատերը գաղթեցին[582]: Ագրակ գյուղի մասին Ս. Էփրիկյանը նշում է, որ այն «ի հնումն հարիւրաւոր տներէ բաղկացած հայաբնակ մեծ գիւղ մէր, որ այժմ գրեթէ բոլորովին օտարաց է»[583]: Գավառակի գյուղերից զուտ հայաբնակ էին Երեց Ագարա-

---

[581] Զմշկածագի անվանումը կապված էր բյուզանդական բանակի հայտնի զորավար Հովհաննես Զմշկիկի անվան հետ, որը հետագայում հռչակվեց բյուզանդական կայսր. հայտնի Հերապոլիս բնակավայրը վերանվանվեց կայսեր անունով:

[582] Բալստիկեան Ս., Ոսկեգետակ, էջ 243:

[583] Էփրիկեան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 4:

կը, Մորե Իշխանը, Քազերուն, Հազարին: XVIII դարում զուտ հայաբնակ Գեր Մրցիկ գյուղը XX դարի սկզբին այլևս թրքաբնակ էր[584]: Երբեմնի զուտ հայաբնակ Ս. Թորոս գյուղի հայությունը կրոնափոխ էր եղել: Ս. Թորոսի գյուղախմբում, ըստ Հ. Գասպարյանի՝ 1915 թ. դրությամբ միայն թուրքեր ու քրդեր էին ապրում[585]: Ըստ Անդրանիկի՝ գրեթե զուտ հայաբնակ էր Սերկևիլիկը, որի 250-300 տուն բնակչից, միայն 5-6 տունն էր քուրդ, մյուսները հայեր էին[586]: Կիսով չափ հույներով ու հայերով էր բնակեցված Մամսա գյուղը, որն ամբողջությամբ շրջապատված էր պտղատու այգիներով ու պարտեզներով: Նույնպիսի գեղեցիկ տեղադրություն ուներ և Սիսնա գյուղը, որի հայ բնակիչների մի մասը գաղթել էր Մամսա:

Ըստ Անդրանիկի՝ Զմշկածագն ուներ 25-30 գյուղ, որոնցում մեծամասնություն էին կազմում հայերը[587]: Գրեթե բոլոր գյուղերում կային եկեղեցիներ, կամ եկեղեցիների ավերակներ: Ս. Բախտիկյանն իր «Ոսկեգետակ» աշխատության մեջ, որտեղ, բացի Խարբերդից, Արաբկիրից ու Մալաթիայից, անդրադարձել է նաև Զմշկածագի բնակավայրերին, նշում է, որ Զմշկածագն ուներ 96 գյուղ, որոնցից հայաբնակ էին 30-ը[588]: Գավառակի հայաբնակ բնակավայրերի նույն թիվն է նշում Բ. Եղիայանը, ըստ որի 1914 թ. դրությամբ Զմշկածագն՝ ուներ 31 հայաբնակ բնակավայր, 22 եկեղեցի, 13800 հայ բնակիչ[589]: Ըստ Ս. Ծոցիկյանի՝ Զմշկածագն ուներ թվով 19 հայկական գյուղեր իր շրջանակի մեջ, հայության թվաքանակը այդ գյուղերում կազմում էր

---

584 Բախտիկեան Ս., Ոսկեգետակ, էջ 243:
585 Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 73:
586 Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 6:
587 Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 141:
588 Բախտիկեան Ս., Ոսկեգետակ, էջ 235:
589 Եղիաեան Բ., նշվ. աշխ., էջ 891:

8000[590]: Զմշկածագի հուշամատյանի հեղինակ Ե. Գասպարյանը 1915 թ. դրությամբ տալիս է Զմշկածագի գավառակի ազգաբնակչության թվաքանակն ըստ ազգային կազմի: Վերջինիս համաձայն, Զմշկածագի գավառակում հաշվվում էր 932 տուն՝ 3845 շունչ հայ, 2608 տուն՝ 10196 շունչ թուրք, 696 տուն՝ 2888 շունչ քուրդ, ընդամենը՝ 4236 տուն՝ 16928 բնակիչ[591]: Հեղինակը բնակչության քանակը տալիս է նաև ըստ գյուղախմբերի[592]:

Պատրիարքարանի 1913-1914 թթ.՝ ցուցակի համաձայն գավառակի տարածքում կար ընդամենը 22 հայաբնակ բնակավայր, 19 եկեղեցի, 17 դպրոց, 4494 հայ բնակիչ: Գավառակի բնակավայրերից հաշվվում էր 1702 արտագաղթած հայ[593]: Ցավոք, Զմշկածագի գավառակի դեպքում Հալաջյանը մանրամասն տվյալներ չունի: Այս դեպքում հաշվարկը կատարելիս հիմնականում հիմք ենք ընդունել պատրիարքարանի տվյալները, որոնք քիչ են տարբերվում Հ. Գասպարյանի տվյալներից: Յուրաքանչյուր տան անդամների թվի միջինն ընդունում ենք 8:

Ինչ վերաբերում է Զմշկածագ քաղաքին, ապա Անդրանիկն այս բնակավայրի բնակչությունը հաշվում է ավելի քան 1500 տուն, որոնց մի մասը հայեր էին, մյուսները՝ թուրքեր ու քրդեր[594]: 1914 թ. դրությամբ՝ ըստ Հ. Գասպարյանի՝ քաղաքում կար 363 տուն՝ 1361 շունչ հայ, 562 տուն՝ 2107 շունչ թուրք, 23 տուն՝ 98 շունչ քուրդ, ընդհանուր՝ 948 տուն՝ 3566 անձ[595]: Ըստ Գ. Հալաջյանի՝ Զմշկածագում հաշվվում էր 450 տուն՝ 4500 հայ բնա-

---

590 Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 501:
591 Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 73:
592 Նույն տեղում: Ընդհանուր հաշվարկում հեղինակը սխալ հանրագումար է արել. 3850 շունչ հայերի փոխարեն գումարը գալիս է 3845:
593 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
594 Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 140:
595 Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 73:

կիչ[596]: Հալաջյանի տվյալին մոտ տվյալ է տալիս Հայոց ցեղասպանությունը վերապրած Միսակ Պապաջանյանը իր հուշագրության մեջ՝ մոտ 500 տուն[597]: Ս. Ծոցիկյանը նշում է, որ Զմշկածագի 8000 թուրք և հայ բնակիչներից 1915 թ. առաջ 4000-ը հայեր էին, որոնք զբաղվում էին առևտրով, արհեստներով, երկրագործությամբ և այլն[598]: Թեոդիկը նշում է նախ քաղաքի հայության թիվը՝ 2000 անձ, ապա՝ Յուչպեք արվարձանի հայ բնակիչների թիվը՝ 154 տուն կամ 600 անձ (հղումները տե՛ս աղյուսակում): Պատրիարքարանի մյուս ցուցակի համաձայն՝ Զմշկածագում հաշվվում էր 1348 հայ բնակիչ: Տվյալ դեպքում, թերևս, Ռ. Գևորգյանը բաց է թողել Յուչպեքի հայությանը, ուստի նպատակահարմար է վստահել Թեոդիկի տվյալներին. նրա ներկայացրած 154 տուն հայության քանակը հաշվում ենք 924 (տան անդամների թվի միջինը հաշվում ենք 6), գումարում 2000 անձ քաղաքի բնակչությանը, ստանում ենք 2924:

Զմշկածագի բնակավայրերից Ագրակի, Բասաբունի, Երիցուգրակի, Թոմա Մեզիրեի, Խարասարի, Կարմրիի, Հազարիի, Հաղթուկի, Ջնձորի, Մամսայի, Միատունի, Մորշգայի, Մուռնայի, Բաղչեճիկի, Բրնխիի, Սիսնայի դեպքում վերցրել ենք պատրիարքարանի՝ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած ցուցակի տների թիվը: Արտկա, Աշգանի, Բեդրեթիլ, Վասկավան Տեքքե գյուղերի դեպքում վերցրել ենք Թեոդիկի տված տների թիվը, քանի որ մյուս ցուցակում դրանք բացակայում են: Սեթրկայի դեպքում ընդունել ենք պատրիարքարանի տված շնչերի թիվը: Գ. Հալաջյանը տվյալ ունի Ուլու գալե բնակավայրի համար՝ 20

---

[596] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 34: Տե՛ս նաև՝ ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 260, թ. 38-39:
[597] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, էջ 257:
[598] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 501:

տուն՝ 160 շունչ հայ[599], որն էլ ընդունում ենք, քանի որ այս գյուղի վերաբերյալ այլ տվյալ չունենք: Նշենք, որ Հալաջյանն այս գյուղն ընդգրկել է Զարսանջակի շրջանում, սակայն այն ավելի մոտ էր Զմշկածագին:

Զմշկածագի գավառակի գյուղերի ցանկում նշել ենք բնակավայրեր, որոնց վերաբերյալ տվյալներ կան միայն Գ. Սրվանձտյանցի մոտ: Կարծում ենք, որ 1880-ականներին 3-4 տուն հայություն ունեցող այս բնակավայրերում XX դարում այլևս հայ չէր ապրում, ուստի որևէ թիվ չենք նշել, թեև բնակավայրերն ընդգրկել ենք գավառակի ցուցակում: Աղյուսակից երևում է, որ Զմշկածագի գավառակի որոշ բնակավայրերում հայ բնակչությունը նախկինի համեմատ մի փոքր աճել էր, որոշ բնակավայրերում՝ նվազել: Ընդհանուր առմամբ, այստեղ ևս հայ բնակչությունը նախկինի համեմատ շատ քիչ էր աճել: Գ. Սրվանձտյանցի տվյալներով՝ 1880-ականներին վերոնշյալ 30 բնակավայրերում ապրում էր 826 տուն, պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակի համաձայն՝ 4578 հայ: Ըստ մեր հաշվարկների՝ 1915 թ. դրությամբ գավառակում ապրում էր 7421 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 11):

[599] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 91:

Աղյուսակ 11. Զմշկածագ գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բաղաք	Գ. Սրուանձտյան,[600]	Թեոդիկ[601]	Ռ. Գևորկյան, Պ. Պապոյան Փաբուջյան[602]	Հ. Գասպարյան[603]	մեր հաշվարկները
Ագրակ	9 տ.	7 տ.	7 տ. / 42 շ.	8 տ.	56 շ.
Արտկա/Արդյական	4	3	11 շ.	5	24
Բասաբուն	21	15	15 / 116	16	120
Երիցագրակ	34	29	29 / 226	33	232
Աշգանի	6	7	-	-	56
Ընդրեթիլ	12	3[604]	-	6	24
Թոմա Մեզիրե	26	25	25 / 200	37	200
Խասոիշար	3	-	-	-	-
Խաչտուն	6	-	-	12	-
Խարասար	24	34	34 / 223	34	272
Խնդրկիկ	8	-	-	-	-
Կարմրի	40	35	35 / 198	29	280
Հազարի	50	75	75 / 351	80	600
Հաղթուկ	25	48	48 / 297	43	384
Ճնծոր	3	6	6 / 38	5	48
Մամսա	76	80	80 / 570	82	640
Մանկուճակ	3	-	-	-	-
Միատուն	54	11	11 / 44	12	88
Մորշգա	35	36	36 / 164	27	288
Մուռնայի	-	22	22 / 181	31	176
Զմշկածագ	280	154 տ., 2000 շ.	1348 շ.	363	2924
Բաղնճիկ / Պարտիզակ	15	25	25 / 145	26	200
Պրաստիք	3	-	-	-	-
Պրենսի /Բրենսի	26	15	15 / 50	14	120
Սեթրկա	4	6	97 շ.	9	97

[600] Սրուանձտեանց Գ. Վ., Թորոս Աղբար, էջ 117-118:
[601] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան, էջ 254-256,549-550:
[602] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 386:
[603] Գասպարյան Հ., նշվ. աշխ., էջ 92-93:
[604] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան, էջ 549:

Միսնա	32	35	35 / 235	36	280
Վանվանան	18	8	-	12	64
Տեբրն /Թոսկն	5	11	42 շ.[605]	9	88
Ուլու Գալն	4	-	-	-	160
Ընդամենը	826 տ.	690 տ. և 2000 շ.	4578 շ.	931 տ.	7421 շ.

Դերսիմի արևմտյան մասում, Խոզաթից արևմուտք էր Օվաճըգը, որը բաղկացած էր 35-40 քրդական գյուղերից: Այստեղ ապրում էին կզլբաշներ, ըստ Անդրանիկի՝ հայեր ընդհանրապես չկային[606]: Ամենայն հավանականությամբ, Անդրանիկն ի նկատի ուներ քրիստոնյա հայերին: Ըստ պատրիարքարանի ցուցակի՝ Օվաճըգ գավառակում հաշվվում էր 50 հայ բնակիչ, գավառակում կար ընդամենը մեկ հայաբնակ բնակավայր՝ Բարդի գյուղը[607]: Ըստ Փոլատյանի՝ այս գավառակն ուներ շուրջ 40 գյուղ[608]: Թեոդիկն այս բաժանումը չի տալիս, նա Բարդի գյուղը թվում է Զմշկածագի գյուղերի շարքում՝ չնշելով նաև բնակավայրի հայ բնակչության թվաքանակը: Այս բնակավայրի համար, բացի Ռ. Գևորգյանի տվյալը՝ 50 հայ, ունենք նաև Գ. Հալաջյանի տվյալը՝ 135 տուն, 1350 անձ[609]: Գ. Հալաջյանը, բացի Բարդին, այս գավառակում որպես հայաբնակ հիշատակում է նաև Օվաճըգ, Ակունք, Աղբաձոր, Աշուրան, Աղտատ, Բլուր, Զեռանիկ, Զիարեթ, Լերթիկ, Խորխոր, Կորնգա, Հաղաջուր, Մնձուր Տիրավան, Կաղնուտ, Տանձիկ գյուղերը[610], որոնցից Աշուրանի, Լերթիկի, Կորնգայի հայությունը քրդախոս էր:

---

[605] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 382:
[606] Անդրանիկ, նշվ. աշխ., էջ 147:
[607] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[608] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 38:
[609] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 52:
[610] Նույն տեղում, էջ 44-58:

Այս գավառակի դեպքում Գ. Հալաջյանի տված հայ տների թիվը բերենք աղյուսակում, տան անդամների թվաքանակը հաշվենք 8, այլ ոչ՝ 10, ինչպես Հալաջյանն է հաշվարկել (տե՛ս աղյուսակ 12): Ցավոք, այս բնակավայրերի հայության վերաբերյալ այլ տվյալներ չկան:

Աղյուսակ 12. Օվաճրգ գավառակի հայ բնակչության թվաքանակը

բնակավայր	Գ. Հալաջյան[611]	Մեր հաշվարկը
Ակունք	96 տ. / 960 շ.	768 շ.
Ադբաճոր	16 / 160	128
Ադտատ	40 / 400	320
Աշուրան	45 / 450	360
Բարդի	135 / 1350	1080
Բլուր	60 / 600	480
Ջերանիկ	40 / 400	320
Ջիարեթ	130 / 1300	1040
Ենրթիկ	82 / 820	656
Խորխոր	60 / 600	480
Կաղնուտ	130 / 1300	1040
Կորնգա	25 / 250	200
Հաղաջուր	85 / 850	680
Մնձուր	17 / 170	136
Տանձիկ	120 / 1200	960
Տիրսվան	45 / 450	360
Օվաճրգ	38 / 380	304
Ընդամենը	1164 տ.	9312 շ.

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ Խոզաթում ընդգրկել ենք 1 քաղաք, 18 գյուղական բնակավայր՝ 9928 հայ բնակիչներով, Մեծկերտում՝ 1 քաղաք, 19 գյուղական բնակավայր՝ 7398 հայ բնակիչներով, կզբլ Քիլիսեում՝ 17 գյուղական բնակավայր՝ 8976 հայ բնակիչներով: Զարսանջակում ընդգրկել ենք 57 բնակա-

[611] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 44-58:

վայր, որից երկուսը՝ քաղաք: Այստեղ հայ բնակչության թվաքանակը 1915 թ. դրությամբ, ըստ մեր հաշվումների, կազմում էր 18081 հոգի: Զմշկածագում հաշվել ենք 1 քաղաք և 28 գյուղական բնակավայր՝ 7421 հայ բնակչությամբ, Օվաճրգում՝ 17 գյուղական բնակավայր՝ 9312 հայ բնակիչներով:

Այսպիսով, Դերսիմի գավառում 1914-1915 թթ. դրությամբ, ըստ մեր ուսումնասիրության, ապրում էր 61116 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Դերսիմ գավառի հայ բնակչության թվաքանակը 1915 թ. դրությամբ՝ ըստ մեր հաշվարկների

Խոզաթ գավառակ	9928 հ.
Մեծկերտ գավառակ	7398 հ.
Կըզիլիլիսե գավառակ	8976 հ.
Զարսանջակ գավառակ	18081 հ.
Զմշկածագ գավառակ	7421 հ.
Օվաճրգ գավառակ	9312 հ.
Ընդամենը	61116 հ.

գ) Մալաթիայի գավառ

Խարբերդի նահանգի երրորդ գավառը Մալաթիան էր, որը որոշ ժամանակ միացված է եղել Խարբերդի, որոշ ժամանակ՝ Դիարբեքիրի կուսակալությանը: Սուլթան Աբդուլ Ազիզի գահակալության տարիներից սկսած այն Խարբերդի գավառի հետ Մամուրեթ ուլ Ազիզ նորաստեղծ նահանգի մաս կազմեց: Մալաթիան գբաղեցնում էր նահանգի հարավ-արևմտյան հատվածը, այն իր հերթին բաժանվում էր հինգ գավառակների՝ Մալաթիա, Աղճա Դաղ, Քյախտա, Հյուսնի-Մանսուր և Պեհեսնի, ընդ որում, Մալաթիա ու Աղճա Դաղ գավառակների տարածքն ընդգրկում էր պատմական Մելիտինե գավառի տարածքը՝ մաս

կազմելով Փոքր Հայքի, իսկ մյուս մասերը հնում եղել էին Կոմմագենեի կազմում:

1914 թ. դրությամբ, համաձայն Բ. Եղիայանի բերած տվյալների, Մալաթիայում կար 42 հայաբնակ բնակավայր, 23 եկեղեցի, 41400 հայ բնակիչ[612]: Պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. հրատարակված ցուցակներում այս գավառի վերաբերյալ տվյալներ չկան, քանի որ Մալաթիան պատկանել է Կիլիկիայի կաթողիկոսական աթոռին: Ուստի համահեղինակներ Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը անդրադարձել են այս գավառի հայաբնակ բնակավայրերի հայության խնդրին որպես ուսումնասիրողներ, մեջբերել տվյալներ, որոնք վերցրել են այս կամ այն սկզբնաղբյուրից: Այս բնակավայրերի հայության թվաքանակի վերաբերյալ ցուցակներ, թերևս պետք է կազմեր Կիլիկիայի կաթողիկոսարանը: Ցավոք, համահեղինակները, որպես Կիլիկիայի կաթողիկոսարանի տվյալ մատնանշում են միայն Մալաթիա քաղաքին վերաբերող տվյալը, նրանց կարծիքով՝ Մալաթիայի գավառում ընդհանուր առմամբ կար 96 հայաբնակ բնակավայր, 38705 հայ բնակիչ[613]: Թեոդիկի՝ 1922 թ. հրատարակած «Ամենուն տարեցոյց»-ի համաձայն, որտեղ ամփոփվել են պատրիարքարանի 1912 թ. տվյալները, Մալաթիայում հաշվվում էր 36000 հայ բնակիչ[614]: «Նոր հոսանք» ամսագրի 1913 թ. համարներից մեկում հրատարակված Մ. Ցիցիկյանի ուսումնասիրության մեջ, որտեղ հեղինակն անդրադառնում է կիլիկիահայության թվաքանակի խնդրին, նշված է նաև Մալաթիայի հայության թվաքանակը՝ 55640, որից Մալաթիայի գավառակում՝

---

[612] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 893:
[613] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[614] «Ամենուն տարեցոյց», ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 261:

35000, Պեհեսնիում՝ 8600, Ադիամանում՝ 12040[615]: Հեղինակը նշում է, որ տվյալները կազմել է տեղի քահանաների, ուսուցիչների, մեծ քաղաքներում՝ թեմական առաջնորդների տված նյութերի հիման վրա, որոնք, ըստ նրա, «բաւականաչափ տեղեակ էին երևում իրականութեան»[616]: Անդրադառնանք առանձին գավառակների բնակավայրերի վերաբերյալ տարբեր աղբյուրներում տեղ գտած հիշատակություններին և փորձենք մոտավոր հաշվարկել նաև այս գավառի հայության թվաքանակը:

1) Մալաթիա, Պեհեսնի գավառակներ: Նախ անդրադառնանք գավառի կենտրոնական՝ Մալաթիայի գավառակին: Մալաթիան Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից էր, ուներ ավելի քան 5 հազար տարվա պատմություն: XX դարի սկզբներին Մալաթիան մնում էր արևմտահայության կենսագործունեության հիմնական կենտրոններից, որտեղ ևս հայ բնակչությունն առաջնային տեղ ուներ թե՛ արհեստների, թե՛ առևտրի և թե՛ հողագործության բնագավառներում: 1903 թ. հրատարակված մի վիճակագրության համաձայն՝ Մալաթիայի գավառակն ընդգրկում էր 66 գյուղ[617]: Կարապետ Պեննեյանը նշում է, որ Մալաթիայի գավառակն ուներ 150-ի մոտ գյուղեր, որոնք ընդգրկված էին 4 գյուղախմբերում՝ գավառակենտրոնի շրջակա տարածք, Պալյանի, Ճուպասի, Իզոդլուի գյուղախմբեր[618]: Ռ. Գևորգյանն այս գավառակում առանձնացնում է 5 հայաբնակ բնակավայր՝ Մալաթիա քաղաքը և չորս գյուղեր, որտեղ, ըստ հեղինակի, ապրում էր 17017 հայ բնակիչ[619]:

---

[615] «Նոր հոսանք», Թիֆլիս, N 6, 1913:
[616] Նույն տեղում:
[617] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 55:
[618] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 19:
[619] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:

Նախ անդրադառնանք Մալաթիա քաղաքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ եղած հիշատակություններին: Ժամանակակիցներից շատերը Մալաթիան համարում էին ամենագեղեցիկ քաղաքը Փոքր Ասիայում: «Այս վայրը դրախտ է», - գրում է միսիոներ Հարիսը: Հեղինակը նշում է, որ բնակավայրը հարուստ էր ամենաբազմազան մրգատու ծառերով, «գրեթե բոլոր տները կառուցված էին իրենց սեփական այգիների կենտրոնում, այնպես որ գրեթե ամբողջությամբ թաքնված էին ծառերի մեջ. հեռվից քաղաքն ավելի կարելի էր նմանեցնել անտառի, քան բնակատեղիի»[620]: Մալաթիայում մշակվում էր 7 տեսակի ցորեն, հարգի էին նաև գարին, բամբակը: Արհեստներից զարգացած էր, ըստ Է. Չելեբիի՝ սպիտակ թելի արտադրությունը: Բնակչության մեծ մասը զբաղվում էր այգեգործությամբ, մի մասն էլ՝ բամբակագործությամբ[621]: Ինչ վերաբերում է քաղաքի հիմնադրմանը, ապա դա տեղի է ունեցել 1840-1841 թթ., երբ հին քաղաքի՝ Մելիտինեի բնակիչները հաստատվել են այստեղ: 19-րդ դարի վերջերին Մալաթիա քաղաքում գործում էին Սահակյան, Ներսեսյան, Արամյան, Կրթասիրաց, Սանդլատյան, Խաչատուրյան կաթոլիկ, Աստղիկ ընկերության, նաև՝ բողոքականների ու կաթոլիկների այլ վարժարաններ:

1878 թ. հուլիսի 28-ով թվագրված վիճակագրության համաձայն Մալաթիայում ապրում էր 1200 տուն՝ 7830 շունչ հայ բնակիչ, այդ թվում՝ բողոքական՝ 175, կաթոլիկ՝ 357[622]: Գևորգ Մելիտինեցիի կարծիքով՝ 1914 թ. Մալաթիա քաղաքում ապրում էր 2400-2500 ընտանիք՝ 20000 բնակիչներով[623]: Սփյուռքահայ հեղինակ Սեդրակ Շահենը նշում է, որ Մալաթիայի բնակչությունը

---

[620] Harris R. and Harris H., նշվ. աշխ., էջ 167:
[621] Չելեբի Է., Թուրքական աղբյուրներ, էջ 178:
[622] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 47/III, էջ 7:
[623] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 451:

կազմում էին հայեր, թուրքեր, քրդեր, հույներ, կրոնապաշներ, քիչ թվով նաև՝ հրեաներ: Հեղինակի կարծիքով քաղաքում ու հարակից գյուղերում ապրում էր ավելի քան 20000 հայ[624]: Սրանից բավական տարբեր տվյալ է ներկայացնում ամերիկացի ավետարանական քարոզիչ Ֆիլյանը, որը նշում է, որ Մալաթիա քաղաքի շուրջ 20000 բնակչից մեկ երրորդը հայեր էին[625]: Հայ հեղինակներից Ծոցիկյանը կարծում է, որ քաղաքում հայերի թիվը մինչև տեղահանությունը կազմում էր 20000, իսկ արդեն պրոֆեսոր Մկրտիչ Որբերյանի բերած տվյալների համաձայն՝ 1900 թ. Մալաթիա քաղաքում կար 7000 տուն՝ 35000 բնակիչներով, որից 5200 տունը՝ թուրք, 1800 տունը՝ հայ, ընդ որում՝ 1635 տունը՝ առաքելական, 65 տունը՝ բողոքական, 80 տունը՝ կաթոլիկ և 20 տունը՝ լատին[626]: Գրեթե նույն տվյալներն է մեջբերված Խաչատուր վարդապետ Տեր Ղազարյանի՝ Կ. Պոլսի պատրիարքի հանձնարարությամբ կազմած տեղեկագրում, համաձայն որի, 1902 թ. Մալաթիայում ապրում էր 1730 տուն հայ՝ 1550 տուն առաքելական, 125 տուն կաթոլիկ, 55 տուն լատին[627]: Ա. Ալպոյաճյանը նշում է, որ քաղաքն ուներ 10000 տուն բնակիչ, որից 2000-ը՝ հայ[628]: Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն հայերի տների քանակը Մալաթիայում հաշվվում էր 1900[629]: Ռ. Գևորգյանը՝ Մալաթիա քաղաքի համար մեջբերում է Կիլիկիայի կաթողիկոսարանի վիճակագրական տվյալը, որի համաձայն՝ 1914 թ. դրությամբ Մալաթիայում ապրում էր 2300 տուն՝ 15000

---

[624] Շահեն Ս., նշվ. աշխ., էջ 28:
[625] Filian Rev. G., նշվ. աշխ., էջ 271:
[626] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 453-454:
[627] Նույն տեղում, էջ 454:
[628] Նույն տեղում, էջ 404:
[629] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեորականութեան, էջ 548:

հայ բնակիչ[630]: Նույն թիվն է նշում նաև Հայոց ցեղասպանության վերապրող, Մեբաստիայի հայության տեղահանության ու կոտորածի վերաբերյալ կարևոր հուշագրության հեղինակ Կ. Գաբիկյանը, որի տվյալներով Մալաթիայի բնակչության թվաքանակը 40000 էր, որից 15000-ը՝ հայեր էին[631]: Մալաթիայի հայության թվաքանակը 15000 է ներկայացված նաև վերապրած Հովհաննես Խանչարյանի վկայության մեջ[632]: Մենք ևս Մալաթիա քաղաքի համար ընդունենք վերոնշյալ տվյալը:

Գավառակի մյուս հայաբնակ բնակավայրը Հին Մելիտինեն էր՝ Էսկի Շեհիրը: Այս բնակավայրը, որը գտնվում էր Մալաթիայից հյուսիս-արևելք, կարելի է համարել նոր քաղաքի մի արվարձանը: Մելիտինեն, որպես քաղաք, գոյություն է ունեցել մինչև 1835 թ.: Աղբյուրներում վկայություններ կան, որ Մելիտինեն ժամանակին ունեցել է շուրջ 200 տուն հայություն[633]: Իսկ արդեն 1878 թ. հուլիսի 28-ով թվագրված վիճակագրության համաձայն՝ Մելիտինեում կամ ինչպես փաստաթղթում է նշված՝ Մեծ քաղաքում՝ Բուն Մալաթիայում հաշվվում էր 14 տուն՝ 71 շունչ հայ բնակիչ[634]: 1895 թ. այստեղ ապրում էր 35 տուն հայ: 1902 թ. դրությամբ Էսկի Շեհիրում ապրում էր 5 տուն հայ բնակիչ[635]: Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը Էսկի Շեհիրում հաշվում են 200 տուն՝ 1400 հայ բնակիչ[636]: Թեոդիկը որևէ տվյալ չի ներկայացնում ինչպես Մելիտինեի, այնպես էլ հարակից Զրմխտի ու Օր-

---

[630] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 389:
[631] Գաբիկեան Կ., Եղեռնապատում Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Մեբասդիոյ, Պոսթըն, 1924, էջ 255:
[632] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, էջ 340:
[633] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 470:
[634] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 47/III, էջ 7:
[635] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 470:
[636] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 389:

դուզի բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Համահեղինակների (Ռ. Գ. և Պ. Փ.) հրատարակած տվյալի համաձայն՝ Զրմխտիում 1913-1914 թթ. դրությամբ ապրում էր 8 տուն՝ 67 հայ բնակիչ, Օրդուզում՝ 50 տուն՝ 400 հայ բնակիչ[637]: Համահեղինակները նաև նշում են հայաբնակ Գոդ Լուր բնակավայրի մասին, որտեղ 1913-1914 թթ. դրությամբ ապրում էր 20 տուն՝ 150 հայ բնակիչ[638]: Մալաթիայի գավառի բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան Կարապետ քահանա Պեննեյանի աշխատության մեջ: Այս տվյալները վերաբերում են 1890-ականներին. հեղինակը թվարկում է Մալաթիայի գավառակի կենտրոնական գյուղախմբի 31 գյուղերի անուններ, որոնցից որպես հայաբնակ հիշատակվում են Զրմխտին՝ 8 տուն հայ, Օրդուզը՝ 10-15 տուն հայ և վարի հին քաղաքը՝ Մելիտինեն: Հեղինակի հավաստմամբ, վերջինում ապրում էր ընդամենը 10 տուն հայ[639]: Հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ հիշատակություն կա նաև թուրք հեղինակ Օսման Քոքերի գրքում: Վերջինս, ներկայացնելով Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության հայաբնակ մյուս բնակավայրերի վերաբերյալ եղած բացիկների մի կարևոր հավաքածու, տվյալ բնակավայրերի հայ բնակչության կենսագործունեությանը վերաբերող ակնարկ է տվել: Քոքերը հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մեջբերել է 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներ, որոնց համաձայն Մելիտինեում ապրում էր ավելի քան 1000 հայ[640]: Կարծում ենք, օսմանյան վիճակագրական տվյալները, որոնք որպես կանոն

---

[637] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
[638] Նույն տեղում:
[639] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 20:
[640] Armenians in Turkey 100 years ago. With the postcards from the collection of Orlando Carlo Calumeno, edited by Osman Köker, Istanbul, 2005, p. 300.

խիստ նվազ էին ցույց տալիս հայ բնակչության թվաքանակը, տվյալ բնակավայրի դեպքում դժվար թե ավել տվյալ ներկայացնեին: Հետևաբար, համահեղինակների բերած տվյալը արժանահավատ է թվում: Կարծում ենք, որ Զրմխտիում 1914 թ. դրությամբ Պեննեյանի տվյալի համեմատ պետք է ավելանար գոնե 5 տուն հայ՝ դառնալով 13 տուն, Օրդուզում հաշվում ենք 50 տուն հայ բնակիչ: Գող Լուրի դեպքում ընդունենք համահեղինակների տվյալը: Մալաթիայի գավառակում, այսպիսով հաշվում ենք 17064 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 14):

Աղյուսակ 14. Մալաթիա գավառակի հայ բնակչության թվաքանակը

Գյուղ, բարգ	Կ. Պեննեյան	Ա. Ալպոյաճյան	Թեոդիկ	Ռ. Գևորգյան, Պ. Փաքուճյան	Մեր հաշվարկները
Հակի Ծեհիր-Մելիտենե	10 տ.	1902 թ.՝ 5 տ.	-	200 տ. / 1400 շ.	1400 շ.
Մալաթիա		2000 տ .	1900 տ.	2300 / 15000	15000
Զրմխտի	8 տ.	1895 թ.՝ 25 տ.[641]	-	8 / 67	104
Գող Լուր	-	-	-	20 / 150	160
Օրտուզ	10-15 տ.	1895 թ.՝ 40 տ.	-	50 / 400	400
Ընդամենը				17017 շ.	17064

Պեհենանին Մալաթիայի մյուս գավառակն էր, այն գտնվում էր Մալաթիա գավառի հարավում, Հյուսնի Մանսուր գավառակից՝ արևմուտք: Պեհենանի գավառակը, ըստ Պեննեյանի, ուներ 150-160 գյուղ՝ 5 գյուղախումբ[642]: Ռ. Գևորգյանի ու Պ. Փաքուճյանի հրատարակած տվյալների համաձայն՝ այն ուներ 8 հա-

[641] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 467:
[642] Պէնէէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 228:

յաբնակ բնակավայր[643]: Պեհեսնիի հայերը զբաղվում էին պայտարությամբ, կահագործությամբ, երկաթագործությամբ, ներկարարությամբ: Ավանում կարևոր դիրք ունեին Ակնից ու Կյուրինից տեղափոխված մի քանի տուն հայերը: Պեհեսնիի հայերի գործածական լեզուն, ըստ Պեննեյանի, թուրքերենն էր[644]:

Գավառակի կենտրոնը Պեհեսնին էր: Հակոբ Եփրեմյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ ժամանակին այստեղ ապրում էր ավելի քան 400 տուն հայություն, որից լուսավորչական՝ 300 տուն, բողոքական՝ 15 տուն, կաթոլիկ՝ 40 տուն[645]: Գրեթե նույն թիվն է նշում նաև Պեննեյանը, ըստ որի՝ Պեհեսնին ուներ 2000 տուն բնակիչ, որից մեկ չորրորդը քրիստոնյաներ էին, ընդ որում, հայերից 20-25 տունը կաթոլիկներ էին, 10-12 տունը՝ բողոքականներ[646]: Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի հրատարակած տվյալի համաձայն Պեհեսնի բնակավայրում 1914 թ. հաշվվում էր 530 տուն՝ 3750 հայ բնակիչ[647]: Թեոդիկը այս գյուղաքաղաքում հաշվում էր 500 տուն հայ բնակիչ[648]: Պեհեսնիի հայության տեղահանությանն ու կոտորածին վերաբերող մի հուշագրության մեջ հեղինակ Ա. Թեքեյանը նշում է, որ քաղաքի հայկական թաղերում բնակվում էր 5000-6000 հայություն[649]: Մեր կարծիքով՝ Ռ. Գևորգյանի տվյալը մոտ է իրականությանը: Ընդունենք, որ Պեհեսնին ուներ 530 տուն՝ 3750 հայ բնակիչ (տների ու տան անդամների հարաբերակցությունը ստացվում է

---

[643] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[644] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 227:
[645] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 483:
[646] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 227:
[647] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
[648] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 548:
[649] Թէքէան Ա., Դրուագներ ապրիլեան մեծ եղեռնէն. Պեհեսնիհայութեան գողգոթան (1914-1918), Պէյրութ, 1956, էջ 55:

7, ինչը գյուղաքաղաքի համար միջին թիվ է և տվյալ դեպքում ընդունելի նաև մեզ համար):

Պեհեսնիի հայաբնակ բնակավայրերից էր Քեսուն, որն, ըստ Պեննենյանի՝ 1890-ականներին ուներ 5-6 տուն հայ բնակիչ: Պեննենյանը ենթադրում է, որ Պեհեսնի գյուղաքաղաքի հայերը եկել են Քեսուից[650]: Սա մոտ է իրականությանը, և վկայում է ժողովրդագրական այն միտման մասին, որի ընթացքում փոքրաթիվ հայաբնակ բնակավայրերից հայերը հաստատվում էին ավելի խոշոր, համեմատաբար ապահով բնակավայրերում: Ալպոյաճյանը գրում է, որ 1915 թ. գյուղն ամբողջովին քրդաբնակ էր[651], սակայն Թեոդիկը գյուղի հայության թվաքանակը հաշվում է 10 տուն[652]: Համահեղինակները նշում են, որ դարասկզբին այս բնակավայրում ապրում էին մի քանի տասնյակ տուն հայեր[653], սակայն չեն հստակեցնում թիվը: Ընդունենք, որ այս գյուղը XX դարի սկզբներին դեռևս հայաբնակ էր, հայության քանակը հաշվենք 10 տուն՝ 80 բնակիչ:

Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը որպես հայաբնակ բնակավայրեր են հիշատակում նաև Սուրֆազ, Ծամբոյար, Թութ, Պելվետեն, Փորա, Ռաբան, Խոչգաշի գյուղերը, որոնց հայության թվաքանակը համահեղինակները հաշվում են 800 հոգի. նշվում է, որ Պեհեսնիի գավառակի հայությունը կազմում էր 4550[654], որից 3750-ը բնակվում էին Պեհեսնի կենտրոնում: Սուրֆազի հայության թվաքանակն Ալպոյաճյանի տվյալներով կազմում էր 20 տուն, Ծամբոյարինը՝ 10 տուն, Թութինը՝ 16 տուն, Պելվետեն գյու-

---

650 Պենեքեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 228:
651 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 491:
652 Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 549:
653 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
654 Նույն տեղում:

ղինը՝ 15 տուն[655]: Այս բնակավայրերի համար ընդունենք Ալպոյաճյանի բերած տվյալները, իսկ համահեղինակներ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի կողմից որպես հայաբնակ հիշատակված Փորա, Խոչգաշի, Ռաբան գյուղերի հայության թիվը, ենթադրենք, որ կազմում էր 10-ական տուն: Գավառակում կային նաև բնակավայրեր, ինչպես, օրինակ, Մարրասուն, Վարդահեր գյուղերը, որոնք 1895 թ. ջարդերից հետո այլևս հայաբնակ չէին:

Այսպիսով, Մալաթիա գավառակում 1915 թ. դրությամբ հաշվում ենք 17064, Պեհեսնի գավառակում՝ 4558 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 15):

Աղյուսակ 15. Պեհեսնի գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բնակավայր	Կ. Պեննիյան	Թեոդիկ տուն	Ռ. Գևորգյան, Պ. Փաբուճյան	Ա. Ալպոյաճյան	մեր հաշվարկները
Պեհեսնի	500 տ.	500 տ.	530 տ./ 3750 շ.		3750 շ.
Թուլթ	20 տ.	-	800 շ.	16 տ.	128
Խոչգաշի	-	-			80
Շամբոյար	-	-		10 տ.	80
Պելվեսեն	-	-		15 տ.	120
Ռաբան	-	-			80
Սուրբաղ	-	-		20 տ.	160
Բնսու	5-6 տ.	10		-	80
Փորա	-	-	-	-	80
Ընդամենը			4550 շ.		4558

2) Հյուսնի Մանսուր կամ Ադիաման, Աղճա Դաղ գավառակներ: Մալաթիա գավառի մյուս գավառակը Հյուսնի Մանսուրն (Ադիաման) էր: Այն գտնվում էր գավառի հարավ-արևելյան հատվածում, արևմուտքից սահմանակից էր Պեհեսնիին:

[655] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 486:

Հյուսնի Մանսուրի վերաբերյալ նյութեր կա ԳԱԹ-ի Ս. Հայկունու ֆոնդում: Փաստաթղթերից մեկում, մասնավորապես, նշվում է. «Այս ժողովուրդն տասն և իններորդ դարու կիսուն գիւղս հաստատուած ին, մօտաւորապէս 50-55 տարի առաջ: Ալաշկերտի Ամատ գիւղի գաղթականներ ին, նախ հաստատուած ին Պաճալու գիւղը, ապա տեղափոխուած են Եղուարդ վանքապատկան գիւղը, ուր ևս քանի տարիներ մնացած, կերևի եղուարդցոց հետ չեն վարժուած, ուստի Զրմոլուի մոտ Ղուլ դարվիշ գիւղը: Այստեղ ևս թուրքերէն ու քրդերէն նեղուելով խոյս տուած ին 1850 թուին Ադիաման հաստատուած»[656]: 1903 թ. հրատարակված մի վիճակագրության համաձայն՝ Հյուսնի Մանսուրն ուներ 174 գյուղ[657]: Ընդհանուր առմամբ, Հյուսնի Մանսուրը մեծամասամբ քրդաբնակ էր, ուներ 5 նահիե: Դեռևս XIX դարի վերջերին Հյուսնի Մանսուրի գյուղերում ևս ուժեղացավ բնակչության շարժը դեպի ավելի խոշոր բնակավայրեր և հատկապես՝ Մալաթիա: Այս գավառակում 1914 թ. դրությամբ, ըստ համահեղինակներ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի՝ կար 21 հայաբնակ բնակավայր՝ 5202 հայ բնակչով[658]:

Գավառակի կենտրոնը Հյուսնի Մանսուրն էր, որը հայտնի էր նաև Ադիաման անունով: Քաղաքը բաժանվում էր երկու թաղերի՝ հայերի ու թուրքերի: Ըստ Բախտիկյանի՝ 1888 թ. դրությամբ Հյուսնի Մանսուրում կար 2000 տուն բնակիչ, որից 500-ը՝ հայ, 150-ը՝ ասորի[659]: Քաղաքի բնակիչները, ըստ Ծոցիկյանի, մոտ 15000 էին, այդ թվում հայեր՝ 6000, թուրքեր, ասորիներ, հույներ. արտադրվում էր ծխախոտ, բամբակ արմտիք, ևն[660]: Պեննենյանի

656 ԳԱԹ, Ս. Հայկունու ֆ., 69, թ. 1:
657 Նույն տեղում, էջ 55:
658 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
659 Բախտիկեան Ս., Ոսկեգնտակ, էջ 443:
660 Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 90:

կազմած տեղագրության համաձայն՝ 1890-ականներին Հյուսնի Մանսուրն ուներ 2000 տուն բնակիչ, որի մեկ քառորդը քրիստոնյաներ էին, այն է՝ 400 տուն լուսավորչական հայ, 30 տուն կաթոլիկ հայ, 10 տուն ասորի կաթոլիկ, 40 տուն ասորի, 20 բողոքական[661]: Թեոդիկը քաղաքի հայության թիվը նշում է 600 տուն[662]: Աղբյուրների համեմատությունը ցույց է տալիս, որ դեռևս դարավերջին քաղաքն ունեցել է շուրջ 500 տուն հայ բնակիչ: Ինչ վերաբերում է XX դարի սկզբներին, ապա գավառակի կենտրոնում պետք է, որ հայ ընտանիքների թիվն աճեր՝ ի հաշիվ շրջակա հայաբնակ բնակավայրերից հայ բնակչության արտահոսքի ու հայաշատ բնակավայրերում հաստատվելու ժողովրդագրական միտման, որն առավել հատուկ էր հենց այս տարածաշրջանի համար: Թեոդիկի մատնանշած տվյալը, թերևս, արտացոլում է իրականությունը: Այս բնակավայրի դեպքում ընդունենք Թեոդիկի տվյալը, այն բազմապատկենք տան անդամների միջին թվով, որ քաղաքաբնակների համար ընդունել ենք 6-ը, ստացվում է 3600 հայ բնակիչ:

Գավառակում որպես հայաբնակ հիշատակվում են Վարդան, Կնիկ, Սամոսատ, Գանթարա, Խրաֆի, Զապի, Քիլիսան, Դարդդան, Կոզան, Մարմարա, Գյոլ Բունար, Հայկ, Զուրնա, Բեշրին, Թավդիր, Յուրեմն, Զարկով, Իշեք, Թերփեթ, Բոզուզ բնակավայրերը, սակայն չի հստակեցվում դրանցից յուրաքանչյուրում ապրող հայերի քանակը: Գավառակի համար նշված թվից՝ 5202 հանում ենք Ադիամանի հայության համար՝ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի մատնանշած թիվը՝ 3390, ստանում վերոնշյալ գյուղերում բնակվող հայերի թիվն ըստ համահեղինակների՝ 1812: Պեննեյանն Ադիամանին ենթակա

---

[661] Պէնեէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 223:
[662] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 548:

նշում է 11 հայաբնակ բնակավայրերի անուններ, հստակեցնում դրանցում ապրող հայության թվաքանակը: Ալպոյաճյանն այս գավառակի հայաբնակ բնակավայրերի համար տարբեր աղբյուրներից տվյալներ է մեջբերում, որոնք տալիս ենք առանձին սյունյակով: Ընդհանուր առմամբ, գավառակում, բացի կենտրոն Հյուսնի Մանսուրից, նշվում է 20 հայաբնակ բնակավայրերի անուններ, որոնցում ապրում էր միջինը 10 տուն հայ: Այս գավառակի համար ընդունենք համահեղինակներ Ռ. Գևորգյանի ու Պ. Փստբուճյանի տվյալները, քանի որ Ա. Ալպոյաճյանի ու Պենենյանի տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք գրեթե չեն տարբերվում, մինչդեռ համահեղինակների՝ 20 գյուղերի համար տված թվաքանակի համաձայն, յուրաքանչյուր գյուղում հաշվվում է ոչ պակաս քան 10 տուն հայ բնակիչ:

Այս գավառակում ապրող հայերի թվաքանակը հաշվում ենք 5412 մարդ (տե՛ս աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Հյուսնի Մանսուր գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բնակատեղի	Է. Պենենյան[663]	Ռ. Գևորգյան, Պ. Փստբուճյան	Ա. Ալպոյաճյան[664]	մեր հաշվարկներ
Հյուսնի Մանսուր	450 տ.	3390 շ.	600 տ.	3600
Բուգուկ	-		2	
Իշեկ	-		2	
Գանթարա	8		10	
Զարկով	-		2	
Զուռնա	-		2	

[663] Պենենեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 224:
[664] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 495-496:

Թավդիր	-		2	
Թերփենթիլ	-		2	
Խրաֆի	3		3-4	
Կյոլ Բունար	3		4	
Կոզան	2	1812 շ.	3	1812 շ.
Կնիկ Գավրակ	4		5	
Հայկ	-		2	
Մարմարա	3		4	
Յուրնմն	-		2	
Ծնայի	3		4	
Պնշրին	-		2	
Սամսատի	15		20	
Վարդանա	15		15	
Տարտդան	4		5	
Քիլիսան	5		6	
Ընդամենը		5202 շ.	697-698 տ.	5412 շ.

Աղճա Դաղ գավառակը գտնվում էր գավառի արևմտյան հատվածում, սահմանակից էր հյուսիսում՝ Խարբերդի գավառին. գավառակի հարավում Պնհենսի գավառակն էր, արևելքում՝ Մալաթիա գավառակը: Այս գավառակը, որը հիմնականում բնակեցված էր քրդերով, բաժանված էր երեք գյուղախմբերի՝ Քյուրնե, Քյուրեճիկ, Հեքիմ Խան: 1903 թ. կազմված վիճակագրության համաձայն Աղճա Դաղն ուներ 122 գյուղ[665]:

Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը գավառակում հաշվում են 5 հայաբնակ բնակավայր, 1691 հայ բնակիչ[666]: Գավառակի կենտրոնական բնակավայրը Արղա ավանն էր. 1910 թ. դրությամբ այստեղ ապրում էր 15-20 տուն հայ[667]: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ այս բնակավայրում հաշվվում էր 137 հայ բնա-

[665] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 55:
[666] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:
[667] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 471:

կիչ[668]: Բնակավայրի հայության քանակի վերաբերյալ այլ տվյալ չունենք, ուստի ընդունենք այն:

Գավառակի Քյուրնե գյուղախմբի հայաբնակ երկու բնակավայրերից մեկն Անսուրն էր, որն, ըստ Պեննեյանի, նախկինում քաղաք էր եղել, Մալաթիայի հայությունն էլ 150-160 տարի առաջ գաղթել էր Անսուրից 1890-ականներին: Հեղինակի հավաստմամբ, Անսուրն ուներ 30 տուն հայ բնակիչ[669]: Անսուր գյուղը 1902 թ. տեղեկագրով ուներ 21 տուն հայ բնակիչ, գյուղում կար եկեղեցի[670]: Ծոցիկյանի կարծիքով՝ գյուղն ուներ 600 հայ բնակիչ[671]: Անսուրում, ըստ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի, ապրում էր 167 հայ բնակիչ[672]: Ընդունենք, որ այս բնակավայրում եթե հայ բնակչությունը չէր ավելացել, ապա գոնե չէր էլ պակասել, ուստի տների թիվը պետք է կազմեր ամենաքիչը 30, ինչը բազմապատկելով 8-ով, ստանում ենք 240:

Քյուրնե գյուղախմբի մյուս հայաբնակ գյուղը Մուշովկան էր, որն, ըստ Պեննեյանի, ուներ 40 տուն հայ բնակիչ[673]: 1902 թ. տեղեկագրի համաձայն՝ այստեղ հիշատակվում է 36 տուն հայ բնակիչ[674]: Ծոցիկյանը Մուշովկայի հայության քանակը տալիս է 800[675]: Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի ուսումնասիրության համաձայն՝ այստեղ ապրում էր 50 տուն՝ 380 շունչ հայ բնակիչ[676]: Ընդունենք, որ Մուշովկան ուներ 50 տուն հայ բնակիչ,

---

668 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
669 Պէննէեան Տէր Կ. քինյ., նշվ. աշխ., էջ 231-233:
670 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 477:
671 Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 386:
672 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
673 Պէննէեան Տէր Կ. քինյ., նշվ. աշխ., էջ 230-231:
674 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 476:
675 Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 386 :
676 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:

թիվը բազմապատկենք 8-ով, ստանում ենք 400, ինչը, ըստ մեզ, բնակավայրի հայության իրական թվաքանակն է արտացոլում:

Գավառակի Հեքիմ Խանե նահիեի կենտրոնական բնակավայրը ևս հայաբնակ էր: Այստեղ, ըստ Պեննենյանի, 1890-ականներին ապրում էր 50-60 տուն հայ բնակիչ[677]: Հեքիմ Խանեի բնակիչները գաղթել էին Երզնկայից, Մուշովկայից, Անսուրից: Վերջին 50-60 տարիների ընթացքում նրանք սկսել էին գաղթել Մալաթիա, Մեբաստիա, Յոզղատ, Կյուրին, այլ վայրեր: 1902 թ. տեղեկագրի համաձայն՝ Հեքիմ Խանեում կար 70 տուն հայ, կանգուն էր Ս. Աստվածածին եկեղեցին[678]: Մեկ այլ աղբյուրի համաձայն այս բնակավայրում հաշվվում էր 100 տուն՝ 770 շունչ հայ բնակիչ[679]: Ընդունենք, որ Հեքիմ Խանեում Պեննենյանի տվյալի համեմատ հայության աճ էր արձանագրվել, 1914 թ. դրությամբ կազմելով մինչև 100 տուն, թիվը բազմապատկենք 8-ով, ստանում ենք 800 հայ բնակիչ:

Հեքիմ Խանե գյուղախմբում էր գտնվում Հասան Չելեպի գյուղը, որտեղ, ըստ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի, ապրում էր 30 տուն՝ 237 հայ բնակիչ[680]: Տան անդամների թիվը 8 հաշվելով՝ այս բնակավայրի համար ստանում ենք 240:

Մալաթիայի գավառի Հյուսնի Մանսուր գավառակում, ըստ մեր հաշվարկների, 1915 թ. դրությամբ ապրում էր 5412, Աղճա Դաղ գավառակում՝1817 հայ (տե՛ս աղյուսակ 17):

---

677 Պէննէեան Տէր Կ. քհնյ., նշվ. աշխ., էջ 234:
678 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 475:
679 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
680 Նույն տեղում:

Աղյուսակ 17. Աղճա Դաղ գավառակի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բաղաք	Կ. Պենենիան	Ռ. Գևորգյան	Ա. Կիպրյանցյան	Մեր հաշվարկները
Անաուր	30 տ.	167 շ.	1902 թ.՝ 21 տ.	240 տ.
Արդա /Արկա		137 շ.	1910 թ.՝15-20 տ.	137
Հասան Չելեպի		30 տ. / 237 շ.	25-30 տ.	240
Հեքիմ Խանն	50-60 տ.	100 / 770	1902 թ.՝ 70 տ.	800
Մուշովկա	40 տ.	50 / 380	36 տ.	400
Ընդամենը		1691 շ.		1817 շ.

3) Քյախտա գավառակ: Մալաթիայի գավառի վերջին գավառակը Քյախտան էր, որն իր հերթին բաժանված էր գյուղախմբերի՝ նահիենների՝ Քյախտա, Շիրո, Կերկեր, Մրտես, Զրավքան, որոնք, ընդհանուր առմամբ, ընդգրկում էին ավելի քան 300 գյուղեր[681]: Գավառակը հիմնականում լեռնային տարածքներ էր ընդգրկում, ուստի այստեղ երկրագործության համար նպաստավոր պայմանները քիչ էին, որոշ վայրերում մշակվում էր բամբակ, ծխախոտ: Բնակիչները հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Նշված բոլոր գյուղախմբերում կային հայաբնակ բնակավայրեր, որտեղ ապրող հայերի թվաքանակը հիմնականում կազմում էր 2-10 տուն: Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը այս գավառակում հաշվում են 57 հայաբնակ բնակավայր՝ 10245 հայ բնակիչներով[682]: Նշենք նաև, որ Քյախտայի հայաբնակ բնակավայրերում ապրում էին նաև սակավաթիվ ասորիներ: Ի տարբերություն մյուս բնակավայրերի, որտեղ հաճախ ասորիներն էին հաճախում հայկական դպրոցներ, եկեղեցիներ, Քյախտայում միայն հատուկենտ բնակավայրերում էր, որ

[681] Պէնէէեան Տէր Կարապետ քինյ., նշվ. աշխ., էջ 217:
[682] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 59:

հայերը և՛ եկեղեցի ունեին և՛ դպրոց: Հիմնականում, հայերն ու ասորիները հաճախում էին միևնույն դպրոցը, ինչպես, օրինակ, Քեֆերտիզում, Աղվանում[683] և այլ գյուղերում:

Նախ անդրադառնանք Քյախտա կենտրոնին: Այստեղ, ըստ Պեննեյանի, 1890-ականներին ապրում էր ընդամենը 5-6 տուն հայ, 10-15 տուն քուրդ, նաև կառավարական պաշտոնյաներ[684]: 1902 թ. Տեր-Ղազարյանի տեղեկագրի համաձայն՝ Քյախտայում ապրում էր 7 տուն հայ, կիսականգուն էր Ս. Գևորգ եկեղեցին[685]: Օ. Քոքերը նշում է, որ օսմանյան վիճակագրության համաձայն՝ Քյախտայի 4000 բնակիչներից կեսը հայեր էին[686]: Թեոդիկի հրատարակած ցուցակի համաձայն՝ այս բնակավայրն ուներ 30 տուն հայ բնակիչ[687]: Սրանից խիստ տարբեր տվյալ է ներկայացված մյուս աղբյուրում, համաձայն որի՝ Քյախտաս կենտրոնի 4300 բնակիչներից 2250-ը հայեր էին[688]: Մենք առավել հակված ենք ընդունել վերջին տվյալը:

Գավառակի Շիրո գյուղախմբում Պեննեյանը թվարկում է հայաբնակ 8 բնակավայր, որոնցից առանձնացնենք մի քանիսը: Քեֆերտիզը, ըստ Պեննեյանի, ուներ 20 տուն հայ և 500-600 տուն թուրք բնակիչ[689]: Թեոդիկը այս գյուղը հիշատակում է Քավարրիշ տառադարձությամբ, որտեղ ապրում էր 7 տուն հայ[690]: Մեկ այլ տվյալի համաձայն՝ Քեֆերտիզում հաշվվում էր 400 հայ, 140 ասորի, 2000 թուրք բնակիչ[691]: Այս տվյալը ընդունենք նաև մենք,

---

683 Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218:
684 Նույն տեղում, էջ 215:
685 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 512-513:
686 Armenians in Turkey 100 years ago, էջ 300:
687 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 549:
688 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
689 Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218:
690 Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 549:
691 Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:

քանի որ տրամաբանական է, որ Պեննենյանի մատնանշած 20 տուն հայությունը 1914 թ. դրությամբ աճեր, քանի որ մի քանի տարիների ընթացքում ընդհանրապես հայաթափվել էին տարածքի բազմաթիվ բնակավայրեր, որոնց հայությունը հաստատվել էր հարակից ավելի կենտրոնական բնակավայրերում, ինչպիսին էր նաև Քեֆերտիզը: Ընդունենք, որ գյուղը 1914 թ. դրությամբ ուներ 50 տուն՝ 400 հայ բնակիչ:

Շիրոյի մյուս հայաբնակ բնակավայրը Աղվանն էր, որը, ըստ Պեննենյանի՝ ուներ 5 տուն հայ, 10 տուն ասորի բնակիչ[692]: Թեոդիկը չի հիշատակում այս բնակավայրը: Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը բնակավայրում հաշվում են 400 հայ բնակիչ[693]: Այս բնակավայրի դեպքու ընդունենք վերջին տվյալը:

Շիրոյի գյուղախմբում Պեննենյանի հիշատակած մյուս բնակավայրերի վերաբերյալ տվյալներն ամփոփենք աղյուսակում: Աղյուսակում ամփոփենք նաև 1902 թ. Մալաթիայի առաջնորդական տեղապահ Խաչատուր ծ. վրդ. Տեր Ղազարյանի՝ Մաղաքիա արք. Օրմանյան պատրիարքի հանձնարարությամբ կազմած տեղեկագրի տվյալները: Մասնավորեցնենք, որ Տեր Ղազարյանը Շիրոյի գյուղախմբի մի քանի բնակավայրեր վերագրում է Խարբերդի առաջնորդությանը, բացի Քեֆերտիզը, այս գյուղախմբի բնակավայրերում հաշվում 50 տուն հայ բնակչություն[694]: Համեմատելով այս տվյալները համահեղինակներ Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի բերած տվյալների հետ՝ տանք նաև մեր հաշվումների արդյունքը յուրաքանչյուր բնակավայրում ապրող հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Քրատի համար համահեղինակների տվյալն է՝ 130 շունչ, այն դեպքում, երբ Պեննենյանի ուսումնասիրության համաձայն այս բնակա-

---

[692] Պէնէնեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218:
[693] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
[694] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 514:

վայրում դեռևս 19-րդ դարավերջին ապրում էր ընդամենը 3 տուն հայ: Նշենք նաև, որ այս գյուղախմբում Ռ. Գևորգյանը որպես հայաբնակ հիշատակում է, բացի վերոնշյալ գյուղերը, Յումրյուն, Տամլու, Մամաշ, Թեփեխան, Քրաջ, Գյավուզ, Դերեթեփե, Զամչիկ, Արդուչայ բնակավայրերը: Վերջին չորս բնակավայրերում Ռ. Գևորգյանը հաշվում է 900 հայ բնակիչ: Թեփե Խան բնակավայրը հիշատակված է միայն համահեղինակների մոտ՝ 100 հայ բնակչով[695]. այս և վերոնշյալ գյուղերի դեպքում ևս ընդունենք վերջիններիս տվյալները: Կարծում ենք, որ Մալաթիայի դեպքում, երբ Ռ. Գևորգյանը ու Պ. Փաբուճյանը որոշ բացառություններով, հանդես են գալիս որպես ուսումնասիրող, նրանց տվյալներն ավելի մոտ են իրականությանը, քան Խարբերդի նահանգի մյուս բնակավայրերի դեպքում, երբ հեղինակները հրապարակում են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տվյալները:

Այսպիսով, Շիրոյի գյուղախմբում հաշվում ենք 2350 հայ բնակիչ(տե՛ս աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Բյախտայի գավառակ, Շիրո գյուղախմբի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, քաղաք	Լ. Պենենյան[696]	Ռ. Գևորգյան, Պ. Փաբուճյան[697]	Մեր հաշվարկները
Ռեֆերտիզ	20 տ.	400 շ.	400 շ.
Աղվան	5	400	400
Յումրյուն	12 -20	350	350
Տամլու	4	30	30
Մամաշ	2	40	40
Թեփե Խան	-	100	100

[695] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
[696] Պէնենէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218-220:
[697] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:

Արդուչայ	3	900	900
Զամչիկ	2		
Դերնթնփն	-		
Գյավուզ	-		
Թրատ	3	130	130
Ընդամենը	51-59 տ.	2350 շ.	2350 շ.

Կարկառի գյուղախմբում Պեննենյանը որպես հայաբնակ է հիշատակում Կարկառ, Գոմիք, Գարուն, Կաղնտեք, Պայիքի, Պըմրրշռ, Թիլլռ, Թերքիտին, Մեզերե, Բեթրկե, Թեմշիաս և Վանք բնակավայրերը, որոնք, բացառությամբ Կարկառի և Վանքի, ունեին 1-6 տուն հայ բնակչություն: Կարկառում Պեննենյանը հաշվում է 10-12 տուն, Վանքում՝ 18 տուն հայ բնակիչ[698]: Ըստ Ծոցիկյանի՝ Կարկառն ուներ 500 հայ բնակիչ[699]: Ռ. Գևորգյանը Կարկառ բնակավայրում հաշվում է 70 տուն՝ 450 շունչ, ողջ նահիեում՝ 240-0 հայ բնակիչ[700]: Բացի Պեննենյանի հիշատակած բնակավայրերը, համահեղինակները որպես փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրեր են հիշատակում նաև Խնչտուր, Քորաղլի, Զրմխան, Զաչիան, Փիրախի, Զաֆկան, Արքավունի, Ազմա, Հալուր գյուղերը: Համահեղինակներ Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը չեն առանձնացնում այս բնակավայրերում ապրող հայության թվաքանակը, այլ Կարկառի գյուղախմբի 20 գյուղերում ընդհանուր հաշվում են 1950 հայ բնակիչ[701], ինչն էլ ընդունում ենք մենք:

Այսպիսով, Կարկառի գյուղախմբում հաշվում ենք 2400 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 19):

---

[698] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218:
[699] Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 385:
[700] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
[701] Նույն տեղում:

Աղյուսակ 19. Քյախտայի գավառակ, Կարկառ գյուղախմբի հայ բնակչության թվաքանակը

Գյուղաքաղաք	Դրամագրքում[702]	Ղ. Գրիգորյան, Ղ. Փարսադանյան	Ընդամենը մեր հաշվարկներով
Կարկառ	10-12 տ.	70 տ. / 450 շ.	450 շ.
Գոմիք	4	1950 շ.	1950 շ.
Գարուն	2		
Կաղնտեք	1		
Պայիքի	2		
Պրմրշռ	2		
Թիլլո	2		
Տերտիկին	3		
Մեզերն	2		
Բնթրկն	6		
Թեմշիաս	3		
Վանք	18		
Խնչտուր	-		
Քորաղլի	-		
Զրմխան	-		
Զափան	-		
Փիրախի	-		
Զաֆկան	-		
Արքավունի	-		
Ազմա	-		
Հալուր	-		
Ընդամենը	55 տ.	2400 շ.	2400 շ.

Մրտեն կամ Մրախա գյուղախմբի հայաբնակ բնակավայրերը, ըստ Պեննենյանի՝ հետևյալներն էին՝ Պյոյուք Պաղ, Հասան Տիկին, Խորեն, Հելիմ, Գարա Թյուլպե, Թլթլաւ, Սրաթուտ, Նաոնքա, Բերագ, Ուլպիշ, Քեքերտիշ, Հոլթ, Քորդիե, որտեղ, ըստ

[702] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218-220:

հեղինակի՝ ապրում էր 2-10, Ուլպիշում՝ 20 տուն հայ: Ըստ Ալպոյաճյանի՝ այս գյուղախմբում ապրում էր 312 տուն հայ[703]: Մրտենի գյուղախմբի դեպքում ևս Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը չեն առանձնացնում տարբեր բնակավայրերում ապրող հայության թվաքանակը. համաձայն նրանց հրատարակած տվյալների՝ այս գյուղախմբում հաշվվում էր 312 տուն՝ 2425 հայ բնակիչ[704]: Այս տվյալը, թերևս, հեղինակները վերցրել են նույն Ալպոյաճյանից, միևնույն ժամանակ, նրանք թվարկում են այս գյուղախմբի հայաբնակ բնակավայրերը նույն հերթականությամբ, ինչ Պեննելյանը: Ինչևիցե, այս գյուղախմբի բնակավայրերին վերաբերող տվյալները ևս ամփոփենք աղյուսակում, հիմք ընդունենք համահեղինակների տվյալները. տան անդամների թիվն այս դեպքում հաշվվում է գրեթե 8, ուստի ընդունենք նաև նրանց տված շնչերի քանակը (տե՛ս աղյուսակ 20):

Աղյուսակ 20. Քյախտայի գավառակ, Մրտենս գյուղախմբի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, դուշ	Է. Պեննելյան[705]	Ռ. Գևորգյան	Ամենամյա հաշվառումներ
Պեռյուր Պաղ	10-15 տ.		
Հասունտիկին	3		
Խորենս	3		
Հելիմ	8		
Գարաթյուպեն	6		
Ֆլթլա	2		
Սրաթուտ	2		

[703] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 511:
[704] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:
[705] Պէննէէնան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218-220:

Նառնքա	4	312 տ./ 2425 շ.	2425 շ.
Բերաւզ	3		
Ուլպիշ	20		
Հութ	3		
Քնքերտիշ	3		
Քորդին	2		
Նարլըճա	-	-	
Ընդամենը	69-74 տ.	2425 շ.	2425 շ.

Այս գավառակի վերջին գյուղախումբը Զրավքանի գյուղախումբն էր: Այստեղ Պեննենյանը հիշատակում է հետևյալ հայաբնակ բնակավայրերը՝ Պերվեդոլ, Կեյիքան, Քոլիկ, Գարաջոր, Հավանք, Պլիլա, Մշրաղ, Գարաթուր, Կուտիշ, Փերտեսո, Մեյդ Մահմուդ: Բացի այս գյուղերը, Պեննենյանը հիշատակում է գյուղախմբին կից այլ բնակավայրեր, որոնք վերաբերում էին Սևերեկին, Չնգուշին, Եդեսիային: Նույն հերթականությամբ բնակավայրերը նշվում են նաև Ռ. Գևորգյանի ու Պ. Փաբուճյանի մոտ, ովքեր գյուղախմբի հայության թվաքանակը հաշվում են 100 տուն՝ 820 շունչ[706]: Այս գյուղախմբում հիշատակված բնակավայրերում Պեննենյանի տվյալների համաձայն հաշվվում էր 59 տուն հայ, տան անդամների թիվը 8-ով հաշվարկելիս ստանում ենք 472, որն ավելի քան 20 տարիների ընթացքում պետք է աճեր. Զրավքանի գյուղախմբում հաշվում ենք 820 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 21):

Աղյուսակ 21. Քյախտայի գավառակ, Զրավքան գյուղախմբի հայ բնակչության թվաքանակը

գյուղ, բնակավ.	Պեննենյան[707]	Գևորգյան, Փաբուճյան[708]	ա.հ.
Պերվենտոլ	5 տ.		820 շ.
Կեյիքան	2		

[706] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 391:
[707] Պէննէեան Տէր Կարապետ քհնյ., նշվ. աշխ., էջ 218-220:
[708] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 390:

Ջոլուկ	5	100 տ. /820 շ.	
Գարաջոր	2		
Հավանք	5		
Պիլյա	6		
Մշրաղ	6		
Գարաթուր	3		
Կուտիշ	3		
Փերտենսո	10		
Սեյդ Մահմուդ	12		
Ընդամենը	59 տ.		820 շ.

Բացի աղյուսակներում նշված բնակավայրերը, որոնց անդրադարձ կար ուսումնասիրություններում, Մալաթիայի Առաջնորդական տեղապահ Խաչատուր ծ. վրդ. Տեր Ղազարյանի՝ Օրմանյան պատրիարքի հանձնարարությամբ կազմած տեղեկագրում հիշատակվում են Քյախտայի գավառակի այլ բնակավայրեր, որոնք 1902 թ. դրությամբ հայաբնակ էին, ուստի աղյուսակում ներառենք նաև այս բնակավայրերը: Կարելի է ենթադրել, որ այս բնակավայրերը կազմել են առանձին գյուղախումբ՝ Քյախտայի գյուղախումբը: Պեննենյանի մոտ ընդհանրապես բացակայում է այս գյուղախումբը: Սույն աղյուսակում ներառենք նաև Քյախտա գյուղաքաղաքի հայության թվաքանակը (տե՛ս աղյուսակ 22):

Աղյուսակ 22. Քյախտայի գավառակ, Քյախտա գյուղախումբ

գյուղ, բաղաք	1902 թ. տեղեկագրի[709]	մեր հաշվարկները
Քյախտա	-	2250 շ.
Գոլուգ գյուղ	9 տ.	72
Գորբսկիլ	3	24
Կապեր	2	16
Կարչորան	2	16
Նենիճանուն	9	72

[709] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 512-514:

Նունի	8-9	72
Տարտաղան	3	24
Կավդրուլ	1	8
Տնրքաքնսա	5	40
Քնան	4	32
Քնրքոխ	1	8
Պարպանոս	2	16
Թոմակ	1	8
Կարպո	1	8
Անտամ	5	40
Մգրաք	2	16
Ընդամենը	58-59 տ.	2722 շ.

Վերոնշյալ 16 գյուղերի դեպքում, ընդունելով 1902 թ. տեղեկագրի տված տների քանակը, հաշվարկել ենք շնչերի քանակը: Ըստ հաշվարկների՝ վերոնշյալ բնակավայրերում հաշվել ենք 2722 հայ բնակիչ:

Այսպիսով, Քյախտա գավառակում ըստ մեր հաշվարկների, ապրում էր 10717 հայ բնակիչ, գավառակում, ըստ եղած տվյալների, կար 74 հայաբնակ բնակավայր: Մալաթիայի գավառակում 1914-1915 թթ. դրությամբ, ըստ մեր ուսումնասիրության, կար 1 քաղաք, 4 գյուղական բնակավայր՝ 17064 հայ բնակչությամբ, Պեհեսնիում՝ 1 քաղաք, 8 գյուղ՝ 4558, Հյուսնի Մանսուր գավառակում՝ 1 քաղաք, 20 գյուղ՝ 5412, Աղջա Դաղում՝ 1 քաղաք, 4 գյուղ՝ 1817 հայ բնակիչներով: Ընդհանուր առմամբ, Մալաթիայի գավառում, ըստ մեր հաշվարկների, 1914-1915 թթ. ապրում էր 39568 հայ բնակիչ (տե՛ս աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Մալաթիա գավառի հայ բնակչության թվաքանակը 1915 թ. դրությամբ՝ ըստ մեր հաշվարկների

Մալաթիա գավառակ	17064 շ.
Պեհեսնի գավառակ	4558 շ.
Հյուսնի Մանսուր գավառակ	5412 շ.
Աղջա Դաղ գավառակ	1817 շ.
Քյախտա գավառակ	10717 շ.
Ընդամենը	39568 շ.

Այսպիսով, XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի բնակչության էթնիկ կազմը բավական փոփոխություններ էր կրել: Նահանգի հայ բնակչությունը նախկինի համեմատ ոչ թե աճել էր, այլ՝ նվազել: Նման պատկերը հետևանք էր նահանգի տարածքում ընթացող ժողովրդագրական միտումների, որոնք քննարկել ենք աշխատության նախորդ գլխի ենթագլուխներում: Այսպիսով, եթե պատրիարքարանի ներկայացրած 1882 թ. վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում ապրում էր 270000 հայ, ապա, ըստ մեր հաշվումների, 1915 թ. դրությամբ Խարբերդի նահանգի Խարբերդ, Դերսիմ, Մալաթիա գավառներում ապրում էր շուրջ 200000 հայ: 1882 թ. տվյալների համեմատ՝ ըստ մեր հաշվումների, 1882-1915 թթ. ընթացքում նահանգի հայ բնակչության թվաքանակը նվազել էր մոտ 27 %-ով:

Ինչ վերաբերում է թուրքական տվյալներին, ապա սրանք ակնհայտորեն պակաս էին ներկայացնում հայերի թվաքանակը: Թուրքական տվյալների համաձայն՝ հայերի թվաքանակը մեր հաշվումների համեմատ, նվազեցվում էր գրեթե երկուսուկես անգամ:

Ինչպես արդեն նշել ենք, Խարբերդի նահանգի տարածքում քիչ չէին նաև այն բնակավայրերը, որոնց հայությունը կրոնափոխ էր արվել դեռևս XVI-XIX դարերի ընթացքում: Վերջիններիս մի մասը XIX դարի վերջին և XX դարի սկզբին պահպանում էր ազգային ավանդույթների ու քրիստոնեական ծիսակարգի որոշ տարրեր: Բնակչության այս հատվածը, որը գրականության մեջ ստացել է «կեսկեսներ» անվանումը, հաճախ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրության կարևոր խնդիրներից մեկը

նաև հայ էթնոսին պատկանող այս հատվածին առնչվող խնդիրների ուսումնասիրությունն է:

Խարբերդի նահանգում որպես նախկինում հայաբնակ, ապա կրոնափոխ արված բնակավայրեր էին հիշատակվում հատկապես Ակնի, Արաբկիրի գավառակներում, Դերսիմի, Մալաթիայի գավառներում: Այս մասին էին փաստում, ինչպես արդեն նշել ենք, տվյալ բնակավայրերի հայկական անվանումները, պահպանված եկեղեցիների ու վանքերի ավերակները, բնակչության էթնիկ պատկանելիության հիշողությունները: Մասնավորապես, բազմաթիվ վկայություններ կան Ակնի Սանտուլս, Ապրանք, Արկու, Հաբեղնոց, Հաբեղնոցի Ագրակ, Միջին գեղ, Վան գեղ, Աղրիկ, Կաշո, Ուռեկ, Ավերակ, Սանասսի, Խասսա, Հեղդար, Գոմսկան, Արտոս, Մերկևիլ գյուղերի մասին, որոնց հայ բնակիչները իսլամացվել էին XVIII դարի ընթացքում: Ռ. Գևորգյանն ու Պ. Փաբուճյանը բացի այս գյուղերը, հիշատակում են նաև քիչ հայտնի Սալահլու, Յաղուպլու, Չիպվեր, Պաղաշտաշ, Բաղչե, Փաշայեկ, Թավուկ, Աթմա, Թաբատ, Քահարան, Փաշաղի, Վերգան, Գիջեգի, Զալթ, Դիլի, Բազմաշեն, Վերի Քենդիր, Վարի Քենդիր, Երգի գյուղերը[710], որոնց հայ բնակչությունը ևս բռնի իսլամացվել էր 1770-1800-ական թթ.: Ընդհանուր առմամբ, Ակնի տարածքում 1915 թ. դրությամբ հիշատակվում է իսլամացած հայերի 36 գյուղ: Վերոնշյալ բնակավայրերում ապրող իսլամացած հայերի թվաքանակը նշվում է 5157: Հեղինակը հավաստում է, որ այս մարդիկ նույնիսկ գաղտնիաբար քրիստոնեական ծեսեր էին

[710] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380-381:

կատարում և, ինչն ավելի հետաքրքիր է, թուրքերը նրանց շարունակում էին համարել «գյավուրներ» (անհավատներ)[711]:

Արևբկիրի գավառակում ևս կային գյուղեր, որոնք XIX դարի վերջերին այլևս հայաբնակ չէին, բայց կրում էին հայկական անվանումներ, օրինակ՝ Աշոտկա, Թարխանիկ, Բաղնիք, Դավթի, Մատուռկա, Փուլ, Բագուսի, Սոսիկ և այլն. այստեղ ևս խոսքն իսլամացած հայերի մասին է:

Նման բնակավայրերը քիչ չէին նաև Դերսիմի գավառում: Գ. Հալաջյանը, 1909-1914 թթ. ընթացքում անձամբ շրջելով Դերսիմի բնակավայրերով, հիշատակում է, մասնավորապես, Խոզաթի շրջանում՝ Իպիգալե, Վարդենիկ, Փիր Սուլթան, Զարսանջակում՝ Մոխնտի, Լոշմար բնակավայրերը, որտեղ բնակվում էին 580 տուն քրդացած հայեր[712]: Նման բնակավայրերի թիվը, կարծում ենք, միայն Դերսիմում անցնում էր մի քանի տասնյակը: Մասնավորապես Զմշկածագի Ս. Թորոս նահիեի 20 գյուղերում 1915 թ. դրությամբ հաշվվում էր 4935 իսլամացած հայ[713]: Վերջինները ևս բռնի իսլամացվել էին XVIII դարի ընթացքում: Բերված մի քանի օրինակներից երևում է, որ նահանգի տարածքում բազմաթիվ էին այն բնակավայրերը, որոնց հայ բնակիչները բռնի կրոնափոխ էին արվել դեռևս XVII XVIII դարերի ընթացքում: Կարևոր է արձանագրել, որ տվյալ բնակավայրերի իսլամացած հայությունը XX դարի սկզբներին իսկ պահում էր հայկական ծագման հիշողությունը: Ցավոք, նահանգի տարածքում ապրող իսլամացած հայերի թվաքանակի վերաբերյալ հստակ թիվ չենք կարող նշել, միայն կարող ենք են-

---

[711] Նույն տեղում:
[712] Հալաջյան Գ., նշվ. աշխ., էջ 33, 35, 38, 96, 98:
[713] Kévorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 386:

թաղրել, որ նրանց թվաքանակը կազմում էր մի քանի տասնյակ հազար:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակի ստացված տվյալները տարբերվում են պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներից, որոնք ևս միտում ունեին պակաս ցույց տալու տարբեր բնակավայրերում ապրող հայության թվաքանակը: Հատկապես այս նվազեցումը վերաբերում էր շնչերի քանակին: Հիմնական օրինաչափությունը, որ կիրառել ենք մեր հաշվումների ընթացքում, դա, ընդունելով 1913-1914 թթ. պատրիարքարանի ներկայացրած տների թիվը, տան անդամների թվաքանակը հաշվարկել քաղաքում՝ 6, գյուղերում՝ 8 համամասնությամբ: Սակայն նահանգի տարածքում քիչ չէին այն բնակավայրերը, որոնց հայության թվաքանակի վերաբերյալ տվյալներն ընդհանրապես բացակայում են պատրիարքարանի ցուցակներից: Նման դեպքերում հիմք ենք ընդունել տվյալ բնակավայրի վերաբերյալ մյուս աղբյուրներում տեղ գտած տվյալները: Ստորև ներկայացնում ենք, ըստ մեր հաշվարկների, XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակն արտացոլող աղյուսակ.

Խարբերդի գավառ	99274
Դերսիմի գավառ	61116
Մալաթիայի գավառ	39568
Ընդամենը	199958

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ա) Ցեղասպանության իրագործման մեխանիզմները Խարբերդի նահանգում 1915 թ.

Հայոց ցեղասպանության տարիներին Խարբերդի նահանգի հայությունը ևս, ինչպես կայսրության մյուս նահանգներում, ենթարկվեց տեղահանության, կոտորածների, արդյունքում, ինչպես ողջ Արևմտյան Հայաստանը, այնպես էլ՝ Խարբերդի նահանգը գրեթե ամբողջությամբ հայաթափվեց:

Համիդյան կոտորածներից հետո որոշ ժամանակ նահանգի հայության կյանքը կարծես անվրդով էր, սակայն բնակչության մեջ շրջում էր կոտորածների կրկնման տագնապը, ինչն ավելի մեծացավ 1908 թ. սահմանադրության ընդունումից հետո: Մինչ այդ՝ դեռևս 1908 թ. փետրվարին, Բոստոնում հրատարակվող «Ազգ» թերթի թղթակիցներից Արտավազդը գրում է. «Կենանքներնիս վախու մէջ է, և ամէն ժամանակ կը լսենք, որ նորէն ուշ կամ կանուխ՝ կոտորած պիտի ըլլայ...Խարբերդին մէջ ապրիլը անհնարին դարձած է»[714]: Նույն տագնապն է և 1908 թ. ապրիլի 9-ին գրված թղթակցության մեջ. «Հայուն համար կուտակուած ամպերը կան որոնք օրքանզօր սպառնական կը դառնան... Թուրքերը Մէզրէն վալիին կը հեռագրեն սա «ֆրրսանդ եօղսուլի» հայերը ջարդելու հրաման խնդրելով: Վալին ալ համամտութիւն ցոյց տալով քիչ մըն ալ սպասել կը հրամայէ»[715]: Պարզ է, որ տագնապն ամենևին էլ անհիմն չէր, առավել ևս, որ նշված ժամանակահատվածում Խարբերդում նաև բանտարկություններ էին եղել:

---

[714] «Ազգ», Պոսթոն , ապրիլ 11, 1908 թ., էջ 3:
[715] Նույն տեղում, մայիս 30, էջ 2-3:

Իրավիճակն անփոփոխ մնաց նաև սահմանադրության հռչակումից հետո, թեև մի պահ հայերի մեջ ևս ոգևորություն և ապագայի նկատմամբ հույս արթնացավ: Ինչպես ամբողջ կայսրության տարածքում, այնպես էլ Խարբերդ, Մեզրե, Արաբկիր, Քերրի քաղաքներում, մյուս բնակավայրերում սահմանադրության ընդունման առթիվ տոնախմբություններ կազմակերպվեցին: Սրան զուգահեռ կրկին թեւածում էին կոտորածի լուրերը: Վարդուհի Թոփուզյանը «Ասպարեզ» թերթում գրում է. «Երբ առաջին անգամ սահմանադրութեան լուրը հազիւ մեր շրջանները եկած հասած էր, Խարբերդ քաղաքի թիւրք խուժանը որոշեցին հայերու ջարդ մը տալ, բայց ազդեցիկ աքսորականներու (Թիւրք քոմիթէի անդամ) ստիպումով կառավարութիւնը արգիլեց այդ շարժումը»[716]:

Արդեն 1909 թ. կիլիկիահայության կոտորածից հետո, Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Մասսերսոնը գրում է, որ «ամենավստահելի աղբյուրից, աղբյուր, որը հնարավոր չէ ժխտել, տեղեկացվել է, որ նահանգապետ Ալի Նուրսեթ փաշան ապրիլի 23-ին հեռագիր է ստացել, որում հրամայվում է կոտորած կազմակերպել նույն օրը կամ «այնքան շուտ, քանի դեռ լուրը չի հասել ժողովրդին»»: Հյուպատոսը նկարագրում է, որ հաջորդող երեք օրերի ընթացքում բազմաթիվ «ռեակցիոներներ ու քրդեր, զինվելով հավաքվում էին քաղաքում»: Սակայն մի քանի օր անց վալին Երզնկայում գտնվող բանակի հրամանատարից լուր է ստանում՝ մերժելու կոտորածի կոչող յուրաքանչյուր հաղորդագրություն, ավելին, հրամանատարը սպառնում է վալիին անձնապես պատասխանատու համարել յուրաքանչյուր բռնության համար[717]: Այնուամենայնիվ, կիլիկիահայության

---

[716] «Ասպարեզ», Ֆրէզնօ, հոկտեմբեր 16, 1908 թ., էջ 4:
[717] Merguerian B., The View from the United States Consulate, էջ 297-298:

կոտորածն իր արձագանքներն ունեցավ այստեղ: Ադանայից վերադարձան այն արտագնա բանվորները, որոնք աշխատանքի էին մեկնել Խարբերդից: Վերջիններիս պատմությունները բավական էին ժողովրդի մեջ կրկին կոտորածների տագնապը արթնացնելու համար: Արդյունքում՝ որոշակիորեն ավելացավ ԱՄՆ արտագաղթողների թիվը:

Խարբերդում հայերից զենքի հավաքումը պատճառաբանվում էր Վանի դեպքերով. իբր այստեղ այդ արվում էր նախազգուշական նկատառումներով: Սկզբում վստահեցնում էին, որ որևէ վտանգ չկա խարբերդահայերի համար, իսկ սեբաստացիների ու կարնեցիների տեղահանությունն իբր իրականացվում է ռազմաբուգիտական նկատառումներով: Խարբերդում, Մեզրեում, Խարբերդի դաշտի գյուղերում, այլ վայրերում հայերը փորձում էին խուսափել ձերբակալություններից և զենք էին գնում հարևան թուրքերից ու հանձնում իշխանություններին: Իշխանությունների ներկայացրած տվյալների համաձայն որոշ տեղերում իբրև թե հայտնաբերվել էին նույնիսկ ռումբեր, պայթուցիկ նյութեր: Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը տեղեկացնում էր, որ այդ ռումբերը «ոստիկանությունն է նախօրոք թաղել, որպեսզի հայերի դեմ հանցանշաններ ունենա»[718]:

Զենք հավաքելու պատրվակով կազմակերպված խուզարկություններին զուգահեռ՝ թուրքական իշխանությունները 1915 թ. մարտ ամսից սկսել էին բանտարկությունները: Ընդ որում, ձերբակալում ու բանտարկում էին նահանգի կյանքի տարբեր ոլորտներում աչքի ընկնող մարդկանց, որոնք իշխանությունների կողմից մեղադրվում էին կառավարության դեմ կազմակերպվող խռովության մեջ: Սա, իհարկե, բացահայտ կեղծիք էր, որն ընդգծեցին այստեղի ականատես բազմաթիվ այլազգիներ:

---

[718] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 101:

Ինչպես նշում էր գերմանացի միսիոներ, քարոզիչ Յոհաննես Էմանը, «այստեղի քրիստոնյաների մտքով իսկ չի անցնում ըմբոստանալ կառավարության դեմ»[719]: Այս ընթացքում, Էմանը Խարբերդի առաջնորդ Պսակ ծ. վարդապետի հետ հանդիպեց Խարբերդի կուսակալին, որն իր գործողություններն արդարացրեց՝ հայտարարելով, որ «աւելի լաւ է գոհել մէկ քանի «յանցաւոր» հայ, քան ամբողջ ազգաբնակչութիւնը»[720]:

Ձերբակալություններն առավել ակտիվացան ու գավառներում տարածվեցին 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Մայիսին Խարբերդ և Մեզրե քաղաքներում առանց որևէ պատճառաբանության ձերբակալվեցին մի քանի հարյուր հեղինակավոր հայեր, այդ թվում՝ առևտրականներ, վաճառականներ, Եփրատ քոլեջի ուսուցիչներ: Մայիսին ձերբակալվել էին նաև Ակնի, Արաբկիրի, Չմշկածագի, Չարսանջակի ազգային գործիչները, թուրքական իշխանությունների կողմից «վտանգավոր» ճանաչված մարդիկ: Հունիսի 1-ին ձերբակալված Ակնի առաջնորդական փոխանորդը հետագա օրերին Ակնի 30 ազդեցիկ անձանց հետ ուղարկվում է Արաբկիր, ապա նրանց են միացնում ևս 90 հոգու: Իբրև Ակնի ապստամբ հայության գլխավոր ալարագլուխներ՝ Գյումուշ Մադենի առջև նրանց նավ են բարձրացնում, հետո խեղդամահ անում: Հունիսի 7-ին ձերբակալված մոտ 400 հայերի էլ գիշերով, 5-ական կապելով, նետում են գետը՝ նախապես նրանց վրա ծանր քարեր կապելով, որ հնարավոր չլինի փրկվել[721]:

---

[719] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, Հրատարակությունը և ներածությունը Դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006, էջ 82:

[720] Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը:1914-1918, Կ.Պոլիս, 1921, էջ 154 :

[721] Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան, էջ 240:

Անջրդի գյուղի կառավարական շենքում են հավաքում Արաբկիրի Ծագ, Խոռոչ, Մաշկերտ, Սաղմկա գյուղերի տղամարդկանց, որոնց, 8 օր շարունակ ենթարկվելով խոշտանգումների, մայիսի 29-ին տանում են Առնավուտ խան՝ Ակնի մոտակայքում, ուր նախապես բերել էին Վաղշենի, Քուշնայի, Էհնեցիքի, Հասկնիի, Ծապլվարի, Աղնի, Վանքի, Կռանիի հայերին: Սպանդից փրկվում են հատուկենտ տղամարդիկ:

Նույնանման գործողություններ իրականացվեցին նաև Դերսիմի գավառում: Դեռ 1915 թ. մայիս-հունիս ամիսներին Զմշկածագում ձերբակալված և բանտարկված մոտ 60 մտավորականներին ու հոգևորականներին դաժան ծեծի ենթարկելուց հետո տանում են Եփրատի ուղղությամբ, սպանում և դիակները նետում գետը[722]: Զմշկածագում ձերբակալվածներին փակել էին մութ ու կեղտոտ ձիարաններում, որտեղ 5 բոպե մաքուր օդն ու լույսը վաճառում էին հինգ ոսկե ֆունտով (25 դոլար)[723], այս մասին իր հուշերում գրում է Զմշկածագցի Գրիգոր Ծաղիկյանը: Այս ընթացքում արդեն սպանվել էին Բերրիում բանտարկված Զարսանջակի գյուղերի մեծամեծները, ազգային ղեկավարները: Բերրիի ազգային ղեկավարներին սպանում են Թլա բերդում: Այս մասին գրում է Պողոս Պոյաճյանը[724]:

Իշխանություններն առանձնակի դաժանությամբ են վարվում Մեզրեում բանտարկված նահանգի առավել հեղինակավոր անձանց և առանձնապես Եփրատ քոլեջի պրոֆեսորների հետ: «Մամուրեթ-ուլ-Ազիզում մեկ այլ սարսափելի երևույթ էր կատուսնքը, ինչին մարդիկ ենթարկվում էին այստեղ շուրջ երկու

---

[722] Գասպարեան Հ., նշվ. աշխ., էջ 398-399:

[723] Zahigian K., One Page of Armenia's Tragedy: A Story of the years wherein we have seen evil, 1923, p. 10.

[724] Տոնապետեան Պ., Զայն Տառապելոց, Փարիզ, 1922, էջ 274: Տես նաև՝ Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 451:

ամիս. առավել դաժանորեն վարվում էին հատկապես բարձր դասի հայերի հետ»[725],- նշված է ամերիկյան փաստաթղթերից մեկում: Հունիսի 23-ի գիշերը Մեզրեի բանտից բանտարկյալների մի մեծ խմբի Տիգրանակերտ տանելու պատրվակով գաղտնի հանում են քաղաքից: «Այս մարդիկ, մենք զգում ենք, ուղարկվել են մահվան»[726],- այս խմբի մասին գրել է ամերիկացի միսիոներուհի, բժիշկ Հենրի Ատկինսոնի կինը՝ Թեսի Ատկինսոնը, որը 1915 թ. գտնվում էր Խարբերդում: Նշված խմբի մեջ էին՝ Խարբերդի վիճակի հայոց առաջնորդ Պսակ ծ. վարդապետը, պրոֆեսորներ, մեծ թվով վաճառականներ: Վերջիններիս սպանում են Արղանա Մադենի մոտակայքում[727]: Ընդ որում, այս խմբի մարդկանց սպանել են տարբեր մեթոդներով՝ ոմանց ողջ-ողջ այրել են, ոմանց՝ գնդակահարել, մյուսներին սպանել սրով, կացնով, են: Այս մասին հպարտությամբ պատմել են նույն ոճիրը իրագործողները[728]: Սա Մեզրեից դուրս հանված և ոչնչացված առաջին մեծ խումբն էր: Հետագա օրերին Մեզրեի բանտից դուրս են հանվում բազմաթիվ այլ խմբեր, որոնց ևս, քաղաքից դուրս տանելով, սպանում են:

1915 թ. սկզբին սկսած ձերբակալությունների ալիքը հունիս ամսին ստանում է համատարած բնույթ: Գրեթե միաժամանակ զինաթափվում ու սպանվում են նահանգի տարածքում ծառայության կանչված բազմաթիվ հայ զինվորներ: Զինաթափելուց հետո Խարբերդում ծառայող 13000 հայ զինվորների տեղա-

---

[725] United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, նշվ. աշխ., էջ 366: Տե՛ս նաև՝ Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 305-306: Տե՛ս նաև՝ Մկրտիչեան Ե., Թուրքիոյ գեհենէն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը. Ականատեսի պատմութիւն, Աղեքսանդրիա, 1918, էջ 18-20:
[726] Atkinson T., նշվ. աշխ., էջ 38:
[727] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 109:
[728] Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 17:

փոխում են Մեզրեի բանտ: Մեկ շաբաթ անց բոլոր բանտարկյալները ժանդարմների խիստ հսկողության ներքո դուրս են բերվում բանտից՝ Ուրֆա տանելու պատրվակով: Այս զինվորներին սպանում են Պազր Մադենի մոտ[729]: Սպանված երիտասարդների մեծ մասն ամերիկյան, ֆրանսիական քոլեջների, կենտրոնական հայկական դպրոցի աշակերտներ էին: Հետագայում նույն պատրվակով քաղաքներից դուրս են հանվում ու սպանվում բազմաթիվ այլ խմբեր: Հուլիսի սկզբներին Խարբերդցի 2000 հայ զինվորների հանում են քաղաքից՝ Հալեպ տանելու նպատակով՝ իբր այնտեղ ճանապարհ կառուցելու համար, բայց քիչ հետո բոլորին կոտորում են. փրկվում են մի քանի հոգի[730]: Այս ընթացքում է նաև, որ Մալաթիայից հինգվեց ժամ հետո, Չիֆթլիկ և Մամուրան վայրերում, սպանվում են խմուղինների շինարարության մեջ ներգրավված 1500 մալաթիացի, ակնցի, արաբկիրցի զինվորներ[731]:

Ակնհայտ էր, որ հայերի բնաջնջմանն ուղղված գործողությունները համակարգված էին կենտրոնական իշխանության կողմից և անմիջականորեն իրագործվում էին տեղական իշխանությունների, ժանդարմների կողմից, այլապես անհնար կլիներ նման պլանավորված կերպով իրականացնել այդքան մարդկանց սպանությունը: Այս մասին է վկայում դեռևս 1915 թ. մարտի 16-ին նահանգի կուսակալ Սաբիթ բեյը, որը Խարբերդով անցնող գերմանացի փոխհյուպատոսի հետ զրույցի ժամանակ ասել էր, որ «հայերը պետք է բնաջնջվեն, նրանք հարստացել են,

---

[729] Bryce J. and Toynbee A., The treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Documents presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute Princeton, New Jersey, 2000, p. 296.
[730] Ակունի, նշվ. աշխ., էջ 155:
[731] Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 151:

շատացել՝ սպառնալիք դառնալով իշխող թուրք ռասայի համար»[732]:

Հայ ազգային գործիչների, մտավորականների, հոգևորականների, զինվորների ոչնչացումից հետո, ինչը ողջ նահանգում իրագործվել է գրեթե միաժամանակ, իշխանությունները կազմակերպում են հայ բնակչության մյուս մասի՝ կանանց, երեխաների, տարեցների բնաջնջումը: Հայտարարվում է բոլոր հայերի տեղահանության մասին, որը Խարբերդի նահանգում, բացառությամբ որոշ բնակավայրերի, իրականացվում է 1915 թ. հունիս-հուլիս ամիսներին: Մինչ այս տեղահանությունն արդեն իսկ սկսել էր մի քանի նահանգներում. մասնավորապես, 1915 թ. մայիսի 18/31-ին ներքին գործերի նախարար Թալեաթը Էրզրումի նահանգապետին հրամայել էր կազմակերպել նահանգի հայ բնակչության տեղահանությունը դեպի Դեր-Զոր: Մայիսի 23 - հունիսի 6 ժամանակահատվածում նման հրամաններ ուղարկվեցին նաև Վանի ու Բիթլիսի նահանգապետերին[733]: Հայոց ցեղասպանության վերապրող, Սեբաստիայի հայության տեղահանության ու կոտորածի վերաբերյալ կարևոր հուշագրության հեղինակ Կ. Գաբիկյանը գրում է, որ 1915թ. հունիսի 22 - հուլիսի 5 ժամանակահատվածում կազմակերպվեց նաև հայերի տեղահանությունը Սեբաստիա քաղաքից[734]:

Տեղահանությունը, որը բնաջնջման պակաս դաժան մեխանիզմ չէր, ինչում խարբերդցիները համոզվել էին, երբ նահանգի տարածքում հայտնվել էին այլ նահանգներից տեղահանված հայերի առաջին խմբերը, ընտրվել էր որպես առավել նպատակահարմար միջոց՝ ոչնչացնելու կանանց, երեխաներին,

---

[732] Parmele R., Pioneer in the Euphrates Valley, Gomidas Institute, Princeton and London, 2002, p. 18.
[733] Тунян В., Младотурки и Армянский вопрос. 1914-1916, Ереван, 2010, стр. 66.
[734] Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 103-104:

կենդանի մնացած սակավաթիվ տղամարդկանց: Եթե որոշ սահմանամերձ նահանգների հայության տեղահանությունը կարելի էր ինչ-որ կերպ պատերազմով պատճառաբանել, ապա Խարբերդի նահանգի դեպքում դա ընդհանրապես անընդունելի է: Թուրքական իշխանությունների բերած պատրվակները, գոնե այս նահանգի վերաբերյալ, անհիմն են: Այս մասին նշել է նաև Յոհաննես Լեփսիուսը. «Խարբերդի վիլայեթը ամբողջովին դուրս կը գտնուի պատերազմի թատրէն, երկրի սրտին վրայ, զօրաւոր և բարձրաբերձ լեռնաշղթաներէ շրջապատուած, որոնք Փոքր Ասիոյ ներքին մասը գրեթէ անանցանելի կը դարձնեն»[735]:

Հունիսի վերջերին իշխանությունները սկսում են նահանգի երկու կենտրոնական քաղաքների հայության տեղահանությունը: Հունիսի 26-ին հայտարարվում է, որ տեղահանությունը պետք է սկսի չորս օրից[736]: Մ. Յակոբսենն իր օրագրում այս օրը գրում է. «Կըսուեր, թէ դէպի Ուրֆայի կողմը պիտի ղրկուէին: Եթէ այս իրական էր, շատ յստակ էր, որ այս մէկնումը հայ ժողովուրդին մաքրագործումը կը նշանակէր»[737]: Հաջորդ օրը միսիոներուհին գրում է, որ ակնառու է, որ անհնար է չորս օրում տեղահանել 60000 մարդու[738]: Թերևս նա նկատի ուներ Խարբերդ, Մեզրե քաղաքների ու շրջակա գյուղերի հայությանը: Ուստի, իշխանությունները, ըստ միսիոներուհու՝ սկսեցին Մեզրեից, ապա տեղահանվեցին Խարբերդի ու շրջակա գյուղերի հայերը:

Հուլիսի 1-ին Մեզրեից տեղահանվում է առաջին խումբը՝ բաղկացած 3000 հոգուց: Այս խմբի տղամարդկանց սպանում

---

[735] Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի. Հայաստանի ջարդերը, թարգմանեց Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, 1919, էջ 74:
[736] Atkinson T., նշվ. աշխ., p. 38.
[737] Ճէյքրպսըն Մ., նշվ. աշխ., էջ 107:
[738] Նույն տեղում, էջ 108:

են Պագր Մադենում: Քարավանիվերջին հանգրվանն էր Դեր-Զորը: Հուլիսի 3-ին Մեզրեից տեղահանվում է մյուս խումբը՝ բաղկացած շուրջ 1000 հոգուց. այս խմբի մեջ էին նահանգի ամենահարուստ մարդկանց, պաշտոնյաների ընտանիքները, այդ թվում՝ Ֆաբրիկատորյանները, Խարբերդյանները, Գազանճյանները, Զարիֆյանները և այլոք[739]: Խմբի տղամարդկանց կոտորում են Մալաթիայի մոտ, կանանց՝ քշում Դեր-Զոր: Խմբից Հալեպ է հասնում 68 հոգի[740], այսինքն՝ տեղահանվածների շուրջ 2.27 %-ը:

Այսուհետ յուրաքանչյուր երեք-չորս օրը մեկ մի նոր խումբ էր տեղահանվում Մեզրեից, Խարբերդից ու շրջակա գյուղերից: Տեղահանությունները նահանգի կենտրոնական բնակավայրերից շարունակվեցին ողջ հուլիս ամսվա ընթացքում: Ըստ ամերիկացի միսիոներուհի Իզաբել Հարլիի՝ Խարբերդից դուրս եկած առաջին խումբը՝ կազմված մի քանի հազար հոգուց, դուրս եկավ հուլիսի 18-ին: Խմբից Հալեպ, ապա անապատներ հասան մի քանի հոգի[741]: Տարագրության 15-րդ օրը այս խմբին է միանում Սեբաստիայից, Ակնից, Թոքաթից եկող մեկ այլ խումբ՝ ձևավորելով 18000-ոց մի մեծ քարավան: 70-րդ օրը, երբ նրանք հասնում են Հալեպ, Խարբերդի 3000 տարագրյալներից կենդանի էին մնացել 35 կին ու երեխա, 18000-ոց քարավանից՝ 150 կին ու երեխա[742]: Փաստորեն՝ Հալեպ էր հասել խարբերդցիների 1.17 %-ը: Խարբերդից մյուս խումբը տեղահանվեց մի քանի օր անց:

---

[739] Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 26: Տես նաև՝ Atkinson T., նշվ. աշխ., էջ 82-83:
[740] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 466:
[741] Turkish Atrocites. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, Compiled by James L. Barton, Gomidas Institute, Ann Arbor, Michigan, 1998, p. 69.
[742] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 295:

1915 թ. հուլիսին սկսվում է Խարբերդ-Մեզրեի շրջանի հայկական գյուղերի բնակիչների տեղահանությունը: Վերջիններիս տանում են դեպի Տիգրանակերտ, ապա՝ Դեր-Զոր: Հուլիսի 1-ից տեղահանվում են Բարջանճի հայերը, որոնց տանում են դեպի Դիարբեքիր ու Մարդին: Հուլիսի 4-ին տեղահանվեցին հուսենիկցիները[743]. նրանց տարան Գեղվանք - Արղանա Մադեն - Դիարբեքիր - Վիրան-Շեհիր - Ռաս ուլ Այն ուղղությամբ: Արղանայում առանձնացնում են տղամարդկանց: Դիարբեքիրում տեղի թուրքերն առևանգում են աղջիկներին ու կանանց[744]: Նույնը կատարվում է նաև Դատեմ, Բազմաշեն, Թլկատին, Հողե և Խարբերդի դաշտի մյուս գյուղերի հայ բնակիչների հետ: Արդյունքում՝ հայաթափվում է ողջ Խարբերդի դաշտը:

Հուլիսին իրականացվում է նաև Խարբերդի գավառի Արաբկիր գավառակի հայության տեղահանությունը: Արաբկիր քաղաքի 2000 տուն հայերի կեսից ավելին 1915 թ. իսլամ են ընդունում և խուսափում տարագրությունից[745] (նման զանգվածային դավանափոխությունը եզակի դեպք էր ողջ նահանգի համար), մյուսները՝ մեծամասամբ կանայք և երեխաներ, տարագրվում են: Սակայն իսլամացումը արաբկիրցիներին զերծ չպահեց տեղահանությունից: Վերապրած Գալուստ Գալուստյանի հուշագրության մեջ նշվում է, որ արաբկիրցիների քարավանը, բաղկացած 10000 հոգուց, որոնց մեջ տղամարդիկ միայն 250 հոգի էին, տեղահանվեց քաղաքից: Նրանք, համաձայն Գալուստյանի, մինչ այդ իսլամացվել էին, որ Ուրֆա գնալու ճանապարհին իբր անվտանգ մնան[746]: Նուբարյան Մատենադարանի Ա. Ան-

---

[743] Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 26: Տե՛ս նաև՝ Atkinson T., նշվ. աշխ., էջ 40:
[744] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 299-304:
[745] Թեոդիկ, Դուգոթա հայ հոգևորականութեան, էջ 233:
[746] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, էջ 313:

տոնյանի ֆոնդում պահվող մի փաստաթղթի համաձայն՝ Արաբկիրից դուրս եկած քարավանը՝ բաղկացած 7000 հոգուց, որից տղամարդ էին միայն 250-ը, տեղահանվել է 1915 թ. հուլիսի 5-ին մոտ 150 չեթենների ու ժանդարմների հսկողությամբ[747]: Ստացվում է, որ արաբկիրցիների մեծամասնությունը, չնայած իսլամացված լինելու հանգամանքին, այնուամենայնիվ, տեղահանվել է և ճանապարհին ենթարկվել նույն ճակատագրին, ինչ մյուս բնակավայրերից տեղահանվածները:

Հուլիսի 5-ին տեղահանվում է Ակնի հայ բնակչությունը. մնում են միայն իսլամ ընդունած հայերը, որոնք կազմում էին հայ բնակչության 5 %-ը[748]:

Հունիսի 15-ից, երբ արդեն կոտորվել էր Չմշկածագի տղամարդկանց հիմնական մասը, սկսվում է գավառակի հայության բռնագաղթը, որն իրականացվում է մի քանի օրվա ընթացքում: Տեղահանված կանանց, երեխաների մի մասը ջրախեղդ է արվում, մյուսներին տանում են Դեր-Զորի ուղղությամբ: Չմշկածագի գավառակի գյուղերի հայությունը տեղահանվում է գրեթե ամբողջությամբ: Հունիսին տեղահանվել ու սպանվել էին նաև Զարսանջակ գավառակի հայերը: 1915 թ. հունիսի վերջին հավաքում են Բերրիի հայության մնացորդներին՝ մոտ 300-350 հոգու, հիմնականում՝ կանայք ու երեխաներ, ու տանում Բերդակ գյուղ, որտեղ մոտ 50 երեխայի վերցրեցին բերդակցի թուրքերը, իսկ 150 երեխայի Բերդակի մոտ նետեցին Արածանի գետը, մնացյալ 60-70 հոգուն առաջնորդեցին Չմշկածագ[749]:

Մի փոքր այլ էր վիճակը Մալաթիայում, որտեղ կառավարիչ Նաբի բեյը 1915 թ. մայիսի սկզբներին պաշտոնանկ էր սրվել՝ հայերի նկատմամբ անհրաժեշտ խստություն չգործադրելու

---

[747] Kévorkian R., The Armenian Genocide, p. 403.
[748] Ակունի Ս., նշվ. աշխ., էջ 175:
[749] Երեւաննան Գ., նշվ. աշխ., էջ 463:

համար, թեև 1915 թ. ապրիլին Մալաթիայում արդեն իսկ ձերբակալվել ու բանտարկվել էին մոտ 80 հայեր, այդ թվում՝ Առաջնորդական փոխանորդ Մուշեղ քահանա Տեր Մուշեղյանը, ազգային ղեկավարներ[750]: Նաբի բեյին հաջորդում է հայերի նկատմամբ անմարդկային հալածանքներ գործադրած Առայի կառավարիչը և, ի վերջո, Ռեշիտ փաշան, որը հունիսի վերջերին Մալաթիա է գալիս Կոստանդնուպոլսից[751]: Մալաթիայից դուրս եկած տարագրյալների առաջին խումբը կազմված էր Ս. Հարություն թաղի բնակիչներից, որոնք 6-7 շաբաթ անց ոլորապտույտ ճանապարհներով հասնում են Սամոսատ, որն իրականում Մալաթիայից գտնվում էր 4 օրվա հեռավորության վրա: Խմբի վերջնական հանգրվանը Դեր- Զորն էր: Երկրորդ խումբը բաղկացած էր Ս. Երրորդություն եկեղեցու թաղի բնակիչներից: Երրորդ խումբը ևս առաջնորդվեց դեպի Դեր-Զոր[752]: Հունիսին տեղահանվել էին նաև Մալաթիայի Մուշովկա և Անսուր գյուղերի բնակիչները: Կ. Գաբիկյանը գրում է, որ Մալաթիայի հայության մեկ չորրորդը՝ հիմնականում հարուստ ընտանիքներ ու կաթոլիկ հայեր, չի տեղահանվել, այլ վերջիններս իրենց հարստությունը տվել են քրդերին ու թուրքերին և ապաստանել վերջինների մոտ[753]:

1915 թ. օգոստոսին Խարբերդի նահանգի հայությունը տեղահանվել ու հիմնականում սպանվել էր: Յուրաքանչյուր բնակավայրից փրկվել էին սակավաթիվ մարդիկ, հիմնականում՝ կանայք ու երեխաներ: Եվ սա այն դեպքում, երբ մինչև տեղահանությունը Խարբերդի նահանգապետը վստահեցնում էր իր հետ

---

750 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 944:
751 Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի, էջ 80- 81:
752 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 953-954:
753 Գաբիկեան Կ., նշվ. աշխ., էջ 257 :

հանդիպման գնացած ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսին ու չորս ամերիկացի միսիոներներին, որ պատասխանատու չի մյուս նահանգներում կատարվածի համար, բայց պատասխանատու է այս նահանգի համար և, որ այս բոլոր մարդկանց անվնաս կտեղափոխեն Ուրֆա[754]:

Տեղահանությունից ու կոտորածներից հետո Խարբերդում հավաքված գաղթականները կրկին աքսորվեցին: Զանգվածային ձերբակալություններ ու տեղահանություն է կազմակերպվում 1915 թ. սեպտեմբերի վերջերին, ապա նաև՝ նոյեմբերին: Ամերիկյան փաստաթղթերում նշվում է, որ 1915 թ. նոյեմբերի 1-ին ևս Խարբերդից ու գյուղերից իրականացվել է տեղահանություն, սակայն մեկ օր անց հրամանը փոխվել էր, և քաղաքից տեղահանվածները վերադարձել էին, բայց գյուղերն ամբողջովին հայաթափվել էին[755]: Նոյեմբերի տեղահանությունը, ինչպես հավաստում է Հենրի Ռիգզը, վերջին պաշտոնական տեղահանությունն էր Խարբերդից, չնայած որ Խարբերդում մնացած սակավաթիվ հայերի մոտ տեղահանության ու կոտորածների վախը միշտ կար[756]: Այս ընթացքում՝ 1915 թ. նոյեմբեր - 1916 թ. հունվար ամիսներին էր, որ կազմակերպվեց Պեհեսնիից ու Ադիամանից տեղահանված 14000 հայերի ջարդը[757]:

Այսպիսով, 1915 թ. ընթացքում ինչպես Խարբերդ քաղաքը, այնպես էլ ողջ նահանգը գրեթե ամբողջությամբ հայաթափվեց:

Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ, տարբեր վկայությունների համաձայն (ընդ որում ինչպես տեղացիների, այնպես էլ

---

[754] Riggs H., նշվ. աշխ., էջ 81:
[755] Turkish Atrocites. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, p. 70.
[756] Riggs H., նշվ. աշխ., էջ 174:
[757] Վարդան Լ., Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի. 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 131:

օտարազգիների) նահանգի հայ բնակչությունը ոչնչացվել է նույն մեխանիզմների կիրառմամբ, ինչպես մյուս նահանգներում: Ավելին, բոլոր գործողությունները, որ իրականացվել են նահանգի տարածքում, լավ համակարգված էին ու ներառում էին Հայոց ցեղասպանությանը բնորոշ բոլոր գծերը: «Տակաւին թուրք մնացած վայրերու մէջ, հայ ազգաբնակչութեան բնաջնջումը աւելի կատարեալ եղած ըլլալ կը թուի, աւելի մեթոտաւոր, քան այն մարզերուն մէջ, որոնք կովկասեան սահմանագլուխին դրացի են, որովհետև այդ վայրերուն մէջ, դահիճները լիապէս ժամանակ ունեցած են գործելու: Խարբերդը այս մասին օրինակ մըն է»[758]: Խարբերդի նահանգի օրինակը ցույց է տալիս, թե որքան անհիմն էր թուրքական իշխանությունների՝ նահանգի հայության տեղահանությունը պատերազմի անհրաժեշտությամբ պատճառաբանելու փաստարկը, այն դեպքում երբ այս նահանգը բավական հեռու էր պատերազմական գործողությունների շրջանից: Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը ռայխսկանցլեր Բեթման ֆոն Հոլվեգին հղած նամակում գրում է, որ այն բանից հետո, երբ Բ. Դուռը որոշեց արտաքսել նաև Տրապիզոնի, Մամուրեթ ուլ Ազիզի ու Սեբաստիայի նահանգների հայությանը, պարզ դարձավ, որ «կառավարությունը իրականում նպատակ է հետապնդում բնաջնջել հայ ցեղին թուրքական կայսրությունում»[759]:

Ինչպես Էրզրումի ու Սեբաստիայի նահանգներում, Խարբերդի նահանգի հայ բնակչության հիմնական մասի տեղահանությունը ևս կազմակերպվել է 1915 թ. հունիս-հուլիս ամիսներին: Նահանգի հայությունը տարագրվել է Դիարբեքիրի, Մալաթիայի, Ուրֆայի ճանապարհներով: Այս մասին է հավաս-

---

[758] Պարպի Հ., Սարսափի երկրին մէջ, Պէյրութ, 1965, էջ 63-64:
[759] Գերմանիան և Հայաստանը, էջ 210-211:

տում նաև 1919 թ. Ստամբուլի Ռազմական արտակարգ ատյանի՝ Մամուրեթ ուլ Ազիզի տեղահանության մեղավորների դատավարության ընթացքում մեղադրյալ հանրակրթական տեսուչ Ֆերիդ բեյը, որն իրեն ուղղված հարցին պատասխանել է, որ իր ունեցած տեղեկություններով հումածայն՝ Խարբերդից «տեղահանվածների մի մասը գնացել է Դիարբեքիրի, իսկ մյուս մասը՝ Մալաթիայի ուղղությամբ»[760]: Մասնավորապես, Մալաթիայով անցան Խարբերդի, մեկ-երկու օր անց՝ Արաբկիրի, Ակնի, Խարբերդի գյուղերի, Բալուի, Երզնկայի, Էրզրումի, Սվազի, Թոքատի, Ամասիայի, Տրապիզոնի տեղահանված հայերը[761]: Ճվենցարացի միսիոներ Յակոբ Կյունցլերը գրում է, որ Խարբերդից ու Էրզրումից տեղահանված առաջին խմբերը, որոնք հասել էին Ուրֆա, հիմնականում կանանցից էին կազմված[762]: Տեղահանվածների վերջնական հանգրվանը հիմնականում Դեր-Զորն էր: Խարբերդի նահանգի հայության հիմնական սպանդարանները դարձան Դեր Բոյնի ձորը, Ծովք լճի շրջակայքը, Թլաբերդը, Գյումուշ Մադենը, Մալաթիայի Իզոլի գյուղի շրջակայքը, Ինտարե լեռան ստորոտը, Արղանա Մադենը, Դիարբեքիրը, Դեր-Զորը, այլ վայրեր:

Հայոց ցեղասպանության տարիներին թուրքական կառավարությունն աննկարագրելի դաժանությամբ վարվեց հայ երեխաների, որբերի հետ, որոնք ենթարկվեցին տեղահանության, կոտորածների, իսլամացման: Ցեղասպանության վերապրածների վկայություններից մեկում նշվում է, որ բռնագաղթի ճանա-

---

[760] Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ Օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 276:
[761] Թաշճեան Մ., նշվ. աշխ., էջ 55:
[762] Kunzler J., In the Land of Blood and Tears. Experiences in Mesopotamia during the World War /1914-1918/, Armenian Cultural Foundation, Arlington, Ma., 2007, p. 14-15.

պարիններին, եթե ժանդարմներից որևէ մեկին ճանաչացնում էր մանկական ճիչը, նա մորից խլում էր լալկանին և երեխայի գլուխը ճամփեզրի քարերին խփելով՝ ջախջախում էր, սպանում[763]: Բացի նման դեպքերը, երեխաներին, առանձնացնելով տեղահանված խմբերից, սպանում էին զանգվածաբար: Զմշկածագից տեղահանված և Հայոց ցեղասպանությունը վերապրած Ավրորա Մարտիկանյանը իր հուշերում գրում է. «Այդ կեսօր զինվորներն այցելեցին գաղթականների բոլոր ճամբարները և հավաքեցին 5 տարեկանից բարձր երեխաներ: Կարծում եմ, երեխաների թիվը հասնում էր 8 կամ 9 հազարի: Նրանք երեխաներին տարան քաղաքից դուրս, որտեղ սպառում էր Արջա Դաղի քրդերի մի ավազակախումբ: Քրդերը երեխաներին ինչպես ոչխարի հոտ, քշեցին դեպի Թոխմա գետ. տղաներին նետեցին գետը, աղջիկներին տարան թուրքական քաղաքներ՝ մեծացնելու որպես մահմեդականներ»[764]: Ա. Մարտիկանյանը վկայում է Արաբկիրի ճանապարհին առանձնացված 8-15 տարեկան երեխաների սպանության մասին. «Ասկյարները երեխաներին կապել էին իրար՝ յուրաքանչյուր խմբի մեջ 10-15 երեխա, ապա՝ թրատել: Սվազից եկող բռնագաղթվածները, որոնք Արաբկիր էին հասել այդ ճանապարհով, ճամփեզրին տեսել էին երեխաների մարմինները»[765]:

Միևնույն ժամանակ արձանագրենք, որ կառավարությունն ընդհանուր տեղահանությունից հետո հայ որբերի համար 2 որբանոց բացեց Մեզրեում[766]: Մի ականատեսի վկայությամբ՝ այս

---

[763] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 462:
[764] The Auction of Souls. The Story of Aurora Mardiganian, the Christian Girl who Survived the Great Massacres, Interpreted by H. L. Gates, London, 1918, p. 66.
[765] The Auction of Souls, էջ 48:
[766] Atkinson T., նշվ. աշխ., էջ 46 :

որբանոցների երեխաները ևս հետագայում սպանվել են[767]: Մասնավորապես, անգլիացի հայասեր լորդ Ջեյմս Բրայսի հրատարակած «Կապույտ գրքի» վկայություններից մեկում նշվում է, որ դանիացի միսիոներուհի Հ. Մարչելը եղել էր կառավարության հիմնած որբանոցում և զարմացել, թե որքան խնամված էին որբանոցի 700 երեխաները: Բայց մի քանի օր անց, երբ նա կրկին այցելել էր որբանոց, տեսել էր, որ 700 որբերից մնացել էին 13-ը, մյուսները անհետացել էին: Միսիոներուհին պարզել էր, որ երեխաներին տարել են 6 ժամ հեռու գտնվող լիճը և խեղդամահ արել: Սպանված որբերի փոխարեն հավաքվել էին ևս 300 որբեր, որոնք, միսիոներուհու դիտարկմամբ, Խարբերդի հայ երեխաների մնացորդներն էին[768]: Հայ երեխաների համար բացված թուրքական որբանոցի սաների սպանության մասին է փաստում նաև Մարիա Յակոբսենը[769]: Նույն ճակատագրին են արժանացել նաև Քերրիում հավաքված հայ որբերը. նրանց նախ կրոնափոխ են արել, տվել այլ անուններ, ապա օրեցօր առանձնացրել 12 տարեկանից բարձր երեխաներին ու սպանել[770]:

Այսպիսով, փաստենք, որ 1915 թ. կազմակերպված տեղահանությունների ու կոտորածների ընթացքում հայ երեխաների զանգվածային սպանությունները, ինչպես նաև երեխաների ու կանանց իսլամացումը Հայոց ցեղասպանությունը բնորոշող երևույթներից էին, որ ցայտուն դրսևորվեցին Խարբերդի նահանգում:

Ինչ վերաբերում է բռնի իսլամացման քաղաքականությանը, ինչը զանգվածաբար իրագործվեց նախ համիդյան կո-

---

[767] Մկրտիչեան Ե., նշվ. աշխ., էջ 41:
[768] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 288:
[769] Ճէյքոպսըն Մ., նշվ. աշխ., էջ 150:
[770] Չիթճեան Հ., Մագի չափ մահին մօտ. եղեռնէն վերապրողի յուշեր, 2004, էջ 94:

տորածների, այնուհետև՝ Հայոց ցեղասպանության տարիներին, ապա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն եղել է ընդհանուր քաղաքականության մաս, ծրագրավորվել, գործողության մեջ է դրվել ու վերահսկվել հենց կենտրոնական իշխանությունների կողմից: «Այն ճնշումը, որ կիրարկուեցաւ քրիստոնեայ ազգաբնակչութեան հանդէպ, զայն մղելու համար, որ իսլամութիւնը ընդունի, բնաւ մահմետական ազգաբնակչութենէն չէր գար, ոչ ալ իսլամ հոգեւորականներէն, այլ միմիայն կառաւարութէնէն»[771],- հաղորդում է Յ. Լեփսիուսը: Շատ դեպքերում կրոնափոխ եղածները ևս տարագրվեցին ու սպանվեցին: Խարբերդում տեղահանությանն այլընտրանք համարվող իսլամացումն առավել տարածված էր հատկապես կանանց մոտ: Ա. Թոյնբիի հավաստմամբ՝ «հայ կնոջ իսլամացումը 1915 թ. ավելի շատ ֆիզիկական, քան կրոնական փոփոխություն էր: Այն կարող էր հաստատվել անհապաղ ամուսնությամբ մուսուլմանի հետ, և եթե կինն արդեն ամուսնացած էր կամ այրի, քանի որ այս ընթացքում միայն որոշ հայ տղամարդիկ էին ողջ մնացել, նա պետք է իր երեխաներին (եթե երեխա ուներ) տեղավորեր «կառավարական որբանոցում»»[772]: Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը նշում է, որ առևանգելով հայ կանանց ու աղջիկներին՝ «մուսուլմանները նախ՝ ազատվում էին ամուսնությունների ժամանակ վճարվող «գլխագնի» ծանր ֆինանսական բեռից և, բացի այդ, համալրում իրենց հարեմները»:[773] Ըստ վերջինիս՝ այրի հայ կանանց մուսուլմանների հետ ամուսնացնելու վերաբերյալ նույնիսկ պաշտոնական հրամաններ են եղել[774]: Մի-

---

[771] Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի, էջ 272:
[772] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 638-639:
[773] Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, հեղ. հրատարակություն, 2010, էջ 40:
[774] Նույն տեղում, էջ 45:

նույն ժամանակ, բազմաթիվ հայ կանայք ու երեխաներ, որոնք առևանգվել էին տեղահանության ճանապարհներին, որպես աշխատուժ օգտագործվում էին իրենց տերերի կողմից: Դանիացի միսիոներուհի Հանսինա Մարչելն այս առթիվ գրում է, որ թուրքական գյուղերում գյուղատնտեսական աշխատանքը հիմնականում ընկած էր հայ կանանց ու երեխաների վրա, որոնք մուսուլման գյուղացիներին տրվել էին իշխանությունների կողմից: Մարչելն ամենուր նրանց մեծ քանակություններ էր տեսնում, որոնք, փաստորեն, ստրուկի կարգավիճակում էին. նրանց երբեք թույլ չէին տալիս հանգստանալ և անընդհատ տեղափոխում էին գյուղից գյուղ[775]:

Մինչ անդրադառնալը կանանց՝ բռնի իսլամացման դեպքերին, նշենք, որ 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին հայ կանայք առավել մեծ անարգանքի ու պղծման ենթարկվեցին: Նման գործելաոճը ընդգծված դրսևորվեց հենց Խարբերդի նահանգում, որտեղ սկսած բարձրաստիճան պաշտոնյայից ու վերջացրած հասարակ գյուղացիով, բոլորն էլ կարող էին ցանկացած հայ կնոջը կամ աղջկան անարգել ու ծաղրել, բռնությամբ կնության առնել ու իսլամացնել: Փաստաթղթերից մեկում նշվում է, որ Խարբերդում «չպղծված չթողեցին նույնիսկ 10, նույնիսկ 8 տարեկան աղջիկներին... Նրանց մեջ կային հոի կանայք...»[776]: Մեկ այլ վկայության մեջ խոսվում է Խարբերդից դուրս եկած և դեպի հարավ շարժվող ավելի քան 1000 կանանցից ու երեխաներից բաղկացած մի խմբի մասին, որին Վիրան - Շեհիրի մոտ, Դիարբեքիրից արևելք, հանդիպում է քրդերի ավազակախումբ: Վերջիններս ընտրում են գեղեցկատես կանանց, աղջիկներին, երեխաներին, մյուսներին մերկացնում են՝

---

[775] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 289:
[776] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 462:

հարկադրելով մերկ շարունակել ճանապարհը[777]: Վերապրող Կ. Ծաղիկյանն իր հուշերում գրում է, որ տեղահանված չմշկածագցիների քարավանները կանգնեցնելով, թուրքերը աղջիկներ ու կանանց էին ընտրում իրենց հարեմների համար: Կայմակամ Ռուշդի բեյի թույլտվությամբ յուրաքանչյուր մուսուլման կարող էր աղջիկ ընտրել[778]: Հետագայում, ըստ Ծաղիկյանի, այս ընտրված 200 աղջիկները սպանվել ու նետվել էին Եփրատ գետը[779]:

Շվեդ միսիոներուհի Ալմա Յոհանսոնը, որը մի քանի տարի աշխատում էր Մուշում և գործակցում գերմանական առաքելության հետ, 1915 թ. օգոստոսին եղավ նաև Խարբերդում: Վերջինս, խոսելով հայերի իսլամացման մասին, նշում է, որ տեղահանության ընթացքում «Խարբերդում գրեթե յուրաքանչյուր թուրք հայ կին էր վերցրել»[780]: Որոշ վկայությունների համաձայն՝ տեղահանությունից հետո Խարբերդում և Մալաթիայում 5000-6000 գեղեցիկ հայ աղջիկներ կային, որոնք թուրք խոջաների և ժանդարմների կանայք էին[781]:

Բռնի իսլամացման բազմաթիվ դեպքերի մասին վկայությունները թույլ են տալիս ենթադրել, որ Խարբերդի նահանգում իսլամացած հայերի թիվը բավական բարձր տոկոս էր կազմում: Դեռ նախ և առաջ վերաբերում էր Ակնին ու Արաբկիրին: Մասնավորապես Ռ. Մելքոնյանի կարծիքով. «Ակն գավառը հատկապես հայտնի է հայկական ծագումով կրոնափոխների առատությամբ»[782]: Վերապրողներից մեկը՝ Ղազար Քյուրքճյա-

---

[777] United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, էջ 587:
[778] Zahigian K., նշվ. աշխ., էջ 18:
[779] Նույն տեղում, էջ 23:
[780] Յոհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, 2008, էջ 53:
[781] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 510:
[782] Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 109:

նը, 1917 թ. նամակներից մեկում գրում է. «Թեղթերէն միայն այսքանը կը կարդամք թէ, Ակն և Արաբկեր թրքացին և այդպէս սոսկ կապրին»[783]: Մեկ այլ նամակում վերապրող Հովհաննես Խանչարլյանը նշում է, որ Մալաթիայում 11000 թրքացած հայեր կան, որոնցից շատերը աղջիկներ են, որոնց ամուսնացրել են թուրքերի հետ: Նամակի հեղինակը մասնավորեցնում է, որ զուտ տեղացի են միայն 2000-ը[784]:

1915 թ. Խարբերդի նահանգում արձանագրված մյուս երևույթն այն էր, որ այստեղ կազմակերպվեց այլ նահանգներից տեղահանված տասնյակ հազարավոր հայերի սպանդը: Այն ժամանակ, երբ Խարբերդ և Մեզրե աղաքների հայության տեղահանությունը նոր էր սկսվել, Խարբերդի նահանգի տարածքում հայտնվեցին այլ նահանգներից տեղահանված հայեր: Հազարավոր հայեր էին գալիս հյուսիսից՝ Էրզրումից, Երզնկայից, Սեբաստիայից, Տրապիզոնից և այլ վայրերից[785]: Խարբերդով անցնող քարավանների համար երկու վայր էր հատկացված՝ մեկը քաղաքի հարավում գտնվող գերեզմանոցն էր, մյուսը՝ Մեզրեից արևմուտք ընկած, Մալաթիա տանող ճանապարհից հարավ ընկած տարածքը[786]: Խարբերդի նահանգն իր դիրքի, տեղանքի շնորհիվ կարծես ընտրվել էր որպես առավել հարմար վայր հայերին ոչնչացնելու համար. չհասնելով անապատներ՝ կարելի էր այստեղ ոչնչացնել առավել շատ մարդկանց: Ականատեսների վկայությամբ՝ «Մամուրեթ-ուլ-Ազիզը դարձել էր բոլոր հայերի գերեզմանոց. տարբեր նահանգներից այստեղ ուղարկված և ճանապարհին չմահացած բոլոր հայերը գալիս

---

[783] Տոնապետեան Պ., նշվ. աշխ., էջ 138:
[784] Նույն տեղում, էջ 152:
[785] Atkinson T., նշվ. աշխ., էջ 85:
[786] Riggs H., նշվ. աշխ., էջ 146:

էին այստեղ՝ մնալու»[787]: Այս առումով առանձնանում էր Ծովք՝ Գյոլջուկ լճի շրջակայքը, որտեղ սպանվեցին տասնյակ հազարավոր՝ հիմնականում Էրզրումից տարագրված հայեր: 1915 թ. հոկտեմբերի վերջին ամերիկացի բժիշկ Ատկինսոնը ճանապարհորդեց Գյոլջուկ լճի ափով: Նա բազմաթիվ դիակներ տեսավ ճանապարհին, հատկապես սարի լանջերին: «Նրա հաշվարկով մոտ 5-10 հազար դիակներ էին ընկած՝ գրեթե բոլորը մերկ կանայք ու երեխաներ և բոլորը խեղված, հուսանք, որ այդ ամենն արել են նրանց մահից հետո: Նրանց տարբեր կերպ էին սպանել, ոմանց գնդակահարել էին, ոմանց՝ գլխատել, մյուսներին սպանել էին դանակներով կամ կացիններով»[788]: Դեպի հյուսիս ընկած երեք քաղաքներից՝ Երզնկայից, Ծապին Գարահիսարից - և Նիկսարից հազարավոր հայեր էին բերվել նաև Ակն[789]: Այս մասին իր հուշերում գրում է Ավրորա Մարտիկանյանը: Կարինից ու Երզնկայից ելող տարագրյալներն անցան նաև Արաբկիրով[790]: Նահանգի տարածքում խոշոր սպանդավայր էր նաև Մալաթիան: Ամերիկացի միսիոներուհի միսս Գրաֆամը, խոսելով 1915 թ. տեղի ունեցածի մասին, Մալաթիան համեմատում է դժոխքի հետ. «երկինքը թռչունների բազմությունից սև էր, բազմաթիվ էին դիակներ ուտող շների խմբերը: Թռչունների ու շների շարժումից կարելի էր ասել, թե որտեղ է կոտորածը տեղի ունեցել[791]: Ընդհանուր առմամբ, Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերի տարածքով 1915 թ. ընթացքում անցան հազարավոր՝ այլ նահանգներից տեղահանված հայեր: Ամերիկացի միսիոներուհի Շարլոտ Վիլլարդի հավաստմամբ, «Խարբերդով

---

[787] United States Official Records on the Armenian Genocide, p. 366.
[788] Atkinson T., նշվ. աշխ., էջ 91:
[789] The Auction of Souls, նշվ. աշխ., էջ 52:
[790] Փոլատեան Ա., Պատմութիւն հայոց Արաբկիրի, էջ 711:
[791] Winter J., նշվ. աշխ., էջ 234:

91000 հոգի է անցել դեպի հարավ, 250000 մարդ էլ պետք է որ Մալաթիայով տարված լիներ հարավ՝ Ուրֆայի ուղղությամբ»[792]:

Հայ բնակչությունը տեղահանության, կոտորածների արդյունքում գրկվեց իր անշարժ ու շարժական գույքից, ունեցվածքից: Շատերը փորձում էին իրենց խնայողություններն ի պահ տալ ամերիկյան հյուպատոսին[793], միսիոներներին, քանի որ, ըստ Հ. Ռիգզի «բանկերին արգելված էր ավանդներ ընդունել, նույնիսկ մեզնից: Նրանք կարող էին միայն փոխանցումներ կատարել... Որոշ հայեր գումարներ փոխանցեցին դեպի այն վայր, որ նրանք ենթադրում էին, որ կհասնեն, սակայն կամ նրանք մահացան ճանապարհին, կամ էլ ուղղվեցին բոլորովին այլ ուղղությամբ, այնպես, որ շատ քչերը երբևէ ստացան իրենց գումարները»[794]: Լ. Դևիսը գրում է, որ պահ եղավ, երբ իր մոտ հավաքվել էր հայերի տված գումարից երկու հարյուր հազար դոլար ոսկով[795]:

Եղան ընտանիքներ, որ փորձում էին իրենց ունեցվածքը վաճառել հարևաններին, սակայն վերջիններս հրաժարվում էին գնել հայերի ունեցվածքը, քանի որ վստահ էին, որ նրանց հեռանալուց հետո այդ ամենին կարող են տիրանալ առանց որևէ վճարի: Յակոբսենը գրում է խարբերդցի մի հարուստ ընտանիքի մասին, որը «300 ոսկի ուզած էր տան կահկարասիներուն եւ գորգերուն համար: Անոր միայն տասը լիրա վճարեցին»[796]: Ըստ Լ. Դևիսի՝ «հիսուն սենթով վաճառվում էին այնպիսի կարի մեքենաներ, որոնք առնվազն քսանհինգ դոլար կարժեին: Թան-

---

[792] Pye E. C. Williard of Merzifon: Her Life and Times, Fleming H. Revell Company, New York, p.156.
[793] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 120:
[794] Riggs H., նշվ. աշխ., էջ 89-90:
[795] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 121:
[796] Ճէյքրպսըն Մ., նշվ. աշխ., էջ 117:

կարժեք գորգերին մեկ դոլարից պակաս էին տալիս»[797]: Մյուս բնակավայրերում նույնիսկ նման գին չէր վճարվի հայերին իրենց ունեցվածքի համար:

Տեղահանությանը զուգահեռ տվյալ բնակավայրերի թուրք ու քուրդ բնակիչները, այլ բնակավայրերից թալանի ենթարկած տարրերը կողոպտեցին հայերի ունեցվածքը. կողոպտվեց ողջ կահկարասին, գորգերը, արժեքավոր իրերն ու նույնիսկ հագուստները: Իր օրագրի հուլիսի 21-ի հատվածում Մ. Յակոբսենը գրում է, որ թուրքերից շատերը «հայերին տունները կը փոխադրուին, որովհետեւ հայերուն տունները իրենց տուներէն աւելի լաւ էին»[798]: Վալին տեղահանություններից հետո անմիջապես տեղափոխվեց քաղաքի ամենամեծ առանձնատուն, որ կառուցել էին հինգ հայ հարուստ եղբայրներ իրենց ընտանիքների համար: Այստեղ վալին ապրում էր ճոխ կյանքով, հյուրեր էր ընդունում, իսկ այդ հարուստ ընտանիքի դստերերից մեկը՝ ցնցոտիներ հագած, մուրալով ապրում էր՝ փորձելով ստանալ գոյատևման համար չնչին կոպեկներ[799]: Այստեղ խոսքը Ֆաբրիկատորյան եղբայրների կառուցած տան մասին է, ընտանիք, որը ոչ միայն կորցրեց ողջ ունեցվածքը, այլ ամբողջ ընտանիքից փրկվեցին մի քանի կանայք ու երեխաներ:

Հայոց ցեղասպանության տարիներին ոչ միայն յուրացվեց հայ բնակչությունից թալանված ողջ ունեցվածքը, այլ նաև՝ ենթեցական գույքը, ավերվեցին հայկական մշակութային հուշարձանները, ոչնչացվեցին դարերի պատմություն ունեցող ձեռագրերը: Հիմնահատակ ավերվեցին նաև կրթական հաս-

---

[797] Դեվիս Է., նշվ. աշխ., էջ 114:
[798] Ճէյքրպսըն Մ., նշվ. աշխ., էջ 118:
[799] Riggs H., նշվ. աշխ., էջ 93:

տատությունների շենքերը, որոնք ևս նահանգի տարածքում քիչ չէին:

1914 թ. դրությամբ Խարբերդի նահանգի տարածքում, համաձայն Բ. Եղիայանի տվյալների, կար 202 եկեղեցի[800]: Նահանգի տարածքում ըստ մեկ այլ ցուցակի, կար 210 եկեղեցի և 18 վանք[801]: Ամերիկյան միսիոներների վկայություններում փաստվում է, որ Խարբերդի եկեղեցիները գավթեցին, գանգերը իջեցվեցին. եկեղեցիներն այդուհետ սկսեցին օգտագործվել տարբեր կերպ՝ որպես հիվանդանոց, պահեստ, ևն[802]: Մասամբ կամ ամբողջովին ավերվեցին հայության կյանքում մեծ կարևորություն ունեցող վանական համալիրները: 943 թ. կառուցված Ղուլեի վանքը, որի վերանորոգության ժամանակ՝ 1839 թ., հայտնաբերվել էր Ս. Ծնորհալու կնիքով գմռված մեռոնի շիշ, Հեթում թագավորի կնիքով մագաղաթ[803], ևս ավերվեց 1915 թ., կանգուն մնաց միայն եկեղեցին, որը վերածվել էր ախոռի[804]: 1915 թ. ամերակույտի էր վերածվել ամբողջ Մալաթիան. քանդվել էին Մայր եկեղեցու խորանները, Ս. Երրորդություն եկեղեցին նախ վերածվեց թուրք գաղթականների բանակատեղիի, ապա՝ բանտի՝ Գաթիլ Տամը անունով: Քանդվել էր Ս. Հարություն եկեղեցին, որի քարերով տներ էին կառուցվել, բողոքականների ժողովարանը վերածվել էր փոքի[805]: Փաստ է, որ նույն քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: Տաճատ ծ. վրդ. Յարտմյանը մեջբերում է Մալաթիայում տեղի ունեցած մի

---

[800] Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 891-893:
[801] Ղազարեան Հ., նշվ. աշխ., էջ 122:
[802] Turkish Atrocities. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, p. 32.
[803] Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, էջ 90-93:
[804] Հայկ վ., նշվ. աշխ., էջ 863:
[805] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 959:

դեպք. «Թուրք գաղթականներ փայտ փնտռելու առիթով կը յայտնաւորեն հայկական մագաղաթեայ ձեռագիրներու թաքստոց մը եւ կը յայտնեն տեղական իշխանութեան: Բայրամի առաջին օրն էր, երբ կալերի մէջ հաւաքուած թուրք ժողովուրդի ներկայութեամբ հանդիսաւոր խարոյկի բոցերի յանձնեցին նաեւ մեր մագաղաթների հաւաքածոն»: 12 տարեկան մի երեխա, երբ փորձում է կրակից ազատել իրենց գրչագիր ավետարանը, վայրենի ամբոխը տղային ավետարանի հետ հանձնում է կրակի բոցերին. սա տեղի է ունենում 1923 թ.[806]:

Ինչպես համիդյան կոտորածների տարիներին, այնպես էլ 1915 թ. ոչնչացվեց հայկական ձեռագրերի մեծ մասը: «Վանքերից հրաշքով այրվելուց փրկված ձեռագրերից առավել բախտավորները, որոնք անշուշտ մասնրանկարներով զարդարված էին ու բովանդակությամբ մեծ մասամբ Ավետարաններ, թուրք և այլազգի սպաներից Եվրոպա և այլուր տարվեցին վաճառելու»[807],- գրում է Ս. Քոլանջյանը:

Վերոնշյալ իրադարձությունների ընթացում Խարբերդի նահանգի հայ բնակչությունը միայն որոշ բնակավայրերում դիմադրության փորձ կազմակերպեց: Նման բնակավայրերից էին Հուսենիկը, Խուլագյուղը, Դատեմը, Ծովքը: Հուսենիկում կազմակերպված դիմադրությանը, որը տևեց երեք օր, մասնակցում էր շուրջ 60 հոգի: Դատեմի, Խուլագյուղի դիմադրողների թիվը 20-30 հոգի էր[808]: Ծովք գյուղից 12 երիտասարդներ,

---

[806] Եւրտրմեան Հ. Տաճատ Ծ. վրդ., Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Վենետիկ, 2001, էջ 92-93:

[807] Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռգրական կորուստները, Էջմիածին, 1965, Ե-Զ-Է, էջ 144:

[808] Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, էջ 256:

փախչելով աքսորից, ապաստանեցին Հազար-Պապա լեռան վրա ու դիմադրություն ցույց տվեցի թուրքերին[809]:

Հայոց ցեղասպանության տարիներին հայերի հետ մեծ կորուստներ ունեցան նաև մյուս քրիստոնյա ժողովուրդները, Խարբերդի նահանգի դեպքում՝ հիմնականում ասորիները, քանի որ նահանգում հույներ գրեթե չկային: Ջոզեֆ Նայեմն իր գրքում մեջբերում է Խարբերդից մի առևտրականի՝ Ջորջիս Տումաս Քեշիշեի հուշերը 1915 թ. դեպքերի վերաբերյալ: Խարբերդում սկսած զանգվածային ձերբակալությունների ժամանակ, ըստ ականատեսի, ասորիների քահանան նույնազգի Էլիա Էֆենդի Տաշոյի ու Բենիկ Զադե Առաքելի հետ հանդիպում են նահանգապետին, խնդրում, որ ապահովվի ասորիների անվտանգությունը: Նահանգապետը խոստանում է այս հարցով դիմել Կ. Պոլիս. մի քանի օր անց կենտրոնական իշխանություններից պատասխան է գալիս, որով ասորիները փրկվում են: Սակայն մի քանի օր անց հայտարարվում է բոլոր քրիստոնյաների տեղահանության մասին, այդ թվում և ասորիների: Այս ընթացքում ասորի առաջնորդները կրկին հանդիպում են նահանգապետին ու նրան տալիս 500 ոսկի արժողությամբ նվեր: Նվերներ արվեցին նաև մյուդիրին՝ խնդրելով ազատել ասորական գյուղերի բնակիչներին տեղահանությունից: Չնայած այս բոլոր քայլերին՝ նահանգապետի բացակայությամբ մի գիշերվա մեջ բոլոր ասորիները կրկին ձերբակալվեցին և ուղարկվեցին Կարմիր պալատ[810]: Այս ամենից հետո, այնուամենայնիվ, ասորիների կոտորածը դադարեցվեց, թեև հայերի հետ կոտորածներին զոհ գնացին նաև բազմաթիվ ասորիներ:

---

[809] Շահեն Ս., նշվ. աշխ., էջ 21:
[810] Naayem Rev. J., նշվ. աշխ., էջ 212-215:

Հայոց ցեղասպանության տարիներին ամերիկյան առաքելությունը ևս կորուստներ ունեցավ, բռնագրավվեցին, ավերվեցին նաև նրանց պատկանող շենքերը: Եփրատ քոլեջի նախագահ Էռնեստ Ռիգգի՝ Հայկական և Սիրիական օգնության Ամերիկյան կոմիտե, Ուիլյամ Պիտտին ուղղված 1915 թ. հուլիսի 19-ի նամակում նշվում է, որ առաքելության մեծ շենքերից 7-ը կառավարության ձեռքում են, միայն մեկն է մնացել իրենց իրավասության տակ[811]: Սա այն դեպքում, երբ հազարավոր որբեր ապաստան էին գտել Եփրատ քոլեջի դեռևս կանգուն շենքերում և այլ ապաստաններում: Միսիոներներից շատերը Խարբերդում գտնվելու ընթացքում հիվանդացան, մահացան համաճարակային հիվանդություններից, շատերն ունեցան հոգեկան ծանր ապրումներ: 1915 թ. մահացավ ամերիկացի բժիշկ Հերբերդ Ատկինսոնը: Վերջինս Լ. Դևիսի հետ եղավ Ծովք (Գյոլջուկ) լճի շրջակայքում, որտեղ 1915 թ. ամռան ընթացում սպանվել էին տասնյակ հազարավոր հայ կանայք ու երեխաներ՝ տեղահանված Էրզրումից, Տրապիզոնից, այլ բնակավայրերից: Բժիշկը վերադարձավ սրտի նոպայով, երկու ամիս անց՝ մահացավ: Թեսի Ատկինսոնը՝ Հ. Ատկինսոնի կինը, ամուսնու մահից հետո գրում է. «Նրանք, ում ձեռքերն ամբողջովին արյունոտ էին, եկան ինձ ցավակցելու և լացելու նրա համար»[812]: 1917 թ. մայիսին ժանտատենդից մահացավ Հենրի Ռիգգի կինը, մեկ այլ ամերիկացի միսիոներ՝ Լեսթեր Ջեյմս Ռայթը, ով 1922 թ. ուղեկցում էր Խարբերդից դուրս եկած որբերի խմբին, վերադարձի ճանապարհին ավազակների զոհ դարձավ, վերջիններս կրակ էին բացել միսիոներների վրա[813]:

---

[811] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 305:
[812] Atkinson T., նշվ. աշխ., էջ 92:
[813] Barton J., Story of Near East Relief /1915-1930/. An interpretation, New York, 1930, p. 337.

Եղած փաստական նյութի հիման վրա նահանգի հայության մարդկային կորուստների մոտավոր հաշվարկման փորձ կատարելով՝ տեսնում ենք, որ տեղահանությունից ու ջարդերից փրկվել է միայն հայության չնչին տոկոսը, իսկ պատերազմի սկզբից զորակոչված, ապա նաև՝ աշխատանքային գումարտակների անվան տակ հավաքագրված տղամարդկանց խմբերը կոտորվել են գրեթե ամբողջությամբ: Լորդ Բրայսի և Առնոլդ Թոյնբիի կազմած փաստաթղթերի ժողովածուում հիշատակվում է Խարբերդից դուրս եկած մի քարավանի մասին, որի 5000 մարդուց Հալեպ են հասել միայն 213-ը՝ 96 % կորստով: Խարբերդ քաղաքին մոտակա մի գյուղի քարավանի 2500 հոգուց Հալեպ հասան 600-ը (24 %) (կորուստը կազմում է 76 %), Խարբերդի մոտակա մեկ ուրիշ գյուղի (Հյուսնի Մանսուր) առաջին քարավանից՝ 60 %-ը (կորուստը կազմում է 40 %), երկրորդ քարավանից՝ 46 %-ը (կորուստը կազմում է 54 %), նույն տարածքի մի գյուղից (Բերրի)՝ 25 %-ը (կորուստը կազմում է 75 %)[814]: Խարբերդի 3000 տարագրյալներից Հալեպ հասան 35 կին ու երեխա[815]. այս դեպքում կորուստը կազմում է՝ 98,8 %: Խարբերդից հուլիսի 10-ին դուրս եկած 2000 հոգուց բաղկացած մեկ ուրիշ քարավանից Ուրֆա հասան միայն 200-ը. մյուսները՝ կամ մահացան ճանապարհին, կամ՝ սպանվեցին ու առևանգվեցին[816]: Այս դեպքում կորուստը կազմում է 90 %: Դատեմի 700 հոգանոց քարավանից փրկվեցին միայն անապատներ հասած 25 կին[817]: Այս քարավանի կորուստը կազմում է 96,5 %:

---

[814] Bryce J. and Toynbee A., նշվ. աշխ., էջ 646-647:
[815] Նշվ. աշխ., էջ 295:
[816] Kunzler J., նշվ. աշխ., էջ 29-31: Տես նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 463:
[817] Մխիթարեան Գ., նշվ. աշխ., էջ 197:

Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռոսլերը օգոստոսի 7-ին զեկուցում է, որ Մամուրեթ ուլ Ազիզի գյուղերից տեղահանված 120 հոգուց բաղկացած խումբը քաղաք հասավ 88 հոգու կորստով՝ 24 տղամարդ և 12 կին սպանվեցին, 29 երիտասարդ կանայք և աղջիկներ, 10 տղաներ առևանգվեցին, 10 հոգի՝ անհետացան և ոչինչ հայտնի չէ նրանց ճակատագրից (նա չի հաշվել 3 հոգու): Ռոսլերը նշում է, որ որոշ խմբեր ավելի ծանր կորուստներ ունեցան[818]: Այս խմբի կորուստը կազմում է մոտ 73.4 %:

Սկնի երկրորդ քարավանից, որ բաղկացած էր 300-ից ավել անձանցից, փրկվեց 13 հոգի[819]. կորուստը կազմում է 95,7 %: Արաբկիրի Աղբն գյուղի 800 հայերից փրկվեց 61-ը[820]. կորուստը կազմում է 92,4 %: Անջրդի գյուղի 500 հոգուցբաղկացած խմբից փրկվեց ընդամենը 18 կին[821]. կորուստը կազմում է 96.4 %:

Զմշկածագից դուրս եկած քարավանում կար 4000 հոգի, քարավանն անցել էր Մալաթիա, Գյոլիք, Դիարբեքիր ճանապարհով և 18 հոգով հասել Ուրֆա[822]: Խմբի կորուստը կազմում է մոտ 99.5 %: Զարսանջակի գավառակի Հոշն գյուղի 219 հոգի հայերից 1915 թ. գոհ գնացին 150-ը.[823]. կորուստը կազմում է՝ 68.5 %: Նույն գավառակի Լուսատառիճ գյուղի 224 հոգուց վերապրեցին 20-ը[824]. կորուստը կազմում է 91 %:

Ադիամանցի Վարդեր Գալանճյանը գրում է, որ Ադիամանը թողել են 2000 հոգով, Ուրֆա հասել են 400-ը, որոնք բոլորը

---

818 Guenter L., The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, Salt Lake City, 2005, p. 172.
819 Քեշիշյան Ա., նշվ. աշխ., էջ 760:
820 Բախատիկեան Ս., նշվ. աշխ., էջ 153:
821 Անջրդի եւ շրջակայ գիւղերու ոճրագործներու արարքները, էջ 15:
822 The Auction of Souls, p. 106.
823 Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 190:
824 Երեւանեան Գ., նշվ. աշխ., էջ 216:

հիվանդ էին ու սովահար: Նրանք 8 ժամվա ճանապարհը անցել էին 10 օրում[825]. խմբի կորուստը կազմում է 80 %:

Բերված մի քանի տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ նահանգի բնակավայրերից տարագրված տարբեր խմբերից ջարդերի ընթացքում սպանվել, հիվանդություններից մահացել, առևանգվել է տեղահանվածների շուրջ 82.7 %-ը: Ավելացնենք, որ թվարկված օրինակներում չենք հաշվառել տղամարդկանցից բաղկացած այն քարավանների մասին վկայությունները, որոնք կոտորվել են գրեթե ամբողջությամբ: Նման օրինակները ևս բազմաթիվ են: Նույն Լեսլի Դևիսը նշում է, որ 1915 թ. նահանգի՝ ջարդից ազատվածների թիվը թեև սպասվածից ավել էր, սակայն չէր անցնում 8000-10000-ից. սա էլ այն դեպքում, «եթե նկատի ունենանք այլ վիլայեթների 1000 կամ 2000 փախստականներին»[826]: Նշենք, որ Դևիսը նահանգի հայ բնակչության թիվը հաշվում էր 150000[827], իսկ դա նշանակում է, որ նրա տվյալների համաձայն փրկվել էր հայերի շուրջ 6 %-ը: Սա, իհարկե, եղած տվյալներից առավել փոքրն է: Ինչպես հավաստում է ամերիկացի միսիոներուհի, դեպքերի ականատես - Իզաբել Հարլին, «կարելի է հաստատ ասել, որ Խարբերդի վիլայեթի ժողովրդի ամենաքիչը 75 %-ը բնաջնջվել է»[828]: Իհարկե, դժվար է պարզել նահանգի հայության զոհերի ճշգրիտ թիվը, առավել ևս, երբ հետագա տարիներին փրկվածների մի մասը կրկին տեղահանվեց, շատերը մահացան հիվանդություններից, սովից:

---

[825] Kunzler J., նշվ. աշխ., էջ 26:
[826] Դևիս Լ., նշվ. աշխ., էջ 201:
[827] Նույն տեղում, էջ 82:
[828] Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, p. 69.

1915 թ. վերջերին քրիստոնյա հայեր ապրում էին Խարբերդի նահանգի հատուկենտ բնակավայրերում՝ հիմնականում՝ Խարբերդ, Մեզրե քաղաքներում, մասնավորապես, 1915 թ. նոյեմբերի դրությամբ, Խարբերդ քաղաքում, ըստ Ճիզմեճյանի, մնացել էր մոտ 200 հայ[829]: Ակնում մնացել էին 150-ի չափ զառամյալ ծերունիներ ու հաշմանդամներ[830], իսկ Մալաթիայում, համաձայն Հայաստանում Ամերիկյան ռազմական առաքելության ստացած տեղեկությունների, տեղահանություններից հետո մնացել էին 1000 հոգուց քիչ թվով մարդիկ[831]: 1915 թ. սեպտեմբերի 18-ին ներքին գործերի նախարար Թալեաթին ուղղված հեռագրում Սաբիթ բեյը, ներկայացնելով իր տարածքում իրականացված գործողությունների առաջին հանրագումարը, տեղահանված հայերի թիվը հաշվում էր 51000: Ըստ նահանգապետի՝ 4000 հոգի դեռևս թաքնվում էին գյուղերում[832]:

Այսպիսով, ուսումնասիրությունը և մասնավորապես, վերոնշյալ օրինակները կարող են թույլ տալ ենթադրելու, որ 1915 թ. երիտթուրքական կառավարության՝ ողջ Օսմանյան կայսրության տարածքում կազմակերպած տեղահանությունների, կոտորածների, բռնի իսլամացման քաղաքականության զոհ դարձավ Խարբերդի նահանգի հայ բնակչության շուրջ 80 %-ը: Կողոպտվեց կամ ոչնչացվեց հայերի ողջ ունեցվածքը, եկեղեցական գույքը, մշակութային հուշարձանները: Յավոք, այս քաղաքականությունը չավարտվեց 1915 թ., այլ շարունակվեց իրագործվել նաև հետագա տարիներին՝ Խարբերդի նահանգի և կայսրու-

---

829 Ճիզմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 484:
830 Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 736:
831 Winter J. America and the Armenian Genocide of 1915, Canbridge, 2003, p. 268.
832 Kévorkian R. The Armenian Genocide, p. 400.

թյան մյուս նահանգների տարածքներում կենդանի մնացած հայերի նկատմամբ:

բ) Խարբերդի նահանգի վերջնական հայաթափումը 1916-1923 թթ.

Թուրքական իշխանությունների նպատակը՝ հայաթափել Արևմտյան Հայաստանն ու Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերը, չավարտվեց 1915 թ. կազմակերպված զանգվածային տեղահանությամբ, կոտորածներով, այլ շարունակվեց հետագա տարիներին ևս: 1916-1923 թթ. ընթացքում Խարբերդի նահանգը ևս զերծ չմնաց նման քաղաքականության շարունակությունը կազմող գործողություններից: Սրա պատճառն այն էր, որ 1915 թ. հետո ինչպես մյուս նահանգներում, այնպես էլ Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերում դեռևս որոշակի թվով հայեր էին ապրում: Վերջիններս ոչ միայն տեղաբնիկներ էին, այլ նաև այլ նահանգներից փրկված ու Խարբերդի նահանգի տարածք հասած հայեր: Այս շրջանի դեպքերի արձանագրման առումով հատկապես կարևորվում են ամերիկացի երկու միսիոներուհիների՝ Մ. Յակոբսենի ու Թ. Ատկինսոնի օրագրերը, որոնցից վերջինը Խարբերդից հեռացավ 1917 թ., իսկ Մ. Յակոբսենը՝ 1919 թ.:

Փաստենք, որ 1916 թ. սկզբներին դեռևս շարունակվում էր 1915 թ. վերջին տեղահանված հայերի կոտորածը: Մասնավորապես Լ. Վարդանն իր կազմած ժամանակագրության մեջ մեջբերում է կատարում Այնթափի կառավարիչ Ահմեդի՝ Հալեպի կուսակալ Մուսթաֆա Աբդուլհալիքին ուղղված 1916 թ. հունվարի 11-ի հեռագրի պատասխանից, որտեղ Այնթափի կառավարիչը գրում է, որ իր շրջանում կա Մեբաստիայի ու Խարբերդի գավառներից տեղահանված 500 հայ՝ մեծամասամբ

կին ու երեխա, որոնք նաև պետք է սպանվեն[833]: 1916 թ. կոտորածներ տեղի ունեցան նաև Դեր Զորում ու Ռաս ալ Այնում: Բացի այդ, 1916 թ. սկզբներից կոտորածների վտանգը զգացվում էր նաև Խարբերդի նահանգի բնակավայրերում: Մեզրեի գերմանական որբանոցի դանիացի տնօրեն Զենի Զենսոնի հավաստմամբ՝ 1916 թ. հունվարին իշխանությունները պաշտոնապես պահանջել են պատվելի Էմանից իրենց տալ որբանոցի երեխաներին, որպեսզի իրենք կարողանան վերջիններիս «ուղարկել այն վայրեր, որտեղ նրանց ծնողներն են»[834]: 1916 թ. ապրիլին Մ. Յակոբսենը գրում է, որ իրենց մոտ (խոսքը Խարբերդ ու Մեզրե քաղաքների մասին է) ապաստանած հայերը կրկին վախ են ապրում, քանի որ կրկին խոսվում է աքսորի մասին[835]: Սա պատահական չէր, քանի որ, ըստ Յակոբսենի, լուրեր էին պտտվում, որ քրդերը սկսել են կրկին կողոպտել ու հրդեհել Ակնը, Արաբկիրն ու Աղբնը[836]: Նույնը, թերևս, տեղի էր ունենում նաև Չարսանջակում, թեև այստեղ հավաքված հայերը մեծ թիվ չէին կազմում: 1916 թ. ապրիլի 4-ին, ինչպես արձանագրում է Թ. Ատկինսոնը, հրդեհվել էր Բերդակը[837]: Շատ չէր անցել, երբ սկսեց բազմաթիվ գաղթականների հոսքը Խարբերդ ու Մեզրե, որտեղ գործում էին ամերիկացի, գերմանացի միսիոներներ, ամերիկյան հյուպատոսը: 1916 թ. օգոստոսին Արաբկիրում հավաքվում են 4 տարեկանից բարձր բոլոր տղաներն ու բանտարկվում, այդ թվում և թուրքերի մոտ աշխատողները[838]: Ըստ Թ. Ատկինսոնի՝ 1916 թ. հոկտեմբերի 28-ին շուկայում կախաղան

---

833 Լեոն Վ., Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի. 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 116:
834 Kévorkian R. The Armenian Genocide, p. 402.
835 Ճէյբըպսըն Մ., նշվ. աշխ., էջ 207:
836 Նույն տեղում:
837 Atkinson T., նշվ. աշխ., էջ 68:
838 Ճէյբըպսըն Մ., նշվ. աշխ., էջ 246-247:

բարձրացվեցին 13 հայ բանտարկյալներ[839], ինչի նպատակը մյուսներին ահ ու սարսափի մատնելն էր:

Այս ժամանակաշրջանի մեկ այլ ականատես՝ ամերիկացի միսիոներ Հ. Ռիգզը, գրում է, որ մի իշխանավորից իմացել է, որ 1917 թ. աշնանը նա հրաման է եկել Խարբերդի նահանգապետին՝ տեղահանելու այստեղ եղած հայերին: Ըստ Ռիգզի՝ Կոստանդնուպոլիս ուղղված պատասխանը տիպիկ թուրքական էր. «Խարբերդում այլևս հայ չկա, բացի մի քանի այրիներից ու որբերից, իսկ նրանց տեղահանելու հարկ չկա»[840]: Անկասկած, տվյալ պաշտոնյան ստույգ իմացել է, թե քանի հայ կա Խարբերդում, սակայն, ըստ միսիոնների, այդ հայերին վտանգ չէր սպառնում այնքան ժամանակ, որքան Իզզեթ փաշան, որից վախենում էին իշխանությունները, ապրում էր Խարբերդում: Ահմեդ Իզզեթ փաշան Կովկասի թուրքական բանակի գլխավոր զորահրամանատարն էր և նախկին ռազմական նախարարը, որը 1917 թ. փետրվարից իր ռազմակայանը հաստատել էր Խարբերդում[841]: Տվյալ պաշտոնյայի՝ հայերի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ 1917-1918 թթ. ընթացքում հայերի թվաքանակը տվյալ բնակավայրերում աճեց: Ավելին, Լ. Դևիսին ևս Իզզեթ փաշան վստահեցրել էր, որ քանի դեռ Խարբերդում է, հայերն անվտանգ կապրեն[842]: Չնայած նշված հանգամանքին՝ հայերի վիճակը շատ անմխիթար էր: 1917 թ. հունվարին Մ. Յակոբսենը գրում է. «Երկիրը ամբողջովին, այս վերջին երկու տարիներու ընթացքին, փոխուեցաւ: Հիմա միայն աղքատութիւնն ու թշուառութիւնն կը տիրեն: Եւ ամենէն ահռելին, տգիտութիւնն ու

---

[839] Atkinson T., նշվ. աշխ., էջ 74:
[840] Riggs H., նշվ. աշխ., էջ 175:
[841] Դեվիս Լ., նշվ. աշխ., էջ 242:
[842] Նույն տեղում, էջ 243:

աղտոտութիւնն անսահման են»[843]: Ականատեսները վկայում են, որ ամենուր սով էր տիրում, ինչին նպաստել էր այն հանգամանքը, որ հայերի տեղահանությունից ու կոտորածներից հետո հացահատիկ չէր մշակվել, քանի որ հացահատիկի մշակությամբ հիմնականում հայերն էին զբաղվում, քաղաքներում այլևս չկային հայ արհեստավորներն ու ձեռներեց հայ առևտրականները: Հայերի զանգվածային սպանության մյուս դեպքը արձանագրվել է արդեն 1918 թ., երբ Մեզրե-Խարբերդ քաղաքների շրջակա տարածքներից նրանք, ովքեր վերապրել էին ու վերադարձել տուն, ձերբակալվեցին որպես զինվորական փախստականներ և հրացանազարկ արվեցին Արածանիի ափին[844]:

Տեղահանությանն ու կոտորածներին զուգահեռ թուրքական իշխանությունները խրախուսում էին տարբեր վայրերից մուսուլման տարրի մուտքն ու հաստատվելը Արևմտյան Հայաստանի մինչ այդ հայաբնակ բնակավայրեր: Խարբերդի վերաբերյալ Լ. Դևիսը գրում է. «Մեր տարածաշրջանի ներկա իրավիճակի ամենացայտուն առանձնահատկություններից մեկն էլ Վանի, Մուշի, Բիթլիսի գավառներից հասնող մահմեդական գաղթականների ահռելի թվաքանակն է: Այն բազմաթիվ հայկական գյուղերում, որոնք ամառվա ընթացքում ամբողջովին դատարկվել են, այժմ փախստական մահմեդականներ են վերաբնակվում: Շատերը կարծում են, որ հայերին բնաջնջելու շարժառիթներից մեկն էլ մահմեդականների համար ապրելու տեղ ստեղծելն է»[845]: Կարծում ենք, այս որակման մեջ իսկ կարելի է տեսնել իշխանությունների իրական նպատակը, ինչն արձանագրում է ամերիկացի հյուպատոսը:

---

[843] Ճէյքբպսըն Մ., նշվ. աշխ., էջ 260:
[844] Լեոն Վ., նշվ. աշխ., էջ 152-153:
[845] Դեվիս Լ., նշվ. աշխ., էջ 328:

Այսպիսով, նահանգի տարածքում ապաստանած հայերի կյանքը խաղաղ համարել չէր կարելի, նրանք ապրում էին սպանվելու կամ տեղահանվելու վախի մթնոլորտում: Բացառություն չէին նաև իսլամացած հայերը, որոնք գտնվում էին իշխանությունների ուշադրության կենտրոնում: Ինչպես Ռ. Մելքոնյանն է նշում, 1916 թ. օգոստոսի 24-ին ամբողջ արևելյան շրջաններում նույնիսկ մարդահամար է անցկացվել, որը նպատակ է ունեցել հստակեցնել իսլամացված հայերի թվային պատկերը[846]: Հայերի կրոնափոխման քաղաքականությանը, որն առավել խստորեն դրսևորվեց 1915 թ. ընթացքում, հետագա տարիներին ևս նահանգի տարածքում ապրող հայերի համար այլընտրանք էր տեղահանությանն ու սպանություններին: Ուսումնասիրող Կ. Խանլարյանը մեջբերում է "The Minneapolis Morning Tribute" թերթի 1920 թ. հունվարի 4-ի համարում բերված Թուրքիայի ներքին գործերի նախարարության մի շրջաբերական, որը, թերևս, 1919 թ. նոյեմբերի 28-ի թվակիր գաղտնի հրամանն էր, որում կարգադրվում էր իսլամացնել անխտիր բոլոր հայերին, ովքեր չէին տեղահանվել կամ մերադարձել էին իրենց բնակավայրերը[847]: Ցավոք, չենք կարող բերել որոշակի թվական տվյալներ, որ կարտացոլեր հենց 1916-1923 թթ. ընթացքում կրոնափոխ արված հայերի թվաքանակը, սակայն կարող ենք նշել, որ նրանց թիվը մեծ չէր, քանի որ այս ընթացքում արդեն կոտորածներն այն ծավալները չունեին, ինչ 1915 թ.: Բացի այդ, - տեղահանությունն այժմ փրկվելու իրական երաշխիք կարող էր - տալ:

1916-1923 թթ. ընթացքում բազմաթիվ հայեր հավաքվեցին Խարբերդի գավառակի բնակավայրերում: Մասնավորապես,

---

[846] Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 15:

[847] Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009, էջ 39-40:

տեղահանությունից հետո Ուրֆայի, Բաղդադի կողմերից, նաև շրջակա թուրքական գյուղերից Բազմաշեն էին վերադարձել 140 հոգի[848]: 50 հոգի վերադարձել էին Ծովք գյուղ: Զինադադարից հետո վերջիններս գաղթեցին Սիրիա[849]: 1918 թ. դրությամբ Բարջանճի հայությունից կենդանի էին 269 հոգի, որոնցից 50-60-ը թրքացել էին: 1920-1921 թթ. գյուղում մնացել էին 15 հայեր՝ այն էլ թուրքերի մոտ, մյուսները գաղթել էին Հալեպ, Քեյրութ, ապա՝ Լիոն, Վալանս[850]: 1918 թ. Քեորքեի հայ բնակչությունից ողջ էր 63 հոգի[851]: 1918-1920 թթ. Թլկատինում ապրում էին տարբեր տեղերից այստեղ եկած մի քանի հայկական ընտանիքներ, որոնք գյուղը թողեցին 1922 թ.[852]: Հայեր ապրում էին նաև Խարբերդի գավառակի մի քանի այլ բնակավայրերում: Նրանց թիվը կազմում էր մի քանի հարյուր մարդ: Հայերի հիմնական մասն այս ժամանակաշրջանում կենտրոնացած էր Խարբերդ ու Մեզրե քաղաքներում: Սա կապված էր այն փաստի հետ, որ այստեղ դեռևս մարդասիրական գործունեություն էին իրականացնում մի քանի օտարերկրացիներ: Ինչպես ԱՄՆ հյուպատոս Լեսլի Դևիսը, այնպես էլ միսիոներներ Մարիա Յակոբսենը, Թեսի Ատկինսոնը և ուրիշներ, պատերազմի սկզբից իրենց հնարավորության սահմաններում աջակցում էին խարբերդցիներին և այստեղ հայտնված բազմաթիվ գաղթականների: Ավելին, նրանք իրենց մոտ ապաստան էին տալիս հարյուրավոր հայերի, խնամում, մահից փրկում բազմաթիվ որբերի: 1917 թ.

---

[848] Պողոսեան Ա., Բազմաշէնի ընդարձակ պատմութիւնը իր հիմնարկութենէն մինչեւ վերջին օրերը, Պոստոն, 1930, էջ 212:
[849] Սեդրակ Ծ., Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին. Խարբերդ, Արաբկիր, Մալաթիա, Քիւրտիստան, Տիգրանակերտ, Տարոն, Սասուն, Բալու եւ Քղի, Ա հատոր, Լոս Անճէլըս, Քալիֆորնիա, 1975, էջ 22:
[850] Dzeron M., Village of Parchanj: General history /1600-1937/, Fresno, 2002, p. 219.
[851] Շապուհեան Յ., նշվ. աշխ., էջ 83:
[852] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 829-830:

փետրվարին Յակոբսենը գրում է, որ Խարբերդում ու Մեզրեում գործում էին միայն 6 միսիոներներ, որոնց հոգածության տակ էր ավելի քան 5000 հայ[853]: Սա վերաբերում է ամերիկյան մարդասիրական առաքելության հովանու տակ գտնվող հայերին, որոնցից բացի երկու քաղաքներում կային այլ հայեր ևս: 1917 թ. մայիսի 16-ին Խարբերդում ԱՄՆ վերջին հյուպատոսը՝ Դևիսը, - այստեղ մնացած միսիոներների հետ թողեց Խարբերդը և մեկնեց ԱՄՆ: Հյուպատոսի հետ Խարբերդից հեռացան նաև Թենի Ատկինսոնը, Հենրի Ռիզզը, Ռութ Փարմելին[854]: 1919 թ. Հ. Ռիզզն ու Ռ. Փարմելին վերադարձան Խարբերդ՝ շարունակելու իրենց - մարդասիրական գործունեությունը: Մասնավորապես Հ. Ռիզզը, որը 1919 թ. Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի Խարբերդի մասնաճյուղի տնօրենն էր, իր խնամակալության տակ ուներ 4000 որբերի ու 1000 գաղթականների[855]:

Խարբերդի գերմանական առաքելությունը, որ ղեկավարում էր Էմանը, խնամում էր շուրջ 700 որբերի[856], որոնց թիվը 1918 թ. հետո հասավ 1350-ի[857]: Գերմանական միսիոներական ամսագրում հրատարակված 1917 թ. հունիսի 21-ով թվագրված մի նամակում գերմանացի միսիոներ Էմանը Խարբերդ-Մեզրե քաղաքների հայության ընդհանուր թվաքանակը հաշվում է 7000[858]: 1917 թ. «Արձագանգ Փարիզէն» ամսագրի լուրերի մեջ

---

[853] Ճէյքըպսըն Մ., նշվ. աշխ., էջ 267:

[854] Atkinson T. The German, the turk and the Devil made a triple Alliance, Harpoot diaries, 1908-1917, with a foreword by J.Michel Hagopian, Princeton, New Jersey, 2000, p. XI.

[855] Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., составитель сборника и перевод Гаянэ Махмурян, Ереван, 2011, стр. 481.

[856] Guenter L., The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, Salt Lake City, 2005, p.177.

[857] Ժամկոչեան Բ., Պատմութիւն Մամուրէթ իւլ Ազիզի գերման որբանոցներու, Պէյրութ, 1973, էջ 229:

[858] Guenter L., նշվ. աշխ., էջ 177:

նշվում է, որ Խարբերդում տակավին 7-10000 հայ կա[859]: Ամերիկյան հյուպատոսարանի փակումից և 1917 թ. մայիսին հյուպատոսի ու միսիոներների Խարբերդից հեռանալուց հետո, այլևս Խարբերդի հայերը մնացին բացարձակ անպաշտպան: Միակ միսիոներուհին, որը չհեռացավ Խարբերդից, դա Մ. Յակոբսենն էր: Վերջինս ինքն է 1918 թ. գրում, որ այստեղ իրենից բացի միսիոներ այլևս չկա[860]: Պարզ էր, որ միսիոներների հովանու տակ ապրող հայերը նրանց հեռանալուց հետո հայտնվեցին անպաշտպան վիճակում, և նրանց մի մասը սկսեց լքել նահանգի տարածքն ու գաղթել ավելի ապահով տարածքներ: Սակայն 1918 թ. ամերիկացիները վերադարձան Խարբերդ ու վերսկսեցին որբահավաք գործը: Բացի Խարբերդը, որբանոցներ բացվեցին Հուսեյնիկում, Սերայում, Քեսրիկում, Մորենիկում, Սուրսուրիում, Հողեում, Խուլավանքում, Վերին Մեզրեում[861]: Արդեն զինադադարից հետո Խարբերդում (հավանաբար ի նկատի ունեն քաղաքը), համաձայն վերապրողների վկայությունների, կար 9000 հայ, որից 700-ը թուրքական որբանոցում ապաստանած որբեր էին, կային ևս 1300 որբեր, 5000-ը արհեստավորներ էին, 2000-ը՝ այլ վայրերից Խարբերդ եկածներ[862]: Ըստ Բ. Եղիայանի, որը տվյալները կազմել է Կիլիկիայի կաթողիկոսարանի դիվանում պահվող փաստաթղթերի հիման վրա, 1919-1921 թթ. Խարբերդի գավառակում ապրում էին 7800 հայեր, նաև՝ 5000 որբեր[863], ընդհանուր առմամբ՝ շուրջ 13800 հայ: Խնդիրը այն է, թե ներկայացված նախորդ տվյալներում ներառված է որբերի թիվը, թե ոչ, քանի որ գրեթե բոլոր

---

[859] «Արձագանգ Փարիզի», Բ տարի, Թիւ 12, 25 սեպտեմբեր 1917, էջ 2:
[860] Ճէյբրպսըն Մ., նշվ. աշխ., էջ 311:
[861] Ճիզմէճեան Մ., նշվ. աշխ., էջ 486-487: Տե՛ս նաև՝ Չիթճեան Հ., նշվ. աշխ., էջ 161:
[862] Ակունի, նշվ. աշխ., էջ 157:
[863] Եղիայան Բ., նշվ. աշխ., էջ 891:

տվյալներում Խարբերդի ու Մեզրեի հայության համար նշվում է 7000-10000 թվաքանակը: Կարծում ենք, որ ամերիկացիների որբահավաք աշխատանքների արդյունքում գավառակի բնակավայրերում որբերի թիվը կարող էր հասնել 5000-ի: 1919-1921 թթ. դրությամբ գավառակի հայության համար ընդունենք Եղիայանի տվյալը՝ 13800:

1918-1922 թթ. ընթացքում որոշակի թվով հայ բնակչություն էր հավաքվել նաև Արաբկիրում և շրջակա մի քանի բնակավայրերում: Արաբկիրում էին հաստատվել նաև բազմաթիվ հայ գաղթականներ այլ բնակավայրերից՝ մասնավորապես՝ Կարինից, Տրապիզոնից, Ծապին Գարահիսարից, ևն[864]: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր վիճակագրություն էր անցկացրել Արաբկիրի Վերաշինաց միությունը, որի կողմից 1919 թ. հուլիսի 21-ին կազմված և 1920 թ. հրատարակված «Արաբկիրցի վերապրողներու ցանկը» գրքույկում արաբկիրցի վերապրողները հաշվվում են 2279 հոգի, այդ թվում՝ 1896 հոգի՝ քաղաքում, 306 հոգի գյուղերում, 77 արաբկիրցի էլ՝ Հալեպում: Այս թվի մեջ չենք ներառել 1919 թ. դրությամբ Արաբկիրում գտնվող այլ բնակավայրերից այստեղ ապաստանած 126 հոգու[865]: Արաբկիրցի վերապրողների գրեթե նույն տվյալը՝ շուրջ 2000 հոգի, տրված է նաև ուսումնասիրող Ա. Փոլատյանի կազմած հուշամատյանում[866]: Սա, իհարկե, վերապրող արաբկիրցիների ամբողջական քանակը չի արտացոլում, քանի որ վիճակագրության անցկացումից հետո էլ Արաբկիր այլ վերադարձողներ են եղել[867]: Վաղշենցի Ծերուն Թյութելյանի հուշերի համաձայն՝ Վաղշենից փրկվել էր

---

[864] Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 34:
[865] Արաբկիրցի վերապրողներու ցանկը, Պոսթոն, 1920, էջ 9:
[866] Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 738: Տես նաև՝ Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ110:
[867] Արաբկիրցի վերապրողներու ցանկը, էջ 8:

60 հոգի, որից 28-ը մնկնել էին Կ. Պոլիս, 8 աղջիկ բռնությամբ ամուսնացվել էին թուրքերի հետ, 24 հոգի հայտնաբերվել էին տարբեր տեղերից[868]: Արաբկիրի մեկ այլ գյուղից՝ Քուշնայից, վերապրել էր 11 հոգի[869]: Շեփիկցի Ս. Պաղտասարյանի հուշերի համաձայն ջարդերից փրկվել ու պատերազմից հետո Շեփիկ գյուղում էին 65-70 անձ[870]: Համաձայն Կիլիկիայի կաթողիկոսարանի արխիվներում պահվող նյութերի, Արաբկիրում 1919-1921 թթ. հաշվվում էր 2700 հայ[871]: 1922 թ. Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթը «հայերի վիճակը Անատոլու մէջ» վերտառությամբ գրում է, որ Արաբկիրում շուրջ 3000 հայեր են վերադարձել իրենց տները, նրանք գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում՝ թուրքերի հսկողության տակ[872]: Եթե հաշվի առնենք, որ Արաբկիրում էին ապաստանել այլ բնակավայրերից փրկված հայեր, այդ թվում՝ Չմշկածագցի վերապրողներ[873], Բ. Եղիայանի բերած տվյալը գրեթե համընկնում է Արաբկիրի Վերաշինաց միության տվյալի հետ, ուստի ընդունենք, որ մինչև 1922 թ. Արաբկիրի գավառակում ապրում էր շուրջ 3000 հայ:

Բ. Եղիայանի կազմած վիճակագրության համաձայն՝ 1919-1921 թթ. Ակնում ապրում էր 3300 հայ[874]: Ակունու տվյալներով, զինադադարից հետո կենդանի էր մնացել բնիկ ակնցի ընդամենը 900 հոգի, որից 453-ը Աղնից ու Անջրդիից էին, մյուսները՝ Ակն քաղաքից ու հարակից գյուղերից[875]: Հավանաբար, նախորդ

---

868 ՀԱԱ, ֆ. 447, ց. 1, գ. 27, թ.1-16:
869 Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, էջ 149:
870 ՀԱԱ, ֆ. 447, ց. 1, գ. 21, թ. 19-22:
871 Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:
872 Ատոյան Ա., Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, 2013, էջ 118:
873 Խորեն քհնյ. Աճէմեան, Չմշկածագի տեղահանութիւնը եւ ջարդը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիւ 5, 1966 թ. մայիս, էջ 52:
874 Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:
875 Ակունի, նշվ. աշխ., էջ 176:

աղբյուրում նշված Ակնում ապրող հայերի թիվը՝ 3300, իր մեջ ներառում էր նաև այլ բնակավայրերից այստեղ հաստատված հայերին, թեև մյուս կողմից կարելի է ենթադրել, որ միգուցե որոշ հայեր, ովքեր 1915 թ. կրոնափոխ էին եղել, հետագայում կարողացել էին վերադառնալ իրենց ինքնությանը, քանի որ գիտենք, որ Ակնում կրոնափոխության դեպքերը եզակի չէին: Ակնի հայության թվաքանակը 1919-1921 թթ. դրությամբ ընդունենք շուրջ 3000:

Բ. Եղիայանի կազմած վիճակագրության համաձայն՝ Զմշկածագում հաշվվում էր 1000, Զարսանջակ - Դերսիմում՝ 7200 հայ բնակիչ[876]: Հավանաբար վերջին տվյալի մեջ են ներառված նաև Դերսիմում ապաստան գտած այն հայերը, որոնք դեռևս Էրզրում չէին անցել: Ծատ խարբերդցիների համար, իրոք, փրկության իրական ուղի էր Դերսիմը: Դերսիմի քրդերի օգնությամբ 10-15000 հայեր փրկվել են ջարդերից: Նրանց մի մասն անցել էր Կովկաս, մյուս մասն էլ մինչև զինադադար մնացել էր քրդերի մոտ, հետո՝ վերադարձել Խարբերդ:

1918-1922 թթ. Խարբերդի նահանգի հայության մյուս կարևոր կենտրոնը Մալաթիան էր, որը 1915 թ. վերածվել էր ավերակի. քանդվել էին Մայր եկեղեցու խորանները, Ս. Երրորդություն եկեղեցին նախ վերածվել էր թուրք գաղթականների բանակատեղիի, ապա՝ բանտի: Քանդվել էր Ս. Հարություն եկեղեցին, որի քարերով տներ էին կառուցվել, բողոքականների ժողովարանը վերածվել էր փոքի[877]: Մալաթիայում հայերի կյանքն աշխուժացավ, երբ այստեղ հաստատվեց Կարինի հայ կաթոլիկների առաջնորդ Հովսեփ եպիսկոպոս Մելիքսեդեկյանը: 1917 թ. Երզնկա հասած հայերի տված տեղեկությունների համաձայն,

---

[876] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 891:
[877] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ959:

հաղորդվում էր, որ Մալաթիայում կա 5000 հայ[878]: Վերանորոգվեցին Մայր եկեղեցին, Ս. Երրորդություն եկեղեցին, վերաշինվեց Ս. Փրկիչ վանքը, վերաբացվեց կաթոլիկների եկեղեցին, սակայն Ս. Հարություն եկեղեցին մնաց քանդված, բողոքականների ժողովարանը շարունակեց գործել որպես փուռ: 1919 թ. հուլիսի 26-ից Մալաթիան հանձնվեց Խարբերդի առաջնորդ Գյուտ եպիսկոպոսի առաջնորդությանը: 1920-1922 թթ. այստեղ գործում էր նաև Ազգային վարժարանը: Բ. Եղիայանի կազմած վիճակագրության համաձայն 1919-1921 թթ. Մալաթիայում հաշվվում էր 11500 հայ[879]: Այլ վկայություններ հավաստում են, որ 1918 թ. դրությամբ Մալաթիայում եղել է 2000 հայ[880]: Մալաթիայի գավառի մյուս բնակավայրերում ևս չէր կարող մեծ թվով հայ լինել, ուստի ենթադրենք, որ հետպատերազմյան ամենաաշխույժ շրջանում Մալաթիայում կար շուրջ 5000 հայ բնակիչ:

1919 թ. սեպտեմբերին, երբ Խարբերդ է գալիս գեներալ Զ. Հարբորդի առաքելությունը, նրան տեղեկություններ են տրամադրվում այս նահանգի վերաբերյալ, որոնց համաձայն նահանգում մնացել էր 25000 հայ քրիստոնյա, և մոտավորապես նույնքան էլ՝ բռնի մահմեդականացված հայ[881]: Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ի համաձայն՝ 1921 թ. Խարբերդի նահանգում ապրում էին 35000 հայեր, որոնց մի մասն այլ նահանգներից գաղթածներ էին[882]: Այնուամենայնիվ, կարող ենք ենթադրել, որ նշված թվի կեսից ավելին տեղաբնիկներ էին: Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ համաձայն մեր հաշվումների, 1919-1920 թթ.

---

878 "Армянский Вестникъ", 1917, N. 12, стр. 16.
879 Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 893:
880 Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 956:
881 Մախմուրյան Գ., Փաստաթղթեր Խարբերդի նահանգի մասին (1919-1922 թթ), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2008, N 2 (112), էջ 76:
882 Թեոդիկ, Ամենուն տարեցոյց, 1922, էջ 261:

Խարբերդի նահանգում ապրում էր ավելի քան 30000 քրիստոնյա հայ: Այս տվյալի օգտին է խոսում մեկ այլ փաստ. 1921 թ. «Արձագանգ Փարիզէն» ամսագրի լրատվության մեջ նշվում է, որ ամերիկացի դոկտ. Ռիգզը, որ Խարբերդից նոր էր վերադարձել, այցելելով Իզմիրի Առաջնորդարան, նշել է, որ Խարբերդում ու շրջակա բնակավայրերում հայության թվաքանակը հասնում էր 30000-ի, որբերի թիվը՝ 5000-ի[883]: Խոսքը, թերևս Հենրի Ռիգզի մասին է, որը նույն տվյալն է նշում նաև իր հուշագրությունում[884]: Հավանաբար այս թվի մեջ ներառված են նաև այլ բնակավայրերից Խարբերդում հաստատված հայեր: Միևնույն ժամանակ, փաստենք, որ Խարբերդի նահանգի վերապրողներից էլ մարդիկ կային, որ ապաստանել էին այլ բնակավայրերում: Երզնկայից գրված մի հաղորդագրության համաձայն, հայերի թիվը Երզնկայում հասնում էր 1500-ի, որոնք եկել էին Զմշկածագից, Զարսանջակից, այլ վայրերից[885]: Էրզրումից գրված մի լրատվության համաձայն, 1917 թ. դրությամբ Էրզրումում շատ էին Դերջանից, Զմշկածագից, Խարբերդից, Խոզաթի շրջաններից ազատվածները[886]:

Ինչևիցե, ընդունենք, որ նահանգի մի քանի բնակավայրերում այս ժամանակահատվածում ապրում էր ավելի քան 30000 հայ, որոնցից կեսը կամ գուցե կեսից ավելին կազմում էին տեղաբնիկները:

Նույն ժամանակահատվածում՝ 1919-1920 թթ., Խարբերդի նահանգում կար 20000 թրքացած հայ[887]: Նույն թիվն է հիշա-

---

[883] «Արձագանգ Փարիզի», Զ տարի, Թիւ 16, 25 նոյեմբեր 1921:
[884] Riggs H., նշվ. աշխ., էջ 175:
[885] «Արձագանգ Փարիզի», Ա տարի, Թիւ 16, 25 նոյեմբեր 1916:
[886] «Արձագանգ Փարիզի», Ա տարի, թիւ 21, 10 փետրուար 1917:
[887] Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1469:

տակում նաև Հենրի Ռիգզը[888]: Արդեն իսկ նշված մեկ այլ տվյալի համաձայն՝ իսլամացած հայերի թվաքանակը հաշվվում էր գրեթե 25000, թեև իսլամացած հայերի իրական թիվը ճշտելն ավելի բարդ խնդիր է: Դժվար է հստակեցնել, թե նրանցից քանիսը հետագա մի քանի տարիներին ևս շարունակվող ծպտյալ - հայերի հայտնաբերման աշխատանքների արդյունքում կարողացան վերադառնալ հայի ինքնությանն ու քրիստոնեությանը:

1922 թ. հայերի նկատմամբ հալածանքները կրկին ուժեղացան: Նրանց սպառնում էին, ահաբեկում, կողոպտում: Դեռևս 1919 թ. Մեզրեում հայտարարություններ էին փակցվել «հայրենիքն ազատելու» կոչերով, ինչը մեծ խուճապ էր առաջացրել հայերի շրջանում[889]: Նույն 1919 թ. նոյեմբերին Սվազում Իտալիայի առաքելության պատվիրակ Վիլլարին Կ. Պոլսում Իտալիայի բարձրագույն կոմիսար Մայսային գրում է, որ ամերիկյան առաքելության ներկայացուցիչները «չափազանց տխուր լուրեր են ստացել Խարբերդի շրջանից, որտեղ քրդերը վերսկսել են հայերի դեմ իրականացվող բռնությունները և կանանց առևանգումները»[890]: Փաստորեն, հարաբերական խաղաղ վիճակը երկար չտևեց, 1920-1922 թթ. իրավիճակը գնալով բարդացավ: 1922 թ. Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության Խարբերդի կայանի ղեկավար Ֆորեսթ Յոնը Հալեպում ԱՄՆ հյուպատոս Ջ. Ջեքսոնին ուղղված 1922 թ. ապրիլի 5-ի նամակում գրում էր. «Նահանգի (Մամուրեթ ուլ Ազիզ) հայերը ստրուկի կարգավիճակում են... Քրիստոնյա տղամարդիկ ու պատանիները առանց պատճառի բանտարկվել են, նրանց

---

888 Winter J., America and the Armenian Genocide of 1915, USA, 2003, p. 267.
889 Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 1468:
890 Բալոյան Ա., Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին. 1913-1923 թթ., Ն Բ, 1918-1923 թթ., Երևան, 2010, էջ 74:

ստիպում են մեծ գումարներ վճարել նախքան կազատեն, քրիստոնյա կանանց որպես ստրուկների բռնությամբ տանում են մուսուլմանների տներ»[891]: 1922 թ. աշնանը հայերի մեծ մասը՝ հիմնականում որբեր, հեռացան դեպի Սիրիա, որը համաձայնել էր ընդունել Խարբերդում և Մալաթիայում հավաքագրված 5312 որբերի: Դա 300-400 մղոն երկարությամբ ձգվող ճանապարհ էր: Ավելի մեծ երեխաները գնում էին ոտքով, փոքրերը ավանակների վրա, առջևում ընթանում էր ուղտերի քարավանը՝ պահուստներով[892]:

Հիմնականում քրիստոնյա հայերը հեռացան նաև մյուս բնակավայրերից: 1923 թ. Մալաթիայի Մայր եկեղեցու պատին հայտարարություն փակցվեց, որում պահանջվում էր հայերից՝ հեռանալ քաղաքից, այլապես նրանք կիրկիզվեն: 1923 թ. սեպտեմբերի 1-ին Ստեփան քահանա Ղազարյանը 35 տուն հայերի հետ հեռացավ Մալաթիայից[893]:

Խարբերդի նահանգի տարածքում հաստատված հայերի գերակշիռ մասը 1922-1923 թթ. գերադասեց հեռանալ, քան մնալ ու իսլամ ընդունել: Այս տեղահանության հիմնական ուղղությունը կրկին Հալեպն էր: 1922 թ. «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի խմբագիր Խ. Պեննեյանին ուղղված նամակում Կիլիկիայի Սահակ կաթողիկոսը, խոսելով Հալեպի գաղթականների մասին, որպես գաղթականների ստվար խումբ հիշատակում է նաև խարբերդցիներին՝ թվով 1057 հոգու[894]: Իսկ արդեն 1922 թ. հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 28-ն ընկած ժամանակաշրջանում, երբ հայերի հիմնական մասը հեռացել էր Խար-

---

[891] Peterson M., նշվ. աշխ., էջ 126-127:
[892] Barton J., Story of Near East Relief /1915-1930/. An interpretation, New York, 1930, p. 150.
[893] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 967:
[894] Եղիանան Բ., նշվ. աշխ., էջ 249:

բերդից ու Արաբկիրից, Հալեպ հասած 3205 գաղթականներից 1800-ը ծագումով Խարբերդից էին, 20-ը՝ Արաբկիրից[895]: 1924 թ. Սահակ կաթողիկոսը Հալեպ քաղաքի հայ գաղթականների ցուցակում կրկին հիշատակում է Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերից այստեղ ապաստանածների մասին: Համաձայն այս փաստաթղթի՝ Խարբերդից էին 4500 հոգի, Մալաթիայից՝ 750, Զարսանջակից ու Զմշկածագից՝ 250-ական հոգի, Պեհեսնիից՝ 195, Ակնից՝ 170, Արաբկիրից՝ 560[896]: Հավանաբար, Խարբերդից եկածների թվում հաշվվել են նաև Խարբերդի դաշտի գյուղերի բնակիչները: Ընդհանուր առմամբ, նահանգի տարածքից 1924 թ. Հալեպ քաղաքում գտնվողների թիվը, համաձայն կաթողիկոսի ներկայացրած ցուցակի, կազմում էր 6675 անձ: Հալեպում, համաձայն 1919 թ. թողարկված մի բացիկի, կար նույնիսկ խարբերդցիների առանձին ճամբար[897]: Ընդհանուր առմամբ, 1922 թ. վերջերից մինչև 1924 թ. գարուն ընկած ժամանակահատվածում Թուրքիայից Սիրիա հասան 13500 հայ գաղթականներ[898]:

1922-1923 թթ. տեղահանության հետևանքով Խարբերդի նահանգի հայության բեկորների հիմնական մասը հեռացավ ծննդավայրից, թեև նահանգի որոշ բնակավայրերում մնացին հատուկենտ հայեր, որոնք հարկադրված էին իսլամ ընդունել: Օրինակ, Մալաթիայում մնացած 50-60 տուն հայերից շատերը, զրկված լինելով դպրոց, եկեղեցի ունենալու իրավունքից, ստիպված եղան կրկին թրքանալ[899]:

---

[895] Shemmassian V., The Exodus of Armenian Remnants, p. 396.
[896] Եղիանան Ռ., նշվ. աշխ., էջ 249:
[897] Բացիկ, տես՝ ՀՅԹԻ, ֆ. 13, թղթ. 135, նյ. 630:
[898] Shemmassian V., նշվ. աշխ., էջ 397:
[899] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 967:

Այնուամենայնիվ, որոշ բնակավայրերում շարունակում էին ապրել հատուկենտ հայկական ընտանիքներ, թեև դժվար է ասել նրանք մուսուլման էին, թե քրիստոնյա: Ինչևիցե, նշենք, որ հայերի գոյության մասին խոսվում է հատկապես Մալաթիա, Արաբկիր բնակավայրերում: Պատմաբան Ա. Համբարյանը իր հոդվածներից մեկում գրում է, որ 1927 թ. դրությամբ Խարբերդում ապրում էր 2399 հայ[900]: Արաբկիրում, «Նոր Արաբկիր տեղեկատու»-ի համաձայն, 1929 թ. դրությամբ ապրում էր 600-ից ավել հայ՝ արաբկիրցի և այլ բնակավայրերից այստեղ հաստատված հայեր[901]: Նույն թվականի դրությամբ Մալաթիայում ապրում էր 500, գյուղերում՝ 700 հայ[902]: Հայտնի է, որ 1929 թ. Խարբերդի շրջանի հայությունը կրկին տեղահանվել է: Այս բռնագաղթը կրել է համընդհանուր բնույթ, քանի որ, ըստ որոշ տվյալների, տեղահանվել են նաև քրդախոս ու կրոնափոխ եղած հայերը[903]: Կ. Խանլարյանը կարծում է, որ «1929-1930 թթ. տեղահանությունները եղել են պետականօրէն ծրագրուած, կազմակերպուած ու լայնամասշտաբ միջոցառումներ, եւ գաղթի պայմանները ստեղծուել են ամէնուրեք»[904]: Նահանգի մյուս բնակավայրերում հայ տարրի գոյության մասին այլ տվյալներ չունենք: Նշենք միայն, որ արդեն իսկ նշված բնակավայրերում հայերի գոյության մասին հիշատակություններ կան, որ վերաբերում են մինչև 1960-ականներին: Ըստ «Նոր Արաբկիր տեղեկատուի», 1932 թ. դրությամբ, Արաբկիրում կար 750 արաբկիրցի ու ոչ արաբկիրցի[905], Ակնում նույն հանդեսի համաձայն, 1940-ական-

---

900 Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, N 2, էջ 112:
901 «Նոր Արաբկիր տեղեկատու», 1929թ. օգոստոս, Գ տարի, թիւ 7:
902 Ծոցիկեան Ս., նշվ. աշխ., էջ 385:
903 Խանլարեան Կարէն, նշվ. աշխ., էջ 62:
904 Խանլարեան Կարէն, նշվ. աշխ., էջ 63:
905 «Նոր Արաբկիր Տեղեկատու», յունուար, 1932թ., թիւ 10, New York, էջ 2:

ներին կար 30 հայ ընտանիք, Կամարակապ գյուղում՝ 3, Ապուշենյում՝ 2 հայ ընտանիք[906]: 1952 թ. «Ազդակ» թերթում տպված տվյալի համաձայն, Արաբկիրում ապրում էր 120 հայ ընտանիք, որոնք հաջորդ տարիների ընթացքում նվազել էին, քանի որ գաղթեցին Կ. Պոլիս, Մալաթիա, այլ վայրեր: Նույն ժամանակահատվածում Մալաթիայում կար 400 հայ ընտանիք,[907] մինչդեռ, 1960-ականներին Մալաթիայում արդեն հաշվվում էր 120 հայ ընտանիք՝ բաղկացած արհեստավորներից և առևտրականներից[908]: Մի քանի տարիների ընթացքում Մալաթիայից ևս բազմաթիվ ընտանիքներ գաղթել էին Կ. Պոլիս: Փաստ է, որ նշված բոլոր օրինակները վերաբերում են այն բնակավայրերին, որտեղ քիչ չէին հայերի իսլամացման դեպքերը: 1922 թ. զանգվածային տեղահանությունից հետո, երբ Խարբերդից, Մալաթիայից, հատուկենտ այլ բնակավայրերից հեռացվեցին ցեղասպանությունից փրկված հայության բեկորները, տարօրինակ է, որ մինչև 1960-ականները և ավելի ուշ ժամանակներում խոսվում է հայ տարրի գոյության մասին նույն վայրերում: Մնում է ենթադրել, որ վերոնշյալ օրինակներում խոսքը գնում է - Հայոց ցեղասպանության տարիներին իսլամացած, ապա կրկին քրիստոնեությանը վերադարձած ընտանիքների մասին: Իսլամացած հայերի թեմայով ուսումնասիրությունների հեղինակ թուրքագետ Ռ. Մելքոնյանը գրում է, որ վերջին տարիներին Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրեր կազմակերպված այցելությունների տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Խարբերդի նահանգում մինչ օրս պահպանվել են ներքին ամուսնություններով իրենց ինքնությունը պահած և ցեղասպան-

---

[906] Նույն տեղում, դեկտեմբեր, 1946թ., թիվ 28, էջ 49:
[907] Խանլարեան Կ., նշվ. աշխ., էջ 108:
[908] Նույն տեղում, էջ 123:

ության տարիներին իսլամացած հայկական ծագումով բնակիչները:[909]

1915 թ. դրությամբ Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի տարածքում ապրող շուրջ 200000 քրիստոնյա հայ բնակչության հիմնական մասը բնաջնջվեց Հայոց ցեղասպանության տարիներին: 1916-1923 թթ. ընթացքում ինչպես մյուս նահանգներում, այնպես էլ Խարբերդի նահանգում ողջ մնացած հայերի նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությունը գրեթե նույնն էր, ինչ 1915 թ., պարզապես ծավալներն էին տարբեր: Այս տարիների ընթացքում տարբեր բնակավայրերում ապաստանած հայերը ենթարկվում էին տեղահանությունների, կոտորածների, բռնությամբ իսլամացվում: Այս դեպքում արդեն իսլամացումը իրական այլընտրանք էր տեղահանությանը: 1922 -1923 թթ. տեղահանությունը գրեթե ամբողջությամբ վերջ դրեց քրիստոնյա հայ բնակչության գոյությանը Խարբերդի նահանգում: 1923 թ. հետո նահանգի տարածքում ապրում էին իսլամացած հայեր, որոնց մի մասը, տարիներ հետո, թերևս, վերադարձել է քրիստոնեությանը և հայկական ինքնությանը:

---

[909] Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 75:

ՎԵՐՋԱԲԱՆ

Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգը, որը հիմնականում ընդգրկում էր պատմական Ծոփքի տարածքը, եղել է հայ ժողովրդի կազմավորման, ձևավորման, կենսագործունեության հիմնական տարածքներից մեկը: Տարածքն Օսմանյան տիրապետության տակ է անցել 1515-1517 թթ. ընթացքում: Այն մաս է կազմել Էրզրումի էյալեթի: Տարածքային բազմաթիվ վերածնումներից հետո, որպես Օսմանյան կայսրության առանձին վարչական միավոր, Խարբերդի՝ Մամուրեթ ուլ Ազիզի նահանգը կազմավորվել է արդեն 1879-1888 թթ.: Նահանգը բաղկացած էր Խարբերդի, Դերսիմի, Մալաթիայի գավառներից:

Դարերի ընթացքում այս տարածքում ևս ժողովրդագրական մեծ փոփոխություններ են արձանագրվել: Դեռ XVI-XVIII դարերի ընթացքում ողջ կայսրության տարածքում իրականացված հայերի բռնի իսլամացման քաղաքականության հետևանքով Խարբերդի նահանգի տարածքի մի շարք երբեմնի զուտ հայաբնակ բնակավայրեր XIX դարում արդեն զուտ թուրքաբնակ կամ քրդաբնակ էին: Նման բնակավայրերը բազմաթիվ էին Արաբկիրի, Ակնի, Չարսանջակի, Զմշկածագի գավառակներում, Մալաթիայի գավառում:

Մյուս կողմից, կայսրության կիրառած ազգային, սոցիալական, կրոնական խտրականության քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր երբեմնի հայաբնակ տարածքների հայաթափմանը: XIX դարի վերջերին ժողովրդագրական մեծ փոփոխությունների հանգեցրին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը: 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ընթացքում արձանագրվեցին հայերի զանգվածային ոչնչացման գրեթե բոլոր տարրերը, ինչ՝ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության

տարիներին: Խարբերդի նահանգում զանգվածային կոտորածների զոհ դարձավ շուրջ 40000 հայ: Կոտորածների տարիներին նահանգի տարածքում բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000 հայ, որոնց մեծ մասը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեությանը՝ ի տարբերություն նախորդ ժամանակահատվածներում իսլամացածների: Կարծում ենք, որ համիդյան կոտորածների տարիներին իսլամացած հայերի կրոնափոխությունը, թերևս, առերես կրոնափոխություն էր և նրանք, ովքեր այնուամենայնիվ ջարդերից հետո չվերադարձան քրիստոնեությանը, շարունակում էին պահել իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ հիշողությունը:

Համիդյան կոտորածների հետևանքով Խարբերդի նահանգի քրիստոնյա հայ բնակչության թվաքանակը նվազեց, ինչն արտահայտվեց ոչ միայն զոհերի, իսլամացվածների թվով, այլև՝ նահանգի տարբեր բնակավայրերից հայերի արտագաղթի ծավալների մեծացմամբ: Խարբերդի նահանգից հայ բնակչության՝ XIX դարի կեսերից սկսած արտագաղթը դեպի ԱՄՆ կապված էր Օտարերկյա միսիոներների լիազորների ամերիկյան կոմիտեի՝ Խարբերդում բացած կայանի գործունեության հետ: Խարբերդի նահանգից հայերի ԱՄՆ արտագաղթն ուներ նաև տնտեսական, քաղաքական պատճառներ. սակավահողությունը, հարկային ճնշումները, իրավազրկությունը, անվստահության մթնոլորտը շատերին ստիպում էր նախ աշխատանք, ապրուստի միջոց, ապա նաև՝ վերջնական հանգրվան փնտրել ԱՄՆ-ում: Համիդյան կոտորածներից հետո արտագաղթի տեմպերն աճեցին:

Հայերի արտագաղթն ԱՄՆ ունեցավ ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական հետևանքներ: Դրական հետևանքն այն էր, որ արտագաղթած հայերից շատերի օժանդակութ-

յամբ Խարբերդի նահանգում բազմաթիվ հայեր դարձան հողատերեր, աշխուժացավ նահանգի տնտեսական կյանքը: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի հայ բնակչության ներգրավվածությունը նահանգի տնտեսական կյանքին, տնտեսության բազմաթիվ ճյուղերի զարգացման գործում ունեցած ներդրումն անգնահատելի է: Հայ արհեստագործների շնորհիվ նահանգում այս շրջանում մեծ վերելք ապրեցին մի քանի կարևոր արհեստներ, մեծացան տեղի երկրագործական ու արհեստագործական արտադրանքի արտահանման ծավալները:

Արտագաղթի բացասական հետևանքն այն էր, որ արտագաղթողների թիվն անդրադարձավ նահանգի հայ բնակչության թվաքանակի վրա: Արտագաղթի ժողովրդագրական հետևանքներն առավել տեսանելի էին սակավաթիվ հայություն ունեցող բնակավայրերում:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի տարածքում արձանագրված ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում հայ բնակչության թվաքանակը ոչ թե աճել էր, այլ՝ նկատելիորեն նվազել: Համաձայն մեր հաշվումների, որ կատարել ենք տարբեր աղբյուրների, տվյալների համադրությամբ, 1915 թ. դրությամբ Խարբերդի նահանգում ապրում էր 199958 հայ բնակիչ, այդ թվում՝ 99274՝ Խարբերդի, 61116՝ Դերսիմի, 39568՝ Մալաթիայի գավառներում: Նահանգի տարածքում ապրում էին նաև տասնյակ հազարավոր կենկեներ՝ իսլամացած, քրդացած հայեր:

1915-1923 թթ. Խարբերդի նահանգի հայությունը, ինչպես Արևմտյան Հայաստանի մյուս նահանգներում և Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերում, ենթարկվեց տեղահանության, կոտորածների, իսլամացման: Վերջինս այս ըն-

թացքում իրականացվում էր առավելապես կանանց նկատմամբ: Արդյունքում Երբեմնի հայաշատ նահանգը հայաթափվեց. հայ բնակչության հիմնական մասը դարձավ Հայոց ցեղասպանության զոհ, շատերը բռնի իսլամացվեցին: 1916-1923 թթ. ընթացքում նահանգի տարբեր բնակավայրերում շարունակում էին ապրել ավելի քան 30000 քրիստոնյա հայեր, նաև՝ շուրջ 20000՝ ցեղասպանության տարիներին իսլամացած հայեր, որոնց նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությունը գրեթե նույնն էր, ինչ 1915 թ., պարզապես ծավալներն էին տարբեր: Այս տարիների ընթացքում տարբեր բնակավայրերում ապաստանած հայերը ենթարկվում էին տեղահանությունների, սպանությունների, բռնի իսլամացման: 1922-1923 թթ. Խարբերդի նահանգից տեղահանվեցին վերապրող գրեթե բոլոր քրիստոնյա հայերը, վերջիններս ապաստան գտան աշխարհի տարբեր երկրներում: Կարելի է եզրակացնել, որ այդուհետ Խարբերդի նահանգի տարածքում որպես հայ հիշատակվողները Հայոց ցեղասպանության տարիներին կրոնափոխ արված մարդկանցից էին, որոնք վերագտել էին հայկական ինքնությունը, վերադարձել քրիստոնեությանը:

1915-1923 թթ. իրագործված Հայոց ցեղասպանությունը դարձավ Արևմտյան Հայաստանը հայաթափելու՝ թուրքական իշխանությունների դարեր շարունակ վարած քաղաքականության հանգուցալուծումը: Այն զարգացման տարբեր փուլեր անցավ՝ հայկական բնակավայրերի հայության իսլամացում, արտաքաղթի համար նպաստավոր պայմանների ստեղծում, զանգվածային կոտորածներ, ցեղասպանություն: Թվարկված փուլերը ցայտուն կերպով դրսևորվեցին Խարբերդի նահանգում, որը կարելի է համարել նշված քաղաքականության իրագործման «դասական» տարածաշրջան:

АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ХАРБЕРДСКОЙ ПРОВИНЦИИ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В КОНЦЕ XIX – НАЧАЛЕ XX ВЕКОВ (ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

РЕЗЮМЕ

Политика притеснения и изгнания армян из Западной Армении и армянонаселеных областей Османской империи проводилась властями на протяжении веков. Важной частью их политики, направленной против армянского населения, было изменение демографического облика в пользу мусульманского населения. Массовая резня армян в конце XIX века также привела к большим демографическим изменениям. В результате Геноцида армян почти все армянское население Западной Армении и армянонаселенных областей Османской империи фактически ис чезло. Изучение проблем жизнедеятельности и численности армянского населения Харбердской провинции может способствовать комплексному изучению этой проблемы, так как вышеуказанные тенденции демографических изменений являются закономерными для армянского населения этой административной единицы.

Книга состоит из предисловия, трех глав, заключения, библиографии.

Глава 1. "Этно-демографическая картина Харбердской провинции в конце XIX - начале XX веков". Рассмотрено административное деление провинции и вовлечение армян в экономическую жизнь региона. Речь идет также об основных тенденциях демографических изменений, в частности, об эммиграции армян из Харберда в США, что имело экономические и политические причины. Но в основном, темпы эммиграции были связаны с деятельностью американских миссионеров. 1890-х гг. Темпы эммиграции возросли, так как в Харберде проводилась особенно крупномасштабная резня армян. На территории провинции было истреблено около 40 000 армян. Около 15 000 армян были исламизированы.

Глава 2. "Численность армянского населения Харбердской провинции в начале XX века". Согласно подсчетам до Геноцида армян в 5 городах и 82 селах одноименной области провинции проживали 99 274 армянина.

Харберд	63225 душ (д)
Капан-Маден	1100 д
Потуркс	679 д
Акн	15888 д
Арабкир	18382 д
Всего	99274 д

В то же время в 5 городах и 154 селах области Дерсим, согласно подсчетам проживали 61 116 армян.

Хозат	9928 д
Мецкерт	7398 д
Кзл Килисс	8976 д
Чарсанджак	18081 д
Чмшкацаг	7421 д
Овачк (Овтик)	9312 д
Всего	61116 д

В 4 городах и 110 селах Малатии, согласно подсчетам проживали 39 568 армян.

Малатия	17064 д
Пеесни	4558 д
Хюсни Мансур	5412 д
Ахча дах	1817 д
Кяхта	10717 д
Всего	39568 д

Всего на территории провинции, согласно подсчетам проживали около 200 000 армян. В городах число членов семей было принято 6, в селах - 8. На территории провинции было немало населенных пунктов, о которых не было упомянуто в таблицах патриаршества: в таких случаях были учтены данные из других источников. К сожалению, трудно привести более конкретные данные о численности исламизированных армян, можно только предположить, что их было несколько десятков тысяч.

Глава 3. "Армянское население Харбердской провинции в 1915-1923 гг". Глава посвящена политике депортации и истребления армян в 1915-1923 гг. Согласно свидетельств очевидцев и армян, выживших во время Геноцида, армянское население данной провинции было истреблено теми же механизмами и методами, что и в других областях империи. Исследование дает возможность убедительно утверждать, что в 1915-1918 гг. армянское население Харбердской провинции в числе других регионов стало жертвой политики депортации, истребления и насильственной исламизации, проводимой младотурецкими властями в Османской империи. На территории провинции было уничтожено также несколько десятков тысяч армян, депортированных из других областей, в частности, из Карина (Эрзрум), Трапизона, Ерзнка, Себастии (Сваз). Политика властей в отношении армян не изменилась и в последующие годы правления кемалистов. В результате депортации 1922-1923 гг. армянское население Харбердской провинции фактически исчезло. На территории Харбердской провинции остались только исламизированные армяне.

Геноцид армян в 1915-1923 гг. решил вопрос ликвидации армянского населения в Западной Армении. Эта политика прошла несколько этапов - исламизация армянского населения, создание условий способствующих эммиграции армян, массовые истребления, геноцид. Все эти этапы были выявлены в истории армянского населения Западной Армении и в частности провинции Харберд.

ARMENIAN POPULATION OF KHARBERD PROVINCE OF WESTERN ARMENIA AT THE END OF XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY (HISTORICAL AND DEMOGRAPHIC RESEARCH)

SUMMARY

Policy of Ottoman authorities against Armenians living in Western Armenia and in other territories of empire processed for centuries. The important part of that policy was the change of demographic situation in those territories in favor of Muslim population. Mass massacres of Armenians at the end of XIX century also brought to demographic changes. As a result of The Armenian genocide Western Armenia and other provinces of the Ottoman Empire populated by Armenians lost their Armenian population. The research on social-economic life and number of Armenian population in Kharberd province of Western Armenia will promote to the complex research of problem, for those tends of demographic changes were regular for this province.

Chapter 1. „Ethno-demographic situation of Kharberd province at the end of XIX century - beginning of XX century" presented the administrative division of province, occupations of Armenians, the main tends of demographic changes in Kharberd province. One of the main tends was immigration of Armenians to USA, which had economic, social, political causes. Immigration was linked also with the activities of American missionaries. The number of Armenians leaving for USA increased after Hamidian massacres. About 40000 Armenians were killed during these massacres, about 15000 were Islamized by force.

Chapter 2. „The number of Armenian population of Kharberd province in the beginning of XX century". 5 towns and 82 villages

are included in Kharberd region of province with 99274 Armenians (see below).

Kharberd	63225
Kapan Maden	1100
Poturke	679
Akn	15888
Arabkir	18382
Total	99274

According to the calculation 61116 Armenians lived in 5 towns and 154 villages of Dersim region before 1915 (see below).

Khozat	9928
Meckert	7398
Kzyl Kilise	8976
Charsanjak	18081
Chmshkazag	7421
Ovachk (Hovtik)	9312
Total	61116

According to the calculation 39568 Armenians lived in 4 towns and 110 villages of Malatia region before 1915 (see below).

Malatia	17064
Pehesni	4558
Hyusni Mansur	5412
Aghcha Dagh	1817
Qiaghta	10717
Total	39568

According to the calculation about 200000 Armenians lived in Kharberd province before the genocide. Number of family members in towns were calculated 6, in villages - 8. There were settlements in the territory of Kharberd province, the number of inhabitants of which was not included in the tables of Armenian Patriarchate of 1913-1914. In those cases we accepted the date from other sources. It is too difficult to give concrete number of Islamized Armenians,

living in the territory of province, but it must be mentioned that they numbered ten thousands.

Chapter 3. „Armenian population of Kharberd province in 1915-1923". This chapter includes two subchapters: „The mechanisms of implementation of genocide in Kharberd province in 1915" and „The liquidation of Armenians from Kharberd in 1916-1923". The policy of deportation, massacres of Armenians in Kharberd province in 1915-1923 was presented in this chapter. According to the research the same mechanisms and methods were implemented here as in other provinces of empire: Armenian population of Kharberd province fell the victim of the policy of deportation, massacres, Islamization implemented in the Ottoman Empire by Young Turkish government in 1915-1918. Ten thousands of deportees from Karin (Erzrum), Trabizon, Erznka, Sebastia (Svaz) also were killed in the territory of Kharberd province. The policy concerning Armenians was the same during the Kemalist regime. After deportation in 1922-1923 there wasn't Christian Armenian population in Kharberd. Only Islamized Armenians lived in territory of province.

The Armenian genocide implemented in 1915-1923 became the final stage of liquidation of Armenian population from Western Armenia. The policy of extermination continued a few centuries, it includes different stages: the islamization of Armenians, promoting the immigration, massacres, genocide. All these stages were implemented in Western Armenia and also in Kharberd province.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային սկզբնաղբյուրներ

ա) *Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)*

1.1. Ֆ. 476, ց. 1, գգ. 33, 197, 260, 788, 828, 891:

1.2. Ֆ. 447, ց. 1, գգ. 21, 27, 39:

բ) *Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)*

1.3. Ս. Հայկունու ֆ., թղթ. 69:

1.4. Թ. Ազատյանի ֆ., 34/III, 37/III, 47/III:

1.5. Գ. Սրվանձտյանցի ֆ., ց. 1, գ. 82:

գ) *ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ (ՀՑԹԻ)*

1.6. Ֆ. 8, թղթ. 39 (Ձեռագիր հուշագրություն՝ Շապուհեան Յ., Պատմութիւն Քօսիէ կամ Քէօրքէ գիւղին, 1917յուլիս 10, Ամերիկա, Լօվէլ):

1.7.Ֆ. 13, թղթ. 135, գ. 630:

դ) *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան. Լեոյի ֆ., գործ 158:*

2. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

ա) հայերեն

2.1. Բալոյան Ա., Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին. 1913-1923 թթ., հատոր Բ, 1918-1923 թթ., Երևան, 2010, Գասպրինտ տպագրատուն, 279 էջ:

2.2. Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի. Հայաստանի ջարդերը, թարգմանեց Միքայել Շամտանճեան, Կ. Պոլիս, տպագր. Յ. Ասատուրեան եւ որդիք, 1919:
2.3. Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ Դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006, 391 էջ:
2.4. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, «Հայաստան», 1991, 758 էջ:
2.5. Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում /1915-1918թթ./. Ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող Վ.Ա.Միքայելյան, Երևան, 2004, 219 էջ:

բ) ռուսերեն
2.6. Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 года-10 мая 1914 года, Петроградъ, Гос. Типографія, 1915., 294 стр.
2.7. Армения в документах государственного департамента США 1917-1920 гг., составитель сборника и перевод Гаянэ Махмурян, Ереван, Институт Истории НАН РА, 2011, 559 стр.

գ) անգլերեն
2.8. Bryce J. and Toynbee A. The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Documents presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, New Jersey, Gomidas Institute Princeton, 2000, 677 p.

2.9. Ghazarian V. Armenians in the Ottoman Empire. An Anthology of Transformation 13th-19th Centuries, Waltham, Massachusetts, Mayreni Publishing, 1998, 836 p.
2.10. Turkish Atrocites. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, Compiled by James L. Barton, Ann Arbor, Michigan, Gomidas Institute, 1998, 210 p.
2.11. United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled and with an introduction by Ara Sarafian, Princeton and London, Gomidas Institute, 2004, 704 p.

գ) ֆրանսերեն
2.12. Charmetant P. Fx, Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades du Constantinople et statistique dressé par des témoins oculaires grégoriens et protestants, Au Bureau des Œuvres D'Orient, Paris.
2.13. Population Armenienne de la Turquie; Avant la Guerre, Statistiques étables par le Patriarcat Arménien de Constantinople, Paris, Impriemerie H: Turabian, 1920.
2.14. Ubicini A., Lettres sur la Turquie, Paris, 1853.

3. Տպագիր օրագրեր, ականատեսների վկայություններ, ճանապարհորդական նոթեր, վերապրողների հուշագրություններ

ա) հայերեն
3.1. Անդրանիկ, Տէրսիմ. Ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն, Թիֆլիս, 1900, 237 էջ:
3.2. Անջրդի եւ շրջակա գիւղերու ոճրագործներու արարքները. 1915-1918, Երեւան Տպարան, Պոսթոն,

3.3. Գաբիկեան Կ., Եռեղնապատում Փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, «Հայրենիք» տպարան, 1924, 604 էջ:
3.4. Դեվիս Լ., Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ., թարգմանությունը՝ Գրիգոր Զանիկյանի, «Դալլ», Երևան, 2001, 368 էջ:
3.5. Թաշճեան Մ., Սեւ յուշեր մղձաւանջային եօթը տարիներու/1915-1922/, Պէյրութ, 1952, 163 էջ:
3.6. Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Նիւ Եորք, «Պայքար» տպարան, 1985, 656 էջ:
3.7. Թէքէան Ա., Դրուագներ ապրիլեան մեծ եղեռնէն. Պեհեսնիհայութեան գողգոթան (1914-1918), Պէյրութ, 1956, 223 էջ:
3.8. Խրայեան Կ., Ծովք-Կէօլճիւկ, Մարսէյլ, Տպարան «Արարա», 1927, 300 էջ:
3.9. Կճիկեան (Առաքելեան) Լ., Մօրենիկ եւ իր սեւ տարին, Անթիլիաս-Լիբանան, Տպարան կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1969, 176 էջ:
3.10. Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգներ, Պարսկահայք, Երևան, 2012, 495 էջ:
3.11. Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպ. Մարկիանոս Դ. Ռոտինեանցի, 1895, 500 էջ:
3.12. Ճէյքըպսըն Մ., Օրագրութիւն 1907-1919. Խարբերդ, դանիերէն ձեռագիր բնագրէն թարգմանեցին Ներսէս եպս. Բախտիկեան, Միհրան Սիմոնեան, Գրատուն Օմար Խայեամ, Հա-

լէպ-Սուրիա, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1979, 382 էջ:
3.13. Մելիտինեցի Գ., Նախճիրներ. 1915-1918, Պոստոն, Տպարան «Հայրենիք», 1929, 219 էջ:
3.14. Մկրտիչեան Ե., Թուրքիոյ գեհենէն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը. Ականատեսի պատմութիւն, 1918, Աղեքսանդրիա, տպ. Ստեփանեանի, 72 էջ:
3.15. Մխիթարեան Գ., Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն, 1958, 256 էջ:
3.16. Յոհաննսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Հայոց ցեղ. թանգարան-ինստիտուտ, Երևան, 2008, 147 էջ:
3.17. Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի, Կ.Պոլիս, 1878, 202 էջ:
3.18. Զելեբի Է., Թուրք աղբյուրներ, Գ, թարգմանությունը բնագրից Ա. Խ. Սաֆրաստյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, 344 էջ:
3.19. Չիթճեան Հ., Մազի չափ մահին մօտ. եղեռնէն վերապրողի յուշեր, Taderon Press, 2004, 446 էջ:
3.20. Պարպի Հ., Սարսափի երկրին մէջ, Պէյրութ, Մատենաշար «Նայիրի», թիւ 2, 1965, 144 էջ:
3.21. Պէնէեան Տէր Կարապետ քհնյ., Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը եւ Գրիգոր Խանձեանի Մալաթիոյ գաւարաբարբառը, հրատարակութիւն՝ Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան, 278 էջ:
3.22. Սեդրակ Ծ., Յուշեր եւ փուշեր կեանքի ճանապարհին.Խարբերդ, Արաբկիր, Մալաթիա, Քիւրտիստան, Տիգրանակերտ, Տարոն, Սասուն, Բալու եւ Քոի, Ա հատոր, Լոս Անճէլըս, Քալիֆորնիա, 1975, 128 էջ:
3.23. Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ.Պոլիս, 1884, 488 էջ:

3.24. Տէրանեան Մ., Հիւսէնիկ. Յուշէր եւ յոյզէր, Պոսթոն, Պայքար հր., 1981, 130 էջ:
3.25. Տոնապետեան Պ., Ձայն Տառապելոց, Փարիզ, Տպարան Յակոբ Ք. Թիւրապեան, 1922, 500 էջ:
3.26. Օրմանեան Մաղաքիա արք., Հայոց եկեղեցին, Կոստանդնուպոլիս, հրատարակիչք Վ. եւ Հ. Տեր- Ներսեսեան, 1913, 269 էջ:

բ)ռուսերեն
3.27. Колюбакинь А., Материалы для Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, томь III, часть I, отдель 2-й, Тифлись, 1891, 464 стр.
3.28. Линч Х., Арменія, Путевые очерки и этюды, т. 2, Турецкіе провинціи, Тифлись, 1910, 675 стр.
3.29. Ногалес Р. Четыре года под полумесяцем, Москва, "Русский Вестник", 2006, 368 стр.
գ) անգլերեն
3.30. Atkinson T. The German, the turk and the Devil made a triple Alliance, Harpoot diaries, 1908-1917, with a foreword by J. Michel Hagopian, Princeton, New Jersey, Gomidas Institute, Taderon Press, 2000, 94 p.
3.31. Barton C. The Red Cross: A History of this Remarkable International Movement in the Interest of Humanity, N., Y., Washington, J. B. Lyon Company Albany, 684 p.
3.32. Bliss Rev. Edwin M. Turkey and the Armenian Atrocities, Fresno, Ca., Meshag publishing, 1982, 574 p.
3.33. Great need Over The Water. The Letters of Theresa Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898-1905, edited by Stina Katchadourian, Gomidas Institute, Taderon Press, Michigan, 1999, 375 p.

3.34. Greene F. Armenian Massacres or the Sword of Mohammed, Philadelphia and Chicago, International Publishing Co., 1896, 512 p.
3.35. Greene Rev. J. Leaving The Levant, Boston, New York, Chicago, The Piligrim Press, 1916, 353 p.
3.36. Harris R. and Harris H., Letters from the Scenes of the recent Massacrei in Armenia, London, James Nisbet & Co., 1897, 254 p.
3.37. Hepworth G. Through Armenia on Horseback, New York, E. P. Dutton & Company, 1898, 355 p.
3.38. Künzler J. In the Land of Blood and Tears: Experiencies in Mesopotamia During the World War(1914-1918), Translated from the 1999 German edition, Armenian Cultural Foundation, Arlington, Ma., 2007, 187 p.
3.39. Parmele R A Pioneer in the Euphrates Valley, Princeton and London, Gomidas Institute, Taderon Press, 2002, 68 p.
3.40. Riggs H. Days of tragedy in Armenia: Personál Experience in Harpoot. 1915-1917, USA, Gomidas Institute, 1997, 220 p.
3.41. The Auction of Souls. The Story of Aurora Mardiganian, the Christian Girl who Survived the Great Massacres, Interpreted by H. L. Gates, London, Odhams Press, LTD., 1920, 219 p.
3.42. Zahigian K., One Page of Armenia's Tragedy: A Story of the years wherein we have seen evil, 1923, 31 p.

4.Աշխատություններ

ա) հայերեն

4.1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, Սեան տպ., 1961, 1535 էջ:
4.2. Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, Տպ. Նոր - Ասող, 1950, 479 էջ:

4.3. Ակունի. Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը. 1914-1918, Կ.Պոլիս, «Հայաստան» գրատուն, 1921, 223 էջ:
4.4. Անանյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. ուքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005, 92 էջ:
4.5. Անթոյեան Ս., Ինքնակերտումի ճամբով, Պէյրութ, «Վահէ Սէթեան» տպարան, 2006, 175 էջ:
4.6. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921թթ. դատավարությունների վավերագրերը ըստ Օսմանյան մամուլի, Երևան, Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2011, 288 էջ
4.7. Ասլանեան Խ. Ա., Նոր աշխարհագրութիւն ի պէտս Ազգային վարժարանաց, Կ. Պոլիս, Տպագր. Արամեան, 1873, 421 էջ:
4.8. Աստոյան Ա., Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, «Նաիրի», 2013, 252 էջ:
4.9. Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ նահանգների հայ գաղութի պատմությունը, Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 2000, 239 էջ:
4.10. Արաբկիրցի վերապրողներու ցանկը, հրատարակուած Արաբկիրի Վերաշինութեան միութեան կողմէ, Պոսթոն, 1920, 77 էջ:
4.11. Բալտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէյրութ, տպ. «Վահագն», 1934, 156 էջ:
4.12. Բալտիկեան Ս., Ոսկեգնտակ, Գ հատոր, նուիրուած՝ Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերդի, Մալաթիոյ պատմութեան եւ ազգագրութեան, Պէյրութ, Տպ. Հայկ-Պապ-Իտրիս, 1948:
4.13. Բաղրամյան Ռ. Հ. Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1960, 772 էջ:

4.14. Գասպարեան Հ., Զմշկածագ եւ իր գիւղերը, «Պայքար» տպարան, 1969, 810 էջ:
4.15. Դավիթ-Բեկ Մ., Արաբկիրի գավարաբարբառ. Զայնաբանական եւ քերականական ուսումնասիրութիւն, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1919, 292 էջ:
4.16. Եղիազեան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, 946 էջ:
4.17. Եսարտլեան Հ. Տաճատ Ծ. վրդ.. Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, Բ Տպագր., Վենետիկ, 2001,132 էջ:
4.18. Երեւանեան Գ., Պատմութիւն Զարսանճագի հայոց, Պէյրութ, տպ. Կ.Տօնիկեան, 1956, 700 էջ:
4.19. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905: հ. 2, 1907, Վենետիկ:
4.20. Ժամկոչեան Բ., Պատմութիւն Մամուրէթ իւլ Ազիզի գերման որբանոցներու, Պէյրութ, 1973, 445 էջ:
4.21. Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965, 81 էջ:
4.22. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005թթ.), Անթիլիաս, 2009, 293 էջ:
4.23. Խոսրովեան Վ., Բազմաշէնի պատմութիւնը. գիւղի կեանքէն, 1930, Նիւթըն Ըփրը Ֆօլս, USA, 112 էջ:
4.24. Խոսրոնա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, 114 էջ:
4.25. Ծոցիկեան Ս., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, տպագրութիւն Ա.Յ. Էյլենկեան, 1947, 816 էջ:

4.26. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Մելքոնյան Է., Աբգարյան Ա., Հայոց մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, Զանգակ 97 հրատար., 2010, 455 էջ:
4.27. Կոստանդյան Է., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական- քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Երևան, Մեսրոպ արք. Աշճյան մատենաշար, 2005, 175 էջ:
4.28. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1968, 509 էջ:
4.29. Հայոց պատմություն, հ. III, Գ. Ա, Երևան, 701 էջ:
4.30. Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում /1856-1914/, Երևան, 1965, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 341 էջ:
4.31. Հայկ Վ., Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959, 1500 էջ:
4.32. Մեսրոպ Գ., Հայաստան, Կ. Պոլիս, 1919, տպ. Օ. Արզուման, 92 էջ:
4.33. Յուշամատեան մեծ եղեռնի. 1915-1965, հրատարուկութիւն «Զարթօնք» օրաթերթի, Պէյրութ, Տպարան Ատլաս, 1965, 1119 էջ:
4.34. Ղազարեան Հ., Յեղասպան թուրքը, Պէյրութ, Տպարան Համազգային, 1968, 424 էջ:
4.35. Ճիզմէճեան Մ., Խարբերդ եւ իր գաւակները, Ֆրէզնոյ, 1955, 746 էջ:
4.36. Մելքոնյան Ա, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան», ԳԱԱ հրատարակչություններ, 1994, 179 էջ:

4.37.Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, հեղ. հրատարակություն, 2010, 182 էջ:
4.38. Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Մեսրոպ արք. Աշճյան մատենաշար, 12, Երևան, 2006, 236 էջ:
4.39. Յիշատակարան Եփրատ գոլէճի, Պոսթըն, հրատ. Եփրատ գօլէճի սանուց միութեան, 1947, 491 էջ:
4.40. Շահպազեան Յ., Քիւրդօ-Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, Տպարան «Արաքս», 1911, 192 էջ:
4.41. Պալեան Տրդատ եպ., Հայ վանորայք, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2008, 464 էջ, 48 էջ ներդիր:
4.42. Պօղոսեան Ա., Բազմաշէնի ընդարձակ պատմութիւնը իր հիմնարկութենէն մինչեւ վերջին օրերը, Պոստոն, տպ. Պայքար, 1930.
4.43. Սահակյան Ա., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, Մեսրոպ արք. Աշճյան մատենաշար, 2005, 114 էջ:
4.44. Վարդան Լ., Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի.1915-1923, Պէյրութ, Տպարան «Ատլաս», 1975, 343 էջ:
4.45. Փիրանեան Ն., Խարբերդի եղեռնը, Բոստոն, 1937, 541 էջ:
4.46. Փոլատեան, Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, Հրատ. Արաբկիրի միութեան, 1969, 1018 էջ:
4.47. Քեչեան Ա., Ակն եւ ակնցիք, հ. Բ, Փարիզ, Գեղ. տպ. Խ. Մաթիկեան, 1952, 1060 էջ:

բ) անգլերեն

4.48. Avakian A. "Stranger"; No More: An Armenian Nurse From Lebanon Tells her Story, Second Publication, Antelias, 1968, 197 p.
4.49. Armenian Tsopk / Kharbert, edited by R. Hovannisian, Costa Mesa, California, Mazda Publishers, 2002, 469 p.
4.50. Armenians in Turkey 100 years ago. With the postcards from the collection of Orlando Carlo Calumeno, edited by Osman Köker, Istanbul, Birzamanlar Yayincilik, 2005, 399 p.
4.51. Barton J., Story of Near East Relief /1915-1930/. An interpretation, New York, 1930, 479 p.
4.52. Dadrian V., Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict, New Brunswick and London, Transaction Publishers, 1999, 214 p.
4.53. Deranian H. Worcester is America, Worcester, Ma., 1998, 222 p.
4.54. Dzeron M., Village of Parchanj: General history. 1600-1937, Fresno, Panorama West Books, 1984.
4.55. Filian Rev. G. Armenia and her People or The Story of Armenia by an Armenian, Hartford, Conn, American Publishing Company, 1896, 376 p.
4.56. Ghazarian V., A Village Remembered: The Armenians of Habousi, Waltham, MA: Mayreni Publishing, 1997, 166 p.
4.57. Guenter L. The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, The University of Utah Press, Salt Lake City, 2005, 370 p.
4.58. Gurun Kamuran, The Armenian File. The Myth of Innocence Exposed, London. Nicosia. Istanbul, 1985, 323 p.
4.59. Hewsen R. Armenia. A Historical Atlas, The University of Chicago Press, Chicago and London, 2001, 341 p.

4.60. Kevorkian R. The Armenian Genocide. A Complete History, London, New York, I. B. Tauris, 2011, 1029 p.
4.61. Krikorian M. Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, Henley and Boston, Routledge and Kegan Paul, 1977, 148 p
4.62. Latimer E. The Last Years of The Nineteenth Century, second edition, Chicago, A. C. McCLURG &CO., 1901, 545 p.
4.63. Malcom V. The Armenians in America, Boston, Chicago, The Pilgrim Press, 1919, 142 p.
4.64. Miller D. and Touryan Miller L. Survivors. An Oral History of the Armenian genocide, Berkley. Los Angeles. London, University of California Press, 1999, 242 p.
4.65. Mirak R. Torn Between Two Lands: Armenians in America, 1890 to World War I, Ca. 1983, 364 p.
4.66. Naayem Rev. J. Shall this Nation Die? Chaldean Rescue, New York, 1921, 318 p.
4.67. Peterson M., "Starving Armenians". America and the Armenian Genocide, 1915-1930 and After, Charlottesville and London, Virginia Press, 2004, 199 p.
4.68. Pye E Charlotte R. Williard of merzifon: her Life and Times, New York, Fleming H. Revell Company.
4.69. Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, AMS Press, 1970.
4.70. Winter J. America and the Armenian Genocide of 1915, Canbridge University Press, 2003.
4.71. Severance G. and D. Against the Gates of Hell, New York, Toronto, Oxford, University press of America, 2003.
4.72. Strong, W. The Story of The American Board, Boston, The Pilgrim Press, 1910.

4.73. The Armenians in Massachusetts, Boston, The Armenian Historical Society, 1937.
4.74. The Armenian Genocide. Documentation, vol. 1, Institut für Armenische Fragen, Mümchen, 1987.
4.75. Uras E. The Armenians in history and the Armenian question, Istanbul, Documentary publications, 1988.
4.76. Walker Ch. Armenia. Survival of a Nation, London, Croom Helm, 1982.

գ) այլ լեզուներով
4.77. Birken A. Die Provinyen Osmanischen Reiches, Dr. Ludwig Reichert, Wiesbaden, 1976.
4.78. Ke'vorkian R., Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, Les Editions d'Art et d'Histoire ARHIS, 1992.
4.79. Саркисян Е., Политика Османского правительства в Западной Армении и державы в последнеи четверти XIX и начале XX вв., Институт Востоковедения, изд. АН АС, Ереван, 1972.
4.80. Тунян В., Младотурки и Армянский вопрос. 1914-1916, Ереван, Чартарагет, 2010.

5. Հոդվածներ և հրապարակումներ

5.1. Աճեմեան Խ. քինյ., Զմշկածագի տեղահանութիւնը եւ ջարդը, «Հայրենիք», թիւ 5, 1966թ., Բոստոն, էջ 49-53:
5.2. Գասպարյան Հ., Դերսիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, h. 2, Երևան, էջ 196-210:
5.3. Թադեոյան Ռ., «Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ»,

«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», հ. 5, 2002, Երևան:
5.4. Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրության և բանահյուսության նյութեր և ուսումնասիրություններ, հ. 5, 1973, Երևան:
5.5. Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 98-114:
5.6. Հարությունյան Վ., Հայ հետազոտողները ալևինների մասին, «Մերձավոր Արևելք» հոդվածների ժողովածու, No. VII, Երևան, 2011, էջ 169-173:
5.7. Մախմուրյան Գ., Փաստաթղթեր Խարբերդի նահանգի մասին (1919-1922 թթ.), Բանբեր Հայաստանի արխիվների, N 2 (112), 2008, Երևան, էջ 75-86:
5.8. Քոլանջյան Ս., Հայկական կոտորածները և մեր ձեռգրական կորուստները, «Էջմիածին», 1965, Ե-Զ-Է, Էջմիածին, էջ 144:
5.9. Hagopian G., The Immigration of Armenians to the United States, "Armenian review", Summer 1988, vol. 41, no. 2-162, Wo., Ma., p. 68-76.
5.10. Merguerian B., "Like a Policeman in a Mob": The Establishment of the U.S. Consulate in Kharpert, Turkey, 1901-1905, "Armenian Perspectives: 10th Anniversary Conference of the Association Internationale des Etudes Armeniennes", edited by Awde Nicholas, Curzon, "Caucasus World", p. 293-309.

6.Պարբերական մամուլ

6.1. «Ազգ», 1907- 1908 թթ., Պոսթոն:
6.2.«Ամենուն տարեցոյց», ԺԶ տարի, 1922, Կ. Պոլիս:
6.3. «Ամերիկահայ Տարեցոյց», կազմող՝ Մուշեղ եպիսկոպոս, Ա տարի, Պոստոն, Կիլիկիա տպարան, 1912:

6.4. «Ասպարեզ», 1908 թ., Ֆրէզնօ:
6.5. «Արարատ», 1914, համար Թ, սեպտեմբեր, Ս. Էջմիածին:
6.6 «Արձագանգ Փարիզի», Ա տարի, Թիւ 11, 10 սեպտեմբեր 1916, 1917, 1921, Փարիզ:
6.7. «Արձագանք», 28 նոյեմբեր, N. 41, 1882 թ., Թիֆլիս:
6.8. «Արձագանք», 23 մայիս, N. 14, 1882 թ., Թիֆլիս:
6.9. Յայտագիր Եփրատ Գոլէճի եւ իւր ճիւղերուն. 1919-1914, Խարբերդ, Եփրատ-տպարան, 1914, 33 էջ:
6.10. «Մուրճ», 7-8, 1896, Թիֆլիս:
6.11. «Նոր Արարկիր տեղեկատու», 1929 օգոստոս, թիւ 7, 1943 յունիս, թիւ 22:
6.12. «Նոր կեանք», թիւ 6, 15 մարտ, 1898; թիւ 8, 15 ապրիլ, 1898, Լոնտոն:
6.13. «Նոր հոսանք», համար 6, 1913, Թիֆլիս:
6.14. «Ուստան», Եռամսեայ Մեծ Պարբերագիր, թիւ 2, 1911:
6.15. „Армянскій Вѣстникъ", 1917 г..
6.16. "Armenia" A Monthly Magazine, September. 1910.

ԱՐՓԻՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 26.09.2017 թ.
Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳ
(ՄԱՄՈՒՐԵԹ-ՈՒԼ-ԱԶԻԶ)
Մասշտաբ 1:1 100 000

[3000 ա.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0526830

V
103800

Արփինե Ռուբիկի Բաբլումյան

Ծնվել է 1976 թ. Երևան քաղաքում: 1993-1998 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Ավարտել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրան, 2012 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել թեկնածուական ատենախոսություն՝ «Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» թեմայով: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների, զեկույցներով հանդես է եկել գիտաժողովներում: 1999-2016 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտում, 2008-2015 թթ.՝ որպես բանգարանագիտական գծով փոխտնօրեն: 2016 թ. աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում: Սույն աշխատությունը հեղինակի առաջին մենագրությունն է: